

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԹՈՒՐ ԻՇԽԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՆՈՒՅՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ-ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ.02.07 - «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ,

ԴՈՑԵՆՏ՝ Ա. Է. ՉՈՒԲԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2016

Բովանդակություն

Ներածություն.....	4
Գլուխ 1. Նույնաբանական կառույցների գործաբանական քննության տեսական հիմքերը	
1.1. Նույնաբանությունը տարբեր գիտակարգերի հարացույցում	11
1.2 Նույնաբանությունը որպես Գրայսի համագործակցության սկզբունքի դրսևորում.....	16
1.3 Նույնաբանությունը իմաստաբանության համատեքստում.....	23
1.4 Նույնաբանությունը որպես խոսողի վերաբերմունքն արտահայտող կառույց...30	
1.5 Նույնաբանությունը գործաբանական տեսությունների լույսի ներքո	43
Ծանոթագրություններ.....	53
Գլուխ 2. Անզլերեն նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի կազմավորումը	
2.1 Նույնաբանությունների իմաստակառուցվածքային Առանձնահատկությունները.....	60
2.2 Նույնաբանության գործաբանական ներուժի կազմավորումը կառույցի անվանական անդամի միջոցով.....	75
2.3 Նույնաբանության գործաբանական ներուժի կազմավորումը կառույցի բայական անդամի միջոցով	98
2.4 Նույնաբանական կառույցների կարծրատիպային նշանակության ձևավորումը անզլերեն խոսքում	107
Ծանոթագրություններ	120

Գլուխ 3. Նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի ապակողավորման առանձնահատկությունները անգլերեն խոսքում	
3.1 Համատեքստը որպես նույնաբանական կառույցների հաղորդակցական- գործաբանական արժեքի մեկնաբանության բանալի	123
3.2 Հարատեքստի դերը նույնաբանական կառույցի հաղորդակցական- գործաբանական արժեքի մեկնաբանության մեջ	140
3.3 Խոսքնկերների ընդհանուր և հենքային գիտելիքի կարևորությունը նույնաբանության ընկալման գործընթացում	149
Ծանոթագրություններ	172
Եզրակացություն	177
Գրականության ցանկ	181

Ներածություն

Գործաբանության մեջ դիսկուրսն ուսումնասիրվում է որպես կապակցված խոսք, որի ընթացքում կիրառվում են կոնկրետ իրադրությամբ ձևավորված և խոսակիցներին առաջադրված խնդիրներով պայմանավորված հաղորդակցական միջոցներ (Brown, Yule 1983; van Dijk 1981; Պարոնյան 2011): Նման միջոց է նաև նույնաբանական կառույցը, որը, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, բավականին երկարատև և տարակարծություններով լի հետազոտական ուղի է անցել: Սույն երևույթը դրսևորվում է լեզվի տարբեր հայեցակերպերում՝ բառային, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական: Նույնաբանություններն ավանդաբար դիտարկվել են որպես խոսքաստեղծման ընթացքում թույլ տրված սխալներ, ձախողված ասույթներ կամ խոսողի կոպիտ վրիպումներ: Սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, ինչպես նաև մեր ուսումնասիրությունների արդյունքները, նույնաբանական կառույցները իմաստային առումով բավականին տարողունակ են և օժտված են հաղորդակցական մեծ ներուժով: Թերևս դրանով էլ կարելի է բացատրել մի կողմից՝ դրանց լայն կիրառումը գործառական տարբեր ոճերում, մյուս կողմից՝ դրանց նկատմամբ հակասական մոտեցումները:

Սույն աշխատանքում մեզ համար ելակետային է լեզվագործաբանական հայեցակերպը: Ինչպես հայտնի է, գործաբանական լեզվագրությունը զբաղվում է խոսքի կիրառական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ, այսինքն՝ թե ինչպես է խոսող անհատը գործարկում խոսքը՝ որպես հասարակական հարաբերությունների և համագործակցության միջոց՝ օգտվելով ինչպես ներլեզվական օրենքների, այնպես էլ արտալեզվական օրինաչափությունների՝ կարգախոսների, խոսքային ռազմավարության և մարտավարական լեզվական հնարների ընձեռած հնարավորություններից: Սրանից հետևում է, որ լեզվագործաբանության առարկան ոչ թե լեզվի կայուն կառուցվածքն է՝ լեզվական համակարգին բնորոշ համակցություններով, այլ նրա ընթացական դրսևորումը՝ խոսքը, խոսքային գործունեությունը: Քանի որ լեզուն բնորոշ է մարդուն, որը հոգեբանական հատկանիշներով, մտածական որոշակի մեխանիզմներով օժտված

հասարակական էակ է, իսկ խոսքային դրսևորումն էլ իր հերթին ենթադրում է որոշակի հասարակական գործունեություն, ապա պարզ է դառնում, որ խոսքը բազմատարր երևույթ է և առնչվում է մարդու հոգեկերտվածքի տարբեր կողմերին:, Հետևաբար տրամաբանական է պատկերացնել, որ խոսքի հնարավոր լիարժեք ու համակողմանի քննություն հնարավոր է իրականացվել միջգիտակարգային սկզբունքով:

Ատենախոսությունը լայն իմաստով նվիրված է լեզվաբանության կարևորագույն բնագավառներից մեկի՝ խոսքաստեղծման և խոսքընկալման մեխանիզմների ուսումնասիրությանը անգլերեն դիսկուրսում: Քննության են ենթարկվում նույնաբանական շարահյուսական դրսևորումների գործաբանական, իմաստաբանական և հաղորդակցական-գործառական առանձնահատկությունները: Ինչպես ցույց են տալիս լեզվաբանության բնագավառում կատարված հետազոտությունները, նույնաբանությունները դրսևորվում են լեզվական տարբեր միավորների (բառեր, նախադասություններ, ասույթներ և այլն) կրկնության տեսքով: Մասնավորապես՝ կրկնվող միավորների միջոցով արտահայտվում է ասույթի ներակա իմաստը, որի շնորհիվ մեծանում է վերջիններիս տեղեկատվական բեռնվածությունը: Այսինքն՝ լեզվական միավորների կրկնությանը զուգահեռ առաջ են գալիս զանազան թաքնված ներակա իմաստներ, կանխենթադրույթներ, որոնք միտված են պահպանելու տեքստի իմաստային ամբողջականությունը: Խոսքաստեղծման ու խոսքընկալման գործընթացում այդ թաքնված իմաստների ձևավորման և ճանաչման մեխանիզմների վերհանումը անգլերեն դիսկուրսի շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական առանձնահատկությունների փոխհարաբերության տեսանկյունից, մեր համոզմամբ, շատ կարևոր է, ուստի ներառված է սույն հետազոտության առանցքային խնդիրների շրջանակում: Այս նպատակադրմամբ էլ հետազոտության ոլորտ ենք ներմուծել լեզվագործաբանության մեջ շրջանառվող գործաբանական ներուժ հասկացությունը, որը, փաստորեն, առաջին անգամ է կիրառվում նույնաբանության հաղորդակցական արժեքը գնահատելիս: Խոսքաստեղծման գործընթացում խոսողը ընտրում է որոշակի լեզվական միջոցներ՝ խոսընկերոջ

վրա ներագրելու իր մտադրությանը համապատասխան: Հենց դա էլ ասույթի գործաբանական ներուժն է, որը կարելի սահմանել որպես տվյալ տեղեկույթի հասցեատիրոջ վրա նպատակաուղղված ներագրում իրականացնելու ունակություն: Շարահյուսական մակարդակում գործաբանական ներուժը հիմնականում ձևավորվում է շարահյուսական կառույցի մի մասի կամ ամբողջի կրկնությամբ: Ցանկացած ասույթ արտաբերվում է որոշակի հաղորդակցական ազդեցություն գործելու ակնկալիքով, ուստի գործաբանական ներուժը ասույթի բովանդակության կարևորագույն բաղադրիչն է: Ունենալով շարահյուսական պարզ կաղապար՝ նույնաբանական կառույցները բովանդակային առումով, այնուամենայնիվ, բազմաշերտ են: Իմաստային այդ բազմաշերտությամբ է պայմանավորված թվացյալ պարզունակ նույնաբանական կառույցների հսկայական գործաբանական ներուժը, որը բացահայտվում է խոսողության ընթացքում ներլեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությամբ:

Աշխատանքի համար **տեսական հիմք** է ծառայում գործաբանական լեզվաբանությունը, որի հիմնական խնդիրն է ուսումնասիրել խոսքային գործունեության բնույթը՝ այն դիտարկելով որպես խոսող անհատի կողմից գիտակցաբար կառավարվող և խոսքային հատուկ օրենքներով կանոնակարգվող գործընթաց: Լեզվագործաբանական մոտեցումը հնարավոր է դարձնում նաև լեզվական միավորների հաղորդակցական արժեքի քննությունը արտալեզվական լայն համատեքստում:

Նույնաբանությունների տեսությունն ունի հետազոտական որոշակի պատմություն: Այդուհանդերձ խոսքային այս կարևորագույն երևույթի քննությունը մինչև այժմ հիմնականում սահմանափակվել է լեզվի այս կամ այն (իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական, ոճաբանական) հայեցակերպով: Այսինքն՝ նույնաբանությունների համակողմանի վերլուծությունը, տվյալ հասկացության ընդգրկուն սահմանումը, նույնաբանական կառույցների լեզվական կարգավիճակի որոշարկումը գործաբանական լեզվաբանության դիրքերից լեզվաճանաչողական առումով միանգամայն **արդիական** է և հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանելու սույն կառույցների հաղորդակցական-գործաբանական արժեքը: Կարծում ենք, որ

գործաբանական լեզվաբանության և նրա մասը կազմող դիսկուրսի տեսության մարդակենտրոն և միջգիտակարգային բնույթը, խոսքնթացի ճանաչողական մեխանիզմների վերհանման անհրաժեշտությունը ապահովում են այն հենքը, որով պայմանավորված է նույնաբանական կառույցների մեր հետազոտության **արդիականությունը**: Աշխատանքի արդիականությունը բխում է նաև խոսքի ներագոման գործառույթի քննության և խոսքաստեղծման ու խոսքնկալման որոշակի մեխանիզմների բացահայտման կարևորությունից:

Ատենախոսության ուսումնասիրության **առարկան** անգլերենի նույնաբանական կառույցներն են: Դրանք մեր աշխատանքում սահմանվում են որպես սուբյեկտի ու պրեդիկատի կրկնությամբ ստորոգում պարունակող շարահյուսական կաղապարներ, որոնք իրենց ձևաբովանդակային միասնության մեջ ձեռք են բերում նշանային արժեք:

Աշխատանքի **նպատակն** է իրականացնել նույնաբանական կառույցների համալիր վերլուծություն գործաբանական-ճանաչողական լեզվաբանության դիրքերից, վեր հանել և ուսումնասիրել դրանց զանազան դրսևորումների հաղորդակցական-գործաբանական արժեքը անգլերեն դիսկուրսում, բացահայտել խոսքային գործունեության ընթացքում նույնաբանական կառույցներում առկա գործաբանական ներուժի կազմավորման և ապակողավորման գործոնները: Այս նպատակով հետազոտությունը կատարվում է վերոնշյալ գիտակարգերի համադրմամբ՝ լրացնելու նույնաբանությունների ուսումնասիրությանն առնչվող հետազոտություններում առկա բացը: Այս նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. իրականացնել նույնաբանությունների ուսումնասիրությանը վերաբերող մոտեցումների քննական վերլուծություն, համակարգել ձեռքբերումները և ներկայացնել նույնաբանական կառույցների հաղորդակցական-գործաբանական արժեքի վերհանման ու գնահատման համալիր մոտեցում,

2. սահմանել լեզվական կրկնության հասկացությունը՝ որպես ելակետային նույնաբանության գործաբանական ներուժի կազմավորման գործընթացում,

3. բացահայտել անգլերեն նույնաբանական կառույցների շարահյուսական կաղապարները և, ելնելով դրանց ստորոգելիական բնույթից՝ քննել այդ

կառույցների գործառական-հաղորդակցական առանձնահատկությունները Փ. Գրայսի համագործակցության սկզբունքի լույսի ներքո,

4. որոշարկել նույնաբանության կարծրատիպային նշանակության ձևավորման նախապայմանները,

5. վեր հանել և վերլուծել այն լեզվական ու արտալեզվական բաղադրիչները, որոնք նպաստում են նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի կազմավորման գործընթացին անգլերենում,

6. բացահայտել և քննության ենթարկել հաղորդակցական իրադրության այն գործոնները, որոնք նպաստում են ներակա տեղեկության ընկալմանն ու ըմբռնմանը և գործաբանական ներուժի ապակողավորմանը խոսքային մակարդակում,

7. քննել նույնաբանության տեքստակազմիչ գործառույթը:

Աշխատանքի **նորույթն** այն է, որ նույնաբանությունների վերլուծությունը, ըստ էության, առաջին անգամ իրականացվում է կառուցվածքային-իմաստաբանական, գործաբանական և գործառական յուրահատկությունների քննության լույսի ներքո, որտեղ լեզվական միավորի կառուցվածքը ելակետային է խոսքում նրա գործառական-հաղորդակցական առանձնահատկությունների իրացման համար: Նորովի է արժևորվում նաև նույնաբանական կառույցի գործաբանական ներուժը, որոշարկվում են դրա կողավորման և ապակողավորման մեխանիզմները գործաբանական-ճանաչողական դիրքերից, իսկ նույնաբանական միավորները որակվում են որպես լեզվաճանաչողական կառույցներ և որպես խոսողի/գրողի գնահատողական-ճանաչողական գործունեության արդյունք:

Տեսական առումով հետազոտության շրջանակներում մշակված դրույթները, առաջադրված հարցադրումները հնարավորություն են ընձեռում նորովի գնահատելու խոսքաստեղծման ու խոսքընկալման ներքին մեխանիզմները, սահմանելու նույնաբանությունների տեքստակազմիչ դերը անգլերեն դիսկուրսում՝ դրանով իսկ նպաստելով խոսքի հաղորդակցական, ճանաչողական-գործաբանական տեսության հարստացմանը ու հետագա զարգացմանը:

Ուսումնասիրության արդյունքները նաև **կիրառական** որոշակի **արժեք** ունեն և կարող են ներդրվել գործաբանական լեզվաբանության, տեքստի

լեզվաբանության և դիսկուրսի վերլուծության դասընթացներում: Դրանք կնպաստեն նաև անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ կառուցման հմտությունների յուրացմանն ու զարգացմանը:

Աշխատանքի **մեթոդաբանական հիմքը** պայմանավորված է ատենախոսության մեջ առաջադրված նպատակներով և խնդիրներով: Ուսումնասիրությունը կատարվել է լեզվագործաբանական, համատեքստային-իրադրային և նկարագրական մեթոդների համադրությամբ, ինչը թույլ է տալիս հաղորդակցական տարբեր իրադրություններում ընդգրկված նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի իրացումը հետազոտել լեզվական և արտալեզվական միջոցների հաշվառումով:

Հետազոտված **փաստական նյութը** բրիտանական և ամերիկյան դասական ու ժամանակակից գրականությունից, անգլագիր մամուլից, համացանցային բլոգներից, չաթային տարածքներից քաղված երկխոսական միավորներ են (շուրջ 1000 նմուշ): Տարբեր գործառական ոճերի ընտրությունը բացատրվում է այն հանգամանքով, որ նույնաբանական կառույցները, լինելով ներակայում պարունակող ասույթներ, լայնորեն կիրառվում են բոլոր գործառական ոճերում և միտված են լեզվական միավորների նվազագույն կազմով արտահայտելու առավելագույն տեղեկատվություն՝ ապահովելով մտքի կուռ և տրամաբանական կառուցվածք, հակիրճություն, տեղեկատվական հազեցվածություն, ժամանակի և ծավալի տնտեսում և այլն:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերը, որոշարկվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունն ու նորույթը, կատարված ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը, մեթոդաբանական հիմքը:

Աշխատանքի առաջին գլխում ամփոփ ներկայացվում են նույնաբանական կառույցների գործաբանական քննության տեսական հիմքերը: Այստեղ քննության

են առնվում նույնաբանության տեղին ու դերին առնչվող խնդիրները տարբեր գիտակարգերում, որոշարկվում են ուսումնասիրության ելակետային դրույթներն ու մոտեցումները:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի կազմավորման գործընթացի լուսաբանմանը: Այստեղ իրականացվում է առանձնացված շարահյուսական կադապարների իմաստակառուցվածքային առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծություն, բացահայտվում է նույնաբանության՝ որպես ստորոգում պարունակող կառույցի նշանային բնույթը, վեր են հանվում այն լեզվական բաղադրիչները (շարահյուսական, ձևաբանական, իմաստային), որոնք նպաստում են խոսքաստեղծման ընթացքում նույնաբանության գործաբանական ներուժի կազմավորմանը, բացահայտվում է նույնաբանությանը բնորոշ կարծրատիպային իմաստի ձևավորման մեխանիզմը:

Աշխատանքի երրորդ գլխում քննարկվում են լեզվական և արտալեզվական այն գործոնները, որոնք ապահովում են լսողի/ընթերցողի՝ նույնաբանության մեջ ամփոփված գործաբանական ներուժի ճիշտ ընկալումն ու մեկնաբանումը տվյալ հաղորդակցական իրադրությունում:

Եզրակացության մեջ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները:

Գլուխ 1

Նույնաբանական կառույցների գործաբանական քննության տեսական հիմքերը

1.1. Նույնաբանությունը տարբեր գիտակարգերի հարացույցում

Լեզվաբանության զարգացման արդի փուլում, երբ լեզվաբանների ուշադրության կենտրոնում են խոսքի կառուցման խնդիրները և տարբեր խոսքային երևույթների իրական գործառության օրինաչափությունները, առավել կարևորվում է տեքստի միավորների ուսումնասիրությունը: Նման միավոր է նույնաբանությունը: Նույնաբանություն գիտաբառը բնութագրում է բնական լեզվի չափազանց բարդ և հակասական երևույթ: Լեզվական այս միավորն ունի հետազոտական բավականին երկարատև պատմություն:

Նույնաբանություն՝ տավտոլոգիա, բառը (հին հունարենում ταυτο նշանակում է նույն, իսկ λόγος՝ բան, այստեղից էլ նույնաբանություն) լեզվաբանական եզրույթ է, սակայն նրա ուսումնասիրությամբ զբաղվում են ոչ միայն լեզվաբանները: Այն նաև տրամաբանության, փիլիսոփայության, խոսքի մշակույթի, մաթեմատիկայի և այլ գիտակարգերի քննության առարկան է, ինչպես նաև կիրառվում է առօրյա խոսքում այսպես կոչված «նախկին լեզվաբանների»¹ (Кашкин 2009) կողմից: Ինչպես ցույց է տալիս գիտական գրականության և տեսական մոտեցումների մեր քննությունը, նույնաբանությունը տարբեր կերպ է դիտարկվում գիտական տարբեր ոլորտներում:

Տրամաբանական և փիլիսոփայական աշխատություններում (Kant 1998; Wittgenstein 1998; Carnap 2011; Frege 1987; Russel 2004)² նույնաբանությունը դիտարկվում է որպես տեղեկատվություն չպարունակող, իմաստագուրկ կառույց, որն ի սկզբանե ճշմարիտ է՝ անկախ այն ճշմարիտ արժեքներից, որոնք վերագրվում են նրա բաղադրիչներին (Тропольский 1979; Войлова 1993; Голуб 2005; Евгеньева 1963; Крапотина 1998): Մյուս կողմից, հատուկ ուշադրություն դարձնելով ձևական տրամաբանության օրենքներին՝ տրամաբանները

մատնանշում են, որ նույնաբանությունները, առանձնապես աչքի չընկնելով իրենց տեղեկատվական բովանդակությամբ, բավականին օգտակար են ճշմարիտ տրամաբանական դատողություններ կազմելիս և նպաստում են մեր մտածողության անհակասականությանը (Демидов 2000; Ивин 1999; Попп 1987; Перевозчикова 1966): Համաձայն Ա. Իվինի և Ա. Նիկոֆորովի՝ տրամաբանության տեսանկյունից «նույնաբանությունը մի արտահայտություն է, որը ճշմարիտ է՝ անկախ այն բանից, թե ինչ ոլորտի առարկաների մասին է խոսքը» (Ивин, Никофоров 1997):

Լեզվաբանության մեջ հանդիպում ենք նույնաբանության հետևյալ բնորոշմանը. նույնաբանությունը ավելորդաբանություն պարունակող արտահայտություն է, որը դրսևորվում է դրա մասի կամ ամբողջի իմաստային կրկնության մեջ: Նույնաբանություններն իրենց էությամբ ավելորդաբանական են (Остапенко 2010; Молоков 1967; Зайц 2001; Рахманкулова 1985; Троепольский 1979), այդ իսկ պատճառով տրամաբանության տեսանկյունից դրանք մեկնաբանվել են որպես անոմալ արտահայտություններ, պարադոքս, իսկ, ինչպես նշում է Տ. Օստապենկոն, ժամանակակից գրական չափանիշներով, նույնաբանությունը համարվում է խոսքային կոպիտ սխալ (Остапенко 2010: 46; Мауэр 1991): Սակայն հարցին առնչվող գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնաբանությամբ զբաղվող լեզվաբաններն ու փիլիսոփաները այն չեն դիտարկում որպես լեզվի և իրականության բացարձակապես բացասական ու մերժելի տարր: Ընդհակառակը՝ գիտնականներն իրենց աշխատանքներում փորձել են մատնանշել նույնաբանության արժեքը հաղորդակցության գործընթացում: Օրինակ՝ Օ. Ջայցը գտնում է, որ խոսընթացում նույնաբանության կիրառումը կարող է պայմանավորված լինել քաղաքավարության սկզբունքին հետևելու խոսողի նպատակադրմամբ (Зайц 2001: 131): Ս. Մոլոկովը դիտարկում է նույնաբանությունների՝ ուսումնական գործընթացում կիրառելու հնարավորությունը (Молоков 1967: 13): Դեռ անցած դարի 60-ականներին Ա. Բուշույը պնդում էր, որ նույնաբանության լեզվաբանական կարգավիճակը ամեննին էլ դրա սխալականությունը չէ (Бушуй 1971: 33): Իեվլևան իր հերթին, ուսումնասիրելով նույնաբանությանը նվիրված մի շարք աշխատանքներ,

եզրակացնում է, որ լեզվաբանների ջանքերը հաճախ ուղղված են նույնաբանությունների արդարացմանը (Иевлева 2000: 6): Որոշ լեզվաբաններ, ինչպես, օրինակ, Ի. Գոլուբը, նշում են, որ «նույնաբանությունը կարող է լինել ոճական հնարք, որն ուժեղացնում է խոսքի հուզական կողմը» (Голуб 2005: 252): Մինչդեռ առօրյա հաղորդակցության մեջ նույնաբանություն եզրույթը մեծ մասամբ գործածվում է արհամարհական երանգավորմամբ, և ուրեմն հարց է առաջանում, թե ինչու և որտեղից է բացասական ընկալում ձևավորվում նույնաբանության նկատմամբ: Ըստ Տ. Օստապենկոյի՝ նույնաբանության ամենասուր քննադատները, այսինքն՝ նույնաբանությունները սխալ կամ թերի լեզվական միավոր համարողները, լեզվաբանությամբ ոչ պրոֆեսիոնալ մակարդակով զբաղվող մարդիկ են: Նրանց բնորոշելու համար Տ. Օստապենկոն օգտագործում է «նախվ լեզվաբաններ» եզրույթը: Ն. Դ. Արությունովան իրականության ընկալման և ուսումնասիրության այս ոլորտն անվանում է բնական (նախվ) լեզվաբանություն ու տալիս հետևյալ սահմանումը. «Բնական լեզվաբանությունը խոսքնկերների ոչ ռեֆլեկտիվ ռեֆլեքսիան է, ինքնաբուխ պատկերացում լեզվի ու խոսքային գործընթացի մասին՝ ձևավորված մարդու առօրեական ճանաչողության մեջ» (Арутюнова 2000: 71):

Տ. Օստապենկոն առաջ է քաշում այն վարկածը, որ հենց «նախվ լեզվաբաններն» են հակված նույնաբանությունը դիտարկելու որպես բացառապես բացասական երևույթ: Այս վարկածը հիմնավորելու համար նա իրականացնում է ասոցատիվ մտքերի առաջացման դասական մեթոդի վրա հիմնված մի փորձ³: Փորձի արդյունքները ցույց են տալիս առաջ քաշված վարկածի իսկությունը, այն է՝ «նախվ լեզվաբանների» մոտ նույնաբանությունը կապվում է բացասական նշանակության հետ: Ցանկացած նույնաբանական կառույցի կիրառություն նախվ լեզվաբանության մեջ ենթարկվում է կտրուկ քննադատության: Նույնաբանությունները կարող են պատճառ դառնալ թյուրիմացության ու հաճախ տպավորություն ստեղծել, թե այն օգտագործող մարդիկ վատ են պատկերացնում՝ ինչի մասին են խոսում (Репин, Е. Н. *Разруха начинается с языка* [Электронный ресурс] (вход в 15 Июля 2014 <http://www.strannik.de/akme/lang.htm>)):

Այսպիսով՝ դժվար չէ հետևություն անել, որ «նախվ լեզվաբանները», ընկալելով նույնաբանությունը գուտ որպես սխալ, լիովին մերժում են դրա հուզարտահայտչական ներուժը: Տ. Օստապենկոն, ամփոփելով այն երեք հատկանիշները, որոնք «նախվ լեզվաբանները» համարում են նույնաբանությունների հիմքը, համաձայնում է, որ այս լեզվական երևույթին իրոք բնորոշ է կրկնությունը, որ այն հաճախ դրսևորվում է որպես խոսքային կոպիտ սխալ և ունի արատավոր շրջանի կառուցվածք: Մակայն Տ. Օստապենկոն խնդիրը դիտարկում է այլ տեսանկյունից: Նա գտնում է, որ նույնաբանություններն ունեն հսկայական լեզվագործաբանական ներուժ, ինչպես նաև օժտված են ոճական հատկանիշներով: Այս իմաստով Ն. Պերեվոզչիկովան կարծես լրացնում է Տ. Օստապենկոյի միտքը: Նա նշում է, որ վերլուծելով մի շարք նույնաբանական կառույցների կիրառությունը գեղարվեստական տեքստերում՝ նկատել է, որ այդ արտահայտությունների մեծ մասն առանձնանում է վառ արտահայտչականությամբ, ինչը հատուկ արժեք է տալիս խոսքային այդ միավորներին ու ստեղծում հնարավորություն դրանք կիրառելու՝ խոսքի ոճական ուժգնությունն ավելացնելու համար (Перевозчикова 1966: 77): Նմանատիպ միտք ենք գտնում նաև Ա. Բուշույի մոտ, ով նշում է, որ նույնաբանական կառույցները արտահայտչական շարահյուսության հնարք են և ավելի են մանրամասնում ուղերձը՝ միննույն ժամանակ այն դարձնելով ավելի տեսանելի (Бушуй 1971: 31): Օ. Զայցը, նույնաբանությունը դիտարկում է որպես տեքստի կառույցում առկա ուժեղ ազդակներ և գտնում, որ բացի կառուցվածքային գործառույթներից (ներմուծող, ամփոփող, առանցքային, մարմնավորող), նույնաբանական արտահայտություններին բնորոշ են բոլոր այն հատկանիշները, որոնք հատուկ են ուժեղ ազդակներին (իմաստային հիերարխիայի/աստիճանակարգի ստեղծում, գլխավոր գաղափարի վրա ուշադրության կենտրոնացում, զգայացմունքային և գեղագիտական ազդեցության ուժեղացում) (Зайц 2001: 6):

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս հարցին առնչվող տեսական գրականության մեր քննությունը, լեզվաբանական հետազոտություններում մեծ մասամբ ընդունվում է նույնաբանական կառույցների իմաստային կարևորությունը, և նրանցում պարունակվող տեղեկատվության մեկնաբանման

համար ուսումնասիրողների կողմից առաջարկում են տարբեր կադապարներ: Լեզվաբանության մեջ նույնաբանությունները ուսումնասիրվել են տարբեր լեզուների նյութի հիման վրա հետևյալ հիմնական ուղղություններով. 1. ոճական (Ахманова 1976; Гольцова 1978; Арнольд 1999; Войлова 1993), 2. շարահյուսական (Раманюк 1991, Крапотина 1998), 3. ձևական-քերականական (Жукова 1987; Попп 1987), 4. դարձվածաբանական (Евгеньева 1963; Бушуй 1971; Мауэр 1991), 5. բառաբանագիտական (Апресян 1989; Ахманова 1976; Тер-Мкртчян 1976), 6. իմաստաբանական (Никитин 1996; Рахманкулова 1985; Зайц 2001; Остапенко 2010; Wierzbicka 1987), 7. գործաբանական (Grice 1975; Levinson 1983; Harnish 1976; Ward, Hirschberg 1991): Անշուշտ նման մեծ հետաքրքրությունը լեզվական այս երևույթի նկատմամբ բացատրվում է դրա հակասական բնույթով:

Չնայած նույնաբանության քննությանը նվիրված բազմաքանակ հետազոտություններին՝ գրականության մեջ հանդիպող այս երևույթի սահմանումները հստակ չեն, իսկ երբեմն էլ խիստ հակասական: Ասվածը ավելի հիմնավոր դարձնելու համար բերենք նույնաբանության մի քանի բառարանային սահմանումներ.

Նույնաբանությունը տրամաբանական եզրույթ է, որը միանշանակ ճիշտ է (The Concise Oxford Dictionary of Linguistics 2014):

Նույնաբանությունը հոետորաբանական եզրույթ է՝ բնութագրելու անիմաստ և անարդյունավետ կրկնությունը սովորաբար այնպիսի բառերով, որոնք ոչ մի նոր տեղեկություն չեն ավելացնում (The Concise Oxford Companion to the English Language 2003):

Նույնաբանությունը ճշմարիտ է իր մեկնաբանությունների բոլոր հավանական տարբերակների պարագայում: Ոչ պաշտոնական համատեքստերում նույնաբանությունը դատողություն է, որը ոչինչ չի ասում կամ պարզապես կրկնում է սահմանումը (The Oxford Dictionary of Philosophy 2008):

Տավտոլոգիա – արդեն հիշված ձևակերպված մտքի՝ հասկացության ավելորդ կրկնություն ուրիշ, բայց նման բառերով կամ արտահայտություններով, ավելորդ կրկնաբանություն (Աղայան 1976: 1415):

Նույնաբանություն՝ տավտոլոգիա, գեղարվեստական ստեղծագործության ոճական-արտահայտչական հնարանք: Օգտագործվում է խոսքի հուզական, իմաստային կարևորությունն ընդգծելու համար՝ նպատակադրված ձևով կրկնելով որոշ բառեր, հնչյուններ, արտահայտություններ, դարձվածքներ, պատկերներ, դրվագներ: Նույնաբանության անարտահայտիչ կիրառությունը կարող է ստեղծել ոճական ճապաղություն (Հայկական սովետական հանրագիտարան 1975):

Նույնաբանություն – կրկնաբանություն, տավտոլոգիա – նույն միտքը տարբեր բառերով՝ արտահայտություններով՝ ձևով կրկնելը (Մուքիասյան 2009):

Ինչպես երևում է բերված բառարանային և հանրագիտարանային սահմանումներից, գոյություն չունի նույնաբանության հստակ և միանշանակ սահմանում: Մի կողմից՝ այն համարվում է ավելորդաբանություն, իսկ մյուս կողմից՝ ոճական հնարք, որն օգտագործվում է խոսքի հուզական, իմաստային կարևորությունը ընդգծելու համար:

Նույնաբանության իմաստը քննելիս կառույցի ձևի և բովանդակության ձևական ցուցիչների սահմանափակվածությունը դժվարացնում է դրանց մեկնաբանությունը: Այն գիտելիքը, որ վերլուծության արդյունքում քաղում ենք նույնաբանական կառույցներից, հաճախ չի համընկնում տվյալ կառույցը կազմող բաղադրիչների բառարանային իմաստի հետ: Դա բոլորովին այլ կարգի գիտելիք է, որը, այնուամենայնիվ, ճանաչվում և ընկալվում է լսողի կողմից: Տարբեր հեղինակներ առաջարկում են իմաստի ճանաչման այդ գործընթացը բնութագրող տարբեր կաղապարներ: Հենց այստեղ էլ կարևորվում է նույնաբանական կառույցների քննությունը իմաստաբանության և լեզվագործաբանության դիրքերից:

1.2. Նույնաբանությունը որպես Գրայսի համագործակցության սկզբունքի դրսևորում

Նույնաբանության առավել ընդունված բանաձևի համաձայն, եթե որևէ առարկայի, երևույթի մասին ճիշտ է ասել, որ այն X է, ապա ճիշտ է ասել, որ այն X է: Եթե փորձենք ավելի սեղմ տալ այս սահմանումը, ապա X-ը X է և հետևաբար անպայմանորեն ճիշտ (Wierzbicka 1987: 95-114): Ըստ Կալիշի և Մոնտեյգի՝

նույնաբանությունը խորհրդանշանային (symbolic) նախադասություն է, որի իրական արժեքը T է ցանկացած հնարավոր նշանակյալի նկատմամբ: $P \rightarrow P$ է նույնաբանություն է (Kalish, Montague 1980): Սակայն պետք է նշել, որ այնպիսի նույնաբանություններ, ինչպիսիք են՝ *If it rains it rains, War is war, Boys will be boys, You are either with us or you're not* և *If it happens it happens*, շատ հաճախ ներկայացվում են որպես Φ . Գրայսի հաղորդակցական ներակայման դրսևորում: Հաղորդակցական ներակայումը հիմնվում է հաղորդակցման ընդհանուր սկզբունքի և մի շարք կարգախոսների վրա, որոնցից խոսողներն օգտվում են: Այդ ընդհանուր սկզբունքը կոչվում է համատեղ հաղորդակցման կամ համագործակցության սկզբունք, որը Φ . Գրայսը ձևակերպում է հետևյալ կերպ. «Ասա՛ այն, ինչ պահանջվում է քեզանից խոսընթացի տվյալ փուլում՝ հաշվի առնելով փոխադարձ հաղորդակցական նպատակը կամ առկա հաղորդակցական ուղղությունը» (Grice 1975:45): Ըստ լեզվագործաբանների՝ հաղորդակցվելու հիմնական նախապայմանը գրուցակիցների ձգտումն է համագործակցության: Քանի որ հաղորդակցումը հանրային գործունեության տեսակներից մեկն է, ապա այն պետք է կանոնակարգվի նույն օրենքներով, ինչ մարդու գործունեությունն ընդհանուր առմամբ: Φ . Գրայսի ձևակերպած համագործակցության սկզբունքը իր մեջ ներառում է չորս կարգախոս. քանակի, որը վերաբերում է փոխանցվող տեղեկության ծավալին, որակի, որը վերաբերում է տեղեկության հավաստիությանը, տեղիության, որը պահանջում է, որ խոսընկերները արտահայտվեն հաղորդակցության անմիջական կարիքներին համապատասխան, և ձևի, որը պահանջում է տեղեկությունը հաղորդել հստակ և տրամաբանված: Հաղորդակցական կարգախոսներն ու ներակայումները փոխկապակցված են, և եթե կա հաղորդակցական նպատակ, ապա այս կարգախոսները դառնում են ներակա տեղեկության փոխանցման առավել արդյունավետ միջոց⁴: Դրանք լսողին հիմք են տալիս որոշակի ենթադրություն կատարելու, ինչի հիման վրա էլ նա խոսողի ասածի մեջ սկսում է ներակա իմաստ փնտրել (Պարոնյան 2011: 109):

Նույնաբանական կառույցի ուսումնասիրության տեսանկյունից առավել հետաքրքիր է քանակի կարգախոսը, քանի որ, ըստ Գրայսի, նույնաբանություն կիրառելով՝ խոսողը միտումնավոր խախտում է հենց այդ կարգախոսը, ինչն էլ

առաջացնում է հաղորդակցական ներակայում (Grice 1975: 52): Ներակայումներն այն իմաստներն են, որոնք բացահայտ և ուղղակի կերպով չեն փոխանցվել խոսքի միջոցով, սակայն որոնք ընկալելի կարող են դառնալ տվյալ խոսընթացում: Ներակայման միջոցով խոսողը կարծես փորձում է փոխանցել ավելին, քան առաջին հայացքից հնարավոր է հասկանալ:

Հաղորդակցվելիս որևէ իմաստ արտահայտել նշանակում է նկատի ունենալ մի բան, որը բխում է ասվածից և հասկանալի է դառնում՝ խոսքային իրադրության արտալեզվական գործոններից և հաղորդակցման ու համագործակցության ընդհանուր սկզբունքներից ելնելով: Համաձայն Գրայսի առաջ քաշած տեսության՝ համագործակցության սկզբունքը կարգավորում է մարդկանց միջև բոլոր փոխհարաբերությունները⁵: Խոսքային համագործակցության ընթացքում յուրաքանչյուր խոսակից պետք է տա ու ակնկալի ստանալ այնքան տեղեկություն, որքան համապատասխանում է տվյալ հաղորդակցությանը կամ տեղին է տվյալ հաղորդակցության համար: Մասնավորապես նույնաբանությունների վերաբերյալ Գրայսի մոտեցումը պահանջում է դրանք վերլուծել որպես հաղորդակցական ներակայումների հատուկ դեպք: Համաձայն Գրայսի, ինչպես արդեն նշվեց, նման ներակայումները ի հայտ են գալիս խոսողի կողմից քանակի կարգախոսի խախտման հետևանքով: Գրայսը *War is war*, այսինքն՝ *x is x* կառուցվածքով նույնաբանությունները վերլուծել է որպես բացարձակապես տեղեկույթ չպարունակող ասույթներ, ինչը քանակի կարգախոսի խախտում է: Սրանից էլ բխում է տվյալ նույնաբանության այն ներակայումը, թե ոչինչ հնարավոր չէ փոխել կամ այնպիսի մեկնաբանություններ, որոնք մոտավորապես այս իմաստն են արտահայտում (Levinson 1983; Lakoff 1972; Hirschberg 1991): Այս մոտեցումը բավական խնդրահարույց թեմա է դարձել նույնաբանությունների քննությամբ հետաքրքրված ուսումնասիրողների համար և բազմաթիվ վերլուծությունների առիթ ու հիմք է դարձել մի շարք լեզվաբանների աշխատանքներում (Gibbs, McCarrell 1990; Ward, Hirschberg 1991; Farghal 1992; Okamoto 1993; Miki 1996; Autenrieth 1997; Katz 1986 և այլոք): Որոշ լեզվաբաններ էլ հարցականի տակ են դրել Փ. Գրայսի ներակայման տեսությունը: Նրանց հավաստի և հիմնավոր չի թվում այն մոտեցումը, համաձայն որի՝ նույնաբանությունների իմաստը

ընդհանրապես ներակայված է կամ նկատի է առնված: Համաձայն Ա. Վերծբիցկայի՝ նույնաբանությունները հնարավոր չէ բացատրել՝ հիմնվելով միայն Փ. Գրայսի սկզբունքների վրա, քանի որ շատ նույնաբանություններ տվյալ լեզվին հատուկ կառույցներ են (language-specific), որոնք ունեն որոշակի իմաստային կաղապար: Եթե որոշ լեզվաբաններ (Davis 1998; Green 1973; Haberland 1990; Helbig 1990) ընդունել են Ա. Վերծբիցկայի մոտեցումը, ապա մյուսները որոշակի վերապահումով են մոտենում, ինչպես, օրինակ, Բ. Ֆրեյզըրը (Fraser 1988):

Փ. Գրայսի տեսությունը հաճախ տարակարծության առիթ է դառնում: Կան կարծիքներ, որ համագործակցության սկզբունքը, ինչպես հանրային վարքի մի շարք այլ սկզբունքներ, պայմանավորված է մշակույթով, ուստի Փ. Գրայսի կարգախոսները և համագործակցության սկզբունքը չեն կարող համընդհանուր կիրառություն ունենալ՝ ելնելով մշակութային տարբերություններից: Ջ. Քինանը և Է. Օքսը (Keenan, Ochs 1976: 67–80) նշում են այն մասին, որ Մալագազի կոչվող ցեղը, որն ապրում է Մադագասկար կղզում, համատեղ հաղորդակցության բոլորովին այլ սկզբունք ունի: Այս ցեղի մշակույթում մարդիկ միմյանց հետ խոսելիս փորձում են խուսափել տեղեկատվություն փոխանակելուց և խախտում են քանակի կարգախոսը՝ շրջանցելով ուղիղ տրված հարցերը, ու պատասխանում են թերի, քանի որ չեն ցանկանում կորցնել իրենց հասարակական դեմքը՝ խոսակցին բացահայտելով ամբողջ ճշմարտությունը: Այս մշակույթում տեղեկատվություն ունենալը հեղինակաբեր է, և մարդիկ չեն ցանկանում դրանով կիսվել այլոց հետ: Ջ. Քինանը և Է. Օքսը գտնում են, որ այստեղ Փ. Գրայսի համագործակցության սկզբունքն ու կարգախոսները կիրառելի չեն: Սրան հակադրվում է Ռ. Հարնիշը՝ ասելով, որ Փ. Գրայսի կարգախոսները կիրառելի են այն պարագայում, երբ կա համագործակցության գործընթաց, մինչդեռ Մալագազիի բնակիչները, ընդհակառակը, փորձում են չհամագործակցել խոսակցի հետ (Harnish 1976; Joshi 1981):

Փ. Գրայսի համագործակցության սկզբունքի մաս կազմող քանակի կարգախոսը հենվում է երկու հիմունքի վրա: Առաջին՝ փոխանցել այնքան տեղեկություն, որքան պահանջվում է խոսողից տվյալ պահի հաղորդակցական նպատակից ելնելով, և երկրորդ՝ չփոխանցել առավել տեղեկություն, քան

պահանջվում է: Ըստ Փ. Գրայսի՝ հաղորդակցական ներակայումը հնարավոր է դառնում, քանի որ հաղորդակցվելիս զրուցակիցները միշտ ակնկալում են, որ դիմացինը պահպանում է հաղորդակցական կարգախոսները և արտահայտվում է դրանց համապատասխան: Թեպետ Փ. Գրայսը կարգախոսները ներկայացրել է որպես հաջող հաղորդակցության ուղեգծեր, դրանք առավել հաջող կերպով մեկնաբանվում են որպես ասույթների վերաբերյալ ենթադրություններ, որոնց վրա մենք որպես ունկնդիրներ հիմնվում ենք և որոնք կիրառում ենք որպես խոսողներ: Որպես ունկնդրող մենք ակնկալում ենք, որ մեր խոսակիցը փորձում է համագործակցել գոնե այնքան ժամանակ, քանի դեռ փորձում է իր հաղորդակցական նպատակը թողնել բացահայտ ու թափանցիկ և խոսում է ճշմարտացիորեն, համապատասխան ու տեղին: Եթե ասույթը առաջին հայացքից չի համապատասխանում այս ենթադրություններից և ոչ մեկին, ապա ունկնդիրը գտնում է ասվածն ընկալելու այն տարբերակը, որը համապատասխանում է նշված ենթադրություններից որևէ մեկին: Ունկնդրի այս արարքը մասնակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանից հենց այդպիսի գործողություն է ակնկալվում: Որպես խոսողներ, ընտրելով բառեր մեր հաղորդակցական նպատակը պարզ արտահայտելու համար, մենք շահագործում ենք այն փաստը, որ մեր ունկնդիրները կանեն նշված ենթադրությունները (Bach 2005; Kaplan 1981): Հենց այս պատճառով, երբ խոսողներից մեկը խախտում է կարգախոսը՝ ասելով կամ մատնանշելով մի բան, որը ճիշտ չէ, տեղեկատվություն չի պարունակում կամ հակառակը՝ չափազանց ծանրաբեռնված է տեղեկատվությամբ, չի համապատասխանում տվյալ իրադրությանը կամ անորոշ է, ապա նրա խոսակիցը, ենթադրելով, որ խոսողն իրականում ենթարկվում է կարգախոսին, փորձում է կռահել, թե իրականում ինչ կար խոսողի մտքին, և թե իրականում նա ինչ նկատի ուներ: Եվ քանի որ խոսողը գիտի, որ զրուցակիցն իրենից ակնկալում է հետևել կարգախոսին, նա իրեն թույլ է տալիս մտադրված կերպով դուրս գալ կարգախոսի սահմաններից, այսինքն՝ ստեղծել տպավորություն, թե ինքը խախտում է կարգախոսն այնպես, որ դա ակնհայտ է և՛ իր՝ խոսողի, և՛ զրուցակցի համար՝ իր ներակա միտքը փոխանցելու նպատակով: Ստացվում է, որ, համաձայն Փ. Գրայսի, մինչ խոսակցություն սկսելը, խոսողն ու խոսակիցը արդեն նախատրամադրված են

եղել հետևելու կարգախոսներին՝ հաղորդակցական ներակայումներ արտահայտելու նպատակով: Եվ հենց կարգախոսին հետևելու նախատրամադրվածության հիմքի վրա խախտվում է ընդունելի կարգախոսը, որպեսզի փոխանցվի ավելին, քան արտաբերվում է ասույթի միջոցով: Այսպիսով, քանի որ Փ. Գրայսը գտնում է, որ կարգախոսները հատուկ չեն մեկ կամ մի քանի լեզվի, այլ համընդհանուր են, ապա նույնաբանությունները և դրանց մեկնաբանությունը նույնպես ընդհանուր կանոնների են ենթարկվում:

Ս. Լևինսոնը նույնպես նույնաբանությունը դիտարկում է որպես հաղորդակցական ներակայում փոխանցելու միջոց՝ քանակի կարգախոսը բացահայտ կերպով խախտելով կամ դրան չհետևելով: Լևինսոնը *War is war; Either John will come or he won't; If he does it, he does it* նույնաբանությունները մեկնաբանում է համապատասխանաբար հետևյալ կերպ: Ելնելով այս նույնաբանությունների տրամաբանական կառույցից, որոնք են $V (Wx - W(x)); pV \sim p; p - p$, դրանք միանշանակ ճիշտ են, հետևաբար ունեն միևնույն ճշմարտացիության պայմանները (truth conditions), և դրանց միջև եղած տարբերությունը, ինչպես նաև հաղորդակցական ներակայումը պետք է գրեթե ամբողջովին պայմանավորված լինեն դրանց գործաբանական ներակայումներով: Նույնաբանական կառույցները հաղորդակցական կարևորություն (communicative significance) են ձեռք բերում քանակի կարգախոսի խախտման շնորհիվ: Քանի որ ակնկալվում է, որ խոսողն ու խոսակիցը հաղորդակցվելիս պետք է տեղեկույթ փոխանցեն, ապա նրանց կողմից նույնաբանության գործածությունը խախտում է այս ակնկալիքը: Այստեղից Ս. Լևինսոնը հետևություն է անում, որ եթե խոսողը պահպանում է տեղեկատվության փոխանցելի լինելու սկզբունքը և համագործակցում է լսողի հետ, ապա նա պետք է որևէ տեղեկույթ հաղորդի: Հետևաբար առաջին նույնաբանության՝ *War is war*-ի մեջ Ս. Լևինսոնի կարծիքով ներակայումը հետևյալն է՝ «պատերազմի ժամանակ միշտ սարսափելի դեպքեր են կատարվում, պատերազմի բնույթն է այդպիսին, և իմաստ չունի ողբալ որևէ կոնկրետ աղետի համար»: Երկրորդ նույնաբանությունը՝ *Either John will come or he won't*, նա մեկնաբանում է հետևյալ կերպ. «Հանգստացի՛ր, կարիք չկա անհանգստանալու՝ արդյոք նա կգա, թե ոչ, որովհետև, միևնույնն է, մենք ոչինչ

չենք կարող փոխել», իսկ երրորդ նույնաբանությունը՝ *If he does it, he does it* - «դա մեր գործը չէ»: Լևինսոնը մատնանշում է նաև երկու կարևոր հանգամանք: Նույնաբանությանը ներհատուկ է թեման եզրափակող, ամփոփող գործառույթ (dismissive and topic-closing quality): Իսկ այն մասնավոր իմաստը, որ փոխանցում է նույնաբանությունը, կախված է տվյալ ասույթի համատեքստից (Levinson 2000: 111): Իր կատարած քննության արդյունքում Լևինսոնը եզրակացնում է, որ հստակ չէ, թե նույնաբանությունները ինչ ներակայումներ կարող են ունենալ, սակայն կարելի է ենթադրել, որ տեղիության կարգախոսը (Maxim of Relevance) վճռորոշ դեր կունենա այդ ներակա իմաստների բացահայտման գործում:

Հիմք ընդունելով վերոբերյալը՝ Ջ. Վորդը և Ջ. Հիրշբերգը Լևինսոնի վերլուծությունը համարում են ոչ ամբողջական (Ward, Hirschberg 1991): Հարկ է նշել, որ Լևինսոնի քննության ենթարկած նյութը սահմանափակ է ինչպես քանակի, այնպես էլ նույնաբանական կառույցների տեսակների առումով: Լևինսոնի առաջ քաշած մոտեցումը չի բավարարում, ըստ Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի, համարժեք այլ նույնաբանություններ մեկնաբանելու համար: Նրանք Լևինսոնի «դա իր բնույթն է և հնարավոր չէ ինչ-որ բան փոխել» մեկնաբանությունը փորձում են տարածել այլ նույնաբանությունների վրա և ցույց տալ, որ այս մոտեցումը թերի է: Դիտարկենք հետևյալ օրինակները.

GW: Why would you want to hack in Paoli eight hours a day?

DE: **A job's a job.**

(CBS Evening News, 6 March, 1985)

Jim Gardner: The defense claimed White had asked him to kill her.

The prosecution countered with the claim **Murder is muder.**

(Channel 6, Action News at 6, 8 June, 1985)

Առաջին օրինակում, ըստ Վորդի և Հիրշբերգի, նույնաբանություն կիրառելով՝ խոսողը ոչ թե մասնավորեցնում է իր աշխատանքի բնույթը կամ եզրակացնում, թե պետք է հարմարվել աշխատանքին, քանի որ որևէ բան փոխել

անհնար է, այլ շեշտում է այն միտքը, որ պետք չէ անձնապես տրվել աշխատանքին, քանի որ դա ընդամենը գումար աշխատելու միջոց է: Հաջորդ օրինակում՝ *Murder is muder*, նույնաբանությունը ոչ թե միտք է արտահայտում մարդասպանության բնույթի մասին, այլ հիմնավորում է այն փաստարկը, որ անկախ նրանից, թե ինչ հանգամանքներում է տեղի ունեցել մարդասպանությունը, միևնույնն է, այն պետք է համարել հանցագործություն ու պատիժ նախատեսել դա կատարողի դեմ: Այսպիսով՝ Լևինսոնի առաջարկած «դա իր բնույթն է, և հնարավոր չէ ինչ-որ բան փոխել» մեկնաբանությունը կիրառելի չէ այս նույնաբանությունների դեպքում: Գրանք, ինչպես արդեն տեսանք, պահանջում են այլ վերծանում:

Նույնաբանության քննության գործաբանական տեսության մեջ գերակա է այն կարծիքը, որ նույնաբանությունը ներակայում պարունակող կառույց է: Հետևաբար Փ. Գրայսի կարգախոսները շատ կարևոր են այս դիրքորոշման հիման վրա կատարված ուսումնասիրություններում: Ի լրումն քանակի կարգախոսի, որը նույնաբանության նշանակության մեկնաբանման առանցքն է, Ջ. Վորդը և Ջ. Հիրշբերգը առաջարկում են տեղիության կարգախոսը: Ըստ նրանց, երբ արտաբերվում է *a is a* բանաձևով կառուցված ասույթ, ապա սրանից բխում է, որ բոլոր *a is b* տեսակի այլընտրանքային տարբերակները տեղին չեն: Հետևաբար արտաբերելով նույնաբանություն, որն ունի *a is a* բանաձևը, խոսողը պահպանում է տեղիության կարգախոսը: Այս մասին ավելի մանրամասն կխոսենք հաջորդ ենթագլուխներում:

1.3. Նույնաբանությունը իմաստաբանության համատեքստում

Ինչպես նշվեց, Գրայսի մոտեցումը միանշանակորեն չի ընդունվել բոլոր լեզվաբանների կողմից: Այս առումով հետաքրքիր տեսակետ է արտահայտում Ա. Վերծբիցկան (Wierzbicka 2003): Չհամաձայնելով, որ նույնաբանությունների արտահայտած իմաստն ու կիրառությունը պետք է հիմնվեն կոնկրետ լեզվից դուրս գործող (*language-independent*) և համընդհանուր սկզբունքների վրա՝ Վերծբիցկան, նույնաբանության առավել ընդունված բանաձևի համաձայն, նշում է, որ այն փակ շղթա-կառույց է, որը հիմնվում է ինքն իր վրա և ապացուցվում է հենց ինքն

իրենով՝ X is X: Ա. Վերծրիցկան մատնանշում է, որ որոշ անգլերեն նույնաբանություններ չունեն իրենց համարժեքներն այլ լեզուներում, իսկ որոշ նույնաբանություններ էլ, թեպետ ունեն, սակայն օգտագործվում են այլ նշանակությամբ: Նույնաբանությունները լայն առումով անփոխանցելի են մի լեզվից մյուսը: Այստեղից Ա. Վերծրիցկան ենթադրում է, որ յուրաքանչյուր դեպքում հաղորդակցական իմաստը ներփակված է տվյալ կառույցի մեջ և չի հիմնվում լեզվագործաբանական որևէ համընդհանուր կարգախոսի վրա: Վերծրիցկան գտնում է, որ նույնաբանական կառույցներն ունեն տվյալ լեզվին հատուկ (language-specific) նշանակություն, և որ այս նշանակությունը պետք է մեկնաբանվի համապատասխան իմաստաբանական մոտեցմամբ: Ցույց տալու համար, որ նույնաբանական կառույցներին բնորոշ է տվյալ լեզվին հատուկ նշանակություն և որ դրանք չեն կարող մեկնաբանվել Գրայսի կարգախոսի համաձայն, համեմատվում են անգլերենի, ֆրանսերենի, ռուսերենի և գերմաներենի նմուշները: Վերծրիցկան բերում է հետևյալ դիտարկումը՝ քննելով *Boys will be boys* նույնաբանությունը ֆրանսերենում, գերմաներենում և ռուսերենում: Նա գտնում է, որ *Les garçons sont les (des) garçons* նույնաբանությունը, որը *(The) Boys are (the) boys-ի* համարժեքն է ֆրանսերենում, լիովին համարժեք կարող է համարվել բառային, սակայն ոչ իմաստաբանական ու գործաբանական մակարդակում: Այսպես՝ նշված նույնաբանությունը ֆրանսիացու համար անըմբռնելի կամ առնվազն տարօրինակ կլինի: Նույն պատկերը կկրկնվի *Les garçons seront les (des?) garçons - The boys will be (the) boys* նույնաբանական կառույցի դեպքում: Ա. Վերծրիցկան ենթադրում է, որ այս նույնաբանությունը լավագույն դեպքում ֆրանսիացու համար ընկալելի կլինի *Les garçons seront toujours les (des?) garçons - (The) Boys are always (the) boys* կառույցի տեսքով: Նույն իրավիճակը կլինի նաև, եթե *Boys will be boys* կամ *Boys are boys* նույնաբանությունները փոխանցվեն գերմաներեն. *Knaben werden Knaben sein* կամ *Knaben sind Knaben* համապատասխան գերմաներեն համարժեքները անընկալելի կլինեն գերմանացու համար: Նույն համեմատությունն անելով ռուսերենի հետ՝ Վերծրիցկան ստանում է հետևյալ արդյունքը:

??Мальчики это/есть мальчики

Boys are boys

??Мальчики мальчики

Boys (are) boys

Мальчики будут мальчики (мальчиками)

Boys will be boys

??Дети это есть дети

Kids are kids

Այս օրինակներից պարզ է դառնում, որ ռուսերենում անհրաժեշտ է օգտագործել հետևյալ հանգույցները *это, есть* և գրոյական հանգույց: Մակայն նույնիսկ այս դեպքում անգլերեն նույնաբանության գործաբանական իմաստը լիովին չի փոխանցվում: Ներակայումը ավելի ճշգրիտ փոխանցելու համար կարելի է օգտագործել *же* մասնիկը, ինչպես, օրինակ, այս նախադասության մեջ՝ *Они же мальчики* (they PRT boys) կամ *Они же дети*: Նման կերպ կարելի է օգտագործել նաև գերմաներեն *doch* մասնիկը: Վերոբերյալ օրինակի քննությունը փաստում է, որ նույնաբանական կառույցի նույնական փոխանցմանը մի լեզվից մյուսին խոչընդոտում են տվյալ լեզվամտածողությունն ու լեզվամշակույթին բնորոշ առանձնահատկությունները (ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստաբանական-գործաբանական): Անգլերենին բնորոշ *N is N* կառույցը նույնքան տարածված չէ այլ լեզուներում: Մեր դիտարկած օրինակին կարելի է ավելացնել ևս մեկը: Անգլերեն *War is war* նույնաբանությունը կիրառվում է, ըստ Վերժբիցկայի, պատերազմ երևույթի նկատմամբ սառը և զուսպ վերաբերմունք արտահայտելու համար՝ ընդունելով, որ այն դաժան է, և գրեթե անհնար է որևէ բան անել դրա ցավալի հետևանքները փոխելու համար: Վերժբիցկան այս նույնաբանությունը դասում է իրատեսություն մարդկային գործերում իմաստ արտահայտող կառույցների շարքին (Realism in human affairs), որոնք հիմնականում վերաբերում են մարդկանց բազմաբարդ գործունեությանը (complex human activities) և մարդկային փոխհարաբերություններին (Wierzbicka 2003: 404): Նմանատիպ նույնաբանությունները բովանդակային առումով պարունակում են

տվյալ երևույթի բացասական հետևանքների մասին նախապես տեղեկացված լինելու իմույթը: Այս նույնաբանություններն արտահայտում են կյանքի անխուսափելի կողմը, իրերի անշրջելի ընթացքը և որ նույնիսկ ավելորդ է դրա մասին երկար խոսելը: Դրանք կարծես կոչ են անում ընդունելու իրականությունը՝ ծանր ապրումներ ունենալու փոխարեն: Իրենց բնույթով դրանք արդեն ենթադրելի են դարձնում անցանկալի իրադարձություններն ու դրանց հետևանքները: Երբ նշված նույնաբանությունը՝ *War is war*, փորձում ենք փոխադրել դիցուք ռուսերեն, ապա այն հնարավոր է դառնում արտահայտել *Война есть война* կառույցի միջոցով, ինչը, սակայն, չի արտահայտում իր անզլերեն տարբերակի ողջ իմաստային դաշտը և չունի կիրառելիության նույն հաճախականությունն ու դերը: Դիտարկենք հետևյալ հատվածը, որը վերցված է Վ. Գրոսմանի «Կյանք և ճակատագիր» վեպի անզլերեն թարգմանությունից.

This isn't the moment for me to start talking about internationalism or class conscience. What matters is to mobilize the fury of the masses against the enemy. ... There's no place for Christian humanitarianism now. ...now the Germans have attacked the homeland of workers and peasants. **War's war! (Война есть война!)** They deserve what they get. (GV LF: 153)

Վերժբիցկան գտնում է, որ *War's war* նույնաբանական կառույցը մի փոքր տեղին ու սահուն չի հնչում տվյալ համատեքստում: Սա, ըստ նրա, պայմանավորված է անզլերենում տվյալ նույնաբանության իմաստային ու համատեքստային տարբերությամբ: Այստեղ Վերժբիցկան չի մասնավորեցնում, սակայն, թե հատկապես որոնք են այն իմաստային բաղադրիչները, որոնք առկա են ռուսերենում, ու որոնք էլ հենց այլ կերպ են արտահայտվում անզլերենում: Շարունակելով նրա միտքը՝ թերևս կարելի է ենթադրել, որ ռուսերենում *War's war (Война есть война)* նույնաբանությունը արտահայտում է այն իմաստը, որ պետք է հավաքել ուժերը, շարունակել դիմադրել՝ անկախ ամեն ինչից, ու մի կողմ դնել խաղաղ ժամանակների բնականոն կենսակերպը: Վերը նշված անզլերենին բնորոշ

նշանակությունը, այն է՝ եղածն ընդունել ու դրանից ողբերգություն չսարքել, այստեղ կարծես հետին պլան է մղվում կամ ընդհանրապես չի արտահայտվում:

Նույն խնդիրներն են առաջանում, երբ *War is war* նույնաբանական կառույցը փոխադրում ենք ֆրանսերեն: Ֆրանսերենում այս նույնաբանության իմաստը փոխանցվում է *C'est la guerre – That's war* արտահայտության, այլ ոչ *La guerre est la guerre – War is war* կառույցի միջոցով: Ստացվում է, որ իմաստային տեսանկյունից մենք ունենք առավել կամ պակաս ճշգրտությամբ անգլերեն նույնաբանության համարժեքը ֆրանսերենում, ինչը, սակայն, չի արտահայտվում նույնաբանության միջոցով⁶:

Այսպիսով՝ Վերժբիցկան, քննելով տարբեր լեզուների բնորոշ նույնաբանական կառույցների կառուցվածքային, իմաստային և գործաբանական առանձնահատկությունները, հակադրվում է Գրայսին և գտնում, որ նույնաբանական կառույցները ներհատուկ են տվյալ լեզվին, դրանց մեկնաբանությունը կախված է այդ լեզվին բնորոշ շարահյուսական կառույցներից, և հետևաբար նրանք չեն կարող մեկնաբանվել համընդհանրական գործաբանական կարգախոսներով (Walter 2008):

Վերժբիցկան չի կիսում նաև Լևինսոնի (Levinson 1983: 124) այն կարծիքը, որ *Boys will be boys* տիպի նախադասություններն անպայմանորեն ճիշտ են: Նա գտնում է, որ այս նախադասությունները ոչ թե փաստ են արտահայտում, այլ որոշակի վերաբերմունք, իսկ վերաբերմունքը չի կարող ճիշտ կամ սխալ լինել: Եվ քանի որ նշված վերաբերմունքը չի կարելի մեկնաբանել համընդհանուր սկզբունքներով, ապա այն պետք է դիտարկել որպես տվյալ լեզվին հատուկ նշանակություն⁷: Ըստ Քոուի Dictionary of Current Idiomatic English բառարանի, որտեղ մեկնաբանվում են *Boys will be boys* և *Business is business* նույնաբանությունները, առաջին նույնաբանությունը կիրառվում է որպես պատճառաբանություն, մինչդեռ երկրորդում փորձ է արվում արդարացնել ինչ-որ մեկին (Cowie 1986): Ա. Վերժբիցկայի կարծիքով Գրայսի տեսության կողմնակիցները չեն ցանկանում նկատել այս երկու կառույցների նուրբ տարբերությունը: Նա գտնում է, որ *Boys will be boys* և նմանատիպ նույնաբանությունները (*Students will be students; Wars will be wars; Business will be*

business և այլն) արտահայտում են հանդուրժողական վերաբերմունք, քանի որ *will-*ով կազմված կառույցները նշանակում են, որ դրանցում ներկայացված մարդկանց կամ երևույթների էությունը հնարավոր չէ գուցե կամ փոխել:

Համատեքստը, խոսողի ու խոսակցի հարաբերությունները և արտալեզվական գործոնները շատ կարևոր դեր ունեն նույնաբանությունների մեկնաբանման գործում: Այս միտքը հիմնավորելու համար Վերժբիցկան բերում է քթին թեթև խփելու նշանը, որն ընդունված է մի շարք մշակույթներում, սակայն տարբեր նշանակություններով: Նույն շարժումը տարբեր մշակույթներում մեկնաբանվում է տարբեր կերպ՝ տվյալ հասարակության մշակութային ու ավանդական նախապաշարումներով պայմանավորված: Հաճախ նույնաբանությունները կրում են միմյանցից տարբեր իմաստներ: Վերժբիցկայի կարծիքով անգլերեն նույնաբանությունները հաճախ սխալ կերպով ընդունվում են որպես համընդհանուր լեզվական միավորներ, որոնք լիովին համապատասխանում են Փ. Գրայսի կարգախոսներին, քանի որ դրանք կառուցվածքով պարզ են և առաջին հայացքից նման են տրամաբանական նույնաբանություններին: Իհարկե, կարևոր է նկատել, որ անգլերենի նույնաբանությունները մեծ մասամբ կազմված են *N is N* պարզ կառույցի միջոցով, որը շատ մոտ է *p is p* տիպի տրամաբանական կառույցներին (Wierzbicka 1988): Այլ լեզուներում նույնաբանություններ կազմելու համար ավելի բարդ կառույցներ են օգտագործում, սակայն դա չի կարելի մեկնաբանել կամ բացատրել անգլերեն նույնաբանությունների այսպես կոչված *ավելի բնական* և *պակաս պայմանական* լինելով: Անգլերենում նույնպես կան կաղապարներ, որոնք տարբեր մեկնաբանությունների տեղիք են տալիս ու միանշանակ նույն իմաստը չեն արտահայտում: Ինչպես նշվեց, Լևինսոնն առաջ է քաշում նույնաբանությունների մեկնաբանության իր բանաձևը, համաձայն որի՝ բոլոր նույնաբանություններին հատուկ է խոսակցությունը եզրափակելու գործառույթ: Այս դեպքում նույնաբանությունը արտաբերվում է «ես այլևս չեմ ցանկանում խոսել այդ մասին» իմաստով: Իհարկե, շատ դեպքերում հենց այս իմաստն է արտահայտվում, օրինակ՝ *Enough is enough* և *That's that*, սակայն չի կարելի պնդել, թե բոլոր իրադրություններում նույն միտքն է արտահայտվում: Օրինակ՝ պատկերացնենք

մի դեպք, երբ աղջնակի կատուն ընկնում է մեքենայի տակ, և անասնաբույժն ասում է նրան՝ *That's that*. Այստեղ, իհարկե, բժիշկը նկատի ունի, որ ամեն ինչ արդեն ավարտված է, սակայն նա ակնհայտ կերպով չի ցանկանում ասել, թե ես չեմ ցանկանում այլևս խոսել այս մասին: Նույն *Boys will be boys* արտահայտությունը նույնպես դժվար թե հնարավոր լինի մեկնաբանել «ես այդ մասին չեմ ցանկանում խոսել»-ի շրջանակներում: Անգլերենի նույնաբանությունների համար Ա.Վերժբիցկան առաջարկում է հետևյալ բանաձևը՝ «Ոչինչ հնարավոր չէ փոխել» (Wierzbicka 2003:441): Այս դիտանկյունից նույնաբանության կիրառումը ենթադրում է իրավիճակի հետ համակերպվելու առաջարկ, քանի որ այն հնարավոր չէ փոխել: Տվյալ մեկնաբանությունը բավականին կիրառելի է մեծ թվով նույնաբանությունների նկատմամբ, սակայն ոչ բոլորի: Օրինակ՝ *Coffee is coffee* արտահայտությունը նշանակում է, որ տարբերություն չկա, թե ինչ սուրճ է, և այս նույնաբանությունը չի փոխանցում իրավիճակի անփոխելի լինելու մասին տեղեկույթ:

Այսպիսով՝ Ա. Վերժբիցկայի մոտեցման հիմքում ընկած է այն միտքը, որ նույնաբանություններն արտահայտում են հասցեագրողի վերաբերմունքն ինչ-որ երևույթի կամ անձի վերաբերյալ: Իմաստաբանական տեսության մեջ, փաստորեն, բաժանարար գիծը տարվում է՝ ելնելով խոսողի, այսինքն՝ նույնաբանություն կիրառողի որոշակի վերաբերմունքից: Մարդկային տարաբնույթ արարքների նկատմամբ սառը, իրատեսական և գիտակից վերաբերմունքը արտահայտվում է *Nabstr. is Nabstr.* բանաձևով, մարդկային բնույթի հանդեպ հանդուրժողականությունը արտահայտվում է *N(hum.pl.) are N(hum.pl.)* բանաձևով, իսկ պարտականությունները/պարտավորվածությունը և մարդկային վարքի կանոնները համապատասխանում են *(Art) N is (Art) N* բանաձևին⁸:

Յ. Մայքաուերը Վերժբիցկայի հետ համաձայն է թերևս այն հարցում, որ նույնաբանության շարահյուսական որոշակի կաղապարը ազդում է դրա ընդհանուր մեկնաբանության վրա (Meibauer 2008): Այսպիսի միտումների մասին խոսվել է դեռևս Ռ. Գիբսի և Ն. Մաքքարելի փորձարարական գործաբանության մեջ (Gibbs, McCarrell 1990): Նրանք գտնում են, որ, օրինակ, *Boys will be boys* նույնաբանության կառուցվածքային առանձնահատկությունները պայմանավորում

են նրա ընդունելի կամ կիրառելի լինելը տվյալ լեզվամշակույթում: Ըստ իմաստաբանական տեսության՝ նույնաբանական կառույցներն ունեն շարահյուսական բազմազանություն (որոշյալություն/անորոշություն (definiteness/indefiniteness), եզակի/հոգնակի թիվ), գոյականների բազմազանություն՝ ըստ իմաստի (վերացական, անձ մատնանշող և այլն) և իմաստային երկիմաստություն (semantic ambiguity): Սակայն Մայքաուերի կարծիքով Վերծբիցկային չի հաջողվում տալ որևէ մեխանիզմ, որը կօգնի բացահայտել, թե ինչպես են այդ կառույցները իմաստ ձեռք բերում:

Այս առումով Բ. Ֆրեյզըրը (Fraser 1988: 217) նշում է, որ «Վերծբիցկան չի հստակեցնում, թե նույնաբանությունների քանի տեսակ/կադապար է հնարավոր զանազանել և ինչպես դրանք բնորոշել»: Ավելին, պետք է նշել, որ Ա. Վերծբիցկան հստակ հետևողականություն չի դրսևորում նաև այդ կադապարները իմաստային տեսանկյունից բնորոշելիս: Օրինակ՝ նա դիտարկում է *War is war* նույնաբանությունը՝ *Nabst.sing. is Nabst.sing.*, որպես սթափ հնազանդում արտահայտող նույնաբանություն: Նշենք, որ իմաստաբանական տեսանկյունից պետք է հստակ կապ լինի նույն կառույցն ունեցող նույնաբանությունների միջև: *War is war*-ը մեկնաբանվում է որպես «սթափ հնազանդում մարդկային բարդ գործունեությանը, որի հետևանքներն անխուսափելիորեն բացասական են, և որոնք պետք է հասկանալ ու հանդուրժել»: Մայքաուերը սրան հակադրում է, մի կողմից, *The law is the law* նույնաբանությունը, որն ունի նմանատիպ մեկնաբանություն, իսկ մյուս կողմից՝ միևնույն կառույցով կազմված *Love is love* նույնաբանությունը, որը նման վերաբերմունք չի արտահայտում (Meibauer 2008)⁹: Թերևս նույնաբանական կադապարներին իմաստներ վերագրելը կարելի է համարել Վերծբիցկայի տեսության խոցելի կողմը:

1.4. Նույնաբանությունը որպես խոսողի վերաբերմունքն արտահայտող կառույց

Ա. Վերծբիցկան, քննելով անզլերենի նույնաբանությունները, գտնում է, որ (*Art*) *N be (Art) N* բանաձևին համապատասխանում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ

նույնաբանական նմուշօրինակներ: Եվ այդ բազմաթիվ նմուշօրինակների իմաստներն ընկալելու համար, պետք է տարբերակել դրանց տեսակները և յուրաքանչյուրի իմաստը տարանջատել մյուսներից (Wierzbicka 2003: 403): Այնուհետև Ա. Վերծբիցկան առանձնացում է ինը տեսակի նույնաբանություն, որոնք բոլորն ունեն միևնույն կառուցվածքային բանաձևը, սակայն տարբեր նշանակություններ: Ըստ էության այն, ինչ նշում է Ա. Վերծբիցկան կոնկրետ իր ներկայացրած ներակայումների օրինակների ուսումնասիրության մեջ, ընդհանուր առմամբ կարող է ընդունելի լինել նրա բերած նմուշօրինակների համատեքստում: Երբ նա տարանջատում է «Իրատեսությունը մարդկային հարաբերություններում» (Realism in human affairs) ու որպես օրինակ մատնանշում *Politics is politics* նույնաբանությունը, նա, իհարկե, ոչ մի մերժելի միտք չի արտահայտում, սակայն դժվար չէ նկատել նման մեկնաբանության սուբյեկտիվ բնույթը: Անկախ որոշակի երևույթների (օրինակ՝ քաղաքականություն, պատերազմ, սեր և այլն) նկատմամբ մարդկային աշխարհայացքի ընդհանրություններից, լիարժեք չէ, թերևս, տվյալ պահի կամ տվյալ իրավիճակի, թեկուզ պատմական ու ժամանակային առումներով մեկ շրջանի մոտեցումը ներկայացնել որպես կայուն լեզվական կառույցի մեկնաբանություն: Որպես այս տեսակի նույնաբանությունների բնորոշ հատկանիշ նա նշում է մարդկային բազմաբնույթ հարաբերությունները, որոնք կարելի է բնութագրել որպես կենսաձև, կյանքի դրվածք, որոնք ունեն անխուսափելի բացասական կողմեր, ինչը պետք է ընդունել և հանդուրժել: Ֆորմալ տեսանկյունից նշվում է, որ տվյալ տեսակի նույնաբանությունները կառուցվում են առանց հողի: Սակայն նույն կաղապարով են կառուցվում *Enough is enough; Love is love* կամ *Sex is sex* նույնաբանությունները: Իհարկե, վերջիններս չեն ենթադրում կյանքի դրվածք, որից բխում են անխուսափելի բացասական հետևանքներ, ու որոնց հետ պետք է համակերպվել և հանդուրժել: Այժմ անդրադառնանք հենց անխուսափելի բացասական հետևանքի մեկնաբանությանը և դրան համակերպվելուն: *Politics is politics* նույնաբանությունը նույն հաջողությամբ կարելի է մեկնաբանել որպես անկանխատեսելի ու հաճախ երջանիկ պատահականություններով լի իրադրություն բնութագրող կառույց: Նույնիսկ կարելի է հեզմանք նկատել, երբ, ասենք, որևէ բացահայտ կողմնապահության դրսևորման պահին օգտագործվի այս

նույնաբանությունը: Կամ *Business is business*-ը, որը Ա. Վերժբիցկան դասում է նույն շարքում, միշտ չէ, որ ենթադրում է «անխուսափելի բացասական հետևանքներ»-ի իմաստ: Այն կարող է մեկնաբանվել որպես առանց ավելորդ հուզականության աշխատանք, արտահայտել գործի մեջ տարբերություն չդնելու գաղափար, որը ոչ մի անխուսափելի բացասական վերաբերմունք չի ենթադրում: Սակայն մյուս կողմից էլ չի բացառվում, որ նշված նույնաբանությունները արտահայտեն այն իմաստները, որոնք նշում է Ա. Վերժբիցկան:

Մեր համոզմամբ նույնաբանությունների արտահայտած իմաստը միշտ չէ, որ նույնն է: Խոսողի հաղորդակցական նպատակից, խոսքային իրադրությունից, հանրային համատեքստից, ինչպես նաև լսողի ընկալելու պատրաստակամությունից և կարողությունից ելնելով, միևնույն նույնաբանությունը մի քանի նշանակություն կարող է ունենալ: Ավելին, տարբեր խոսքային իրադրություններում այն ոչ միայն կարող է տարբեր իմաստներով դրսևորվել, այլև միևնույն ժամանակ ունենալ երկու իմաստ՝ առաջնային ու երկրորդական: Այժմ դիտարկենք երկու իրավիճակ, որտեղ կիրառվել է *War is war* նույնաբանությունը, և փորձենք տեսնել, թե արդյո՞ք դրանք լիովին համապատասխանում են Վերժբիցկայի դիրքորոշմանը:

1) But **war is war**. It isn't pretty. There will always be collateral damage, blue on blue incidents, and civilian casualties. It's not entirely avoidable. It can only be minimized.

(Reuters, <http://blogs.reuters.com/world-wrap/2009/03/26/wanted-an-ethical-code-of-war/>, (accessed 24 May, 2015))

2) Woe betide the working class, if it allows, even for an instant, the fascists to carry out their plan in Turin, as they have done in other cities. Even the slightest weakness, the slightest hint of indecision could be fatal. The response of the workers to the fascists' first try must be immediate, abrupt, ruthless; the response should be such that the memory of it is passed down to the great-grandchildren of capitalist masters. At the end of the day,

war is war and in war it is not agreed when the blows will be struck. (GA
SPN: 1921)

Առաջին օրինակում խոսողն ունի պատերազմին, դրա հետևանքով ստեղծված ավերածություններին, գոհերին ու դժբախտ պատահարներին համակերպված մարդու դիրքորոշում: Նա որևէ ելք չի տեսնում իրավիճակից, որևէ ընթացք չի առաջարկում և միայն նշում է, որ հնարավոր չէ լիակատար կերպով խուսափել պատերազմի աղետալի հետևանքներից, և լավագույն դեպքում կարելի է դրանք նվազեցնել: Խոսողը գտնում է, որ պետք է համակերպվել իրավիճակի հետ, և նրա շուրթերից *War is war*-ը հնչում է որպես իր դիրքորոշումն ամբողջացնող խոսք:

Մինչդեռ երկրորդ օրինակում խոսք անգամ չկա հանդուրժողականության կամ համակերպվածության մասին: Ընդհանրապես երկրորդ օրինակում խոսողի միտքը այլ տրամաբանությամբ է կառուցված: Եթե առաջին օրինակում խոսողի հաղորդակցական նպատակը պատերազմի աղետալի հետևանքների քիչ թե շատ ընդունելի պատճառաբանությունն բերելն է, ապա երկրորդում խոսողի հաղորդակցական նպատակն այլ է: Այսպես նա հստակ հայտարարում է, որ պետք չէ հանդուրժել թշնամու գործողությունները, և եթե ֆաշիստները հարձակվեն Թուրին քաղաքի վրա, ապա աշխատավոր դասը պետք է կտրուկ, անվարան ու դաժան պատասխան տա թշնամուն: Այստեղ *War is war* նույնաբանությունը հնչում է նախ և առաջ որպես կոչ, միավորվելու պահանջ, հանդուրժողականությունից ու մարդկայնությունից առժամանակ հրաժարվելու հրամայական:

Այսպես մենք տեսանք, որ միևնույն կաղապարով կազմված *War is war* նույնաբանությունը երկու տարբեր դիսկուրսներում օգտագործվում է տարբեր հաղորդակցական նպատակներ իրականացնելու համար: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Ա. Վերժբիցկայի «Իրատեսություն մարդկային հարաբերություններում» դասի մեջ մտնող *War is war* նույնաբանությունը ոչ միշտ է համապատասխանում նմանատիպ նույնաբանությունների հաղորդակցական-գործաբանական արժեքին: Սա հիմք է տալիս կասկածի տակ դնելու նման դասակարգումը, եթե ոչ ամբողջովին, ապա գոնե տվյալ դասի մասով: Սակայն ի՞նչն էր պատճառը, որ միևնույն լեզվական կառույցը երկու տարբեր

դիսկուրսներում փոխանցեց միմյանցից զգալիորեն տարբեր տեղեկույթ և իրականացրեց տարբեր հաղորդակցական գործառնություններ: Այս հարցը ավելի հանգամանակից կքննարկվի աշխատանքի հաջորդ գլուխներում: Իսկ աշխատանքի այս մասում պարզապես հարկ ենք համարում նշել, որ այս տարբերության պատճառը պետք է փորձել գտնել նույնաբանական կառույցի բուն կառուցվածքային մակարդակում, ինչպես նաև կոնկրետ հաղորդակցական իրադրության լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների փոխներգործությունը նկատի ունենալով:

Այժմ դիտարկենք Ա. Վերժբիցկայի հաջորդ խմբի նույնաբանությունները, որոնք նա զլխագրել է «Հանդուրժողական մոտեցում մարդկային բնույթի հանդեպ» (Tolerance for human nature): Որպես նման տեղեկույթ փոխանցող նույնաբանությունների բանաձև՝ նա տալիս է հետևյալ կաղապարը՝ *Nhum. pl. are Nhum. pl.* (Wierzbicka 1991: 405) և բերում է հետևյալ օրինակները.

Boys are boys. Kids are kids. Women are women. Children are children.

They are there to be put up with (Pascal 1981: 34)

Ա. Վերժբիցկայան գտնում է, որ թեև այս խումբը բավական նման է նախորդին, հատկապես բանաձևի առումով, սակայն իմաստային ու գործաբանական տեսանկյունից նուրբ տարբերություններ կան: Այսպիսով՝ մի կողմից նույնաբանություններն ունեն նույն բանաձևային կառույցը, մյուս կողմից՝ կարող են տարբերվել իրենց իմաստային և գործաբանական հատկանիշներով: Հետևաբար կարծում ենք, որ Ա. Վերժբիցկայի նման դասակարգումը այնքան էլ ընդունելի չէ: Փոխարենը կարելի է ընդունել այն դիրքորոշումը, որ խոսողն ինքն է տվյալ խոսույթում տալիս այն սահմանը, որի շրջանակներում լսողը պետք է ընտրի խոսողի հաղորդակցական նպատակին համապատասխանող ամենատեղին ու ամենահամապատասխան այլընտրանքային տարբերակը: Ավելին, երբ Ա. Վերժբիցկայան փորձում է ցույց տալ *War is war* և *Kids are kids* նույնաբանությունների տարբերությունը, նրա հիմնավորումն այն է, որ պատերազմի կամ բիզնեսի մասին կարելի է ասել, որ դրանք կեղտոտ են և առհասարակ կապվում են մարդկային

գործունեության վատ ու բացասական կողմերի հետ, սակայն նման ընդհանրացումն արդեն, բնականաբար, չի կարող տարածվել երեխաների վրա: Վերծրիցկյան գտնում է, որ վատ հատկանիշով կարող են բնութագրվել մարդկային գործողությունները, արարքները (պատերազմ, բիզնես, քաղաքականություն), բայց այն չի կարող ներկայացնել մարդկային բնույթը:

Սակայն, ինչպես արդեն քննարկեցինք վերևում, «Իրատեսություն մարդկային հարաբերություններում» խմբին պատկանող նույնաբանությունը տարբեր համատեքստերում կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ: Ուստի առնվազն մակերեսային է թվում որոշ նույնաբանությունների խմբավորումը վատ ու բացասական հետևանքներով մարդկային գործողությունների խմբի մեջ, քանի որ դրանց գործառույթը միշտ չէ, որ նույնն է: Այժմ դիտարկենք *Women are women* նույնաբանությունը, որն, ըստ Վերծրիցկայի դասակարգման, պատկանում է «Մարդկային բնույթի հանդեպ հանդուրժողական մոտեցում» արտահայտող նույնաբանությունների շարքին: Նա այս նույնաբանությունը մեկնաբանում է *Boys will be boys* նույնաբանությանը բնորոշ մեկնաբանության բաղադրիչներով.

Everyone knows:

People of this kind do things like this

One would want them not to do things like this

I know someone can think

This is bad

They should not do it

I think: one should not think this

One should know:

All people of this kind are the same

They want to do things like this

Because they want to feel something good

They will do them because of that

They cannot not do them

I don't want to think: this is bad

I don't want to feel something bad because of this

I think: people of this kind are not bad¹⁰.

Ակնհայտ է, որ սույն մեկնաբանության առանցքում ընկած է կանանց ընդհանրացնելու գաղափարը. դիտարկել նրանց՝ որպես միանման կամ գոնե հիմնականում միանման էակներ: Անկախ նրանից, թե միևնույն սեռի կամ որևէ հատկանիշի շուրջ համախմբված երևույթները, էակները որքան ընդհանրություններ ունեն, նրանք ունեն նաև տարբերություններ, և, կարծում ենք, այնքան էլ ընդունելի չէ առանց այդ տարբերությունները հաշվի առնելու բերել ընդհանրացված մեկնաբանություններ:

Վերծրիցկան առանձնացնում է անզլերենի նույնաբանությունների ևս մի խումբ, որոնք հանդուրժողական վերաբերմունք են արտահայտում որոշ գործողությունների, իրավիճակների նկատմամբ, ունեն հաճելի բնույթ և կատարվում են հատուկ առիթներով, ինչպես, օրինակ, արձակուրդ, ծնունդ, խնջույք, հավաքույթ և այլն (Wierzbicka 2003: 408): Նա դիտարկում է հետևյալ օրինակները.

A picnic's a picnic.

A party is a party.

A holiday is a holiday.

A honeymoon is a honeymoon.

A game is a game.

Նա նշում է, որ դժվար թե կիրառվեն *A Monday is a Monday; An autumn is an autumn; A morning is a morning* նույնաբանական կառույցները, եթե, իհարկե, տարբերակում չենք մտցնում նշված *երկուշաբթիների* միջև: Այս խմբի նույնաբանությունների իմաստային առանցքն այն է, որ պետք է հանդուրժող ու համբերատար լինել անհարմարությունների նկատմամբ, որոնք առաջանում են կամ կարող են առաջանալ նմանատիպ հատուկ առիթների արդյունքում: Ա. Վերծրիցկան գտնում է, որ հնարավոր չէ ասել *A picnic will be a picnic; A holiday will be a holiday*, ինչպես

կարելի է ասել *Boys will be boys*, քանի որ պիկնիկի կամ արձակուրդի պարագայում հանդուրժողական լինելը պատճառաբանվում է այդ ժամանակահատվածների հատուկ բնույթով: Նա կարծում է, որ will-ով կառուցված նույնաբանությունները տվյալ դեպքում չեն կարող կիրառվել, քանի որ դրանք չեն հիմնվում մարդուց անկախ գործող կանխատեսելի ապագայում տեսանելի երևույթների վրա (այս մասին ավելի մանրամասն տե՛ս 2-րդ գլխում): Սակայն կարծում ենք, որ *A picnic will be a picnic* տարբերակը չի օգտագործվում ոչ թե նշված պատճառով, այլ որովհետև տվյալ պարագայում ներկա ժամանակաձևը, որով կառուցված է *A picnic is a picnic* նույնաբանությունը, ընդգրկում է ոչ միայն տվյալ պահը՝ ներկան, այլ նաև ընդհանրապես պիկնիկ երևույթը: Տվյալ նույնաբանությանը չի կարելի վերագրել որոշակի ժամանակահատված, որում այն ճիշտ է, իսկ մյուսում՝ ոչ: *Պիկնիկ*-ը քիչ թե շատ, ըստ էության, նույնն է: Եթե այն շատ շեղվի պիկնիկի ընդունված, այսպես ասած բառարանային իմաստից, ապա այն կդադարի այդպիսին լինելուց: Իսկ քանի որ այդ հավաքը նշույթավորվում է *պիկնիկ* բառով, այն պետք է պարունակի պիկնիկին հատուկ, բնորոշ գծերը: Ուստի տվյալ նույնաբանությունը վերաբերում է ոչ միայն որևէ կոնկրետ պիկնիկի, այլ ընդհանրապես պիկնիկ երևույթին, անկախ ժամանակից: Սակայն, ինչպես նշեցինք, ոչ միայն ընդհանուր պիկնիկ երևույթն է տվյալ նույնաբանությամբ նկատի առնվում, այլև այն կարելի է օգտագործել շատ կոնկրետ իրավիճակում և ըստ տվյալ համատեքստի տալ իմաստ: Օրինակ՝ այն կարող է նշանակել, որ պիկնիկն ընդամենը հավաք է մաքուր օդում և ոչինչ ավելի կամ ընդհակառակը՝ պիկնիկը շատ հատուկ հավաք ու ժամանց է, քանի որ այն տեղի է ունենում բաց երկնքի տակ, բնության գրկում և այլն: Այսինքն, ըստ հաղորդակցական նպատակի, տվյալ նույնաբանությունը կարող է տարբեր իմաստներ ունենալ:

Պետք է առանձնացնել ևս մեկ հանգամանք. Վերժբիցկայի կողմից կիրառելի չհամարվող նույնաբանությունները՝ *A picnic will be a picnic; A holiday will be a holiday*, ունեն հետևյալ կառուցվածքը՝ *a will be a*: Ինչպես տեսել ենք, շատ նույնաբանություններ ունեն տվյալ կառույցը, թեկուզ նույն *Boys will be boys*-ը: Սակայն մի դեպքում ստացվում է, որ այդ նույն կառույցով կազմված նույնաբանություններից մեկը հնարավոր է գործածել, իսկ մյուսը՝ ոչ: Այստեղ

հարց է առաջանում, որ եթե կառուցվածքային տեսանկյունից այս նույնաբանությունները նույնական են, ապա ի՞նչն է դրանց տարբերությունը, որի պատճառով մեկը կիրառելի է, իսկ մյուսը՝ ոչ: Այս հարցին պատասխանելու համար նախ պետք է հստակեցնել, թե ինչ ենք հասկանում՝ կիրառելի ասելով: Կիրառելիությունը տվյալ պարագայում ընկալելի լինելն է լեզվական հանրույթի կողմից: Այսինքն, եթե որևէ կառույց ընկալելի ու ընդունելի է հասկացական մակարդակում, ապա այն կիրառելի է դառնում խոսքում, հակառակ դեպքում՝ ոչ: Այստեղ կրկին խոսքնկերոջ մոտեցման խնդիրն է առաջնային պլան մղվում: Այս կամ այն կառույցը, կախված նրանից, թե ինչպես այն կնշույթավորվի որպես լեզվական բարդ կառույց, ըստ այդմ էլ կլինի կիրառելի կամ ոչ: Սա չափազանց ակնառու է նմանատիպ նույնաբանությունների պարագայում, երբ կառուցվածքով իրար նման լեզվական միավորներից մեկն ընդունելի է լեզվի համար, մյուսը՝ ոչ: Կարծում ենք, սակայն, այս հարցին ևս զգուշորեն ու որոշակի վերապահումով է պետք մոտենալ: Ինչպես արդեն նշվեց, փաստորեն, լեզվական հանրույթն է վճռորոշ դեր խաղում այս կամ այն կառույցի կենսունակության հարցում և, ելնելով այն փաստից, որ հանրությունը անընդհատ շարժվող ու երբեք ճիշտ նույն վիճակում չմնացող միավոր է, ապա կարելի է, թերևս նույնիսկ որոշ վստահությամբ, ենթադրել, որ այն կառույցները, որոնք տվյալ պահին լեզվի համար կիրառելի չեն, հետագայում, ըստ համատեքստի պահանջի կամ խոսողի հաղորդակցական նպատակի, հնարավոր է դառնան կիրառելի:

Վերժբիցկայի նույնաբանությունների իմաստակառուցվածքային դասակարգումը միշտ չէ, որ հետևողական է: Սա նկատելի է, օրինակ, երբ նա խոսում է հանդուրժողականության սահմանների մասին (Wierzbicka 2003: 410): Նախ նա նշում է, որ *Enough is enough* նույնաբանությունն արտահայտում է կոշտ ու չհանդուրժող կեցվածք և կիրառվում է խոսողի՝ այլևս հանդուրժել չցանկանալու նպատակը ցույց տալու համար, իսկ *Boys will be boys*-ը, հակառակը, ցույց է տալիս խոսողի հանդուրժողական ու ներող կեցվածքը: Սակայն հենց ինքն էլ բերում է, օրինակ, *A joke is a joke (but that's enough)* (տե՛ս նույն տեղում), որտեղ խոսողը խիստ ու անհանդուրժող չէ: Այստեղից նա հետևություն է անում, որ *Enough is enough*-ը ավելի մոտ է *A picnic is a picnic* կամ *Boys will be boys*

նույնաբանություններին՝ որպես հանդուրժողականության նշանակություն ունեցող կառույց, ինչը հակառակ է իր իսկ կողմից առաջարկված *Enough is enough*-ի մեկնաբանությանը: Սակայն նույն կերպ կարելի է գտնել այլ օրինակներ, որտեղ *Enough is enough*-ն օգտագործվում է հենց խիստ ու անհանդուրժող դիրքորոշում ցույց տալու համար: Օրինակ՝

At dawn the people of Sasoon were stiff and cross. They knocked on Ohan's door at the top of the tower.

“Ohan” they carped. “**Enough is enough**. Look at the mess. Look at the madness. And look at you: doing nothing!”

(SJ DD: 20)

Այստեղ արդեն *Enough is enough*-ը ոչ մի կերպ հանդուրժողական կամ ներելու հակված դիրքորոշման նշանակություն չի կարող ունենալ: Իրականում Վերժբիցկայի տվյալ դիտարկումը հետաքրքրական ու կարևոր է այն իմաստով, որ նա ցույց է տալիս նույնաբանության նշանակության ոչ միանշանակ ու սահմանելի լինելը: Ըստ հաղորդակցական իրադրության՝ նույնաբանության արտահայտած իմաստը կարող է շատ կամ քիչ փոփոխվել:

Օրինակ՝ սահմանափակման վերաբերական *only*-ի կիրառությունը նույն *A woman is a woman* կառույցում փոխում է դրա նշանակությունը: Եթե *A woman is a woman*-ի նշանակությունն այն է, թե անկախ բոլոր հնարավոր տարբերություններից, կոնկրետ որևէ կին էականորեն տարբեր չէ մյուսներից, մինչդեռ, երբ օգտագործված է *only*-ն, ստացվում է, որ ամբողջ կանանց դասի նշանակությունն ու արժեքն է իջեցվում՝ *A woman is only a woman*: Նույն իմաստը տարածվում է նաև.

A kiss is a kiss/ A kiss is just a kiss

A smile is a smile/ A smile is just a smile

(Wierzbicka 2003: 415)

Նախ համաձայնենք, որ *only* վերաբերականի կիրառությունը նվազեցնում է կանանց արժեքը տվյալ օրինակում, ինչպես *always*-ը, օգտագործվելով համապատասխան միջավայրում, համապատասխան ձայներանգի ու ժեստերի ուղեկցությամբ ու խոսողի ու խոսակցի կողմից ընդհանուր հասկանալի և ըմբռնելի նախապատմության պայմաններում, լրիվ կփոխի նույնաբանության նշանակությունը, և կստացվի, որ ընդգծվում են կանանց բացառիկ կարողությունը և այդ կարողության մշտականությունը: Մյուս կողմից էլ՝ նույն *always*-ը համապատասխան խոսքային իրադրությունում կարող է նշանակել, որ կանայք թույլ են, ու սա երբեք չի փոխվի: Խոսքային իրադրությունը կախված է խոսքային նպատակից և հակառակը: Պետք է նշել, որ թեպետ *only* վերաբերականը տվյալ կառույցում զգալի դեր է խաղում, սակայն այն բուն կառույցի մաս չէ, այսինքն՝ *only*-ն լսողի համար որպես համատեքստային բաղադրիչ է ծառայում: Դրա գործառույթը խոսողի վերաբերմունքը, հաղորդակցական նպատակը և ի վերջո տվյալ նույնաբանության գործաբանական ներուժը ստեղծելն է: Մեկ այլ օրինակում դիտարկվում են հետևյալ տարբերակները.

“Late in her life, Dr. Black remarked that she did not get along with women. This can be attributed to the fact that in order for her to win acceptance as a doctor in the 1920s, she had to completely blend in, to become invisible in terms of gender, just to become a doctor. In those days **“women were women, men were men. And doctors were men.”**

(http://www.gov.mb.ca/msw/publications/whm2001_drs.html (accessed 15 September, 2015))

In Japan, **women are still women.**

(Nasioc, <http://forums.nasioc.com/forums/showthread.php?t=2198963&page=2> (accessed 15 September, 2015))

Մրանք քննվում են որպես դեպքեր, որտեղ նույնաբանության գործաբանական նշանակությունը ափսոսանք փոխանցելն է, այլ ոչ թե թողտվություն,

համեմատելով կանանց ու տղամարդկանց և *women were women* նույնաբանությունը հակադրելով *men were men* նույնաբանական կառույցին՝ խոսողը փորձում է ընդգծել կանանց ու տղամարդկանց միջև եղած տարբերությունն անցյալում: Սակայն մեզ համար այստեղ կարևոր է ցույց տալ, որ միևնույն նույնաբանությունը տարբեր խոսքային համատեքստերում որոշակիորեն տարբեր նշանակությամբ է կիրառվում և ստանում տարբեր հաղորդակցական-գործաբանական արժեք: Անդրադառնալով *a point is a point*-ին՝ Վերծրիցկան գտնում է, որ տվյալ նույնաբանությամբ խոսողը կարևորում է ամեն մի միավորի արժեքն ու կարևորությունը: Սակայն ուսանողության շրջանում հաճախ կարելի է լսել միևնույն նույնաբանությունը բոլորովին այլ նշանակությամբ: Երբ որևէ ուսանող մեկ կամ մի քանի միավոր ցածր է ստանում, հաճախ կարելի է լսել, որ ընկերներն ասեն *a point is a point*, այսինքն՝ գնահատականի պատճառով չարժե տիրել կամ հուսահատվել: Գոյություն ունի նաև մեկ այլ կիրառություն, երբ առանձնապես վատ առաջադիմություն ունեցող ուսանողները հաջողացնում են մինիմալ անցողիկ շեմի գնահատական ստանալ և շնորհավորում են միմյանց՝ *a point is a point*:

Այսպիսով, շեշտելով, որ նույնաբանական կառույցները վերաբերմունք արտահայտող լեզվական միավորներ են, Վերծրիցկան փորձում է ցույց տալ, որ դրանց արտահայտած այդ վերաբերմունքը պայմանավորված է լեզվին հատուկ քերականական կառուցվածքով: Մինչդեռ, ինչպես ցույց տվեց մեր քննությունը, միևնույն նույնաբանական կառույցը տարբեր խոսքային իրադրություններում կարող է դրսևորել տարբեր իմաստներ և ձեռք բերել տարբեր մեկնաբանություններ, և որ այդ մեկնաբանությունները միշտ չէ, որ պայմանավորված են միայն նույնաբանության կառուցվածքային առանձնահատկություններով:

Մի շարք լեզվաբաններ, օրինակ՝ Ռ. Գիբբսը, ընդունելով, որ նույնաբանությունները հիմնականում կիրառվում են որոշակի վերաբերմունք փոխանցելու համար, նշում են, որ հենց նույնաբանությունների ձևական կառուցվածքի միջոցով լսողը որոշակի մոտեցում կամ վերաբերմունք է ձևավորում նույնաբանական կառույցի գոյականական անդամի նկատմամբ: Այս

վերաբերմունքի բնույթը կախված է ասույթի համատեքստից, ինչպես նաև խոսքընկերների համար մի շարք ընդհանուր կարծրատիպային ընկալումներից (Gibbs, McCarrell 1990: 347-348; Van der Sandt 1991): Բ. Ֆրեյզը այս մոտեցմանը հավելում է, որ երբ խոսողը ցանկանում է, որ լսողն ընկալի որոշակի վերաբերմունք որևէ առարկայի հանդեպ, վերջինս պետք է վերծանի խոսողի կողմից կողմորած կոնկրետ հատկանիշը կամ հատկանիշները (Fraser 1988: 220):

Է. Միքին կիսում է Ռ. Գիբբսի և Բ. Ֆրեյզրի այն կարծիքը, որ նույնաբանությունները վերահաստատում են խոսքընկերների դիրքորոշումներն ու մոտեցումները: Նույնաբանական կառույցի միջոցով լսողի մոտ առաջ բերելով որոշակի դատողություն՝ խոսողը կապում է արդեն հայտնի գիտելիքը տվյալ համատեքստի հետ և այդպիսով վերահաստատում փոխադարձաբար ընդունելի մոտեցումները: Է. Միքին այնուհետև որոշակիացնում է և վերահաստատում ասվածը՝ նշելով, որ նույնաբանության միջոցով խոսողը իր խոսակցին կարող է փոխանցել համաձայնության և միասնականության կամ կարեկցանքի ու դաշնակցության զգացողություն: Մյուս կողմից՝ խոսքընկերների ընդհանուր գիտելիքի բնույթը կարող է տարբեր իրադրություններում տարբեր լինել: Այդ ընդհանուր գիտելիքը կարող է հիմնված լինել նախորդ դիսկուրսի, միմյանց ընտանիքների, ընդհանուր ընկերների մասին ունեցած տեղեկության, ընդհանուր ենթամշակույթից եկող գիտելիքի կամ տվյալ հանրույթի անդամների համար ընդհանուր հասկացությունների և պատկերացումների վրա: Ընդհանուր գիտելիքի լայն հնարավորությունների դաշտով պայմանավորված՝ նույնաբանությունների մեկնաբանությունների հնարավոր տարբերակների բազմազանության հավանականությունը նույնպես մեծանում է (Miki 1996: 641-643): Որպեսզի պատկերավոր կերպով ցույց տանք նույնաբանությունների մեկնաբանման ու վերծանման համընդհանուր կաղապար գտնելու բարդությունը, այստեղ կներկայացնենք երկու օրինակ: *Boys will be boys* նույնաբանությունը մի համատեքստում կարող է մեկնաբանվել, որ տղաների պահվածքն անկառավարելի է, իսկ մեկ ուրիշ համատեքստում կարող է նշանակել, որ նրանք համակրելի են ու հաճելի: Այս դիտարկումը պարզորոշ ցույց է տալիս, որ նույնաբանության ներակայումը կախված է ոչ միայն համատեքստից, այլև խոսքընկերների ունեցած

ընդհանուր գիտելիքից (Gibbs 1994: 346; Putnam 1975 b; Tsujimoto 1996): Կարելի է ընդհանրացրած կերպով ասել, որ անգլերեն նույնաբանությունների փոխանցած նշանակությունը հանգեցնում է *this cannot be changed* մեկնաբանությանը: Այս մեկնաբանությունը հարմար է այնպիսի նույնաբանական կառույցների համար, ինչպիսիք են *A snake is a snake* կամ *Kids are kids; Boys will be boys; Let bygones be bygones; Enough is enough* և *That's that*, սակայն հետևյալ արտահայտությունը՝ *I don't care what brand – coffee is coffee*, ակնհայտորեն բացառություն է, որն արտահայտում է խոսողի անտարբերությունը (Wierzbicka 1991: 441-442): Ուստի, ինչպես նշում են ոչ իմաստաբանական մոտեցման կողմնակիցները, բարդ կլինի գտնել տարբեր տեսակի նույնաբանությունների և խոսողի հաղորդակցական նպատակի մեկնաբանման համար պիտանի որևէ համընդհանուր մեթոդ, քանի որ նույնաբանության յուրաքանչյուր նմուշ կրում է իրեն հատուկ զուգորդումները և կարծրատիպերը: Այս խնդրի ամբողջ բարդությունն առավել ցայտուն է արտահայտվում, երբ միննույն նույնաբանությունը, տարբեր համատեքստերում կիրառվելով, արտահայտում է բոլորովին տարբեր մոտեցումներ կամ վերաբերմունքներ որևէ երևույթի կամ առարկայի հանդեպ:

1.5. Նույնաբանությունը գործաբանական տեսությունների լույսի ներքո

Նույնաբանության մեկնաբանման ու դրա հաղորդակցական-գործաբանական արժեքի վերլուծության տեսակետից կարևոր մոտեցում են առաջ քաշում Ջ. Վորդը և Ջ. Հիրշբերգը: Նրանց տեսությունը նույնպես, ինչպես արդեն նշվեց, հիմնվում է Գրայսի քանակի կարգախոսի վրա: Վորդը և Հիրշբերգը գտնում են, որ Վերժբիցկայի տեսությունը, որ հիմնովին հակադրվում է Գրայսի և նրա հետևորդների՝ Լևինսոնի, Ֆրեյզրի և այլոց տեսակետներին, ունի թերի կողմեր: Վերժբիցկան գտնում էր, որ նույնաբանությունը պետք է դիտարկվի որպես տվյալ լեզվին հատուկ, խոսողի վերաբերմունքն արտահայտող երևույթ (attitudinal phenomenon) և թերի էր համարում Գրայսի համընդհանրական մոտեցումը (universalist approach): Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի առաջ քաշած մոտեցման համաձայն՝ նույնաբանություն կիրառելիս խոսողը օգտագործում է Փ. Գրայսի

քանակի և տեղիիության կարգախոսները, ընդհանրացված հաղորդակցական ներակայույթ արտահայտելու նպատակով (Ward, Hirschberg 1987: 508; Power 1979; Murphy 2003):

Վորդը և Հիրշբերգը նշում են, որ թեպետ հնարավոր է, որ նույնաբանական արտահայտությունները խոսույթին ոչ մի նոր իմաստ չհաղորդեն, միևնույնն է չի կարելի ասել, թե դրանք անիմաստ են և ոչ մի արժեք չեն հաղորդում խոսքին: Դիտարկենք հետևյալ օրինակը.

GW: I wonder if their cheeseburger is any good. **A cheeseburger's a cheeseburger**, right?

AE: Not always. Depends on the cheeseburger. (Ward, Hirschberg 1991)

Այս օրինակում ակնհայտորեն նույնաբանությունը լրացուցիչ նշանակություն է հաղորդում այն կիրառողի խոսքին: Ռ. Հարնիշը (Harnish 1976) գտնում է, որ AE-ի պատասխանը հակադրման դեպք չէ, և պարզ է, որ մեկ այլ բան է նկատի առնվում այս հերքումով: Որպես փաստարկ, որ նույնաբանությունը խոսքին հավելյալ նշանակություն է հաղորդում, բերվում է այն փաստը, որ այս երկխոսության մեջ հնարավոր չէ եղած նույնաբանությունը փոխարինել որևէ այլ ցանկացած նույնաբանությամբ: Հարնիշը (Harnish 1976) հարց է բարձրացնում նաև, թե արդյո՞ք նույնաբանությունը արդյունավետ երևույթ է՝ ենթադրելով, որ նույնաբանական արտահայտությունները պետք է մեկնաբանվեն որպես հաղորդակցական ներակայման բավականին պայմանականացված ձև:

Վորդը և Հիրշբերգը թերի են համարում Վերժբիցկայի ներկայացրած քննադատությունն ու առաջ քաշած վարկածը նույնաբանությունների մեկնաբանման ու դրանց ունեցած հաղորդակցական-գործաբանական արժեքի վերաբերյալ: Մասնավորապես նրանք գտնում են, որ այն պնդումը, թե բառացի թարգմանությունները պետք է ինչ-որ կերպ պահպանեն ներակայումը, ավելի համոզիչ չէ, քան այն, որ բառացի թարգմանությունը անպայմանորեն ներառում է արտահայտության նշանակության ցանկացած այլ հայեցակետ, ինչպես, ասենք, երկրորդական իմաստը: Երկրորդ՝ այն փաստը, որ որոշ անգլերեն

նույնաբանական արտահայտություններ հնարավոր չէ ուղիղ իմաստով թարգմանել, իսկ այն դեպքերում, երբ թարգմանվում են, կարող է թարգմանվող լեզվում որոշ չափով այլ նշանակություն փոխանցել, դեռ չի նշանակում, որ նույնաբանական արտահայտությունների մեկնաբանությունը չի կարելի սահմանել համընդհանուր սկզբունքներով: Դիտարկենք հետևյալ օրինակը.

La guerre c'est la guerre նույնաբանությունը ոչ միայն ճիշտ է քերականորեն, այլև փոխանցում է անգլերեն *War is War* նույնաբանության նշանակությանը համարժեք նշանակություն: Կարելի է նմանաբնույթ զուգահեռներ տանել իսպաներեն *Que sera' sera'* և անգլերեն *Whatever happens, happens*, ֆրանսերեն *Si tu peux pas, tu peux pas* և *If you can't, you can't* նույնաբանական կառույցների միջև: Երրորդ՝ միննույն ներակայումը տարբեր լեզուներում կարելի է փոխանցել տարբեր նույնաբանություններով: Օրինակ՝ իսպաներենի անշաղկապ *El que vale, vale* նույնաբանությունն իր հաղորդած ներակայության նշանակությամբ մոտ է անգլերենի պայմանական *If you've got it, you've got it*, ֆրանսերենի պայմանական *Si je me fâche, je me fâche* մոտ է անգլերենի *When I get angry, I get angry* նույնաբանական արտահայտությանը:

Եվ չորրորդ, երբ նույնիսկ առկա են տարբերություններ լեզուների շարահյուսական կաղապարներում, որոնցով նույնաբանություններն արտահայտվում են, ապա դա չի կարող խոչընդոտել նույնաբանական կառույցների համապատասխան մեկնաբանությանը:

Վորդը և Հիրշբերգը նորովի են մեկնաբանում նույնաբանական կառույցները Գրայսի առաջ քաշած մոտեցման շրջանակներում: Թերի կողմեր գտնելով վերը նշված տեսությունների մեջ՝ նրանք առաջարկում են իրենց վարկածը (Ward, Hirschberg 1991: 510): Համաձայն նրանց տեսության՝ խոսակիցները նույնաբանություններ են օգտագործում Գրայսի քանակի ընդհանրացված ներակայումները փոխանցելու նպատակով: Այսպիսով, նույնաբանություն օգտագործելով՝ խոսողը դուրս է գալիս քանակի կարգախոսի շրջանակներից՝ հնարավորություն տալով ենթադրելու, որ որոշակի մտքի արտահայտման հնարավոր տարբերակներ մտադրված կերպով չեն ընտրվել խոսքում: Լսողը կարող է ընկալել հենց այս այլընտրանքային տարբերակները՝ ելնելով արդեն

արտաբերված արտահայտությունից: Ասույթի ենթատեքստից կախված՝ գրուցակիցը հասկանում է, թե որ այլընտրանքային արտահայտություններից է խոսողը մտադրված կերպով խուսափել: Բուն ասույթը (the source utterance) որոշակիացնում է բացառվող այլընտրանքային տարբերակների շրջանակը, իսկ համատեքստն օգնում է որոշելու, թե այս տարբերակներից որը պետք է հասկանալ որպես հասցեագրողի կողմից բացառվող տարբերակ: Դիտարկենք Վորդի և Հիրշբերգի օրինակը: Ենթադրենք թե խոսողը իր խոսքում օգտագործել է *War is war* նույնաբանությունը: Լսողը կարող է հասկանալ այն հետևյալ կերպ.

1. Խոսողն արտաբերել է *a is a* ձևի նույնաբանություն, ինչը ոչ մի նոր բան չի ավելացնում մեր ընդհանուր գիտելիքներին ու հատկապես ոչ մի նոր տեղեկություն չի ավելացնում կոնկրետ *a*-ի մասին:

2. Ելնելով այն դրույթից, որ խոսողը հետևում է համագործակցության սկզբունքին, ապա ըստ քանակի ու տեղիության կարգախոսների՝ նա ասել է այնքան, ինչքան որ ճիշտ է *a*-ի մասին:

3. Խոսողը կարող էր նմանատիպ այլ ասույթներ օգտագործել, օրինակ՝ *a is b* (որտեղ *a*-ն և *b*-ն միմյանցից տարբեր արտահայտություններ են), ինչը կարող էր ինչ-որ նոր բան ավելացնել մեր՝ *a*-ի մասին ունեցած գիտելիքներին:

4. Խոսողը որոշեց չարտաբերել այսպիսի այլընտրանքային տարբերակներ իր խոսքում:

5. Այսպիսով՝ սա վկայում է, որ այս այլընտրանքային տարբերակները տեղին չեն տվյալ հաղորդակցական գործընթացի համար:

Խոսողի կողմից նույնաբանական ասույթի կիրառման արդյունքում լսողը կարող է ենթադրել, որ *a is a*-ի ցանկացած այլընտրանք, ցանկացած *a is b* (որտեղ *b*-ն ներկայացնում է *a*-ի որոշակի հատկանիշներ, կամ *a*-ի կողմից մատնանշված դասին պատկանող անդամների միջև որոշակի տարբերություն, կամ *a*-ի նույնականացում այլ երևույթների հետ) տեղին չէ տվյալ հաղորդակցական իրադրությունում: Խոսողը կարող է ցանկանալ փոխանցել լսողին, որ այլընտրանքները տեղին չեն, որովհետև խոսողը դրանք համարում է սխալ կամ էլ անկարևոր՝ տվյալ հաղորդակցության համար: Այլընտրանքային տարբերակները ոչ տեղին համարելը բնորոշ է ցանկացած նույնաբանության (Ward, Hirschberg 1991:

509; Noveck, Sperber 2007; Karttunen, Peters 1975; Jeffries, McIntyre 2010; Mittwoch 1976): Դիտարկելով նույնաբանությունների օրինակներ՝ կարելի է նկատել, որ դրանք ունեն որոշակի ընդհանրություններ, այն է, ինչպես նշում են Ջ. Վորդն ու Ջ. Հիրշբերգը, նույնաբանությունը, որևէ միտք արտահայտելով, միևնույն ժամանակ խոսակցի համար հասկանալի է դարձնում մյուս այլընտրանքային տարբերակների հնարավորությունը: Նույն տեղում Ջ. Վորդն ու Ջ. Հիրշբերգը համաձայնում են Ս. Լևինսոնի այն մտքի հետ, որ խոսողը դուրս է գալիս Գրայսի քանակի կարգախոսի շրջանակից և հասկացնել է տալիս լսողին, որ որոշ այլընտրանքային արտահայտություններ միտումնավոր կերպով չեն օգտագործվել: Կախված համատեքստից՝ լսողը հասկանում է, որ այլընտրանքային տարբերակները տվյալ հաղորդակցական իրադրության մեջ տեղին չեն: Այսինքն, եթե մեկն ասում է *Ֆուտբոլը ֆուտբոլ է*, ապա նրա գրուցակիցը պետք է ենթադրի, որ արտահայտություն անողը չի ասում *ֆուտբոլը բասկետբոլ է* կամ ցանկացած մեկ այլ բան, ասենք՝ *ֆուտբոլը կյանք է*, թեպետև կարող էր, և այսպիսով չի ավելացնում ոչ մի նոր տեղեկություն: Կամ մեկ ուրիշ օրինակում, ասենք՝ *Եթե կռիվ, ապա կռիվ*, այլ այլընտրանքային տարբերակները, օրինակ՝ *Եթե կռիվ, ուրեմն թալան*, տեղին չեն, քանի որ չեն օգտագործվել խոսողի կողմից: Հենց այլընտրանքային տարբերակների ոչ տեղին լինելն է, որ ընկած է նույնաբանությունների մեկնաբանության հիմքում: Ջ. Վորդը և Ջ. Հիրշբերգը քննադատաբար են մոտենում ոչ միայն Ա. Վերժբիցկայի տեսությանը: Նրանք թերի են համարում նաև Գրայսի կարգախոսների, հատկապես քանակի կարգախոսի միտումնավոր խախտման վրա հիմնված նույնաբանությունների վերլուծության տեսակետները: Եթե Ա. Վերժբիցկայի պարագայում, ըստ Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի, տեսությունը չափազանց կոնկրետացված է մասնավոր նույնաբանությունների օրինակի վրա, ու դժվար է որոշակիացնել երևույթը ներառող ընդհանուր սահմանում կամ մոտեցում, ապա երկրորդ դեպքում նրանք գտնում են, որ ընդհանրացված մոտեցումը նույնաբանության գործաբանական նշանակության խնդրին չափազանց անորոշ է դառնում և կրկին չի բավարարում այս կամ այն օրինակը քննելիս:

Նույն կերպ նրանք քննադատում են Բ. Ֆրեյզրի (Fraser 1988) առաջ քաշած վարկածը: Վերջինս նույնաբանությունների վերլուծության համար առաջարկում է հետևյալ հայեցակերպը: Ըստ Բ. Ֆրեյզրի՝ համարժեք խմբին պատկանող նույնաբանությունները ցույց են տալիս, որ խոսողը նպատակ ունի, որպեսզի իր գրուցակիցը՝ լսողը, հասկանա հետևյալը.

- Խոսողն ունի որոշակի դիրքորոշում բոլոր երևույթների նկատմամբ, որոնք արտահայտվում են գոյականական անդամի միջոցով (NP):
- Խոսողը հավատացած է, որ լսողը կարող է ընկալել այս որոշակի դիրքորոշումը:
- Այս դիրքորոշումը տեղին է և համապատասխանում է հաղորդակցությանը:

Ջ. Վորդը և Ջ. Հիրշբերգը այս մոտեցման թույլ կողմը համարում են այն, որ վերջինս չափազանց ընդհանրական է և կիրառելի ոչ միայն նույնաբանությունների մեկնաբանության, այլև բոլոր հաղորդակցական ներակայումների համար: Նրանք հիմնական խնդիրը համարում են այն, որ Ֆրեյզրը չի մատնանշում, թե ինչպես է, որ *War is war*-ի արտահայտած ներակայումը նման է *Kids are kids* նույնաբանության ներակայմանը, սակայն տարբեր *Some people left early* արտահայտության ներակայումից:

Ըստ Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի՝ *a is a* կառույցն ունեցող համարժեք նույնաբանությունները կա՛մ կարող են նշանակել, որ *a is b* այլընտրանքային կառույցները (որտեղ *b*-ն կա՛մ նույնանում է *a*-ի որևէ հատկանիշի հետ, կա՛մ *a*-ի որոշակիորեն տարորոշված համարժեք է) տեղին չեն, կա՛մ էլ նշանակում է *some a is b* (որտեղ *b*-ն նույնականացնում է *a*-ի որևէ ենթախմբի հատկանիշներ կամ համարժեքներ)¹¹:

Ամփոփելով իրենց՝ Գրայսի համընդհանուր հաղորդակցական ներակայումների վրա հիմնված մոտեցումը՝ Ջ. Վորդը և Ջ. Հիրշբերգը հետևյալ եզրահանգումներն են կատարում: Նրանք գտնում են, որ խոսողները կիրառում են, իսկ լսողները մեկնաբանում են նույնաբանական կառույցները՝ ընդհանուր հաղորդակցական գիտելիքներից ելնելով: Եվ թեպետ նույնաբանության կոնկրետ

ձևը/կառույցը լեզվում կարող է փոփոխվել, միննույնն է այդպիսի կառույցների մեկնաբանությունն անփոփոխ է:

Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի նույնաբանության մեկնաբանության մոդելի հիմքում այն միտքն է, որ խոսողն ակնկալում է, որ խոսակիցը կենթադրի խոսողի օգտագործած արտահայտության այլընտրանքները: Այսինքն՝ *the speaker said p, but might have said q*: Նրանք նույնաբանությունների նշանակությունների տարբերության գլխավոր բաղադրիչներ են համարում աղբյուր-ասույթը (source utterance), որից էլ այս այլընտրանքները կարելի է բխեցնել, ու ավելի լայն համատեքստը, որում արտաբերվում է ասույթը: Այս երկու գործոնները կարծես որոշակիացնում են այն իմաստային սահմանը, որտեղ խոսողի հաղորդակցական ուղերձն է, նրա խոսքի հաղորդակցական արժեքը: Հիմնական ասույթը սահմանափակում է հնարավոր այլընտրանքային տարբերակների շարքը, մինչդեռ համատեքստը ուղղորդում է խոսակցին հասկանալու, թե այդ այլընտրանքներից որը կամ որոնք են նպատակադրված կերպով բացառվել խոսողի կողմից: Այսպիսով՝ այն ներակայությամբ, որ խոսողն արտահայտում է նույնաբանական արտահայտության միջոցով, այսպիսի այլընտրանքների հերքումն է (Ward, Hirschberg 1991: 520)¹²:

Հավելելով Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի առաջարկած նույնաբանական կառույցների մեկնաբանման այլընտրանքային կաղապարը՝ Թ. Աութենրիեթը (Autenrieth 1997) գտնում է, որ նույնաբանությունները տեղեկատվական են, քանի որ ունեն ստորոգում պարունակող կառուցվածք (predicative structure), և այդ կառույցների իմաստային մեկնաբանությունը պետք է հիմնվի տեղիիության կարգախոսի վրա: Ի տարբերություն Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի՝ Թ. Աութենրիեթը գտնում է, որ այլընտրանքային տարբերակների ոչ տեղին լինելը դեռևս բավարար չէ տվյալ նույնաբանության տեղին լինելը բացատրելու համար: Նրա ուսումնասիրության համաձայն՝ ստորոգելիական NP-ի կարծրատիպային իմաստներից տվյալ խոսքային իրադրության համար համապատասխան իմաստի ընտրությունը պայմանավորված է հենց տեղիիությամբ: Դիտարկենք հետևյալ օրինակները.

ա) Speaker A: Do you really want to travel through Europe with that old crate?

Speaker B: Why not? **A car is a car.**

(The Daily Mail, 15 June, 2014)

բ) Speaker A: It's not true that I pollute the environment; my car is fitted with a catalytic converter.

Speaker B: Come on, **a car is a car.**

(National Geographic 25 July, 2013)

Առաջին օրինակում, ըստ կարծրատիպային նշանակության, մեքենան տրանսպորտային միջոց է, մինչդեռ երկրորդ օրինակում տեղին (relevant) նշանակությունն այն է, որ մեքենաները վնաս են հասցնում շրջակա միջավայրին՝ անկախ այն բանից, թե ինչ լրացուցիչ սարքավորմամբ են զինված:

Այստեղ մենք կառաջարկեինք ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Թեպետ այս երկու օրինակներում կիրառվել է միևնույն նույնաբանությունը, սակայն դրանց նշանակությունները տարբեր են: Այստեղ կարևորվում է այն համատեքստը, որտեղ կիրառվել են նույնաբանությունները: Առաջինի դեպքում B խոսակիցը, ի պատասխան զրուցակցի հարցին, տալիս է հռետորական հարց (Why not?) ու ավելացնում, որ մեքենան մեքենա է: Հենց հռետորական հարցի համատեքստում նույնաբանության մեջ առաջնային նշանակություն է ձեռք բերում մեքենայի փոխադրամիջոց լինելը: Երկրորդ օրինակում նույն նույնաբանությունը կիրառվում է «դե լա'վ» (come on) արտահայտության հետ, ինչը առաջնային է դարձնում մեքենայի՝ շրջակա միջավայրը աղտոտող լինելու հանգամանքը: Այսինքն՝ ըստ համատեքստի միևնույն նույնաբանությունը կարող է մեկնաբանվել տարբեր իմաստներով՝ կախված նրանից, թե տվյալ խոսքային իրադրությունում որ իմաստն է առաջնայություն ստանում:

Այսպիսով, ընդունելով Գրայսի քանակի կարգախոսի կիրառելիությունը նույնաբանությունների մեկնաբանման գործում՝ հարկ ենք համարում նշել, որ այն լիարժեք չի կատարում այդ խնդիրը: Ինչպես ցույց է տալիս նյութի վերլուծությունը,

լեզվական և հանրային համատեքստը, խոսողի ու խոսակցի հարաբերությունները շատ կարևոր դեր ունեն այս հարցում: Մեծ նշանակություն ունի խոսողի վերաբերմունքը խնդրո առարկային: Թեպետ նույնաբանության կոնկրետ նմուշը արտահայտում է այնպիսի միտք, որով բացառում է այլընտրանքային տարբերակների հնարավոր կիրառելիությունը, սակայն դա բավարար չէ նույնաբանությունների իմաստը մեկնաբանելու համար: Եթե ասենք, *խաղը խաղ է նույնաբանությունը համեմատենք, նույն կառուցվածքով կազմված նպատակասլացությունը նպատակասլացություն է* կառույցի հետ, ապա կտեսնենք, որ երկրորդ արտահայտությունը չի համապատասխանում առաջ քաշված բանաձևին: Ավելին, այն դժվար է պատկերացնել որևէ համատեքստում, թեպետ կառույցով նույնն է: Սրանից բխում է, որ նույնաբանությունները մեկ օրում ստեղծված լեզվական սխեմատիկ կառույցներ չեն, որոնց համար բավական է գտնել մի կառույց կամ մեկնաբանություն և տարածել մնացածների վրա: Կարևոր է, որ նույնաբանությունը կիրառելիություն ունենա լեզվում/խոսքում, ընդունված լինի այն կրող հասարակության կողմից ու հասկանալի լինի նրան: Նույնաբանությունն էլ, բառի պես, ունի պայմանական նշանակություն: Ինչպես *սեղան* բառն արտահայտում է որոշակի իմաստ, նույն կերպ էլ նույնաբանությունն ունի իմաստ, որը հաճախ տարբեր է նույնաբանության կառույցի մեջ մտնող բաղադրիչ բառերի առանձին իմաստներից: Հետևաբար նույնաբանությունը որոշակի իմաստ ձեռք է բերում կոնկրետ հասարակության մեջ, որն էլ օժտում է նրան այդ իմաստով: Ինչպես ճիշտ նկատում է Վերժբիցկան, որոշ նույնաբանություններ կիրառելի են տարբեր մշակույթներում ու լեզուներում, որոշ նույնաբանություններ ունեն իմաստային մեծ կամ փոքր տարբերություններ, իսկ մի մասն էլ անընկալելի ու անթարգմանելի են: Սա թերևս կարելի է բացատրել լեզվամշակութային փոխգործության ու մշակութային առանձնահատկության միաժամանակյա ազդեցությամբ: Լեզվական կառույցը լեզուների շփման արդյունքում անցնում է մի լեզվական հասարակությունից մյուսին՝ միննույն ժամանակ հարմարեցվելով տեղական մտածելակերպին և տեղայնացվելով: Իսկ այն նույնաբանությունները, որոնք ընկալելի են տվյալ հասարակությանը բնորոշ մտածելակերպային առանձնահատկության շնորհիվ և կապված են տվյալ հասարակության

պատմության ու մշակույթի սինթեզում ձևավորված աշխարհայացքի հետ, անփոխանցելի են մեկ այլ հասարակություն կամ մշակույթ, որը չի կիսում նույն աշխարհայացքային առանձնահատկությունները:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ ցանկացած նույնաբանական կառույց կրում է տվյալ լեզվամտածողության և մշակույթի դրոշմը, այն ունի տվյալ լեզվին ներհատուկ նշանակություն ու գործառույթ և ոչ միշտ է անցնում մի լեզվից ու մշակույթից մյուսին: Մյուս կողմից՝ տվյալ հաղորդակցական իրավիճակի շրջանակներում նույնաբանական կառույցի կիրառումը խոսողի/գրողի կողմից ենթադրում է Գրայսի քանակի կարգախոսի միտումնավոր խախտում, հետևաբար այդ կառույցի ընտրությունը տվյալ խոսքային իրադրությունում պատահական չէ և ունի տեքստակազմիչ նշանակություն: Այն մշտապես հիմնավորված է և պայմանավորված խոսողի/գրողի հաղորդակցական մտադրությամբ, ինչն էլ կփորձենք առավել հանգամանալից ներկայացնել մեր աշխատանքի հաջորդ գլխում:

Ծանոթագրություններ

1. Անգլոամերիկյան լեզվաբանական դպրոցում «նախկին լեզվաբանություն» եզրի փոխարեն ավելի ընդունված է «folk linguistics» ժողովրդական լեզվաբանություն եզրը, երբ խոսքը լեզվաբանության ոչ պրոֆեսիոնալ, ինքնուս քննության մասին է: Ելնելով առօրյա փորձից ու գործունեությունից՝ լեզվական հանրային գիտակցության մեջ ձևավորվում են լեզվի և լեզվական միավորների մասին որոշակի կարծրատիպեր, որոնք, անկախ գիտականորեն ճիշտ կամ սխալ լինելուց, պայմանավորում են այդ հանրային մոտեցումները լեզվական տարբեր երևույթների նկատմամբ (Кашкин 2009):

2. Ըստ Իմանուել Կանտի, քանի որ իմացության արտահայտման ձևը դատողություններն են, ապա դրանք դասակարգելու անհրաժեշտություն է առաջանում: Դատողությունները լինում են վերլուծական և համադրական: Առաջին տիպի դատողությունները նույնաբանություններ են, որովհետև այստեղ պրեդիկատը նոր իմացություն չի հավելում սուբյեկտի մասին մեր իմացությանը: Համադրական դատողություններում պրեդիկատը ընդլայնում է իմացությունը սուբյեկտի մասին: Տարբերակվում են նաև ճանաչողության *a priori* և *a posteriori* ձևերը: Վերլուծական դատողությունները՝ նույնաբանությունները, *a priori* են: 1884 թվականին Գ. Ֆրեգեն իր «Grundlagen» աշխատության մեջ նույնաբանությունը սահմանում է որպես բովանդակությունից զուրկ դատողություն: Լ. Վիթգենշտայնը իր «Tractatus Logico-Philosophicus» աշխատության մեջ առաջ է քաշում այն միտքը, որ դատողությունները, որոնք հնարավոր է դուրս բերել տրամաբանական դեդուկցիայի միջոցով, նույնաբանական են (իմաստագուրկ) և միևնույն ժամանակ վերլուծական ճշմարտություններ: Համաձայն Բերտրան Ռասելի՝ այն ամենն, ինչ տրամաբանական դատողություն է, պետք է ինչ-որ չափով նման լինի նույնաբանության: Հայկական Սովետական Հանրագիտարանում նույնաբանությունը սահմանվում է որպես տրամաբանական սխալ, որպես արատավոր շրջան, երբ թեզիսն ապացուցվում է մի դատողության միջոցով,

որն ինքը ապացուցվում է թեզիսի միջոցով: Շրջապատույտի առավել կոպիտ ձևն է թեզիսի ապացուցումն իր իսկ միջոցով (նույնը նույնի միջոցով, *idem per idem*), սովորաբար որոշ արտաքին, լեզվական արտահայտության տարբերակմամբ:

3. Փորձը հետևյալն է՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկում են «նույնաբանություն» բառը լսելիս գրել իրենց մտաբերած երեք բառերը: Փորձն անց է կացվել ութսունմեկ մասնակիցների շրջանում, ու ստացվել են 226 զուգորդային արձագանքներ, որոնք տարբեր հաճախականությամբ կրկնվել են: Հարցվածների պատասխանների մեջ մեծ տոկոս են կազմել հետևյալ պատասխանները՝ կրկնողություն (35), կրկնություն (34), սխալ (12), տերմին (8), միևնույն բանը (7) և այլ՝ աննշան տոկոս կազմող պատասխաններ: Փորձի արդյունքները ցույց տվեցին, որ հարցվածներից իննի մոտ *նույնաբանություն* բառը մտքի զուգորդում չի առաջացրել: Փորձի արդյունքները ցույց են տվել որ՝ *նույնաբանություն* բառը նախվ լեզվաբանների կողմից ընկալվում է որպես գիտական եզրույթ (մտքի զուգորդումներ են՝ տերմին, տերմինաբանություն, գիտություն): Նրան սերտորեն առնչվող երևույթներն են կրկնությունը, բազմիմաստությունը (պլեոնիզմ), ավելորդաբանությունը: Մարդիկ, ովքեր պրոֆեսիոնալ կերպով չեն զբաղվում նույնաբանության ուսումնասիրությամբ, երկու ձևով են այն ընկալում. ա) նույնաբանությունը որպես կրկնություն (մտքի զուգորդումներ են՝ կրկնություն, անիմաստ կրկնություն, միտումնավոր կրկնություն, բառերի կրկնություն, կրկնություն այլ բառերով, կրկնողություն, միտումնավոր կրկնություն, բառերի կրկնողություն, իմաստով մոտ բառերի կրկնություն, նույնը ևս մեկ անգամ, մի քանի անգամ, մի բանը նորից ասել, միևնույն բանը, նույն և միևնույնը, մեկը մեկի նույնը, կրկնվող իրերի/խոսքերի համադրություն), բ) նույնաբանությունը որպես խոսքային սխալ (*речевая ошибка*) (մտքի զուգորդումները՝ սխալ, խոսքային սխալ, անգրագիտություն, գրագիտության պակաս, սխալմունք, անմտություն, անտրամաբանություն, անտեղի բան, չարդարացված, անիմաստ կրկնություն, խոսքային ավելորդաբանություն, աղտոտված խոսք,

անիմաստություն, հիմարություն, վրիպում, անկապություն, աղբ, պարագիտ):

Հաճախ փորձի մասնակիցները, որպես նույնաբանության զուգորդում, նշել են նույնաբանական կառույցներ: Զուգորդումների որակական վերլուծությունը, այսինքն՝ պատասխանները, որոնք պարունակում են գնահատական, ցույց է տալիս, որ «նույնաբանություն» բառը հարցվածների շրջանում ակնհայտորեն բացասական արձագանք է առաջացնում:

4. Փ. Գրայսի կարծիքով սույն կարգախոսները խոսքային փոխներգործության անհրաժեշտ նախապայման են (Grice 1975): Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Շ. Պարոնյանը, այս տեսությունը գործնականում դժվար է կիրառել, քանի որ իրական խոսքային համատեքստի վերլուծության ժամանակ երբեմն անհնար է հստակ որոշել այս կամ այն կարգախոսի գործառույթը, կամ՝ կարգախոսներն իրարից սահմանազատել (Պարոնյան 2011: 131-132): Այնուամենայնիվ, հարկ է ընդունել, որ լեզվաբանական մտքի համար չափազանց կարևոր է խոսքային գործունությունը համակարգելու այս ձգտումը:

5. Համաձայն Ջեֆրիսի ու Մաքինթայրի՝ Գրայսի առաջարկած համագործակցության սկզբունքը ամբողջացնում է այն կանխակալ ակնկալիքներն ու ենթադրությունները, որ մենք արդեն իսկ ունենում ենք մինչև բուն խոսակցության մեջ մտնելը (Jeffries, McIntyre 2010: 106):

6. Վերժբիցկան, ավելի ընդգծելով Գրայսի տեսության ոչ ճշմարտացի լինելն առ այն, որ նույնաբանությունները փոխադրելի են մի լեզվից մյուսը ու կարգավորվում են քանակի կարգախոսով, ընդլայնում է միննույն նույնաբանության այլ լեզուներում քննությունը և դրանց տարբերությունների վերհանումը: Նա մասնավորապես փորձ է անում փոխադրելու *Boys will be boys* և *Boys are boys* նույնաբանությունները լեհերեն, սակայն եզրակացնում է, որ համապատասխանաբար *Chłopcy to będa chłopcy* և *Chłopcy to (są) chłopcy* կառույցները կիրառելի չեն լեհերենում: Վերժբիցկան քննում է լեհերեն (*Jednak*) *co Paryż to Paryż* – (*However*) *what is Paris this (is) Paris*, կամ (*Jednak*) *co Europa to Europa* – (*However*) *what (is)*

Europe this (is) Europe. Co X to X կառույցը (What is X is X) նշանակում է, որ X-ը ինչ-որ յուրահատուկ լավ բան է, և խոսողը անատարկելիորեն ընդունում է այն: Այս կառույցը կարելի է կիրառել նաև այլ երևույթների ու առարկաների մասին խոսելիս, երբ անքննելի է դրանց գերազանցությունը: Այնուհետև համեմատվում են այս կառույցն ու *White is white* նույնաբանությունը՝ ցույց տալու դրանց իմաստային տարբերությունները: Այս նույնաբանության մեջ մենք գործ ունենք անշրջելիության հետ, երբ խոսողն ընդգծում է առարկայի կամ երևույթի յուրահատկությունը և այն ընդունելու անհրաժեշտությունը, որովհետև այն հնարավոր չէ փոխել: Խոսողն ընդգծում է սպիտակ լինելը որպես անշրջելի իրողություն, ինչը սովյալ խմբի կամ հասարակության միավորի յուրահատկությունն է: Ի տարբերություն լեհերենում Co X to X (*Co Paryż to Paryż*) կառույցի կադապարով կազմված նույնաբանությունների՝ այստեղ չի շեշտվում հատկանիշի գերազանցություն: Այստեղ խոսքը պարզապես մի հատկանիշի մասին է, որը յուրահատուկ է ինչ-որ խմբի, ու այն պետք է ընդունել այնպես, ինչպես, որ կա: Քիփլինգի հայտնի «Բալլադ Արևելքի ու Արևմուտքի մասին» ստեղծագործության մեջ այս նույնաբանական կառույցների իմաստային տարբերությունն ավելի ակնհայտ է դառնում:

East is East and West is West

And never the twain shall meet.

Տողերի հեղինակը ընդգծում է, որ այն հատկանիշներն ու որակները, որ բնորոշ են Արևմուտքին, հստակորեն տարբեր են այն ամենից, ինչը յուրահատուկ է Արևելքին: Այս տարբերությունները առավել շեշտելու համար նա ավելացնում է, որ այս երկու բևեռները երբեք չեն միանա իրար: Այստեղ ևս, ի տարբերություն լեհերենում օգտագործված նույնաբանական կառույցի, չի ընդգծվում երևույթի յուրահատուկ գերազանցությունը (Wierzbicka 2003: 395):

7. Մայբաուերը գտնում է, որ եթե նույնիսկ ընդունենք, որ որոշ նույնաբանական կառույցներ ունեն տվյալ լեզվին հատուկ նշանակություն, ապա սա դեռ ամեննին չի նշանակում, որ դրանց նշանակությունը (կիսով չափ) հնարավոր չէ ստանալ՝ Գրայսի սկզբունքներից ելնելով, որովհետև, Գրայսի տեսության համաձայն, ներակայումները առաջ են գալիս ի հավելումն արդեն ասվածի (in addition to what is said) (Meibauer 2008: 443): Մայբաուերը նույն տեղում շարունակում է, որ նույնաբանական կառույցի ամբողջական նշանակությունը հնարավոր չէ սպառել դրան վերագրված նշանակության կաղապարով: Ավելին, նա գտնում է, որ նույնաբանությունների անթարգմանելիությունն ինքնին համոզիչ հիմնավորում չէ, թե նույնաբանությունները հատուկ են որևէ լեզվի ու անփոխանցելի են այլ լեզուներ, որովհետև ակնհայտ է, որ բազմաթիվ արտահայտություններ հնարավոր չէ մեկին մեկ ճշգրտությամբ թարգմանել, և թեպետ կարող են լինել որոշ կառուցվածքային տարբերություններ, սակայն իմաստային տեղեկույթը կարելի է փոխանցել տարբեր լեզուների միջև (նույն տեղում): Օրինակ՝ անգլերեն *A wife is a wife (wives are wives)* նույնաբանությունը համապատասխանում է ճապոներենի *Okusan wa okusan da* (Okamoto 1993: 437), իսկ *Boys are boys*-ը համապատասխանում է արաբերենի *il walad-walad* կառույցներին (Farghal 1992: 226)

8. Ա. Վերժբիցկան անգլերենի անվանական նույնաբանական կառույցները խմբավորում է ըստ հետևյալ շարահյուսական կաղապարների և նրանցից յուրաքանչյուրին վերագրում որոշակի իմաստներ.

Nabstr is Nabstr War is war; Wars are wars; Wars will be wars

Npl are Npl Kids are kids; The kids are the kids

Npl will be Npl Boys will be boys; A boy will be a boy

A N is a N A party is a party; The party is the party

The N is the N The law is the law; The war is the war

N1 is N1 (and N2 is N2) East is east and west is west

9. Մայբաուերն առանձնացնում է նույնաբանությունների վերլուծության չորս գլխավոր հիմնահարց.

Համընդհանրականություն՝ ի դեմ լեզվին ներհատուկությանը (Universality vs. Language Specificity)

Պայմանադրականություն՝ ի դեմ ներակայման (Conventionality vs. Implicature)

Երկրորդ NP-ի ստորոգելիական կարգավիճակը (Art) NP be (Art) NP կառույցում:

Իլլուկուտիվ իմաստը (Meibauer 2008: 442)

Մայբաուերը Վերժբիցկայի տեսությունը դիտարկում է վերոնշյալ առաջին տեսակետի առանցքում: Չհամաձայնելով այն մտքին, թե նույնաբանությունները լեզվին բնորոշ երևույթներ են ու գրեթե անթարգմանելի են, քանի որ միննույն նույնաբանական կառույցը տարբեր լեզուներում ունի նրբերանգային առանձնահատկություններ, ու դա գրեթե անհնար է տեղափոխել մի լեզվից մյուսը, Մայբաուերը դիտարկում է Վերժբիցկայի համեմատությունը անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի միջև (*Boys will be boys; Les garçons seront les (des) garçons; Knaben werden Knaben sein*): Ըստ Մայբաուերի՝ գերմաներենի համապատասխան տարբերակը բավականին ընդունելի թարգմանություն է, միայն Knaben-ի փոխարեն ավելի նախապատվելի է օգտագործել *Jungen* գոյականը (նույն տեղում): Իրականում, սակայն, խնդիրն այն չէ, թե արդյոք նույնաբանությունները բնորոշ են տվյալ լեզվին, թե ոչ: Դրանք կարող են լինել տվյալ լեզվին բնորոշ կառույցներ, սակայն դա չի նշանակում, որ դրանց նշանակությունը հնարավոր չէ ստանալ, դուրս բերել Գրայսի սկզբունքների հիման վրա, որովհետև, համաձայն Գրայսի տեսության, ներակայությունները առաջ են գալիս ի հավելումն այն բանի, թե ինչ է ասվում: Կարևոր է հաշվի առնել, ինչպես նույն տեղում նշում է Մայբաուերը, որ նույնաբանական կառույցի ամբողջական նշանակությունը չի սպառվում միայն դրան վերագրված իմաստային կադապարով:

10. Հարկ է նշել, որ առանձնացված բոլոր շարահյուսական կադապարների համար Ա. Վերժբիցկան դուրս է բերում իմաստային-հասկացական բանաձևեր՝ կիրառելով, ինչպես ինքն է ասում, համընդհանուր բնական իմաստաբանական մետալեզու (Wierzbicka 2003):

11. Անդրադարձալով Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի տեսությանը՝ Յ. Մայբաուերը մի կարևոր դիտարկում է անում: Նա նշում է՝ այլընտրանքային տարբերակների բացառումը դեռ բավարար գաղափար չի տալիս հասկանալու, թե ինչպես է որևէ նույնաբանական ներակայում դուրս բերվում: Օրինակ՝ *War is war* նույնաբանության դեպքում ինչպես է ստացվում, այն ներակայումը, թե սարսափելի բաներ կարող են պատահել, սակայն հնարավոր չէ որևէ բան անել դրանց դեմ: Նա նշում է, որ տեսականորեն նույնաբանական կառույցները կարող են անսահմանափակ թվով այլընտրանքներ ունենալ, սակայն տեղին, համապատասխան (relevant) այլընտրանքը պետք է որոշակի չափով սպասելի լինի: *Sex is sex* (a is a) օրինակում, ըստ էության, կարելի է բերել այնպիսի այլընտրանքներ, ինչպես, ասենք, *sex is sport* կամ *sex is determination* և այլ տարբերակներ, սակայն դրանք, ըստ երևույթին, չափազանց անսպասելի են լսողի համար, և նա ի սկզբանե դրանք բացառում է:

12. Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի այս մոտեցումը, սակայն, Ն. Յամամոտոն համարում է ոչ լիարժեք (Yamamoto 2013: 15-17): Ըստ նրա՝ Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի առաջ քաշած հայեցակարգը հստակ կերպով չի պատկերում, թե ինչպես է հնարավոր մի համատեքստից, որտեղ խոսողն օգտագործել է *a is a* նույնաբանություն, դուրս բերել *a is b* կամ (some) *a is b* այլընտրանքային տարբերակներ: Ն. Յամամոտոն գտնում է, որ Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի մոտեցման համաձայն՝ *b*-ն կամ նույնականացնում է *a*-ի որոշակի հատկանիշ կամ էլ *a*-ի որոշակի համարժեք *a is b*-ի համար կամ էլ *a*-ի որոշակի ենթակարգի համար համարժեքներ (some) *a is b*-ի համար: Տվյալ դեպքում, ըստ նրա, *b*-ի սահմանումը անսահմանափակ է և, հետևաբար, ոչ վստահելի (Yamamoto 2013: 15):

ԳԼՈՒԽ 2

Անգլերեն նույնաբանական կառույցների գործարանական ներուժի կազմավորումը

2.1. Նույնաբանությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները

Համաձայն Գրայսի քանակի կարգախոսի՝ համագործակցող խոսընկերները չեն արտաբերում ավել կամ պակաս տեղեկություն պարունակող ասույթներ: Եթե հաշվի առնենք, որ նույնաբանական ասույթներն ի սկզբանե ճշմարիտ են և հետևաբար չեն պարունակում նոր տեղեկություն, ապա դրանք չպետք է կիրառվեն հաղորդակցվելիս: Սակայն ինչպես ցույց են տվել բազմաթիվ հետազոտություններ, նույնաբանական ասույթները, բացի իրենց պայմանադրական նշանակություններից (conventional meaning), կրում են բավականին ընդգրկուն հաղորդակցական-գործարանական ներուժ և լայնորեն կիրառվում են խոսքում (Wierzbicka 1991; Ward, Hirschberg 1991; Harnish 1976; Walter 2008; Meibauer 2006; Mizuta 1996; Farghal 1992; Miki 1996; Lyons 1968; Lewis 1972; Katz, Langendoen 1976; King 2005):

Այս գլխում մեր նպատակն է փաստական նյութի քննության արդյունքում վերհանել անգլերենի նույնաբանական կառույցների այն լեզվական բաղադրիչները (շարահյուսական, ձևաբանական, իմաստային), որոնք նպաստում են գործարանական ներուժի կազմավորման գործընթացին:

Ուսումնասիրելով տարբեր տեսություններ (Ward, Hirschberg 1991; Yamamoto 2013; Meibauer 2008; Reboul 2004; Gibbs 1994; Putnam 1975 a; Levinson 2005; Samuels 1972; Sasamoto 2010; Sperber, Deidre 1995; Walter 2008; Wierzbicka 1987; Reichenbach 1947; Lyons 1977), ինչպես նաև ելնելով մեր փաստական նյութի կառուցվածքային առանձնահատկությունների վերլուծությունից՝ նպատակահարմար ենք գտնում նույնաբանական կառույցները դասակարգել ըստ հետևյալ շարահյուսական կաղապարների.

1. Անվանական կամ համարժեք (Equative): “a is a”
2. Դիսյունկտիվ կամ Տրոհական (Disjunctions): “(either) p or not p”
3. Պայմանական (Conditional): “if p (then) p”
4. Ստորադասական (Subordinate): “when p, p”
5. Համադասական (Coordinate): “a is a” and “b is b”

Ինչպես ցույց է տալիս մեր նյութի քանակական վերլուծությունը, անվանական նույնաբանական կառույցները¹ ամենաբազմաքանակն են և առավել լայն կիրառություն ունեն անգլերեն դիսկուրսում: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են մեր ստացած տվյալները.

Աղյուսակ 1

Տեսակ	Քանակ	Տոկոս
Անվանական	652	60,6 %
Համադասական	125	12,9 %
Պայմանական	79	8,1 %
Դիսյունկտիվ/Տրոհական	74	7,6 %
Ստորադասական	34	3,5 %
Ընդհանուր	964	100%

Առաջին հայացքից տարբեր թվացող այս շարահյուսական կաղապարները ունեն մեկ կարևոր ընդհանրություն. նրանց տրամաբանական կաղապարը կազմված է հետևյալ երեք հիմնական բաղադրիչներից՝ սուբյեկտ, պրեդիկատ և կապ: Ըստ որում՝ բոլոր հինգ կառույցներում սուբյեկտն ու պրեդիկատը իրենց բառային/ձևային կառուցվածքով համընկնում են, մինչդեռ կապը մի դեպքում (անվանական կառույցներում) հանդես է գալիս բայ-հանգույցի ձևով, իսկ մյուս դեպքերում (բայական կառույցներում) սուբյեկտի և պրեդիկատի միջև կապը ստեղծվում է համադասական ու ստորադասական շաղկապների միջոցով: Եվ քանի որ սուբյեկտը, ըստ տրամաբանության մեջ ընդունված սահմանման,

հասկացությունն է այն առարկայի մասին, որին վերագրվում է որոշակի հատկություն կամ հարաբերություն հաստատման կամ ժխտման միջոցով, իսկ պրեդիկատը հասկացությունն է այն հատկության կամ հարաբերության մասին, որը հաստատվում կամ ժխտվում է սուբյեկտի նկատմամբ (Բրուտյան 1998), ուստի, չնայած այն փաստին, որ նույնաբանական կառույցներում սուբյեկտը և պրեդիկատը իրենց բառային կազմով նույնական են, նրանց արտահայտած/վերագրվող իմաստները նույնական չեն կարող լինել: Խիստ կարևոր ենք համարում այն փաստը, որ այս շարահյուսական կաղապարների առաջին անդամը մատնանշում է տվյալ խմբի որևէ առանձին անդամ կամ անդամներ (կամ գործողություն)², իսկ նույնաբանական կառույցների երկրորդ անդամը (կամ գործողությունը) իր բնույթով ստորոգելիական է (Meibauer 2008; Autenrieth 1997; Parret, Sbisa, Verschueren 1979; Cole, Morgan 1975; Szabo 2005): Համաձայն Թ. Աուրենրիեթի՝ երկրորդ անդամը չի մատնանշում խմբի առանձին անդամ կամ անդամներ, այլ ընտրում և մատնացույց է անում այդ խմբի առանձին անդամին կամ անդամներին բնորոշ հատկանիշներ: Փաստական նյութի մեր քննության արդյունքները նույնպես փաստում են, որ նույնաբանական կառույցների առաջին անդամը ներկայացնում է հաղորդակցության առարկան (դենոտատը): Երկրորդ բաղադրիչը նույնաբանության կիրառման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում արտահայտում է իրենում ներփակված իմաստի տարբեր կողմեր: Այսպիսով, օրինակ՝ *Kids are kids* համարժեք նույնաբանական կառույցը նշանակում է *Kids have properties of kids*: Սակայն սա հարցի մի կողմն է: Հաստատելով, որ խմբի անդամը կամ անդամներն ունեն համապատասխան հատկանիշներ, սույն կառույցի շրջանակում այդ հատկանիշներն ընկալվում են որպես անխուսափելի և անփոփոխ: Հետևաբար *Kids are kids*-ը հնարավոր է վերլուծել որպես *Kids necessarily have properties of kids*: Ասվածը հիմնավորելու նպատակով դիտարկենք հետևյալ օրինակը.

“It was a normal, typical Saturday night” said Catherine Belardo, an auburn-haired woman in a housecoat. They get dressed up, they go out together. I don’t want people saying, “Well, where were the parents?” “Her parents

were here. Her mother was home, her father was home. You can't keep your kids in a tube. They go out. **Kids are kids.** You have to show them you trust them. They go out the door and who knows, really, what can happen? You tell them to walk in groups. You tell them to walk where it's light. You tell them never to talk to strangers. And they did everything they were told. (Philadelphia Inquirer, 15 February 1985)

Կարծում ենք՝ տվյալ հաստվածում նույնաբանական կառույցը արտահայտում է հետևյալ միտքը. անհնար էր անել որևէ բան, որը կփոխեր իրավիճակը: Նույնաբանության արտահայտած ներիմաստն այն է, որ երեխաներին բնորոշ է անսպասելի արարքներ անելը, ու այդ արարքները կանխելը երբեմն անհնար է: Այստեղ, երբ ասում ենք, որ *երեխաները երեխաներ են*, մենք բացառում ենք այնպիսի տարբերակներ, ինչպիսիք են՝ *երեխաները հասուն մարդիկ են*, ինչպես նաև այնպիսի ծայրահեղ տարբերակ, ինչպես, ասենք, *երեխաները կենդանիներ են*, ու, հետևաբար, նրանց կորուստը շատ մեծ բան չէ: Գործածելով տվյալ նույնաբանությունը՝ մենք ծանրության կենտրոնը տեղափոխում ենք հենց երեխաների վրա ու երեխաներին ամենաբնորոշ հատկանիշի՝ ոչ խելամիտ ու, հետևաբար, անկանխատեսելի արարքներ անելու մեծ հավանականության վրա ու մտովի հղում ենք անում մարդկանց մեծամասնության մոտ տարածված «երեխաների» մասին պատկերացումներին: Հետևաբար վերևի օրինակում, որտեղ խոսողն ասում է *Kids are kids* (երեխաները երեխաներ են), նա ցանկանում է, որ իր զրուցակիցը մտովի բացառի այնպիսի այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք կարող են լինել *երեխաները միամիտ են; երեխաները հեռատես չեն* կամ էլ *երեխաներն անփորձ են* կամ *երեխաները մեծ չեն* տարբերակները: Նույնաբանության արտահայտած ներակայումն այստեղ այն է, որ երեխաներին բնորոշ են հենց իրենց բնորոշ հատկանիշներ, այն է՝ անել ոչ խելամիտ և անկանխատեսելի արարքներ:

Նույնաբանական կառույցում բառի ստորոգելիական կրկնության³ հետևանքով հնարավոր է, որ փոփոխվի նրա իմաստային միջուկը՝ ինտենսիֆիկացիան⁴: Այս դեպքում տեղի է ունենում տվյալ բառի ներակա իմաստային

հատկանիշների ռեմատիզացիա: Օրինակ՝ boy բառի ինտենսիոնալը կազմում են հետևյալ իմույթները 1. human being, 2. male, 3. child: Հետևյալ օրինակում ինտենսիոնալի փոփոխությունը boy բառին հաղորդում է նոր իմաստ՝ inexperienced, unprofessional person.

These guys cannot talk with me! We are not companions musically. Big men are big men in music and **boys are boys**. (Nebraska SWCS <http://incolor.inebraska.com/cvanpelt/hillint.html>, (accessed 26 March, 2014))

Շարունակելով այս նույն շարահյուսական կաղապարի քննությունը՝ դիտարկենք հաջորդ օրինակը, որը մեջբերված է *PM's 36-PAGE plan for Syria airstrikes: State-of-the-art British missiles will smash ISIS* վերնագրով Express լրատվական կայքում զետեղված հոդվածի մեկնաբանությունների բաժնում արված մի օգտատերի գրառումից: Մեջբերման մեջ միտումնավոր պահպանվել են տողերի հեղինակի քերականական սխալները՝ խոսքի ամբողջականությունն ու անմիջականությունը պահպանելու նպատակով:

While hope you are not part of the conspiracy because **a terrorist is a terrorist** there's nothing like moderate rebels going about slaughtering innocent souls. Join Putin in annihilating those vampires or law of karma cut up with you and your country like hypocrite Erdogan of Turkey. (Express, <http://www.express.co.uk/news/politics/622224/David-Cameron-Prime-Minister-Syria-airstrikes-ISIS-Islamic-State-House-of-Commons> (accessed 26 October, 2015))

Այստեղ նույնաբանության հեղինակը արտահայտում է ոչ թե գիտակից ու սառը վերաբերմունք ահաբեկիչների հանդեպ, այլ ընդհակառակը՝ հայտնում է իր անհանդուրժողականությունը: Նա նշում է, որ չափավոր ապստամբ չեն կարող կոչվել այն մարդիկ, որոնք կոտորում են բնակչությանը: Այսինքն՝

նույնաբանությունը կիրառողը բացառում է այլընտրանքային տարբերակների հնարավորությունը, ինչպիսիք կարող էին լինել *A terrorist is still a human being; A terrorist should also be empathized* տարբերակները:

Հաջորդ օրինակում կարող ենք փաստել, որ արդյունքները գրեթե նույնն են.

A state Department official said the administration was standing behind the statement made by Secretary of State George P. Shultz in a speech in New York last week: **“Terrorism is terrorism”**. It deserves no sanctuary, and it must be stopped “Messages went out to several U.S. embassies Monday night, saying the United States hoped the governments would not yield to the hijackers.

(San Diego Union, 9 October, 1985)

Այստեղ Շուլցը մերժողական դիրքորոշում է արտահայտում ահաբեկչության հանդեպ: Նա պարզորոշ արտահայտում է այն միտքը, որ ոչ մի տեսակի ապաստան չի կարելի տրամադրել ահաբեկիչներին, և որ նրանք պետք է կանգնեցվեն: Իր այս միտքը նա սեղմ կերպով արտահայտում է նույնաբանության միջոցով: Նա մերժում է որևէ այլընտրանքային արտահայտության կիրառության հավանականությունը կամ տեղին լինելը որպես *Terrorism is terrorism* արտահայտությանը փոխարինող տարբերակ:

Հաջորդ օրինակում ևս այլընտրանքային տարբերակների բացառման միջոցով վերծանվում է նույնաբանության նշանակությունը: Այս օրինակից հասկանում ենք, որ ընտրելով նույնաբանական կառույց՝ խոսողը ցանկանում է փաստել, որ փոքր քաղաքում ապրող մարդիկ մեծ տարբերություն չեն տեսնում օդու տեսակների մեջ.

“Stolichnaya vodka has been a slow mover, though, said restaurant manager Bill Leung. But not because of politics “Hardly anybody orders it. In a small town, people don’t know the difference between vodkas. **Vodka is vodka.**” He said.

(*Minnesota Chicago Tribune*, 13 December, 1989)

Այստեղ խոսողը բացահայտ կերպով նշում է, որ օղու ստեղծման երկիրը կամ էլ ապրանքանիշը էական չեն դրա վաճառքի դանդաղ տեմպի համար, և հարցը նույնիսկ չի վերաբերում քաղաքականությանը (հոդվածը գրվել է Սովետական Միության վերջին տարիներին, երբ ԱՄՆ և ՍՍՀՄ հարաբերությունները շատ լարված էին), *օղին օղի է*, և այն պարզապես դանդաղ է վաճառվում, սակայն «ռուսական օղի է» արտահայտությունը ((some) vodka is Russian) այստեղ տեղին չէ: Չնայած տարբերություններն առկա են, սակայն փոքր քաղաքում ապրող մարդկանց համար դրանք էական չեն: Նրանց համար օղին օղի է: Դիտարկենք մեկ այլ օրինակ ևս.

A Million dollars in those days was a million dollars. (MA DL: 135)

Այստեղ հատվածի հեղինակը արտահայտում է այն միտքը, որ ժամանակները փոխվել են, ու տնտեսության մեջ էլ է դա արտահայտվել, և այն ժամանակ մեկ միլիոն դոլարն իրոք մեծ գումար էր: Նա արտահայտում է իր ամփոփանքը անցյալի նկատմամբ, որն ուղեկցվում է ինչ-որ հաճելի հիշողություններով:

Մեկ այլ օրինակում կրկին հանդիպում ենք *a million dollars is a million dollars* նույնաբանական կառույցին այլ համատեքստում: Ու եթե նախորդ դեպքում խոսողը նույնաբանության միջոցով արտահայտում էր ամփոփանք, որ անցյալում մեկ միլիոն դոլարն իրոք մեծ գումար էր (ենթադրել տալով, որ իր ժամանակ այդպես չէ), ապա հաջորդ օրինակում տեսնում ենք, որ միևնույն նույնաբանությունը, կիրառվելով ներկա ժամանակով, այլ հաղորդակցական նպատակ ու գործառույթ է ձեռք բերում:

Treasure Hunt Organizer: You know, **a million dollars is a million dollars.**

We couldn't just bury it anywhere. (Magnum PI 25 October, 1987)

Այստեղ խոսողը կիրառում է նույնաբանություն, որպեսզի ցույց տա, որ գումարի ահռելի չափը բարդացնում է այն թաքցնելու հնարավորությունը: Այսինքն՝ նա բացատրում է այնպիսի այլընտրանքային տարբերակների հավանականությունը, ինչպիսիք կարող էին լինել՝ *A million dollars is easy to hide/ not that much to hide/ not such a huge amount*, ու այդպիսիք համարում ոչ տեղին:

Ցանկանում ենք մի կարևոր հանգմանք ևս առանձնացնել: Դիտարկելով *Terrorism is terrorism* և *Vodka is vodka* նույնաբանությունները՝ գտնում ենք, որ պետք է զերծ մնալ դրանք որպես նախատիպ (prototype) ընդունելուց, այն է թե՛ *Terrorism is terrorism* նշանակում է, որ ամեն տեսակի ահաբեկչություն կարծես ընդհանուր ահաբեկչության նախատիպ է: Նման նախատիպերի դուրսբերումը ճիշտ չէ, քանի որ դրանք չեն ընդգրկում բոլոր նույնաբանությունները կամ գոնե դրանց մեծ մասը: Դա հենց ապացուցվում է հաջորդ օրինակում՝ *A million dollars is a million dollars* նույնաբանության հիման վրա: Այլ կերպ ասած, հակադրվելով Վերծբիցկային (Wierzbicka 2003)՝ ընդունելի չենք համարում այս կառույցներին նախատիպային նշանակություն (prototypical meaning) վերագրելը:

Անդրադառնալով դիսյունկտիվ/տրոհական (Բրուսյան 1998) նույնաբանությունների մեկնաբանմանը՝ առաջարկում ենք այստեղ ևս կիրառել այն մոտեցումը, համաձայն որի՝ այլընտրանքային դիսյունկտները (disjuncts), որպես նույնաբանության հնարավոր մեկնաբանության տարբերակներ, տեղին չեն: Սա մասնավորապես նշանակում է, որ նույնաբանական կառույցի մեջ առկա դիսյունկտներից զատ այլ դիսյունկտներ տեղին չեն: Եթե փորձենք դա արտահայտել բանաձևով, ապա կստացվի, որ խոսողը նկատի ունի, որ *p* or *not p* կառույցի այլընտրանքները, ինչպես, օրինակ, *p* or *q*, որտեղ “*q*”-ն տարբերվում է *և*՝ “*p*”-ից, և “*¬ p*”-ից, չպետք է համարվեն ընդունելի տարբերակներ: Այժմ դիտարկենք հետևյալ օրինակը և փորձենք ստուգել տվյալ մոտեցման արժանահավաստությունը:

Amanda: Alright. I'll marry you. But it will be a picturebook.

Prince Michael: What do you mean?

Amanda: It will be a marriage for show ONLY.

Prince Michael: (Stunned silence)

Amanda: **You either agree or you don't.**

Prince Michael: I agree. (DTVS, 13 March, 1985)

Ամանդան մերժում է իր նշանածի ցանկացած հնարավոր պատասխան, որը կարող է տարբերվել իր ներկայացրածից: Իր օգտագործած նույնաբանությամբ Ամանդան ցանկանում է ասել, որ, օրինակ, «Դու կարող ես համաձայնել կամ մի որոշ ժամանակ էլ մտածել» արտահայտությունը հնարավոր չէ արքայազն Մայքլի համար: Հաջորդ օրինակում տեսնում ենք, որ դիսյունկտիվ նույնաբանությունները կիրառվում են, երբ խոսողը ցանկանում է նշել, որ բացի առաջարկված երկու տարբերակներից, այլ մոտեցում կամ տարբերակ չպետք է դիտարկել:

Cliff: What's wrong?

Jamie: I don't know.

Cliff: Whaddya mean. "You don't' know? **Either something's wrong or it isn't.** (DTVS, 13 March, 1985)

Տվյալ օրինակում Քլիֆը արտահայտում է այն միտքը, որ «մի բան այն չէ կամ ինչ-որ բան կիսով չափ այն չէ» ընդունելի տարբերակ չէ ու մերժվում է տվյալ իրավիճակում: Նույն մոտեցումը հաստատելու համար առաջարկվում է դիտարկել հաջորդ օրինակը.

"There just isn't a community of interest between them" said Paul McDonald, a London-based oil consultant. "**You're either a member of OPEC or not;** nobody's knocking down the door to join OPEC".

(AP News, 3 May, 1988)

Այստեղ այնպիսի այլընտրանքային տարբերակները, ինչպիսիք կարող են լինել «Դու կա՛մ ՕՊԵԲ-ի անդամ, ես կա՛մ էլ փորձում ես դառնալ», կամ՝ «Դու կա՛մ ՕՊԵԲ-ի անդամ ես, կա՛մ էլ ՄԱԿ-ի», ընդունելի չեն:

Այժմ անդրադառնանք պայմանական նույնաբանական կառույցներին և դիտարկենք հետևյալ օրինակը.

John Lee (UCLA field goal kicker): I don't really think that much about it. I know that I've kicked eight, ten – whatever – field goals in a row. **If I miss, I miss.** It's not that big a thing. (CBS Evening News, 23 November, 1985)

Այստեղ խոսողը բացառում է այնպիսի այլընտրանքային արտահայտությունների հավանականությունը, ինչպիսիք են, օրինակ, *If I miss, I will let the team down* (եթե վրիպեմ, ապա ամբողջ թիմին վատ վիճակի մեջ կզցեմ), կամ՝ *If I miss, I will fail* (եթե վրիպեմ, կձախողեմ (խաղը)), որպես ընդունելի տարբերակներ: Հարկ ենք համարում նշել, որ սույն օրինակում պայմանական շարահյուսական կաղապարով շեշտադրվում է այն միտքը, որ պետք է ընդունել նկարագրվող իրավիճակը, եթե այն իրականություն դառնա, սակայն չկա ոչ մի պատճառ մտածելու, որ այդ իրավիճակը անպայմանորեն կիրականանա:

Դիտարկենք պայմանական նույնաբանության ևս երկու օրինակ.

MG: So then Mark asks me where I bought it. I said: “Au magasin de Macy”. He says: “Huh? What magazine? Now what could I say? I could have really embarrassed him, but what would that get me? **If you don't know the language, you don't know the language.** (Philadelphia Inquirer, 17 September, 1985)

Այս օրինակում խոսողը չի կարող ընդունելի համարել այնպիսի այլընտրանքային տարբերակներ, ինչպես, ասենք, *If Mark doesn't know French, then I should humiliate him* (եթե Մարկը ֆրանսերեն չգիտի, ապա ես պետք է նրան ստորացնեմ): Ինչպես իրավացիորեն պնդում են Վորդը և Հիրշբերգը, հաղորդակցվելիս արտաբերված նույնաբանությունները տվյալ խոսքային իրադրության համար միակ ընդունելի տարբերակներն են (Ward, Hirschberg 1991):

MK: I really should learn how to find the other entrance (to the Holland Tunnel)

DL: What good will that do? **If it's crowded, it's crowded.** (Business Insider 02 February, 1986)

Այս օրինակում երկրորդ գրուցակիցը նկատի ունի, որ նույնիսկ եթե դեպի թունել տանող այլ մուտք էլ փորձեն, միևնույնն է այս թունելը գերծանրաբեռնված կմնա: Մյուս կողմից՝ այն հեշտությամբ կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. «Ոչինչ հնարավոր չէ փոխել. եթե թունելը գերծանրաբեռնված է, ապա ոչինչ չես կարող անել»: Այդ պահին անհնար է որևէ ձևով վերացնել տվյալ խոչընդոտը, դա խոսքերների ուժերից վեր է, և, իհարկե, բացառվում է այլընտրանքային արտահայտությունների օգտագործումը հենց այն պատճառով, որ դա ոչինչ չի տալու:

Այժմ դիտարկենք ստորադասական նույնաբանական կառույցներ, որոնք ունեն *when p, p; p because p; Whatever p, p* և *p where p* կառուցվածքներ: Դիտարկենք հետևյալ օրինակը.

Association of California Water Agencies executive director John Fraser yesterday called the guarantee shortsighted, saying it ignores dramatic increases in water usage predicted for Central California.

“Once that water is gone, it's GONE” Fraser said in a telephone interview.

(San Diego Union, 4 March, 1986)

Տվյալ օրինակում նույնաբանությունն ակնհայտորեն արտահայտում է այն նշանակությունը, որ եթե ջուր այլևս չկա, ապա մնացած այլընտրանքային տարբերակները անհնար են: Երբ ջուրն արդեն կորսվել է, ապա ոչինչ հնարավոր չէ անել, ու հնարավոր չէ այն փոխարինել այսպիսի այլընտրանքով. *Once water is gone, it can be replaced* կամ որևէ այլ տարբերակով:

Դիտարկենք ևս երկու օրինակ.

1) Ad for Walt Disney cartoon classic video disks:

But when they're gone, they're gone. (The Huffington Post, 27 May, 1985)

2) GW: But that way [eating family style in a Chinese restaurant], you get to try lots of different things.

DE: But I don't want to try lots of different things – that's the problem. In France, **when you eat in a Chinese restaurant, you eat in a Chinese restaurant.** That's none of this sharing nonsense. (The Daily Mail, 28 September, 1986)

Այս երկու օրինակները կարելի է դիտարկել միմյանց հետ համեմատելու նպատակով: Երկու դեպքում էլ խոսողը բացառում է այլընտրանքային տարբերակների հնարավոր գործածությունը տվյալ խոսքային իրադրություններում: Այնպիսի այլընտրանքային կադապար, ինչպիսին է, ասենք, *when p then q*, մերժելի են: Սակայն պետք է ընդունել, որ այս երկու օրինակների միջև չի կարելի լիարժեք հավասարության նշան դնել նույնաբանությունների մեկնաբանության տեսանկյունից (Carston 2004; Bulhof, Gimbel 2001): Երբ խոսողն ասում է *When they're gone, they're gone*, անշուշտ նա բացառում է *When they're gone, they will still be back (when p then q)* արտահայտության հնարավոր կիրառությունը: Սակայն նա նաև բացահայտ կերպով նկատի ունի, որ ոչինչ հնարավոր չէ փոխել այդ իրողության մեջ: Երկրորդ օրինակում, սակայն, *նույնաբանական* կառույցի գործաբանական նշանակությունն այն չէ, թե ոչինչ հնարավոր չէ անել իրավիճակը փոխելու համար: Այստեղ հստակ կերպով մերժվում է այլընտրանքային տարբերակների հնարավորությունը: *When you eat in a Chinese restaurant, you eat in a Chinese restaurant* նույնաբանությունն օգտագործելով՝ խոսողն արտահայտում է իր անձնական փորձի վրա հիմնված վերաբերմունքը: Ուտելու գործառույթը շատ անհատական է, ու ճաշակները

տարբեր են, հետևաբար խոսողը, կիրառելով տվյալ նույնաբանությունը, կարող է արտահայտել այն միտքը, թե չինական ռեստորանում *ընտանեկան ռճով* ուտելը չի համապատասխանում իր ճաշակին և, օրինակ, Ֆրանսիայում, եթե ճաշում ես չինական ռեստորանում, ապա պարզապես չինական սնունդ ես ուտում և ստիպված չես ամեն ինչից փորձել, ինչպես դա ընդունված է Չինաստանում՝ *ընտանեկան միջավայրում ճաշելիս*: Այստեղից նաև կարող ենք ենթադրություն անել, որ խոսքըները թերևս Չինաստանում ուտում են չինական ավանդական *ընտանեկան ռճով*: Սա ցույց է տալիս, որ թեպետ *When you eat in a Chinese restaurant, you eat in a Chinese restaurant* և *when they're gone, they're gone* կառույցներն ունեն նույն *when p, p* կառուցվածքային բանաձևը, նրանք չեն արտահայտում միմյանց հարող իմաստներ: Եթե առաջին նույնաբանությունը նշանակում է, որ ջրի վերանալու դեպքում այլևս հնարավոր չէ այն վերականգնել, ապա երկրորդ նույնաբանությունը չի արտահայտում վերահաս անդառնալի կորստի մտահոգություն: Դրա միջոցով խոսողն արտահայտում է այն միտքը, որ չինական ռեստորաններում ուտելը կարող է տարբեր լինել, կախված նրանից, թե որ երկրում ես ուտում:

Նույնաբանությունների հաջորդ խումբը, որին կանդրադառնանք, համադասական նույնաբանական կառույցներն են, որոնք ունեն *a is a and b is b* կառույցը: Դիտարկենք հետևյալ օրինակը.

A rat will be a rat, and ant an ant...but human beings can be more than just human.

(The Critical Thinker

<https://thecriticalthinker.wordpress.com/2009/07/31/maoa/> (accessed 12 November, 2015))

Այս նույնաբանությունը կիրառելով՝ խոսողը ցանկացել է փոխանցել այն միտքը, որ կենդանիները չեն կարող լինել ավելին, քան արդեն ամրագրված է դրանց գենետիկ կոդի մեջ, մինչդեռ մարդիկ անսահմանափակ հնարավորություններ ունեն և կարող են զարգանալ ու ավելիին հասնել: Բացի այդ, ընթերցողին իր

մեկնաբանության մեջ զգալիորեն օգնում է նաև նույնաբանության բուն կառույցից դուրս գտնվող հատվածը՝ լեզվական համատեքստը (*human beings can be more than just human*): Սա հուշում է, որ համատեքստը վճռորոշ դեր ունի նույնաբանության նշանակության հարցում (այս մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատանքի երրորդ գլխում): Եթե չլիներ *but human beings can be more than just human* հատվածը, ընթերցողը կկենտրոնանար միայն այն հատկանիշների վրա, որոնք առավելապես բնորոշ են մի կողմից առնետների, մյուս կողմից՝ մրջյուններին: Մինչդեռ այսպես հասկանում ենք, որ նույնաբանության նշանակության մեկնաբանման մեջ կարևոր է նաև նշված հատվածը որպես ուղեկցող նախապայման: Պետք է ուշադրություն դարձնել նաև *but*-ին, քանի որ ընթերցողն այդ շաղկապի միջոցով հասկանում է, որ գործ ունի հակադրության հետ: Նախադասության ձախ, այսինքն՝ մինչև *but* ընկած հատվածի ու աջ՝ *but*-ից հետո ընկած մասի միջև, հակասություն կա: Հետևաբար այն, ինչ ճիշտ է ձախ մասի համար, պետք է հակասության մեջ լինի աջ մասի հետ: Եթե ընթերցողը ասույթի մեկնաբանությունը սկսի աջ մասից, որն ըստ կառուցվածքի ավելի պարզ է, ապա հասկանալով, որ մարդիկ կարող են անել ավելին, քան ծածկագրված է նրանց զենետիկ կողում, նա կհասկանա որ *but*-ին նախորդած մասը պետք է լինի այս մտքի հակառակը: Կուզենայինք անդրադառնալ նաև *just* վերաբերականին, որի տեքստային գործառույթն է, նեղացնելով *human* ստորոգելիի իմաստային դաշտը, ընդգծել մարդկային հնարավորությունների անսահմանությունը: Հենց այս նպատակով էլ գրողի կողմից ընտրվել է նման շարահյուսական կառույց:

Դիտարկենք համադասական նույնաբանական կառույցի ևս մեկ օրինակ.

Mae finished by providing Annie’s email address, Zing feed and profile page. The reaction was immediate. Annie’s followers increased from 88.198 to 243.087...The messages poured in, the most popular being one that said “**The past is past and Annie is Annie.**” (ED C: 443)

Այստեղ համադասական կառույցի երկու նույնաբանությունները համեմատվում են միմյանց հետ, ու դրանցից մեկի արտահայտած իմաստը տարածվում է մյուսի վրա:

Այս նույնաբանության մեկնաբանության գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև համատեքստը: Առաջին նույնաբանությունը կամ ենթանույնաբանությունը, այսինքն՝ համադասական նույնաբանության կազմի մեջ մտնող նույնաբանություններից մեկը, տվյալ դեպքում՝ *The past is past*, այն միտքն է արտահայտում, որ անցյալը արդեն փաստ է ու անդառնալի է, այն արդեն անհնար է փոխել, և հիմա այն այլևս մեծ նշանակություն չունի: Այն հնչում է *What's done is done* նույնաբանության պես՝ արվածն արված է, եղածը եղած է: Նույն կերպ պետք է ընկալել նաև Աննիին. նա նույն մարդն է, ով երեկ էր, ում ճանաչում են, և ոչինչ չի կարող փոխել նրանց վերաբերմունքը Աննիի հանդեպ, անկախ նրանից, թե անցյալում ինչ է պատահել:

Երկու այսպես ասած ենթանույնաբանությունների՝ *The past is past* և *Annie is Annie* հավասարեցմանը ու միմյանց փոխլրացմանը նպաստում է նաև *and* շաղկապը, որը հավասարության նշան է դնում երկու նույնաբանությունների միջև մեկ ամբողջական նույնաբանական համադիր կառույցի շրջանակներում: Ուստի մեկնաբանողը, համարելով, որ նույնաբանության արտահայտած նշանակությունը ինքնըստինքյան ակնհայտ ճշմարտություն է, և ինչպես որ անցյալը չի կարող լինել մեկ այլ բան, քան ինչ որ է, նույն կերպ էլ Աննին չի կարող լինել այլ մարդ, քան այն, ինչ որ է: Այնպիսի այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք կարող են լինել *The past is past and Annie still is responsible for her actions* և *The past is past and Annie must answer for the wrong of her ancestors*, ընդունելի չեն կարող համարվել:

Այստեղից պարզ է դառնում, որ այլընտրանքային տարբերակները բացառելիս էական դեր ունի նաև համատեքստը՝ ինչպես նաև համադասական նույնաբանական կառույցի առաջին ենթանույնաբանություն-բաղադրիչը՝ *The past is past*, որն ինքնին հասկանալի և ընդունված ճշմարտություն է: Սա նույնպես իր դերակատարումն ունի երկրորդ բաղադրիչի՝ *Annie is Annie* նշանակության մեկնաբանման հարցում, քանի որ, ինչպես նշվեց, դրանց միջև հավասարության նշան է դրված, ու նրանք կիրառվում են մեկ համադաս նույնաբանական կառույցի մեջ:

Այսպիսով, ընտրելով նույնաբանական կառույցի որևէ շարահյուսական կաղապար, խոսողը ելնում է իր հաղորդակցական նպատակը տվյալ

հաղորդակցական իրադրության շրջանակում առավել տեղին և համապատասխան իրականացնելու մտադրությունից: Ավելին, կատարելով իր ընտրությունը հոգուտ նույնաբանական կառույցի, նա բացառում է մնացած բոլոր այլընտրանքների տեղիությունը խոսքնթացի տվյալ պահի համար:

2.2. Նույնաբանության գործաբանական ներուժի կազմավորումը կառույցի անվանական անդամի միջոցով

Փաստական նյութի քննությունը ցույց է տալիս, որ նույնաբանության գոյականական անդամի իմաստաքերականական առանձնահատկությունները հաճախ հանդես են գալիս որպես նույնաբանական կառույցի գործաբանական ներուժի ձևավորման կարևոր նախապայման: Կախված իր հաղորդակցական նպատակից՝ խոսողը նախապատվություն է տալիս նույնաբանության այս կամ այն շարահյուսական կաղապարին՝ ընտրելով տվյալ գոյականի իմաստաքերականական հարացույցից իր մտադրությանը համապատասխան քերականական ձևը: Օրինակ՝ եզակի թվով գոյականը կիրառվում է, երբ խոսողը ցանկանում է փոխանցել իր հարգանքը կամ բարձր կարծիքը մարդկանց տվյալ խմբի կամ առարկաների վերաբերյալ, օրինակ՝ *A mother is a mother, A doctor is a doctor* և *A steak is a steak*: Երբ այս նույնաբանությունների գոյականական անդամը դարձնում ենք հոգնակի, փոխվում է նաև դրանց արտահայտած իմաստը: *Doctors are doctors* և *Steaks are steaks* նույնաբանությունները կարծես թե արտահայտում են անտարբերություն և ընդհանրացված մոտեցում, ինչը հակառակ է ակնածանքին ու բարձր կարծիքին: Այս միտումն է՛լ ավելի տեսանելի է պարտավորվածություն արտահայտող նույնաբանությունների պարագայում, որոնք պահանջում են գոյականի եզակի թիվ, քանի որ հոգնակի թիվը՝ *Promises are promises*, թվում է, ընդհանրացնում է իմաստն ու ընդգծում անտարբեր վերաբերմունքը՝ ի տարբերություն *A promise is a promise* նույնաբանության, որտեղ արժևորվում է խոստումը որպես մի երևույթ, որն անպայմանորեն պետք է կատարել (Wierzbicka 1991: 420; Carrel 1983): Դիտարկելով *A shilling is a shilling* նույնաբանությունը՝ տեսնում ենք, որ դրա իմաստն այն է, որ նույնիսկ մեկ շիլլինգը արժեք ունի,

կարևոր է, մինչդեռ հոգնակի թվի դեպքում այս իմաստը կկորչեր: Նույնաբանությունների մեկ այլ խումբ, որը կիրառվում է եզակի թվով, հատուկ առիթների ու հատկապես հաճելի առիթների կապակցությամբ կիրառված նույնաբանություններն են: Օրինակ՝ *A party is a party* կամ *A honeymoon is a honeymoon* նույնաբանություններն արտահայտում են հանդուրժողական ու թույլատրող վերաբերմունք, ինչը բխում է նշված իրադարձությունների *հասուն* լինելու հանգամանքից: Նույնաբանության իմաստը կարծես այն է, որ թեպետ սովյալ իրադարձությունները հնարավոր է անհարմարություն պատճառեն մարդկանց, սակայն այդ անհարմարությունները պետք է հաշվի չառնել ու ըմբռնումով մոտենալ, քանի որ նույնաբանությունները շեշտում են դրանց առանձնահատուկ լինելն ու տարանջատում ընդհանրապես կատարվող ամենօրյա իրադարձություններից: Ըստ Վերժբիցկայի՝ այսպիսի նույնաբանությունները հնարավոր է կիրառել միայն եզակի թվով (Wierzbicka 1991: 408-409):

Որոշակի դեր ունի նաև թանձրացական և վերացական գոյականների տարբերակված կիրառումը նույնաբանություններում: Երբ վերջիններս պարունակում են վերացական գոյականներ, ինչպիսիք են *War is war* կամ *Business is business*, ապա նման նույնաբանությունները հիմնականում արտահայտում են *իրատեսական* մոտեցում մարդկային տարաբնույթ գործունեության հանդեպ: Այստեղ խոսողն արտահայտում է իր վերաբերմունքը անխուսափելի բացասական երևույթների հանդեպ, որոնք պետք է ըմբռնել, համակերպվել դրանց հետ և ընդունել այնպես, ինչպես կան: Ի տարբերություն վերացական գոյականով կազմված նույնաբանությունների, որոնք վերաբերում են մարդկային տարաբնույթ գործունեությանը, թանձրացական գոյականով նույնաբանությունները, ինչպիսիք են *Kids are kids*, վերաբերում են որևէ երևույթի առանձնահատուկ հատկանիշին, ինչը պետք է ընդունել, քանի որ այն փոխելը հավանական չէ: Ինչպես մատնանշում է Վերժբիցկան, թանձրացական գոյականներով կազմված նույնաբանությունները հիմնականում արտահայտում են ընդհանրացվածություն, հանդուրժողականություն, անտարբերություն և պարտավորվածություն (Wierzbicka 1991: 395): Մի շարք անգլերեն նույնաբանություններ վերաբերում են մարդկային զբաղմունքների կամ կարգավիճակի, դերակատարման, ինչպես,

ասենք, տղաներին, հայրերին, ուսուցիչներին կամ ամուսիններին: Վերժբիցկան նշում է, որ այնպիսի նույնաբանություններ, ինչպիսիք են *Boys will be boys* կամ *Kids are kids*, արտահայտում են մարդկային բնույթի հանդեպ *իրատեսական* վերաբերմունք և կոչ են անում դրսևորելու համակերպվածություն և հանդուրժողականություն, որովհետև մարդկային բնույթը դիտարկվում է որպես թույլ և խոցելի, վերահսկողությունից դուրս գտնվող երևույթ: Հոգնակի թիվը նույնպես ընդգծում է, որ այդ թուլությունը վեր է մարդու կարողությունների շրջանակից (Wierzbicka 1991: 405-411): Այս համատեքստում Վերժբիցկան նաև դիտարկում է *A husband is a husband* նույնաբանության մի քանի մեկնաբանություններ: Դրանք են՝ պարտավորվածության իմաստը (այն պարտավորվածությունները, որոնք կինն ունի ամուսնու հանդեպ), անտարբերությունը (ամուսինները միմյանցից ոչ շատ լավն են ու ոչ էլ շատ վատը) և բացարձակ ընդհանրացումը (բոլոր ամուսիններն ընդհանուր առմամբ նույնն են, ու գիտես, թե նրանցից ինչ կարելի է սպասել) (Wierzbicka 1991: 421): Ինչպես ցույց է տալիս փաստական նյութի մեր քննությունը, նույնաբանությունների մեկնաբանությունների տարբեր հավանականությունների մեծաթիվ լինելը ընդգծում է նույնաբանական կառույցների և դրանց համատեքստերի միջև բացահայտ կապը և շեշտում է համատեքստի դերի առաջնահերթությունը նույնաբանությունների իմաստը վերծանելիս: Նույնաբանական կառույցների մեջ *just* կամ *only* բառերի առկայությունը դրանց տալիս է այլ իմաստ կամ երանգավորում, ինչն անդրադառնում է նույնաբանության արտահայտած ուղերձի վրա: Օրինակ՝ *A kiss is just a kiss*, արտահայտում է անկարևորության իմաստ՝ ի տարբերություն *A kiss is a kiss* նույնաբանական կառույցի, որն արժևորում ու մեծ նշանակություն է տալիս համբույրին: Նույնաբանությունների իմաստն ընդգծող մեկ այլ միջոց է դրա կառույցում ստացական դերանունի կիրառությունը: Որոշ դեպքերում դա կարող է նույնաբանությանը փոխանցել պարտավորվածության իմաստ և թուլացնել անտարբերության զգացումը, ինչպես, օրինակ, *My neighbours are my neighbours* կամ էլ Օ. Ուայլդի «Եսասեր հսկան» (WO SG: 19) պատմվածքում կիրառվող *My own garden is my own garden* նույնաբանական կառույցներում: Ընդ որում՝ երկրորդ նույնաբանական կառույցում, բացի ստացական դերանունից,

կիրառվում է նաև *own* որոշիչը՝ է՛լ ավելի ընդգծելու խոսողի սեփականատիրական մղումները, բացառելով անտարբերության որևէ արտահայտում (ինչպես, օրինակ, *A garden is just a garden*–ի դեպքում):

Այժմ դիտարկենք հետևյալ նույնաբանական կառույցներն ու գործնականում ստուգենք նույնաբանության գոյականական անդամի թվի ազդեցությունը ամբողջ կառույցի հաղորդակցական-գործաբանական արժեքի վրա⁵.

1) “feeling strangely proud of herself for getting Vaughn to take off his hat” Ah, well **girls are...girls**. You cannot blame the females for being attracted to good looking men. Personally, I have met way too many allegedly “handsome” men in my life that they all have started to look the same to me...people like Will. Many of them try way too hard and come off as extraordinarily vain. *coloring slightly* Not you, obviously, but you know, other guys.” (Tumblr, <http://slaying-dragons-in-my-mind-blog.tumblr.com/post/6407168963/daaaance>, (accessed 11 February, 2014))

2) I won't deny that I probably have used this phrase a number of times while I was at school, but I cannot remember ever directing it at a girl. To me **a girl is a girl**, so will act/behave like a girl, which is right. But why is 'like a girl' insulting to a boy? Simply because young boys naturally want to look masculine and do not want to be compared to a girly girl who is too worried about their nails/hair/make-up during physical activity. But also many boys feel they have to be better at sports than the girls, as males are naturally stronger and more physical so should be reaching higher benchmarks. Physical tests and sports around the world demonstrate that females cannot hit the same levels which a male can, hence why we separate males and females in sporting events. If you were to put a national female football team against that of a national male's team you would probably find that the result would look something like Germany vs Brazil (on average), with a few games possibly going the other way. (The Telegraph,

<http://www.telegraph.co.uk/women/womens-life/10961856/At-last-theres-no-shame-in-acting-like-a-girl.html>, (accessed 20 November, 2015))

Առաջին օրինակում *Ah, well* հատվածը արդեն հսկայական տեղեկույթ է փոխանցում ու համապատասխան համատեքստ ստեղծում, որպեսզի *girls are girls* նույնաբանությունը ընկալվի որպես աղջիկների հանդեպ ոչ լուրջ և միևնույն ժամանակ հանդուրժողական վերաբերմունքի արտահայտում: Միայն *girls are girls* նույնաբանական կառույցի արտահայտած տեղեկույթը բավարար չէր լինի նման եզրակացության համար: Նույն կերպ երկրորդ նմուշօրինակը՝ *a girl is a girl* արտահայտության համար էլ չի կարելի ասել, որ այն կմեկնաբանվի որպես աղջիկների հանդեպ անվստահություն: Այստեղ խոսողը, օգտագործելով *a girl is a girl* նույնաբանությունը, ցանկանում է արտահայտել այն միտքը, որ աղջիկները մեծ ուշադրություն են դարձնում իրենց եղունգներին, դիմահարդարմանն ու սանրվածքին, ու տղաները չէին ցանկանա, որ իրենց բնորոշ են այնպիսի որակներով, որոնք հատուկ են աղջիկներին: Խոսողը աղջիկների հանդեպ հեզմանք չի արտահայտում, այլ պարզապես ընդունում է իրականությունը, որտեղ կանայք պարզապես ֆիզիկապես ավելի թույլ են, քան տղամարդիկ: Սա ոչ թե անվստահության արտահայտություն է, այլ իրական փաստերի ընդունում:

Այսպիսով՝ խոսքաստեղծման գործընթացում խոսողը չի կարող անտեսել, թե ով է նույնաբանության հասցեատերը, ինչ սեռի և տարիքի է, ինչ հենքային գիտելիքի է տիրապետում, ինչպիսին է նրա կրթվածության մակարդակը և այլն:

Դիտարկենք հետևյալ օրինակները.

1) “The biblical witness will not let us get away with defeatist attitudes towards our own vocation. The work of your hands is not irrelevant, whether or not you see the outcome. It is, without exaggeration, holy activity and a priestly service.

Investment bankers, Walmart greeters, and parish priests who would have their lives shaped by reality must understand this.

Or become lazy, bored, and sloppy, which is like spraying a subway train with obscene images or breaking a neighbor's windows for no reason or driving while slightly drunk. Passive or active, **a vandal is a vandal**. So get to work.” (<http://canterbridge.org/2015/07/03/a-vandal-is-a-vandal-proverbs-18/> (accessed 26 August, 15))

2) **Vandals are vandals** no matter how you look at it. It is people who have nothing else better to do than destroy property that does not belong to them. The 'Petroglyphs' is history and should be preserved. Now it is a federal investigation so if they are caught, good luck to them, they deserve what they get. (KRQE News 13, <http://krqe.com/2014/09/15/vandals-destroy-part-of-petroglyph-trail/> (accessed 17 July, 2015))

Այս նույնաբանական կառույցները կիրառելիս խոսողը/գրողը վստահ է, որ իրեն լսողը կամ իր պոտենցիալ ընթերցողը իր մեկնաբանությունը սկսում է *vandal* բառի իմաստի ընկալումից: Պատմականորեն *վանդալ* ցեղանունով նկատի են ունեցել մարդկանց, որոնք հեռու են քաղաքակրթությունից, սակայն ոչ միայն հեռու են, այլև ունակ են ոչնչացնելու մշակութային կոթողներ, համամարդկային արժեքներ, արվեստի գործեր: Մինչդեռ *վանդալ* բառն իր առաջին իմաստով ցեղանուն է՝ գերմանական ցեղ, որ միջին դարերում տեղաշարժվեց դեպի Իտալիա ու Իսպանիայի արևմուտք: Ակնհայտ է, որ իրենց վայրագությունների, դաժանության ու հատկապես մշակութային ու քաղաքակրթական արժեքների նկատմամբ կործանարար ազդեցության պատճառով նրանց անունը ձեռք է բերել բնութագրական նշանակություն և կիրառվում է՝ բնութագրելու ոչ քաղաքակիրթ մարդկանց, որոնք մեծ վնասներ են հասցնում համաշխարհային կամ հանրային սեփականությանը: Երբ որևէ մեկը կիրառում է վերոնշյալ նույնաբանությունները, նա նախ և առաջ տեղյակ է տվյալ մշակութային, պատմական համատեքստին և կարծում է, որ իր գրուցակիցը նույնպես տեղյակ է ու կհսում է իր դիրքորոշումը (Doron 1988, Davis 1998): Նույնաբանության գոյականական անդամը եզակի թվով կիրառելով՝ խոսողը ցույց է տալիս, որ ում

մասին խոսվում է, նա ունի վանդալներին բնորոշ՝ վերևում նշված հատկանիշները, ու ըստ էության բոլոր վանդալներն էլ նույն ընդհանուր անմարդկային ու վայրի վարքն ունեն արվեստի, մշակույթի ու քաղաքակրթության հանդեպ:

Հոգնակիի պարագայում նույնպես հնարավոր չէ հանդուրժողականություն կամ ըմբռնողականություն տեսնել, ինչն ակնհայտ է հաջորդ օրինակում, որը մեջբերված է *National Geographic* ամսագրի *Here Are the Ancient Sites ISIS Has Damaged and Destroyed* վերնագրով հոդվածի մեկնաբանություններում.

Isis terrorists destroyed a 5th century B.C. Assirian monuments.

No means should be spared to stop them! **Vandals are vandals** and must be eliminated. Every second is on account. (*National Geographic*, <http://news.nationalgeographic.com/2015/09/150901-isis-destruction-looting-ancient-sites-iraq-syria-archaeology/> (accessed 08 August, 2015))

Տվյալ օրինակում մեկնաբանողը հանդուրժողականություն կամ ըմբռնողական մոտեցման կոչ չի անում, ոչ էլ նման վարք է դրսևորում: Ընդհակառակը, նա արտահայտում է իր վրդովմունքը, դատապարտում է և հակընդդեմ քայլերի հրատապ անհրաժեշտության մասին դատողություն անում: Անշուշտ, հոգնակիով նույնաբանությունն ունի որոշ ընդհանրականություն, ինչը բնորոշ է հոգնակի թվին ընդհանրապես: Փաստական նյութի քննությունը ցույց է տալիս, որ հոգնակիով կիրառված նույնաբանությունը եզակիից տարբերվում է հիմնականում նրանով, որ հոգնակին տարածվում է մեկից ավելի երևույթների, օբյեկտների նկատմամբ ու ընդհանրացնում նրանց բոլորին միավորող հատկանիշները՝ ինչ-որ չափով համահարթեցնելով կամ մեծ տեղ չտալով դրանցից յուրաքանչյուրի անհատականությանը: Սակայն, ինչպես ցույց է տալիս մեր վերլուծությունը, միշտ չէ, որ հոգնակիով կառուցված նույնաբանությունը հանդուրժողական ու ըմբռնողական վերաբերմունք է ենթադրում: Դիտարկենք մի քանի օրինակներ.

1) **Whores are whores**

(*Whisper*, <https://whisper.sh/whisper/0517f768908fe8218728d4208c84ee46e10573/Whores-are-whores-and-bitches-are-bitches-always> (accessed 08 August, 2015))

2) **Murderers are murderers**- There is no defense for this.

“4 masked Israelis physically attack two Palestinian homes in the town of Dama. Both have windows smashed, and fire bombs thrown inside. At least one has the word, Nekama, "Revenge," spray painted on the side of the house. One is empty, while the other contains a family of four asleep in their beds. The father, mother and one child are brutally burned and now in the hospital with 2nd and 3rd degree burns over 60-90% of their bodies. The 18 month old baby, Ali Saad Daobasa, is killed by the smoke and flame. The parents are on life support...”

(Rabbi Tobbin's Blog, (<http://rabbitobin.blogspot.am/2015/08/murderers-are-murderers-there-is-no.html>, (accessed 23 June, 2015))

3) A: Though they are all homiciders some of these criminals are found guilty of unpurposeful murder and I think they should be treated in a less severe manner.

B: I see no reason to do so. **Murderers are murderers** and they all must be judged in a uniform way. (Channel 6, Action News at 6, 8 June 1985)

Առաջին օրինակում խոսողը տվյալ նույնաբանությամբ կարծես արտահայտում է մարմնավաճառների նկատմամբ ընդհանուր հասարակական կարծիքը, որը ամեննին էլ «հանդուրժելն ու ընդունելը» չէ: Ճիշտ է, սա ամեննին չի նշանակում, թե մարդիկ մարմնավաճառների հանդեպ անհանդուրժող ու ազրեսիվ են, ուղղակի նրանց ընդունում ենք այնպես, ինչպես որ կան, ոչ ավել, ոչ պակաս: Պարզապես ըստ էության հասարակությունն առավել հաճախ նրանց արհամարհական է վերաբերվում, երբեմն էլ խղճալով:

Երկրորդ օրինակը հետաքրքրական է դիտարկել համատեքստում: Այս օրինակում ևս մեկ անգամ տեսնում ենք, որ երկրորդ գրուցակիցը կիրառում է *N(hum.) are N(hum.)* ամեննին ոչ հանդուրժողական կամ ըմբռնողական մոտեցում արտահայտելու համար: Նույնաբանությունն օգտագործված է <http://rabbitobin.blogspot.am/> բլոգում որպես հոդվածի վերնագիր: Հոդվածում ներկայացվում է ահաբեկչական դեպք, որին գոհ է գնացել մի ամբողջ ընտանիք, ու հոդվածի հեղինակն ասում է, որ թեպետ այդ ահաբեկիչները իրենց հայրենակիցներն են, միևնույնն է, նրանց պետք է բռնել ու պատժել, քանի որ նրանք ահաբեկչական գործողություն են կատարել խաղաղ ընտանիքի հանդեպ, ու դա չպետք է անպատիժ մնա: Այս օրինակների քննությամբ տեսնում ենք, որ չի կարելի հստակ սահմանել, թե հոգնակիով կազմված նույնաբանությունները միշտ կիրառվում են մի նշանակությամբ, իսկ եզակիով կազմվածները՝ մեկ այլ: Եթե *Whores are whores* նույնաբանությունը չի արտահայտում անհանդուրժողականություն, ապա ներկայացված համատեքստում *Murderers are murderers* նույնաբանական կառույցի միջոցով արտահայտվում է հենց անհանդուրժողականություն:

Երրորդ օրինակում առաջին գրուցակիցը առաջարկում է որոշակիորեն մեղմ վերաբերմունք ոչ կանխամտածված սպանություն կատարողների հանդեպ, սակայն երկրորդն իր անհամաձայնությունն է հայտնում այդ կարծիքին ու հենց հանդուրժողական մոտեցմանը հակադրվում է հոգնակիով կազմված նույնաբանության կիրառմամբ⁶:

Ինչպես տեսնում ենք, նույնաբանությունների իմաստը չի սահմանափակվում այս կամ այն հնարավոր մեկնաբանությամբ: Հաղորդակցական իրադրությունից կախված՝ այն կարող է ձեռք բերել տարբեր մեկնաբանություններ (Gazdar 1979): Այդ դեպքում հնարավոր է արդյոք խոսքաստեղծման ընթացքում ուղենշել որևէ նույնաբանության մեկնաբանման, դրա գործաբանական նշանակության շրջանակը: Նույնաբանությունների գործաբանական նշանակության մասին խոսելիս պետք է նշել խոսողի հաղորդակցական նպատակը: Ուսումնասիրելով մի շարք օրինակներ և տեսություններ՝ կարելի է եզրակացնել, որ նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը

մեծապես կախված է այն նպատակից, որին խոսողը ծառայեցնում է իր խոսքը: Ստացվում է, որ արդարացված չէ փորձել ստեղծել նույնաբանությունների իմաստային դասակարգման աղյուսակ ու պնդել, որ որևէ նույնաբանություն կարելի է կիրառել միայն մեկ նշանակությամբ կամ թեկուզ մի քանի ֆիքսված նշանակություններով: Նույնչափ հեռանկարային չէ ստեղծել բանաձևեր ու համապատասխանաբար ասել, որ որևէ բանաձևով կառուցվող նույնաբանությունը պետք է արտահայտի որոշակի նշանակություն: Մյուս կողմից, սակայն, կարող է հարց առաջանալ, թե եթե հրաժարվում ենք նույնաբանական կառույցներն ըստ դրանց կառուցվածքային բանաձևի կամ ըստ ֆիքսված նշանակության դասակարգելուց ու ասում, որ նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը կախված է խոսողի հաղորդակցական նպատակից ու իրավիճակային նախապայմաններից, ապա մի՞թե հնարավոր է, դիցուք, ցանկացած նույնաբանությամբ ցանկացած նշանակություն փոխանցել, և ո՞րն է այն գործաբանական սահմանը, որի շրջանակում կարող է նույնաբանությունը գործածվել:

Այս հարցին պատասխանելու համար առաջարկում ենք դիտարկել նույնաբանական կառույցների մի քանի նմուշ: Այս օրինակների քննության արդյունքում կփորձենք գտնել ու ցույց տալ այն սահմանը, որի տիրույթում նույնաբանությունը կարող է կիրառվել:

1. **A woman is a woman.** (GJL WW: 1961)
2. **There are men that are men and men that are manly men.** (comment by Rubenz69 “RubenzUniversum - 6.9.7” Universum dZ under <https://www.youtube.com/watch?v=BiyBAmCE7d0> (accessed 17 September, 2014))
3. **Students are students.** (Walter 2008)
4. **Kanye is Kanye.** (Billboard, *Kanye West Booed After All Day Performance at the 2015 Billboard Music Awards*, <http://www.billboard.com/articles/news/bbma/6568470/kanye-west-all-day-2015-billboard-music-awards-video> (accessed 17 May, 2015))

5. **I did what I did.** (The English Civil War Part 3, Trial of King Killers, 17:59 min., <https://www.youtube.com/watch?v=fzIzJgukqC8>, (accessed 17 October, 2015))

Ակնհայտ է, որ այս նույնաբանական կառույցներում առկա են որոշակի կառուցվածքային տարբերություններ: (1), (3), (4) օրինակները անվանական նույնաբանություններ են, ըստ որում՝ առաջին օրինակում գոյականական անդամը կիրառվում է “a” անորոշ հոդով, օրինակ (3)-ում այն հոգնակի թվով է կիրառվում, (4)-ում գոյականական անդամը հատուկ անուն է, օրինակ (2)-ը իր շարահյուսական կաղապարով համադասական է, որի յուրաքանչյուր բաղադրիչ առանձին վերցված ստորադասական նույնաբանական կառույց է, իսկ օրինակ (5)-ը բայական է: Նույնաբանությունների ամբողջական կառույցների մեկնաբանությունը առաջարկում ենք սկսել դրանց առաջին անդամ գոյականների իմաստներին անդրադարձով: Դիմենք Օքսֆորդի բառարանին:

Woman

1) An adult female human. A 24-year-old woman. I prefer to see a woman doctor. 2) female humans in general: (informal) She’s all woman! (= has qualities that are typical of women) 3) (in compounds) a woman who comes from the place mentioned or whose job or interest is connected with the thing mentioned: an Englishwoman, a businesswoman, a congresswoman, a horsewoman 4) a female worker, especially one who works with her hands: We used to have a woman to do the cleaning. 5) (sing.) (old-fashioned) a rude way of addressing a female person in an angry or important way: Be quiet, woman! 6) (sometimes disapproving) a wife or a sexual partner: He’s got a new woman in his life. IDM. Be your own man/woman – to act or think independently, not following others or being ordered: Working for herself meant that she could be her own woman. (Oxford Advanced Learner’s Dictionary 2005)

Բառարանային հոդվածի առաջին իմաստի երկրորդ օրինակում, որտեղ խոսողը հայտնում է իր՝ կին բժիշկների հանդեպ ունեցած նախապատվության մասին, հասկանալի է դառնում, որ նրա այդպիսի ցանկությունը պայմանավորված է որոշակի ներքին պատճառներով, ինչպես, օրինակ, որ կանայք ավելի լավ բժիշկներ են, կամ կին բժիշկներն ավելի հոգատար են, թերևս պետք չէ բացառել, որ

պարզապես գուցե ավելի հաճելի է գործ ունենալ կին բժշկի հետ, հատկապես եթե խոսողը տղամարդ է: Բոլոր դեպքերում միտքն այն է, որ որոշակի հատկանիշներից ու որակներից ելնելով՝ խոսողը գերապատվություն է տալիս կին բժիշկներին: Երկրորդ կարևոր հանգամանքը, որ թեպետ կառույցը եզակի թվով է օգտագործվում (*a woman doctor*), հասկանալի է, որ խոսքը ոչ թե որևէ մի կնոջ է վերաբերում, այլ կանանց՝ կին բժիշկներին ընդհանրապես: Եվ երրորդ կետը, որ կարելի է դուրս բերել այս նախադասությունից, այն է, որ խոսողը նույնիսկ չի հստակեցնում, թե ինչու է նախապատվությունը տալիս կին բժիշկներին՝ կարծես դա համարելով ինքնին հասկանալի մի իրողություն: Այսինքն՝ նա վստահ է, որ *կնոջ* մասին հայտնի հատկանիշները փոխընդունելի ու հասկանալի են հանրության կողմից: *Woman* բառի երկրորդ իմաստն ավելի է կենտրոնանում հենց այն հատկանիշների վրա, որոնք ընդունված է համարել, որ բնորոշ են կանանց: Հատկապես *She's all woman!* բացականչությունը հենց այդ իմաստով պետք է հասկանալ: Այստեղ փորձենք կիրառել Ջ. Վորդի և Ջ. Հիրշբերգի նույնաբանությունների մեկնաբանման այլընտրանքային տարբերակների բացառման սկզբունքը: Կստացվի՝ *She's all woman!* ասելով՝ խոսողը բացառում է այնպիսի այլընտրանքների հնարավորությունը, ինչպիսիք են *She's all man* կամ *She's all child* տարբերակները: Համաձայնելով այս իրողությանը՝ միննույնն է, չենք պարզում, թե ինչ ասել է լինել ամբողջովին/իրապես/իսկական/հենց կին: Այս նախադասության և *A woman is a woman* նույնաբանության միջև գործաբանական ու իմաստաբանական գուգահեռ տանելու դեպքում կտեսնենք, որ իրենց հաղորդակցական-գործաբանական արժեքով դրանք միմյանց մոտ են: Երկուսն էլ ցանկանում են ցույց տալ ու ընդգծել այն որակները, որոնք հատուկ են հենց կանանց և ոչ մի ուրիշ էակի: Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ ասել է հատկանիշներ կամ որակներ, որոնք բնորոշ են կանանց: Հստակ ասել, թե որոնք են այդ հատկանիշները, թերևս կնշանակի դուրս գալ տվյալ աշխատանքի բուն նպատակներից, սակայն ինչպիսին էլ լինեն այդ հատկանիշները և ինչքան էլ ընդհանրական լինեն կանանց համար, ակնհայտ է, որ տարբերություններ նույնպես կան կանանց միջև (հակառակ պարագայում նրանք բոլորն իրոք նույնը կլինեին, ինչը հակասում է կենսաբանության ամենաբազային ճշմարտությանը): Այստեղ տեսնում ենք

խոսքային իրադրության, խոսողի հաղորդակցական նպատակի և համատեքստի կարևորությունը: Հստակ է, որ *կնոջ* հատկանիշներն ու բնորոշ որակները միասին մի շարք են կազմում, որոնցից ոչ բոլորն են նկատի առնվում որևէ խոսքային իրավիճակում: Այսինքն՝ այդ հատկանիշներից մեկը կամ մի քանիսը կարող են ձևավորել ասույթի գործաբանական ներուժը և հանդես գալ որպես այդ ասույթի գործաբանական նշանակություն, մինչդեռ մյուսները չիրականացվեն տվյալ խոսքային իրավիճակում (Bach 1999; Ochs 1979b; Bianchi 2004): Այստեղ միանշանակ գործում են նաև լեզվի ու մարդկանց գիտակցության մեջ արմատացած որոշակի կարծրատիպային մոտեցումներ: Օգտագործելով *կին* բառը՝ խոսողը շատ կամ քիչ (ըստ հաղորդակցական նպատակի պահանջի) իրականացնում է նաև այդ կարծրատիպային նշանակությունները իր ասույթի գործաբանական նշանակության մեջ: Սա լավ է երևում հետևյալ օրինակի վրա: Փորձենք *A woman is a woman*-ի կառուցվածքով ստեղծել հետևյալ նույնաբանությունները:

A Congresswoman is a Congresswoman.

A businesswoman is a businesswoman.

Չի բացառվում, որ այս կառույցները հետագայում մուտք գործեն լեզվի մեջ ու կիրառվեն, սակայն այսօր նման նույնաբանություններ կիրառության մեջ չեն հանդիպում: Ու հենց սա է հետաքրքիր, թե ինչու նույն (*Art*) *N is (Art) N* կառույցին պատկանող նույնաբանություններից մեկը խոսքում ստանում է հաղորդակցական-գործաբանական արժեք ու կիրառվում է խոսողի միտքն արտահայտելու համար, իսկ մյուսը՝ ոչ: Տարբերությունն այն է, որ *congress* գոյականը, *woman*-ի հետ կիրառվելով որպես *congresswoman*, որևէ հատուկ, առանձնացող ու միայն իրեն բնորոշ հատկանիշներ առաջ չի բերում: Ըստ էության *congressman* և *congresswoman* գոյականների միջև բոլոր հասարակական, կարծրատիպային ու նախապաշարմունքային տարբերությունները վերացված են: Նրանց միջև միակ տարբերությունն այն է, որ մեկը նշանակում է արական սեռի անձնավորություն, իսկ մյուսը՝ իգական: Մնացած հարթություններում՝ մասնագիտական

պահանջներ, պարտականություններ, աշխատանքային ընթացակարգեր ու նույնիսկ բուն աշխատանքը երկուսի համար էլ նույնն են: Կարող ենք հետևություն անել, որ նույնաբանությունը շեշտում է իր կառույցում առկա գոյականի այն հատկանիշները, որոնք դրան առանձնացնում են ու հատուկ են դարձնում, տարբերում են մյուսներից: Իսկ թե այդ առանձնահատկություններից որը նկատի կառնվի խոսողի կողմից, կախված է խոսքային իրադրությունից ու խոսողի հաղորդակցական նպատակից: Ըստ խոսողի հաղորդակցական նպատակի՝ այն ձեռք կբերի գործաբանական որոշակի արժեք: Ըստ հաղորդակցական նպատակի՝ խոսողը, ասելով *A woman is a woman*, կարող է նկատի ունենալ կնոջ ֆիզիկական թույլ կարողությունը տղամարդու համեմատ կամ կնոջ ավելի նրբանկատ, հոգատար լինելը կամ էլ կարող է մեկ այլ հատկանիշի վրա շեշտ դնել, որն ընդհանուր առմամբ *կին* բառի կոնցեպտային դաշտի մեջ է մտնում: Նույնաբանության նշանակության, գործաբանական ներուժի սահմանները գծվում են դրա գոյականական անդամի իմաստային դաշտի բաղադրիչների՝ նշանակությունների կիրառելիության հնարավորությունից: Նույնաբանությունը, որի գոյականական անդամը *woman* (կին), *boy* (տղա), *dog* (շուն), *girl* (աղջիկ) և այլն է, արտահայտում է այնպիսի նշանակություն, որը տեղավորվում է տվյալ գոյականի իմաստային դաշտում՝ շեշտը դնելով այն հատկանիշի բաղադրիչի վրա, որը խոսողը նպատակահարմար է համարում տվյալ դիսկուրսում: Լինելով փակ շղթա իր կառուցվածքով՝ նույնաբանությունը վերահաստատում ու ընդգծում է տվյալ պահին խնդրո առարկա և խոսողի հաղորդակցական նպատակ հանդիսացող հատկանիշի իրողությունը և ճշմարտացիությունը: Սա, իհարկե, հեշտ է ուսումնասիրել ու առավել տեսանելի է հետազոտել այն պարագայում, երբ գոյականն ու դրա իմաստներն արդեն արձանագրված են: Այս պարագայում տվյալ բառն օգտագործողը, եթե տիրապետում է լեզվին, գիտի այդ բառի բոլոր իմաստները և երբ օգտագործում կամ լսում է դրանով կազմված որևէ նախադասություն, այդ թվում՝ նույնաբանություն, նա կարողանում է բացառել այն իմաստները, որոնք տվյալ խոսքային իրավիճակում տեղին չեն, այսինքն՝ չեն բխում խոսակցության տրամաբանությունից, և թողնում է այն իմաստը, որը տեղին է:

Այժմ անդրադառնանք երկրորդ օրինակին.

I am a man, I'm 21, I play rugby, soccer, I swim and go to the gym. I'm 6'5 and even if I'm in good shape for my training, I can't say I'm manly, like really manly because of the morphology of my body caused by my genes. **There are men that are men and men that are manly men.** Manly does not have anything to do with having big muscles and acting like a stupid tough guy« not at all. (comment by [Rubenz69](#) “[RubenzUniversum - 6.9.7](#)” [Universum_d7](#) under <https://www.youtube.com/watch?v=BiyBAmCE7d0> (accessed 17 September, 2014))

Այս օրինակում ուսումնասիրենք *men* գոյականի իմաստները ու փորձենք պարզել՝ արդյո՞ք դա որևէ առնչություն ունի նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքի հետ: Եվ այսպես, մենք տեսնում ենք, որ *men* բառը կիրառվել է երեք տարբեր իմաստներով: Նույնաբանության կառույցի մեջ առաջին *men*-ը նշանակում է արական սեռի ներկայացուցիչ, իսկ երկրորդը վերաբերում է հիմնարար ֆիզիոլոգիական հատկանիշներին, ինչպիսիք են՝ ընդգծված ֆիզիկական ուժ, քաջություն, որոնք տղամարդուն տարբերակում են կնոջից: Տվյալ նույնաբանական կառույցի մեջ ըստ հերթականության երրորդ *men*-ը կրկին նշանակում է արական սեռի ներկայացուցիչ՝ բառի բառարանային առաջին իմաստով, իսկ արդեն թվով չորրորդ *men*-ը (*manly men*) շեշտում է տղամարդուն ամենաբնորոշող հատկանիշներից (համարձակություն, ուժ, վստահություն) այն նեղ շրջանակը, որ խիստ արտահայտված է ուժեղ, քաջ տղամարդկանց մոտ: Այդ հատկանիշներն արդեն մի ուժեղ տղամարդուն առանձնացնում են մյուսից: Այլ կերպ ասած, եթե փորձենք բացել այս նույնաբանությունը, կստացվի հետևյալը. կան տղամարդիկ (արական սեռի ներկայացուցիչներ), որոնք տղամարդ են (քաջ, ուժեղ), և կան տղամարդիկ (արական սեռի ներկայացուցիչներ), որոնք տղամարդ են (չափազանց ուժեղ են, շատ ընդգծված կերպով համարձակ): Այստեղ պետք է անպայման նշել, որ թվով չորրորդ *men*-ի իմաստի նշված ձևով կիրառման և ընկալման գործում մեծ դեր ունի *manly* ածականը: Այժմ դիմենք Օքսֆորդի բառարանին ու ստուգենք *man/men* բառի իմաստը:

Man

1) Male person, an adult male human: a good-looking young man. The relationship between men and women.

12) Strong/brave person. A person who is strong and brave or has other qualities that some people think are particularly male: 1. Come on, now – be a man. 2. She's more of a man than he is. (Oxford Advanced Learner's Dictionary 2005)

Բառարանում նշվում է տասնչորս իմաստ *man* բառի համար, սակայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են առաջին ու տասներկուերորդ իմաստները: Հաշվի առնելով, որ Օքսֆորդի բառարանը *men* բառի իմաստի համար հղում է կատարում բառի եզակի թվի բառարանային հոդվածին, մենք համարել ենք, որ հոգնակի ու եզակի թվի պարագայում բառիմաստը նույնն է: *Man* բառի առաջին իմաստը վերաբերում է նրա սեռին ու տարիքին՝ արական սեռի ներկայացուցիչ, ով հասուն տարիքում է: Միայն տասներկուերորդ իմաստն է վերաբերում այն հատկանիշներին ու որակներին, մասնավորապես՝ ուժ, քաջություն, որոնք բնորոշ են տղամարդկանց՝ ըստ հանրության մեջ ընդունված կարծրատիպի:

Այս օրինակում խոսողը տարբերակում է *men* բառի մի քանի իմաստ: Նույնաբանության գործաբանական ներուժը վերծանելիս մենք տեսնում ենք, որ գործ ունենք մի դեպքի հետ, երբ բառի իմաստային դաշտի նշանակությունները կիրառվում են առանձին, և յուրաքանչյուր դեպքում բառը որևէ որոշակի իմաստ է արտահայտում: Այսպես՝ նույնաբանական կառույցի առաջին *men*-ը վերաբերում է բառի առաջին բառարանային իմաստին, իսկ երկրորդ *men*-ը վերաբերում է ընդհանրապես արական սեռի ներկայացուցիչներին, ովքեր իգական սեռից տարբերվում են արտաքին հատկություններով: Երրորդ *men*-ը կրկին վերաբերում է արական սեռի ներկայացուցիչներին, իսկ արդեն նույնաբանական կառույցի չորրորդ *men*-ը (*manly men*) վերաբերում է որոշակի տեսակի տղամարդկանց, որոնք ունեն ոչ միայն տղամարդուն բնորոշ քաջություն, ուժ, այլև հավելյալ ընդգծված առնական հատկանիշներ, ընդ որում՝ այդ հատկանիշները պարտադիր չէ, որ կապված լինեն անմիջապես արտաքին տվյալների հետ: Խոսքն արդեն ավելի հոգևոր, մտավոր կարողությունների մասին է, որակներ, որոնք կապված են տղամարդու խառնվածքի, կամքի ուժի ու պահվածքի հետ: Այսինքն՝ ընդհանուր

արական սեռի ներկայացուցիչներից որոշ մասն առանձնացվում է՝ ըստ նրանց բնորոշ խիստ տղամարդկային համարվող հատկանիշների: Տվյալ պարագայում այդ տարբերակիչ հատկանիշը առնականությունն է կամ այն հատկանիշները, որոնք բնորոշ են տղամարդու արքետիպին:

Տվյալ նույնաբանության գործաբանական ներուժի կազմավորման և ընկալման առումով կարևոր են ինչպես լեզվական համատեքստը, այնպես էլ հանրային համատեքստը/հարատեքստը: Նույնաբանությանն ուղեկցող համատեքստը տալիս է այն իմաստային դաշտի շրջանակը, որտեղ իրականանում է նույնաբանության գործաբանական նշանակությունը: Համատեքստից է կախված, թե նույնաբանությունը կազմող գոյականի տարբեր իմաստներից կոնկրետ որ մեկը պետք է արտահայտվի տվյալ գոյականի միջոցով տվյալ նույնաբանական կառույցում: Այստեղ կարևոր է առանձնացնել հարատեքստը: *Man* բառի պայմանականորեն երկրորդ, բառարանում տասներկուերորդ իմաստի մեջ շեշտվում է, որ տղամարդուն վերագրվող հատկանիշները համապատասխանում են հանրության որոշ շերտերում ընդունված մտածելակերպին ու հանրային կարծիքին: Սա ցույց է տալիս, որ որոշ բառեր, դարձվածքներ, լեզվակիր հանրույթի մոտ ունեն որոշակի արմատացած գործաբանական նշանակություն: Դա այն կարծրատիպային նշանակությունն է, որ ձևավորվել ու կցվել է այս կամ այն բառին կամ լեզվական կառույցին՝ կախված դրա վերաբերականի, տվյալ դեպքում տղամարդու ունեցած հանրային գործառույթից, դերից: Տղամարդը, վաղնջական ժամանակներից սկսած, կատարել է ավելի շատ ֆիզիկական աշխատանք, վարել պատերազմներ, արել գյուտեր ու բացահայտումներ և ձևավորել տղամարդու քիչ թե շատ ընդհանրական կերպար, ինչն անբակտելիորեն կցվել է նաև *man* բառին: Հետևաբար *man* գոյականը պարունակող նույնաբանական կառույցը կրում է այս հանրային համատեքստի՝ հարատեքստի ազդեցությունը:

Հաջորդ՝ երրորդ օրինակը վառ նմուշ է այն բանի, թե ինչպես նույնաբանական կառույցի առաջին գոյականական անդամը երկրորդից տարբեր գործառույթ է իրականացնում, թեպետ երկուսն էլ նույն լեզվական միավորն են՝ *students*: Դիտարկենք օրինակը.

Director of Academic Initiatives կայքում գետեղված է հետևյալ նույնաբանությունը ուսանողների գրանցման ու հաստատման բաժնում:

We want to make sure that **students are students** and can access these titles for download. (Walter 2008)

Այստեղ կայքի ղեկավարությունը ցանկանում է ապահովել կայքի տվյալների օգտագործումը միայն այն անձանց համար, ովքեր իրոք ուսանող են: Նա բացառում է կայքի շահագործումը այլ օգտատերերի կողմից, ու այստեղ հստակ է դառնում *Students are students* նույնաբանական կառույցի մեջ մի կարևոր հանգամանք: Առաջին students-ը (1) վերաբերում է ոչ թե ընդհանրապես ուսանողներին՝ բոլոր այն մարդկանց, ովքեր ուսում են ստանում, այլ կոնկրետ այդ կայք մուտք գործող անձանց: Ակնհայտ է դառնում, որ կայքի ղեկավարությունը զգուշանում է ուսանողների անվան տակ ոչ ուսանող օգտատերերից: (1)-ը հենց վերաբերում է կոնկրետ այդ կայքի օգտատերերին: Այլ կերպ ասած՝ հաղորդագրությունը կարող էր ունենալ հետևյալ տեսքը.

We want to make sure that users are students and can access these titles for download.

Նույնաբանական կառույցի երկրորդ բաղադրիչ *students*-ը (2) արդեն վերաբերում է ընդհանուր ուսանողությանը: Ամբողջական կառույցի գործաբանական նշանակությունն է ճշտել, թե արդյոք 1-ը պատկանում է 2-ին (*students are students*) և ոչ թե, ասենք, բժիշկների, որոնք կայքում հանդես են գալիս որպես ուսանողներ:

Նույնաբանությունների ուսումնասիրության ժամանակ ուշադրություն են գրավում այնպիսիք, որոնք կազմված են գոյականական այն անդամներով, որոնք ամրագրված չեն բառարանում, ինչպես, օրինակ, հատուկ անունները կամ դերանուններով կազմված նույնաբանությունները: Թեպետ դերանունն արձանագրված է բառարանում իր իմաստներով, սակայն դերանունները

ցուցայնական բնույթ ունեն և անորոշություն են բերում: Օրինակ՝ *I am who I am; She is who she is* նույնաբանությունները լիարժեք հասկանալու համար հաճախ անհրաժեշտ է իմանալ, թե ում է նշույթավորում *she*-ն կամ *I*-ը:

Մեր երրորդ օրինակը *Kanye is Kanye* նույնաբանությունն է: Քանյեն հատուկ անուն է ու պատկանում է բազմաթիվ մարդկանց: Այն բառարանում նշված չէ իր իմաստով (եթե բացառելու լինենք հատուկ անունների ծագումնաբանական բառարանում լինելու հավանականությունը): Բոլոր դեպքերում անունների ծագումնաբանական բառարանը տալիս է բառի իմաստը, բայց ոչ դրա գործաբանական նշանակությունը, ու եթե մեկի ազգանունը *Smith* է, ապա դա չի նշանակում, որ այդ մարդը դարբին է, այսինքն, երբ որևէ մեկը լսի *Kanye is Kanye* նույնաբանությունը, նա դրա նշանակությունը պետք է փորձի մեկնաբանել՝ այլ աղբյուրների վրա հիմնվելով: Տվյալ պարագայում նման այսպես ասած *այլ աղբյուր* կարող է լինել ընդհանուր տեղեկացվածությունը, զրույցի ժամանակ խոսակցության նյութին ծանոթանալը: Եթե այս անհրաժեշտ նախապայմանները ապահովված են, ապա լսողը տեղյակ է լինում, որ *Քանյե* ասելով՝ նկատի է առնված ոչ թե հազարավոր հավանական Քանյեներից ինչ-որ մեկը, այլ Քանյե Ուեսթը: Վերջինս մարդ է, հայտնի երգիչ, տարբեր մրցանակներ ստացած աստղ, սակայն այդպիսիք էլ քիչ չեն: Այդ դեպքում ի՞նչ է նկատի առնվում նույնաբանության մեջ, ո՞րն է դրա գործաբանական նշանակությունը: Ստացվում է, որ Քանյեն ունի այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ են հատկապես նրան, և որոնք նրան տարբերվող են դարձնում թե՛ բոլոր Քանյեներից, թե՛ բոլոր հայտնի մարդկանցից կամ բոլոր դեպքերում նրան ճանաչելի են դարձնում: Այստեղ էական չէ քննարկելը, թե դրանք ինչպիսի հատկանիշներ են: Կարևորն այն է, որ լսողը դրանք ի վիճակի է գատորոշելու և նույնաբանության գործաբանական ներուժը ապակողովորելու: Տվյալ դեպքում հատուկ գոյականն իր իմաստային դաշտով, իմաստային ենթաշերտերով տարածված է հանրային տեղեկույթի շրջանակում: Այդ նույնաբանության նշանակությունը մեկնաբանելու համար անհրաժեշտ նախապայման է հանրային տեղեկույթի հոսքին կցված լինելը և տվյալ խոսակցության նյութից տեղյակ լինելը՝ հասկանալու համար, թե այս դեպքում Քանյե Ուեսթի որ հատկանիշն է նկատի առնված: Իհարկե, նման կաղապար

տարածվում է ինչպես շատ հայտնի հանրային ճանաչում ունեցող անձանց, այնպես էլ շարքային մարդկանց վրա, սակայն արդեն վերջիններիս անմիջական շրջապատում, որտեղ նրանց լավ են ճանաչում և գիտեն նրանց ամենաբնորոշ հատկանիշները: Այսպես, օրինակ, կարելի է ուսումնասիրել հետևյալ նույնաբանությունները և փորձել վերլուծել ու տեսնել, թե *Kanye is Kanye* նույնաբանության կաղապարով կառուցված այս նույնաբանությունները ինչ մեկնաբանությունների են հանգեցնում:

Mike is Mike. (Walkypedia, ([http://walkypedia.wikia.com/wiki/Mike Warner](http://walkypedia.wikia.com/wiki/Mike_Warner), (accessed 29 April, 2015))

Juliette is Juliette. (Twitch, <http://twitchfilm.com/2015/04/interview-olivier-assayas-on-clouds-of-sils-maria-and-hall-of-mirrors.html#ixzz3zOppmmE5>, (accessed 30 September, 2015))

Մայք Ուորենը կոմիքսային կերպար է, Ժուլիեթ Բինոշը՝ դերասանուհի: Այս նույնաբանությունները Մայքին և Ժուլիեթին ճանաչողների համար ունեն ընկալելի նշանակություն: Մայքը միշտ վնաս է տալիս բոլորին ու խնդիրներ ստեղծում իրեն շրջապատողների համար, ու դա նրա բնավորության անուղղելի կողմն է: Նրան ճանաչողները, կիրառելով այս նույնաբանությունը նմանատիպ իրավիճակներում, նույնաբանության միջոցով փորձում են արտահայտել իրենց վրդովմունքը: Ընդ որում՝ հնարավոր չէ միանշանակ պնդել, որ այս կառույցի նշանակությունը հանդուրժողական ու ըմբռնող մոտեցում դրսևորելն է (Dascal 1994): Դա մեծապես կախված է իրավիճակից: Օրինակ, եթե Մայքը անախորժություններ է ստեղծում և վնասում է շրջապատի մարդկանց, ապա ոչ մի հանդուրժողական կամ դրության մեջ մտնելու, նրան ըմբռնելու մասին խոսք լինել չի կարող: Բացի դրանից, տվյալ նույնաբանությունը այն մարդկանց համար, ովքեր ծանոթ չեն Մայք Ուորենի կոմիքսային կերպարին, նույնքան հասկանալի ու թափանցիկ լինել չի կարող: Հնարավոր է կռահել, որ ինչ-որ հատկանիշ կա, որ բնորոշ է Մայքին, որը դարձել է նրան բնութագրող որակ, սակայն միայն ամբողջ իրավիճակին ծանոթանալու

պարագայում է հնարավոր ընկալել այդ նույնաբանության նշանակությունը: Նույնը կարելի է ասել Ժուլիեթի պարագայում: Նրա բնավորության, դերասանական ունակությունների որևէ հատուկ գիծ կարող է դառնալ այն հատկանիշը, որով նրան բնութագրում են, կամ որն առավելագույնս բնութագրում է նրա անձը:

Այժմ դիտարկենք *I did what I did* բայական նույնաբանական կառույցը: Այս նույնաբանությունն առանց համատեքստի կարելի է մեկնաբանել մի քանի տարբերակով: Առաջին. *իմ արածն արդեն անհնար է հետ շրջել, ու իմաստ չկա ավստասալու, քանի որ անցյալը հետ չես բերի*: Երկրորդ տարբերակը. *թերևս չնայած գերլարված պայմաններին ու փոքր հավանականությանը, թե մի բան հնարավոր է անել, ես արեցի այն, ինչ հիմա արդեն փաստացի իրողություն է, ու դա շատ հարցերի լուծում տվեց*: Այսինքն՝ արտահայտվում է ոչ թե ավստասանք, այլ հպարտություն արածի համար: Սակայն գտնում ենք, որ առանց որևէ համատեքստի կամ առանց խոսողի հաղորդակցական նպատակի հիմնավոր չի լինի փորձել թվարկել բոլոր հնարավոր մեկնաբանությունների տարբերակները, որոնք կարող են տեղ գտնել: Նախ՝ որովհետև պարզ չէ, թե ով է *ես*-ը, և երկրորդ՝ որն է արարքը: Դիտարկենք հետևյալ օրինակը Թոմաս Հարդիի ճառից, որը նա արտասանել է «Արքայասպանների դատի ժամանակ»՝ 1660 թվականին:

... **I did what I did** as out of conscience to the Lord. My aim in all was the glory of God and the good of his people and the welfare of the whole Commonwealth. (The English Civil War Part 3, *Trial of King Killers*, 17:59 min., <https://www.youtube.com/watch?v=fzIzJgukqC8> (accessed 17 October, 2015))

Այս օրինակում տեսնում ենք, որ չնայած իր դեմ դրված ամենաձանր մեղադրանքին՝ պետական դավաճանություն ու արքայասպանություն, ինչն այն ժամանակ Անգլիայում պատժվում էր քառատմամբ, Թոմաս Հարդին ոչ թե ավստասանք է հայտնում իր արածների համար կամ արդարանում, այլ գտնում է, որ դրանք հանուն Աստծո փառքի և պետության ու ժողովրդի բարեկեցության են արվել: Այս տրամաբանությամբ է կառուցված նրա ամբողջ պաշտպանական ճառը: Եվ հետևաբար այդ համատեքստում *I did what I did* նույնաբանությունը ոչ թե

ափսոսանքի, անդառնալիության կամ զղջման գործառույթ ունի, այլ իր արարքը հիմնավորող: Այս իրավիճակում կարևոր է նաև, թե ով է նույնաբանությունը կիրառողը՝ նրա անձը: Թոմաս Հարդին Անգլիայի Չառլզ Առաջին թագավորին 1649 թվականին մահվան դատապարտողներից մեկն էր, մոլի պուրիտան և Օլիվեր Քրոմվելի կողմնակից: Այսպիսով, հասկանալով, թե ով է *ես*-ը, և ինչ է իրենից ներկայացնում *արեւ էմ* (did)-ը, հստակ կերպով ի վիճակի ենք մեկնաբանելու նույնաբանությունը:

Շարունակենք քննությունը նույնաբանությունների հետևյալ նմուշի վրա՝ *I am who I am*: Տվյալ նույնաբանությունը կարելի է մեկնաբանել որպես ինքնահաստատող, ինքն իրեն ընդունող, ինքն իրեն առերեսվող նշանակությամբ: Սակայն կրկին բաց է մնում այն հարցը, թե խոսողը, կիրառելով այս նույնաբանությունը, արդյոք հպա՞րտ է, թե՞ ամաչում է ինքն իրենից, կամ էլ ընդունում է ինքն իրեն լավ ու վատ կողմերով: Այս պարագայում կրկին կարևոր է խոսողի ով լինելը, քանի որ դա պարզելուց հետո շատ հարցեր ինքնըստինքյան պարզ են դառնում:

Then Moses said to God, “If I come to the people of Israel and say to them, ‘The God of your fathers has sent me to you,’ and they ask me, ‘What is his name?’ what shall I say to them?” God said to Moses, “**I am who I am**”. And he said, “Say this to the people of Israel, ‘I AM’ has sent me to you.” God also said to Moses, “Say this to the people of Israel, ‘The LORD, the God of your fathers, the God of Abraham, the God of Isaac, and the God of Jacob, has sent me to you.’ This is my name forever, and thus I AM to be remembered throughout all generations.

(Desiring God, <http://www.desiringgod.org/messages/i-am-who-i-am--2>, (accessed 17 October, 2014))

Այսպիսով, վերոնշված նույնաբանությունները դիտարկելով՝ մենք տեսանք, որ նույնաբանության նշանակությունը կախված է ինչպես դրա գոյականական, այդպես էլ նրա բայական անդամից: Կոնկրետ այս դեպքում կարևոր է ոչ միայն այն, թե ով է *ես*-ը, այլ նաև *ես*-ի լինելը, այն, որ նա կա: Այս միտքը շեշտվում է ոչ

միայն նույնաբանական կառույցի ընտրության միջոցով, այլ նաև այն հանգամանքով, որ այդ նույնաբանությունը գրված է գլխատառերով, իսկ նույնաբանության առաջին անդամը՝ *I am*, ևս երկու անգամ կրկնվում է մեջբերված հատվածում՝ շեշտելու այդ կառույցի հաղորդակցական նպատակը: Հաշվի առնելով, որ մեջբերումն Աստվածաշնչից է, որտեղ Աստված հայտնվում է Մովսեսին ու նրա հարցին ի պատասխան ասում *I am who I am – Ես ես եմ*, հասկանալի է դառնում, որ Աստված կարևորում է իր լինելու գործոնը, այն որ ինքը կա ու հզոր է: Վերջինիս իմաստային դաշտը ստեղծում է այն շրջանակը, որի սահմաններում լսողը փորձում է մեկնաբանել ասվածը: Այստեղ, անշուշտ, նրան օգնության են գալիս խոսքային իրադրությունը, մինչ այդ տեղի ունեցած դեպքերը, խոսողի նպատակը և, իհարկե, լսողի հենքային գիտելիքը:

Իհարկե, կան նույնաբանություններ, որ հաճախ միևնույն կամ գրեթե միևնույն հաղորդակցական նպատակով կիրառվելով՝ ստացել են կարծրատիպային նշանակություն, որոնց մենք կանդրադառնանք հաջորդ ենթագլուխներից մեկում:

Այսպիսով, ակնհայտ է, որ առանձնացված բոլոր շարահյուսական կադապարներով նույնաբանական կառույցներում խիստ կարևորվում է անվանական անդամի դերը, քանի որ վերջիններս կրկնվելով ձևավորում են տվյալ կառույցի ներակայումն ու գործաբանական ներուժը: Այսինքն՝ խոսքաստեղծման ընթացքում անվանական անդամի կրկնության շնորհիվ տեղի է ունենում բառիմաստի տրոհում (գործաբանական – ճանաչողական, էքստենսիոնալ – ինտենսիոնալ, իմաստակիր – նշողական), ինչի արդյունքում էլ կարևորվում է նույնաբանական կառույցի իմաստային տարողունակությունը: Հաճախ, ինչպես տեսանք վերոբերյալ օրինակներում, միևնույն գոյականը նույնաբանական կառույցի առաջին ու երկրորդ դիրքում կիրառվում է բառիմաստի տարբեր նշանակություններով: Հենց այս երևույթն էլ՝ գոյականի տարբեր իմաստների իրականացումը, էապես ազդում է նույնաբանական կառույցի հաղորդակցական-գործաբանական արժեքի ձևավորման վրա: Ըստ իր հաղորդակցական նպատակի՝ խոսողն ակտիվացնում է անվանական անդամի մեջ պարունակվող այս կամ այն իմաստային բաղադրիչը/բաղադրիչները (Geurts 1988; Ochs 1979a):

2.3. Նույնաբանության գործաբանական ներուժի կազմավորումը կառույցի բայական անդամի միջոցով

Նույնաբանական կառույցների գործաբանական նշանակությունը ուսումնասիրելու գործում կարևոր են այդ կառույցի ինչպես գոյականական, այնպես էլ բայական անդամի իմաստային և քերականական առանձնահատկությունները: Նույնաբանական կառույցների ճնշող մեծամասնությունը, ինչպես ցույց է տալիս մեր փաստական նյութը, ներկա ժամանակով է գործածված, իսկ անցյալ կամ ապառնի ժամանակաձևով նույնաբանությունները զգալիորեն փոքր տոկոս են կազմում: Պատճառներից հիմնականը թերևս այն է, որ ներկա ժամանակով դրված շատ նույնաբանություններ իրենց բնույթով վերաբերում են ոչ միայն տվյալ պահին, այլև ընդհանրապես թե՛ անցյալին և թե՛ ապագային: Օրինակ.

An ape is an ape, a varlet's a varlet, though they be clad in silk or scarlet; A woman is a woman; A robot is only a robot; White is white and black is black; East is East and West is West; A boy is a boy; Cash is cash; Food is food; A title is still a title; I am who I am; When he yells he yells և այլն (Buzzle, <http://www.buzzle.com/articles/tautology-examples.html> (accessed 25 September, 2014))

Այս բոլոր օրինակներում խոսքը միայն տվյալ պահին տեղի ունեցող դեպքերի կամ իրավիճակի մասին չէ, որոնք ճիշտ են միայն այդ պահին: Ներկա ժամանակը ընդգրկում է նաև անցյալն ու ապագան, և տվյալ նույնաբանությունը ճիշտ է ընդհանրապես: Իհարկե, գոյություն ունեն նաև նույնաբանություններ, որոնք կիրառվում են անցյալ կամ ապառնի ժամանակաձևով: Հետաքրքիր է will-ի կիրառումը նույնաբանական կառույցներում: Օրինակ՝ *Teachers will be teachers; Boys will be boys*: Այս պարագայում ապառնի ժամանակը ոչ թե մատնանշում է մի գործողություն կամ իրավիճակ, որը տեղի կունենա ապագայում՝ խոսելու պահից հետո, այլ կիրառվում է՝ հատուկ շեշտելու, որ տվյալ անձը (մեր դեպքում՝

ուսուցիչներն ու տղաները) ունի այնպիսի հատկանիշներ, որոնք ոչ միայն ճիշտ են բոլոր ժամանակների համար, այլև երբեք ու երբևէ չեն փոխվելու: Այսինքն՝ ապառնի ժամանակը կիրառվում է ոչ թե այն պատճառով, որ իրավիճակը չի վերաբերում ներկային, այլ որովհետև այս պարագայում առանձնահատուկ կերպով շեշտվում է որևէ հատկանիշի անփոփոխ լինելը: Հարկ ենք համարում նշել, որ *NP will be NP* կադապարը անհամատեղելի է անշունչ առարկաների հետ, և դժվար է պատկերացնել, օրինակ, *Carrots will be carrots* նույնաբանական կառույցը որևէ համատեքստում: Լևինսոնը (Levinson 1987: 111) և Վերծբիցկան (Wierzbicka 1988: 431-434) գտնում են, որ ապառնի ժամանակով կիրառված նույնաբանությունն արտահայտում է համակերպվածությունն ու կոչ անում չանհանգստանալու: Օրինակ.

Either John will come or he won't. (Wierzbicka 1988: 431-434)

Նրանք գտնում են, որ տվյալ նույնաբանությունը նշանակում է, որ մենք չենք կարող իմանալ՝ Ջոնը կգա, թե ոչ, և ոչինչ չենք կարող անել՝ ինչ-որ կերպ դա փոխելու համար, թեպետ կարծում ենք, որ գուցե դա վատ է: Սակայն այդ մասին պետք չէ մտածել, որովհետև չենք կարծում, թե կարող ենք անել մի բան, որ կանխենք լինելիքը:

Մենք գտնում ենք, որ թեպետ նշված նույնաբանության տվյալ մեկնաբանությունն իրավունք ունի ճիշտ լինելու, սակայն, միևնույնն է, մեծապես կարևոր է բայական անդամի բառային իմաստը՝ մեկնաբանության հիմնավոր լինելու տեսանկյունից: Եթե այս նույն կադապարում *come* բայը փոխարինենք *kill* բայով, ապա պատկերը զգալիորեն կփոխվի.

Either he will kill us or he won't.

Այս պարագայում թերևս անհնար է խոսել հանդուրժողական ու չանհանգստացող կեցվածքի մասին: Ընդհակառակը՝ խոսողը արտահայտում է

հուսահատվածության ու դատապարտվածության զգացում, նրա խոսքը փոխանցում է անորոշություն ու տագնապ:

Դիտարկենք ևս մեկ օրինակ:

This error of reasoning reduces a complex issue to only two choices: "**Either I will pass this exam or... I won't.**

(Quizlet, <https://quizlet.com/96312371/engl-103-midterm-flash-cards/>, (accessed 14 July, 2015))

Այս օրինակում ուսանողը, ով անհաջող է հանձնել քննությունն ու վերջին հնարավորությունն է օգտագործում, գիտակցում է պահի լրջությունը: Վերոնշյալ նույնաբանությունը կարող ենք մեկնաբանել որպես մի մարդու խոսք, ով լիովին հասկանում է պատասխանատվությունն ու ընդառաջ է գնում իր վերջին հնարավորությանը: Հետաքրքիր է նույնաբանության կառույցի երկրորդ հատվածը: Այն առաջին հատվածից բաժանված է բազմակետով, ինչը առոգանական դադարի նշան է: Ենթադրվում է, որ հենց այս մի քանի վայրկյան տևող դադարը արտահայտում է իրավիճակի ճակատագրական ու ծանր լինելը:

Ա. Վերժբիցկան նաև տարբերակում է ապագայի և անցյալի իրադարձություններին վերաբերող նույնաբանություններ, որոնցում բայական անդամը ներկա ժամանակով է: Ապագային վերաբերող նույնաբանությունները ներակայում են ապագա իրադարձությունների անհայտ և անորոշ լինելու իմաստը և արտահայտում են ֆատալիստական վերաբերմունք: Օրինակ.

I love to play the game no matter if it's here in New Jersey or if it's where everybody's speculating. So **whatever happens happens**. I have no say in it. I'm just an employee. (Insidehoops, <http://www.insidehoops.com/kidd-interview-022207.shtml> (accessed 17 July, 2014))

Այստեղ խոսողն ընդունում է ապագա իրադարձությունները՝ հասկանալով, որ դրանք անվերահսկելի են:

Անցյալի մասին խոսելիս նույնաբանությունները ներակայում են անդառնալիության իմաստ. ինչ եղել է, այլևս հնարավոր չէ փոխել:

We can't change what has happened. **What's done is done.** If we want to get healthy, we must forgive ourselves and others.

(Ehow, http://www.ehow.com/how_4859074_move-after-failure.html, (accessed 07 July, 2015))

Այժմ անդրադառնանք մի քանի նույնաբանական կառույցների, որոնց բայական անդամը անցյալ ժամանակաձևով է կիրառվում:

Դիտարկենք օրինակը.

First of all there are some real fundamental differences between the “old” phones and today's phones. In the 60's **a phone was a phone**. Nothing more. They were used to make and receive calls. No fancy stuff! (Engineer, <http://www.engineer-exchange.com/content/view/37/70/>, (accessed 15 December, 2013))

Այս օրինակում համեմատվում են երկու *տեսակի* հեռախոս. 60-ականների *հին* հեռախոսը համեմատվում է ներկայիս բազմաֆունկցիոնալ հեռախոսի հետ: Ընդ որում՝ *a phone was a phone* կառույցը ակտիվացնում է այն միտքը, որ այն ժամանակ հեռախոսին բնորոշ էին հենց այն գործառույթները, որոնք դրա ամենաէական բաղադրիչներն են, ու առանց որոնց այն չի լինի հեռախոս: Այստեղ, ինչպես նաև նախորդ քննված նույնաբանական կառույցներում, գործում է Վորդի և Հիրշբերգի այլընտրանքային տարբերակների բացառման սկզբունքը: Այսինքն՝ լսողը հասկանում է, որ խոսողը բացառում է *A phone was a TV* կամ *A phone was a radio* այլընտրանքային տարբերակները՝ հեռախոս սարքի մեջ ներառելով այն ամենաբնորոշ հատկանիշները, որոնք հատուկ են բացառապես իրեն՝ զանգ կատարել և զանգ ընդունել: Այնուհետև հեռախոսի այսպիսի մոդելը համեմատվում է արդի հեռախոսների հետ ու նշվում հենց այն, ինչը ստեղծում է տարբերություն նախկին ու ներկայիս հեռախոսների միջև՝ *fancy stuff*.

Դիտարկենք ևս մեկ օրինակ, որտեղ նույնաբանությունը գործածվում է համեմատական գործառույթ իրականացնելու նպատակով: Այս դեպքում *x was x* կադապարով կիրառված նույնաբանությունը համեմատվում է *x was not y* կադապարի հետ.

It was a time of innocence, and fun. A time **when a kid was a kid** and **an X-ray was not for candy**. (Cinema Invisible, <http://cinemainvisible.org/fci-2014/when-a-kid-was-a-kid/>, (accessed 19 August, 2015))

Այս օրինակում ունենք համեմատության մի քանի մակարդակ: Մի կողմից՝ անցյալի երեխան համեմատվում է այսօրվա երեխայի հետ, անցյալի *X-ray* (ռենտգենյան ճառագայթ) հասկացությունը՝ այժմյանի հետ, իսկ մյուս կողմից՝ անցյալի ու ներկայի երեխաների միջև եղած տարբերությունը զուգահեռվում է անցյալի ու ներկայի ռենտգենյան ճառագայթի հետ (տվյալ դեպքում նշվում է, որ ռենտգենյան ճառագայթը անցյալում քաղցրավենիք չէր, ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ այժմ *X-ray* անունով քաղցրավենիք կա): Արդյունքում ընտրելով անցյալ ժամանակաձևով նույնաբանական կառույց՝ խոսողը նպատակ է հետապնդում փոխանցելու դիմացինին իր ոչ այնքան բարյացակամ վերաբերմունքը կամ մտքերը ժամանակի ընթացքում տեղ գտած այդ փոփոխությունների վերաբերյալ: Անդրադառնանք ևս մեկ օրինակի.

When men were men... (Thought Catalog, <http://thoughtcatalog.com/josh-gondelman/2013/07/im-glad-i-didnt-live-when-men-were-men/>, (accessed 19 July, 2015))

Այս նույնաբանությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ: Խոսողը կիրառում է անցյալ ժամանակաձև՝ այդպիսով ընդգծելով ներկայի ու անցյալի միջև եղած ջրբաժանը: Նա գոյականը գործածում է հոգնակի թվով: Սա խոսքին տալիս է ընդհանրական բնույթ, այսինքն՝ ասվածը չի վերաբերում որևէ կոնկրետ անձի: Կարևոր է բազմակետի կիրառությունը: Տվյալ դեպքում այն տեղ է թողնում

ենթադրելու, որ խոսողը միտքը կհաստ է թողնում՝ համարելով, որ լսողը կամ ընթերցողը ինքը կհասկանա շարունակությունը:

Լսողը կարող է մեկնաբանել, որ նախկինում տղամարդիկ ունեին այնպիսի հատկանիշներ, որոնք սովորաբար համարվում են տղամարդկանց առավել բնորոշ: Թե ինչպիսի հատկանիշներ նա կհամարի առավել բնորոշ տղամարդուն՝ քաջություն, կոպտություն, դաժանություն, ագրեսիվություն թե մեծահոգություն, նրբանկատություն, զիջողամտություն, հանդուրժողականություն ու համբերատարություն, կախված կլինի խոսքային իրադրությունից: Պետք չէ իհարկե բացառել, որ լսողի աչքերում տղամարդուն առավել բնորոշ հատկանիշները կարող են լինել ն՝ քաջությունը, ն՝ նրբանկատությունը, այսինքն՝ սուբյեկտիվ ընկալման ու անհատական պատկերացումների գործոնը բավական ծանրակշիռ է, ու դժվար կլինի գտնել այլընտրանքային ամենատեղին տարբերակը: Ինչևէ, հաջորդ կարևոր կետը այս նույնաբանության ուսումնասիրության մեջ նույնաբանական կառույցի կարծրատիպային նշանակության առկայությունն է: Տվյալ պարագայում *տղամարդ* հասկացության մասին տեղեկույթը հենց այն է, ինչը խոսողը/գրողը ու լսողը/ընթերցողը կհսում են, կամ խոսողը ենթադրում է, որ կհսում են, կամ առնվազն խոսողը բացառում է հավանականությունը, որ լսողը/ընթերցողը բացարձակապես չի տիրապետում այդ տեղեկույթին:

Շարունակելով քննել նույնաբանության տվյալ նմուշը կարծրատիպային դիրքորոշման տեսանկյունից՝ կտեսնենք, որ երկրորդ անվանական անդամը (NP) լրացնում է առաջին անվանական անդամին: Երկրորդ NP-ը ենթադրում է հատկանիշների որոշակի համակարգ, որը բնորոշ է առաջին NP-ին: Սակայն միանշանակ ընկալել, թե որն է եղել տվյալ նույնաբանությունը կիրառողի հաղորդակցական նպատակը կամ նպատակները, բավական բարդ է: Տվյալ նույնաբանության գործաբանական նշանակությունը տարբեր կարող է լինել: Այն կարող է մեկնաբանվել հետևյալ կերպ. նախկինում ամեն ինչ հիանալի էր, իդեալական, շրջապատում ամեն ինչ ներդաշնակ էր, խնդիրներ չկային, նույնիսկ ձյուն ու կարկուտ երբեք չէր գալիս, և բոլորը գոհ ու երջանիկ էին: Այսպիսի մեկնաբանություն անելու համար հատկապես հիմք կարող է ծառայել

նույնաբանությունը եզրափակող բազմակետը, որն ըղձական երանգ է հաղորդում կառույցին:

Այժմ ավելի մանրամասն անդրադառնանք սույն օրինակում կիրառված բազմակետին: Վերջինս, անկասկած, շարունակություն է պահանջում: Այսինքն՝ շարունակություն, որը բխում է ինքն իրենով սահմանվող կառույցից: Այստեղ պետք է արձանագրել, որ սա հակասում է Ա. Վերծբիցկայի (Wierzbicka 1991) այն կարծիքին, թե նույնաբանություններն ունեն թեման փակող, եզրափակող գործառույթ: Մեր օրինակում տեսնում ենք հակառակը: Կախման կետը տալիս է նույնաբանության առաջ քաշած միտքը շարունակելու տարբերակների լայն հնարավորություն:

Եթե բազմակետը փոխարինենք վերջակետով, ապա գուցե այդ դեպքում նույնաբանական կառույցը կունենա թեման, խոսակցությունը եզրափակող բնույթ: Իսկ եթե բազմակետը փոխարինենք բացականչական նշանով, ապա կառույցը կարող է ձեռք բերել հիացական կամ նույնիսկ հեզնական իմաստ: Այդ դեպքում արդեն ըղձական բաղադրիչը դուրս է մնում:

Եվ այսպես, երբ բազմակետը փոխարինում ենք վերջակետով կամ բացականչական նշանով, ապա արձանագրում ենք գործառույթային և իմաստային տարբերություններ: Երբ փորձում ենք մեկնաբանել այդ տարբերությունները, մտապատկերում կամա թե ակամա հայտնվում է մի իրավիճակ, որի մեջ նույնաբանության տվյալ մեկնաբանությունն արդարացված է: Այսինքն, քանի որ կետադրությունը կոչված է առավել պարզորոշ ու մատչելի կերպով փոխանցելու գրողի մտքերն ու զգացմունքները, ապա այն ունի որոշակի սուբյեկտիվության տարր: Հետևաբար այդ սուբյեկտիվությունը գրողից անցնում է նաև նրա գործածած նույնաբանությանը: Խոսողը/գրողն իր վերաբերմունքն արտահայտելու համար հիմնվում է տվյալ խոսքային իրավիճակից բխող նախապայմանների վրա: Որևէ խոսքային իրավիճակում զրուցակիցների խոսքը պետք է կապակցված, փոխլրացնող լինի՝ համաձայն Գրայսի կարգախոսների և հաղորդակցային ներակայման: Այսինքն՝ խոսքի երանգավորումը, ինչն արտահայտվում է կետադրության, ինչպես նաև հնչերանգի միջոցով, կրկին կախված է

համատեքստից: Այժմ փորձենք նույն նույնաբանությունը դիտարկել արդեն համապատասխան համատեքստերում:

1. **When men were men...**I remember how they would put at stake all they had to impress their beloved ones (FL WMWM: 156)

2. A: The enemy armies are at the gates and there is hardly any resistance expected on our side. What a disgrace!

B: Our grandfathers would feel utterly ashamed now were they alive. Our city used to be the fear of enemies **when our men were men.** (FL WMWM: 38)

3. A: It seems the whole world crumbles down. The economy goes to hell, there is no decent education, no properly thought policy and all seems to be a big mess! And all because women have started to penetrate into spheres where they had no business to do before! And that's also because men have given up their positions and become too docile and so called tolerant!

B: Oh yes, of course. And all was perfect and ideal when women were stuck into kitchens and **when men were men!** (FL WMWM: 78)

Այս երեք օրինակներից առաջինում խոսողը կարծես ավստասանքով է տրվում անցյալի վերհուշին: Նա հիշում է անցած ժամանակներն ու տղամարդկանց արարքները այդ ժամանակներում: Բազմակետը ու դրան հաջորդած վերհուշը շարունակելի լինելու տպավորություն են թողնում: Ակնհայտորեն ջրբաժան է դրվում անցյալի ու ներկայի միջև՝ բացահայտ կերպով նախապատվություն տալով անցյալին: Ըստ որում՝ այս դեպքում նույնաբանական կառույցի միջոցով խոսողը/գրողը կարծես ներմուծում է քննարկման նոր թեմա՝ ակնկալելով իր խոսընկերոջ արձագանքը: Այսպիսով՝ նույնաբանությունը դառնում է այն

առանցքը, որի շուրջ ենթադրաբար ծավալվելու է խոսքնկերների հաղորդակցությունը:

Երկրորդ հաստվածում B-ն կրկին հիշում է անցյալը, բայց արդեն կոնկրետ համեմատություն ու տարբերություն ցույց տալու բացահայտ ցանկությամբ: Նա ներկայացնում է նախնիների հզոր կերպարն ու խոսքը ամփոփում նույնաբանությամբ: Այստեղ նույնաբանությունը հանդես է գալիս որպես եզրակացություն: Այն կարծես հակիրճ բանաձևում է խոսողի մինչ այդ արտահայտած միտքը: Տվյալ դեպքում վերջակետի կիրառությունը հենց բխում է խոսողի ասելիքի տրամաբանությունից: Նա, կատարելով համեմատություն ու ցույց տալով իրենց քաղաքի անցած հզորությունը, վերջում նշում է՝ որն էր այդ հզորության պատճառը, որը և դառնում է նրա ամփոփիչ արտահայտությունը:

Երրորդ օրինակում A-ն բողոքում է ներկա հասարակական, տնտեսական վիճակից ու որպես այդ ամենի պատճառ տեսնում է կնոջ հայտնվելը հասարակական-քաղաքական կյանքի այնպիսի ոլորտներում, որոնք նախկինում բացառապես եղել են տղամարդկանց գերակայության ներքո: Ու այս երևույթի մեղավորը նա համարում է հենց տղամարդկանց, ովքեր իր կարծիքով չափազանց հլու և հանդուրժող են դարձել, ու դժվար է իրական տղամարդ գտնելը: Դիմացինը հեզնում է նրան՝ ասելով, որ անցյալում, իհարկե, ամեն ինչ իդեալական ու դրախտային էր, և ամեն ինչ պարզապես հոյակապ էր, քանի որ տղամարդիկ տղամարդ էին: Այստեղ նա միտումնավոր չափազանցություն է անում, քանի որ թե՛ խոսողին, թե՛ իր խոսակցին հայտնի է, որ նույնիսկ եթե ընդունենք, որ անցյալում որոշ բաներ ավելի լավ են եղել, ամեն ինչ հեռու է եղել իդեալական համարվելուց: Եվ անգամ եթե տղամարդիկ, այսպես ասած, իրոք տղամարդ էին, միևնույնն է, խնդիրները առկա էին: Հենց այս հեզնանքն առավել շեշտված արտահայտելու համար B-ն օգտագործում է բացականչություն կամ բացականչական նշան՝ այդպիսով է՛լ ավելի *վստահեցնելով*, որ անցյալում ամեն բան կատարյալ էր, երբ կանայք խոհանոցից դուրս չէին գալիս, իսկ տղամարդիկ էլ տղամարդ էին: Այստեղ նույնպես նույնաբանությունն ունի թեման եզրափակող գործառույթ:

Ուսումնասիրելով նշված օրինակները և ի մի բերելով դրանց քննության արդյունքները՝ ցանկանում ենք փաստել, որ նույնաբանական կառույցի

գործաբանական ներուժի կազմավորման գործում մեծ է նաև բայական անդամի ժամանակի քերականական կարգի դերը խոսողի այս կամ այն հաղորդակցական նպատակը արտահայտելու համար: Այս ենթագլխում իրականացված վերլուծությունը նաև հնարավորություն է տալիս խոսելու նույնաբանական կառույցների տեքստակազմիչ գործառույթի մասին: Վերջիններս ոչ միայն ունեն թեման եզրափակող, ամփոփող գործառույթ (ինչպես նշում են որոշ լեզվաբաններ), երբ նրանցում խտացվում է խոսողի հաղորդակցական մտադրությամբ պայմանավորված տեղեկությո՞ւր, այլև կարող են ներմուծել նոր թեմա՝ տվյալ խոսքային իրավիճակի պահանջներից ելնելով, և դառնալ հաղորդակցության առանցքային թեման:

2.4. Նույնաբանական կառույցների կարծրատիպային նշանակության ձևավորումը անգլերեն խոսքում

Դիտարկելով մի շարք նույնաբանություններ և ուսումնասիրելով դրանց կառուցվածքն ու նշանակությունը՝ կարող ենք արձանագրել, որ որոշ նույնաբանություններ հաճախ կիրառվում են միևնույն հաղորդակցական մտադրությունն արտահայտելու նպատակով: Սա հաճախ պայմանավորված է նույնաբանական կառույցի գոյականական անդամով: Կան գոյականներ, որոնք հասարակության մեջ կապվում են որոշակի պատկերացումների ու երևույթների հետ: Դրանք թե՛ նախապաշարումներ են, թե՛ հիմնավորված ընդհանրություններ: Օրինակ՝ *Women are women* նույնաբանության գոյականական անդամը՝ *կին* բառը, ունի որոշակի հանրային ընկալումներ, ինչպիսիք են թույլ սեռի ներկայացուցիչ լինելը, զգացմունքայնությունը և այլն: Այսպիսի ասոցիացիաները ժամանակի ընթացքում ամրանում ու կարծրատիպային բնույթ են ստանում, և այս գոյականներով կազմված նույնաբանությունները նույնպես կրում են այդ կարծրատիպերի հետևանքները: Ստորև մի քանի օրինակների քննությամբ դիտարկենք նույնաբանական կառույցների գոյականական անդամից բխող կարծրատիպային առանձնահատկությունները.

B: Pete has not washed his socks for months.

A: **Bachelors are Bachelors.** (Meibauer 2007)

Այստեղ՝ *Bachelors are Bachelors* նույնաբանության մեջ, *չամուսնացած տղամարդ* բառային իմաստից գատ, ավելի կարևոր իմաստային նրբերանգ կա: Կարևորն այստեղ այն կարծրատիպային նշանակությունն է կամ գիտելիքը, որը զուգորդվում է չամուսնացած տղամարդկանց հետ՝ որպես նրանց բնորոշ հատկանիշներ: Ըստ այս նույնաբանության նշանակության՝ չամուսնացած տղամարդիկ չեն կարողանում կոկիկ ապրել և հագնվել, ու դա նրանց բնորոշ հատկանիշ է: Այստեղ գործ ունենք տեղիության (Relevance) կարգախոսի հետ, ինչն ուղղորդում է լսողին, որպեսզի վերջինս ինքնուրույն որոշի, թե կարծրատիպային նշանակությունը որքանով է տեղին տվյալ ասույթի հաղորդակցական-գործաբանական արժեքը ձևավորելու գործում:

Խոսելով կարծրատիպային նշանակության մասին՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն իրավիճակին, որտեղ կիրառվել է տվյալ նույնաբանական կառույցը: Նշված օրինակում առանց առաջին խոսակցի տված տեղեկության, որ Փիթը իր գուլպաները ամիսներ շարունակ չի լվացել, երկրորդ խոսակցի օգտագործած նույնաբանության նշանակությունը միանշանակ կերպով հասկանալի չէր լինի: Նույնիսկ կարելի է պնդել, որ տվյալ նշանակությունը մեկ այլ օրինակում տեղին չէր լինի: Դիտարկենք հետևյալ օրինակը.

...one of his (male) friends laughs at me and says: you're the one who had to have him!! (he has had probably 50 "girlfriends" who lasted less than one year and most less than 6 months). It is apparently very shocking to those that have known him that he's so "committed" to this relationship because he never had the same girl around for very long. His friends and family love me. I am crazy about him and yet.... sometimes I think that he's just not ever going to "let go" and let me in there.... (and then I see some tiny inkling of progress....). Everyone (including my dad) said to me "he is a guy to have fun with, but if you want something "serious" or if you want a "partner" you'll have to move on,

bachelors are bachelors. (The Tao of dating, <http://taoofdating.com/how-to-deal-with-confirmed-bachelor/>, (accessed 19 March, 2014))

Այս օրինակում նախորդ օրինակի մեկնաբանությունը տեղին չէ: Այստեղ խոսքը չամուսնացած տղամարդկանց մասին է, ովքեր չեն սիրում երկար հարաբերություններ ունենալ, խուսափում են ամուսնությունից և գերադասում են միայնակ ապրել: Նույնաբանությունը կիրառվում է որպես հաստատում այն կարծրատիպային մտքի, որ չամուսնացած տղամարդիկ իրենց ուշադրության ու ժամանակի մեծ մասը հատկացնում են իրենք իրենց և չեն ցանկանում նվիրվել ընտանիքին: Այսինքն, եթե առաջին օրինակում կարծրատիպային նշանակությունը չամուսնացած տղամարդկանց անփույթ վերաբերմունքն է սեփական արտաքինի ու հագուկապի նկատմամբ, ապա երկրորդ դեպքում խոսքը նրանց հոգեբանական կողմին է վերաբերում: Այստեղ արդեն կարծրատիպն այն է, որ չամուսնացած տղամարդիկ, սովոր չեն կանոնավոր ապրելակերպի: Ինչ խոսք, պետք է նշել, որ երկու մեկնաբանություններն էլ տեղին են՝ յուրաքանչյուրն իր համատեքստում: Սակայն, անշուշտ, պետք է նկատել, որ այս երկու համատեքստերով չի սահմանափակվում տվյալ նույնաբանության կիրառության շրջանակը, և բնականաբար կան ու կլինեն այլ համատեքստեր, որոնցից յուրաքանչյուրում այն հանդես կբերի նոր կամ գուցե մի փոքր այլ նշանակություն: Արդեն ըստ համատեքստի այդ նշանակություններից մեկը տեղին կլինի տվյալ դիսկուրսում:

Նշված կարծրատիպային բնույթի նույնաբանությունները, ինչպես տեսանք, ունեն *a is a* բանաձևը: Սակայն ճիշտ չի լինի կարծել, թե կարծրատիպային կարող են լինել միայն այս բանաձևով կառուցված նույնաբանությունները: Օրինակ՝ այնպիսի նույնաբանական կառույցներ, ինչպիսիք են *Whatever happens happens; Let bygones be bygones; It is what it is* գրանցված են դարձվածաբանական բառարաններում: Դիտարկենք ևս մեկ օրինակ.

East is East and West is West (KR BEW: 1989)

Այս նույնաբանությունը համադասական է և, եթե դիտարկենք դրա իմաստային կողմը, ապա կտեսնենք, որ մի կողմում ունենք *արևելք* հասկացությունը, որը բնութագրվում է երկրորդ գոյականական անդամով: Այստեղ երկրորդ գոյականը լրացնում է առաջինին՝ նրան վերագրելով այն հատկանիշները, որոնք ոչ միայն հատուկ են *արևելքին*, այլ նաև տարբերում են նրան *արևմուտքից*: Մյուս կողմից՝ նույն պատկերն է *West is west* հատվածում: Այստեղ նույնպես երկրորդ բաղադրիչը լրացնում է առաջինին՝ հաղորդելով նրան այն յուրահատուկ հատկանիշները, որոնք դրան դարձնում են տարբեր *արևելքից*: Կարևոր է նշել, որ այս նույնաբանությունը դեռևս կիրառել է Ռ. Քիփլինգը հարյուրից ավելի տարի առաջ: Այն ժամանակ հասարակական-պատմական, մշակութային անջրպետը արևելքի և արևմուտքի միջև անհերքելիորեն ավելի մեծ էր, քան հիմա: Եվ, թվում է, մարդու իրավունքների զարգացման, հասարակական ինստիտուտների կայացման, միջմշակութային հաղորդակցման հսկայական ճանապարհ անցնելուց հետո և մի շարք հանրային, արժեհամակարգային, աշխարհայացքային մոտեցումների ընդհանրացման արդյունքում արևմուտք-արևելք հակադրումը պետք է այժմ կա՛մ գրեթե վերացած լիներ, կա՛մ էլ հանրային գիտակցության մեջ պակաս ընդգծված ընկալվեր: Ու այս ֆոնին *East is East and West is West* նույնաբանությունն արդեն ինչ-որ առումով իր դարն ապրած պետք է լիներ: Սակայն Ռոն Չիլդրեսը իր նոր հրատարակած գիրքը (2015) վերնագրել է *And West is West*: Այս նույնաբանությունը բավականին հետաքրքիր է միանգամից մի քանի պատճառներով: Նախ այն *East is East and West is West* նույնաբանության երկրորդ մասն է ներկայացնում: Ակնհայտորեն սա արված է՝ իմաստային շեշտը ավելի ընդգծված կերպով արևմուտքի ու դրան բնորոշ որակների վրա կենտրոնացնելու համար: Սակայն խոսելով կամ ընդգծելով արևմուտքի տարբերությունները՝ դրանով իսկ ի ցույց է դրվում նաև արևելքը, որը թեպետ ներառված չէ տվյալ նույնաբանության կառույցում, սակայն հասկանալի է, որ խոսելով արևմուտքի գլխավոր և տարբերվող հատկանիշների մասին, նկատի է առնված դրանց տարբեր լինելը արևելքից ու այն տարբերակող հատկանիշներից: Այսինքն՝ մենք այստեղ գործ ունենք նույնաբանության արտահայտած առաջնային հաղորդակցական-գործաբանական արժեքի և երկրորդական հաղորդակցական-

գործաբանական արժեքի հետ: Առաջնային միտքը, որ գրողը ցանկացել է փոխանցել, կամ առաջնային մեկնաբանությունը, որ անում է ընթերցողը, հետևյալն է. արևմուտքը ունի իր սկզբունքներն ու արժեքները, կառուցվածքը, ապրելաձևն ու մեթոդները: Այդ ամենը խորանալով ձևավորում են արևմուտքի հավաքական կերպար՝ մի ամբողջություն, որը բնութագրված է երկրորդ գոյականական անդամի (NP) միջոցով: Սսելով *And West is West*՝ շեշտվում են արևմուտքի չափազանց տարբեր լինելը և դրա ինքնատիպությունը: Սակայն միայն այսքանը չէ, որ փոխանցվում է տվյալ նույնաբանության միջոցով: Խոսքը ոչ միայն այն հատկանիշների մասին է, որոնք արևմուտքը ներկայացնում ու ընդհանրացնում է իրեն հատուկ որակների ու հատկանիշների ամբողջության մեջ: Նման միտք փոխանցելու պարագայում լիովին բավարար կլինեք *West is West* համարժեք նույնաբանությունը: Մինչդեռ հեղինակը օգտագործել է *and* շաղկապը՝ այդպիսով կապելով *West is West* նույնաբանությունը: Սակայն հենց հաջորդ հետաքրքիր կետն այստեղ է. այն կապված է չարտահայտված մտքի հետ՝ հեղինակը ոչինչ չի գրել որպես *And West is West*-ին նախորդող արտահայտություն: Այսպիսով՝ մի կողմից մենք գիտենք, որ տվյալ նույնաբանությանը նախորդում է չասված միտք, մյուս կողմից՝ ինքներս պետք է փորձենք հասկանալ և ընկալել, թե ինչ կարող է լինել չասված հատվածի փոխարեն: Այստեղ առաջ է գալիս սուբյեկտիվության հարցը: Ունենալով միայն *And West is West* նույնաբանությունը՝ յուրաքանչյուր ոք որոշակի չափով ազատ է ինքնուրույն լրացնելու դրան նախորդող հատվածը: Սակայն ինչպես նշվեց, դա սահմանափակ ազատություն է, քանի որ *And West is West* ասույթն իր կառուցվածքով և նշանակությամբ տալիս է այն մտային կաղապարը, ըստ որի պետք է կառուցվի նախորդող հատվածը:

Հարկ է նշել ևս մեկ կարևոր հանգամանք: Ընթերցողի կողմից չարտահայտված մտքի վերականգնման գործում զգալի նշանակություն ունի նրա տեղեկացվածությունը ներկայիս գլոբալ աշխարհաքաղաքական իրավիճակից ու աշխարհի մշակութային, գաղափարախոսական, ինչպես նաև կրոնական և առհասարակ քաղաքակրթական մասնատվածությունից արևմուտքի և արևելքի միջև, այսինքն՝ ընթերցողի հենքային գիտելիքը: Հակառակ պարագայում ըստ էության հնարավոր տարբերակներ կարող են դիտվել, օրինակ, *North is North and*

West is West կամ *South is South and West is West* համադաս նույնաբանական կառույցները: Տվյալ պարագայում կառուցվածքային տրամաբանության տեսանկյունից ամեն ինչ կարծես ճիշտ է լինում: Սակայն միայն կառուցվածքային ճշգրտությունը, փաստորեն, բավարար չէ: Ենթադրվում է, որ ընթերցողը պիտի տեղյակ լինի աշխարհի երկու հիմնական քաղաքակրթական կաղապարների բաժանված լինելու մասին, որոնցից մեկն արևելքն է, իսկ մյուսը՝ արևմուտքը: Այստեղ, իհարկե, գործում է Վորդի և Հիրշբերգի կողմից առաջ քաշված այլընտրանքային տարբերակների բացառման սկզբունքը (Ward, Hirschberg 1991): Ընթերցողը գիտի, որ գրողը օգտագործել է մի արտահայտություն, որը պետք է, որ համապատասխանի համագործակցության սկզբունքին (Cooperative Principle), ինչը ենթադրում է, որ նա՝ գրողը, պետք է ասի մի բան, որը տեղին է և վերաբերում է գոյականին (West) ու լսողի համար հայտնի փաստ է: Նա կարող էր այլ տարբերակներ ընտրել որպես երկրորդ գոյական անուն. *a is a* կառույցի փոխարեն կարող էր օգտագործել *a is b*, սակայն նա կիրառել է *a is a*, հետևաբար “b” կամ ուրիշ այլընտրանքային տարբերակները տեղին չեն տվյալ հաղորդակցական իրավիճակում: Ու քանի որ մենք ունենք գրողի մտքի մի մասը, ինչն արտահայտված է նույնաբանական կառույցով, ապա սխալ չի լինի ենթադրել, որ դրան նախորդող միտքը ամենայն հավանականությամբ պետք է լինի *East is East*: Սա արդեն երկրորդական մեկնաբանություն է, որ ընթերցողը կարող է անել: Ինչպես տեսանք, առաջին մեկնաբանությունը, որն ըստ էության կարող է լինել միակը, բոլոր դեպքերում չի խանգարում անելու երկրորդական մեկնաբանություն, և երկուսն էլ տեղին են ու համապատասխանում են խոսքային իրավիճակին և տեղավորվում են գրողի հաղորդակցական նպատակի տրամաբանության տիրույթում:

Այժմ դիտարկենք հետևյալ նույնաբանության նմուշօրինակը, որը ռեժիսոր Քրիստիան Փաքի՝ 1958 թվականին նկարահանված ֆիլմի անվանումն է՝ *The law is the law*: Կրկին դիմելով Օքսֆորդի բառարանին *law* (օրենք) բառի իմաստները արձանագրելու նպատակով՝ փորձենք սահմանագծել այն դաշտը, որի շրջանակում տվյալ նույնաբանությունը կարող է մեկնաբանվել և ձեռք բերել իր գործաբանական ներուժը:

Law

1) System of rules 1. (also the law) the whole system of rules that everyone in a country or society must obey. 2. a particular branch of the law: company/international/tax, etc.

law

3) One rule – (on smth.)/ – (against smth) a rule that deals with a particular crime, agreement, etc. (Oxford Advanced Learner's Dictionary 2005)

Law բառի մնացած իմաստներն այստեղ չենք ներկայացնի, քանի որ դրանք շատ են, այլ միայն կնշենք, որ դրանց թվում են հետևյալ իմաստները 4) Subject/profession 5) Police 6) of an organization/activity 7) of good behavior 8) in business/ Nature/ Science – principle: Մակայն անկախ նրանից, որ *law* բառն ունի բազմաթիվ իմաստներ, միևնույնն է, երբ կիրառվում է *The law is the law* կառույցը, թերևս ոչ ոք *law*-ն չի ընկալում իրավաբանական ֆակուլտետի կամ իրավագիտության կամ ոստիկանության իմաստով: Այն մեկնաբանվում է որպես սահմանադրությամբ ամրագրված իրավունքի վրա հիմնված կանոնների համակարգ, որին բոլորը պետք է ենթարկվեն: Օրենքի դեպքում ընտրության հնարավորություններ չկան. պետք է ենթարկվել, հակառակ պարագայում կհաջորդի պատիժ: Գոյականի այսպիսի բավական միանշանակ իմաստը քիչ տեղ է թողնում դրա երկրորդային իմաստների կամ իմաստային նրբերանգների համար: Այս պատճառով էլ տվյալ նույնաբանությունն ունի նաև կարծրատիպային արժեք: Այն կայուն ամրագրված է լեզվում նաև, որովհետև *օրենք (law)* երևույթը ունի ուժային ու պարտադրող գործառույթ: Այսպիսով՝ տվյալ նմուշօրինակում մեկնաբանությունների հնարավորությունը սահմանափակ է նաև հենց գոյականի իմաստային դաշտի միօրինակության պատճառով: Դրա հետևանքով այն կարծրատիպային նշանակություն է ձեռք բերել:

Կարծրատիպը հատկապես կարևորվում է նույնաբանության նկատմամբ լեզվաճանաչողական մոտեցման պարագայում: Նույնաբանական կառույցը հասարակության մեջ ժամանակի ընթացքում ձեռք է բերում որոշակի իմաստ և հիմնականում գործածվում ու վերձանվում է այդ իմաստով: Դիտարկենք հետևյալ օրինակները.

John: Oh, it's heavy! Would you bring anyone powerful?

Mike: Sure. Mary was around here. I'll bring her.

John: No. Not a woman. It's SO heavy.

Mike: Don't you know her power?

John: Not actually. But anyway, **a woman is a woman**.

Mike: Well..., it might be true/you'll see the answer (CD A: 131)

Այս իրավիճակում խոսակիցներից Ջոնը Մայքին խնդրում է կանչել որևէ ուժեղ անձնավորության՝ իրեն օգնելու: Թեպետ մեջբերված հատվածում չի նշվում, սակայն հասկանալի է, որ խոսքն ըստ երևույթին ֆիզիկական օգնության մասին է: Սակայն երբ Մայքը ցանկանում է կանչել Մերիին, Ջոնը առարկում է՝ պատճառաբանելով, որ նա կին է: Եվ երբ Մայքը ակնարկում է, որ Մերին ֆիզիկապես ուժեղ է, միևնույնն է, Ջոնը չի համաձայնում Մերիին օգնության կանչելու մտքի հետ համարելով, որ կինը մնում է կին (*A woman is a woman*): Այժմ մի պահ կանգ առնենք Ջոնի պատճառաբանության վրա, եթե իհարկե այն կարելի է համարել լիարժեք պատճառաբանություն: Ինչպես տեսանք, Ջոնը չասաց՝ Մերին կին է, իսկ կանայք սովորաբար ֆիզիկապես տղամարդկանցից թույլ են, ուստի ենթադրվում է, որ Մերին նույնպես թույլ կլինի, քանի որ կին է, և հետևաբար չարժե նրան կանչել ֆիզիկական օգնության համար: Սակայն հետաքրքրականն այն է, որ առանց այս ամենն ասելու էլ Մայքը սա հասկացավ ու իր պատասխանը տվեց այդ ամենը հասկացած մարդու տրամաբանությամբ: Ստացվում է, որ Ջոնի կողմից կիրառված *կին* բառն ուներ որոշակի նշանակություն, որն ամփոփում էր այն ամենն, ինչ Ջոնը նկատի ուներ, սակայն բառացի չասաց: Այստեղից հետևություն ենք անում, որ *կին* բառը նշանակում է տղամարդուց ֆիզիկապես թույլ էակ, որը քիչ բանով կարող է օգնել ֆիզիկական աշխատանքի անհրաժեշտության դեպքում: Այժմ փորձենք ներկայացնել այս խոսակցության կաղապարը:

Երբ Մայքն ասում է, որ Մերին այստեղ է, ու հիմա ինքը կկանչի նրան, Ջոնի մտքում ակտիվանում են իր ունեցած գիտելիքներն ու տեղեկատվությունը, պատկերացումները կնոջ ֆիզիկական ուժի մասին: Վերոնշյալ կաղապարը ներկայացվում է այն հավանական մտապատկերումը, ինչն առիթ է տալիս

հրաժարվելու Մերիին օգնության կանչելու մտքից: Ու թեպետ, ինչպես նշեցինք, Ջոնը տեղյակ չէ Մերիի ֆիզիկական տվյալներից, նա, միննույնն է, կարծում է, որ *A woman is a woman* միտքը համապատասխանում է իրականությանը, ու չարժե նրան դիմել օգնության համար: Ստացվում է, որ Ջոնը հիմնվում է կնոջ ֆիզիկական ուժի մասին ընդհանրապես տարածված կարծրատիպի վրա (Yamamoto 2013): Ջոնն ընդհանրացված գաղափարը տարածում է Մերիի վրա: Ջոնի պատկերացումը կնոջ մասին կարծրատիպային է, և *A woman is a woman* նույնաբանությունն իր մեջ խտացնում է որոշակի կենսափորձ, ժամանակի ընթացքում կուտակված գիտելիքներ կամ տեղեկատվության պաշար, որոնք տեղակայված են այս լեզվական կառույցում: Մակայն փորձենք շարունակել երկխոսությունը ու պատկերացնենք մի իրավիճակ, որտեղ Մայքն ամեն դեպքում կանչում է Մերիին, ու վերջինս իրոք օգնում է Ջոնին ու Մայքին: Արդեն այս իրավիճակում, եթե Մերին արտաբերի *A woman is a woman* նույնաբանությունը, ապա այն բոլորովին այլ նշանակություն ձեռք կբերի: Այն բանից հետո, որ Մերիին կհաջողվի ֆիզիկապես օգնել տղամարդկանց, այս նույնաբանությունը կընկալվի որպես կնոջ ուժեղ և հուսալի տեսակի մասին հայտարարություն: Հետևաբար ստացվում է, որ Ջոնի կողմից ասված *A woman is a woman* և Մերիի ասած *A woman is a woman* արտահայտությունները թեպետ իմաստային և կառուցվածքային առումով նույնն են, սակայն լեզվագործաբանական առումով տարբեր են, նույնիսկ իրար հակառակ ներակայումներ պարունակող: Այն իրադրությունը, որտեղ կիրառվում է այս նույնաբանությունը, մեծապես ազդում է վերջինիս գործաբանական ներուժի վրա: Ջոնի կողմից օգտագործված նույնաբանությունը հենվում է կնոջ պակաս ֆիզիկական ուժի մասին (ի համեմատ տղամարդու) ձևավորված կարծիքի վրա: Այստեղ աչքի է զարնում երկու հանգամանք:

Առաջինն այն է, որ որոշ նույնաբանություններ ձևավորվում են հասարակական, մշակութային գործառույթների իրացման ընթացքում և ունեն սուբյեկտիվության տարր: Դրանք ընդհանրացված պատկեր են ներկայացնում՝ իրենց մեջ ամփոփելով տվյալ լեզվական կառույցի որոշակի իրավիճակներում հաճախակի կիրառությունից առաջացած ու նրան կցված նշանակությունը: Մյուս գործոնն այն է, որ տվյալ նույնաբանությունները կիրառողը վստահ է, որ դիմացինը

կիսում է իր ունեցած աշխարհայացքը: Մեր դիտարկած օրինակում Մայքը կիսում է Ջոնի աշխարհայացքը, սակայն հետաքրքրական է մեջբերված օրինակի հատկապես հետևյալ դրվագը. սկզբում Մայքն ինքն է առաջարկում Մերիին դիմել, երբ Ջոնն առարկում է՝ ասելով, որ գործը չափազանց ծանր է կնոջ համար, Մայքը, միևնույնն է, շարունակում է պնդել և ասում է, որ Ջոնը չգիտի, թե Մերին որքան ուժեղ է իրականում: Այս պահին նա Մերիին չի համարում կնոջ թույլ ֆիզիկական տվյալներ ունեցող ընդհանրացված կարծրատիպային կադապարի մեջ տեղավորվող անձնավորություն: Մայքը չի համեմատում նրան կնոջ ու տղամարդու ֆիզիկական ուժերի հարաբերության մասին ունեցած մտապատկերի հետ: Նա պարզապես ճանաչում է Մերիին որպես ֆիզիկապես ուժեղ կին և գտնում է, որ վերջինս ի վիճակի է իրենց օգնելու: Պատկերը փոխվում է այն բանից հետո, երբ Ջոնն ասում է *A woman is a woman* (կինը կին է), ինչից հետո Մայքը միանգամից ընդունում է Ջոնի կարծիքը: Կարելի է ենթադրել, որ կարծիքի կտրուկ փոփոխության պատճառը սուբյեկտիվ կարծիքի և կարծրատիպային մտածելակերպի բախումն է, և տվյալ դեպքում կարծրատիպային *A woman is a woman* արտահայտության կարծրատիպային նշանակությունը գերակայում է Մայքի՝ Մերիի ֆիզիկական ուժի մասին ունեցած անձնական կարծիքին: Սա թույլ է տալիս ենթադրել, որ որոշ նույնաբանություններ կարծրատիպային են: Դրանք իրենցից ներկայացնում են ժամանակի ընթացքում ձևավորված մոտեցում ու գնահատական: Տվյալ դեպքում *A woman is a woman* նույնաբանությունը սրա վառ օրինակն է: Հաջորդ օրինակում կրկին գործ ունենք նույնաբանության կարծրատիպային նշանակության հետ: Խոսողը առաջարկում է 10000 եվրոյի բանկային չեկ, սակայն նրա խոսակիցը (ուղղաթիռի օդաչուն) հրաժարվում է՝ ասելով, որ *Only cash is cash*: Դիտարկենք օրինակը.

“What is this?” The pilot demanded

“A ten-thousand-euro bearer bond drawn on the Vatican Bank”

The pilot looked dubious.

“It’s the same as cash”

“**Only cash is cash**”, the pilot said, handing the bond back. (BD DVC 2003: 359)

Փաստորեն օդաչուն հրաժարվում է ընդունելուց 10000 եվրոյի չեկը, թեպետ այն նույն արժեքն ունի, ինչ կանխիկ գումարը: Պատճառն այն է, որ նրա գիտակցության մեջ գումարը ուղղակիորեն կապված է հենց կանխիկ թղթադրամների հետ, և այլ կերպ նա պարզապես չի պատկերացնում: Միայն կանխիկ գումարն է նրա ընկալմամբ *հրակա՛ն* փող: Խոսողը պետք է բացատրի, ինչն էլ, որ նա անում է՝ ասելով, որ դա նույնն է, ինչ կանխիկ գումարը, սակայն օդաչուն, միևնույնն է, անդրդվելի է:

Դիտարկենք ևս մեկ օրինակ, որտեղ երևում է, թե ինչպես մարդկանց՝ ռոբոտների նկատմամբ վերաբերմունքը կարող է լինել գրեթե նախապաշարմունքային:

“Speedy! shouted Powell into his radio. “Come here!”

Speedy looked up and saw them. He stopped suddenly and remained standing for a moment. Then he turned and ran away, kicking up dust behind him. Over their radios Donovan and Powell heard him singing a song.

Donovan said weakly “Greg, he’s crazy”

“He’s not crazy” Powell said “**A robot’s only a robot.** There’s something wrong with him that’s confusing his brain patterns. Once we can find out what it is, then we can fix it. (AI IR: 126)

Այստեղ խոսքերներից մեկն ասում է, որ ռոբոտը գժվել է, այդպիսով ռոբոտին վերագրելով մի գործողություն, որը բնորոշ է մարդկանց կամ կենդանի արարածներին: Մինչդեռ ռոբոտը մարդ չէ, ոչ էլ կենդանի է, ու ըստ խոսողի, ով գործածում է նույնաբանական կառույցը, անհնար է, որ նա խելագարվի: Ռոբոտը կարող է շարքից դուրս գալ միայն: Այսպիսով, երբ նա ասում է *a robot’s only a robot*, նա հղում է անում այն անքննելի փաստին, որ ռոբոտները ոչինչ չեն զգում և միայն ստեղծված են մարդկանց ծառայելու համար:

Հաջորդ օրինակում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ խոսողը հակադրվում է կարծրատիպային մտածելակերպին՝ կիրառելով նույնաբանություն, որը նույնպես որոշակի կարծրատիպային տարրեր է պարունակում:

Cheri Bush: He's taking a lot of ribbing from the guys in the neighborhood.

I will tell you they're calling him Larry Poppins.

Dan Harris: And do you...you don't care when you hear that?

Larry Bush: **A job is a job.** I don't care about it, you know. You know, 'cuz nothing...female/male it doesn't matter. It's work. (SJ GN: 120)

Լարին որպես բուժակ աշխատում է հիվանդանոցում և հանդես է գալիս լրատվական ծրագրի հարցազրույցում, որտեղ քննարկվում են գենդերային հարցեր և խնդիրներ: Չերին պատմում է այն մասին, որ նրա հարևանները իրեն շատ են ծաղրում և նույնիսկ անվանում են Լարի Փոփինս, քանի որ հասարակության մեջ ընդունված է, որ բուժքրոջ գործը կատարում են կանայք, մինչդեռ նա, լինելով տղամարդ, աշխատում է բուժակ: Սակայն Լարին միևնույնն է աշխատում է՝ դեմ գնալով հասարակական կարծրատիպային կարծիքին: Նա հարցազրույցի ժամանակ ասում է, որ գործը գործ է (*A job is a job*), ու կարևոր չէ՝ կին ես, թե տղամարդ: Այստեղ Լարիի կիրառած նույնաբանությունը նույնպես ունի կարծրատիպային նշանակություն այն առումով, որ հասարակության մեջ ու հատկապես արևմտյան կապիտալիստական հարաբերությունների աշխարհում, ցանկացած գործ հարգանքի է արժանի, ու գործին պետք է վերաբերվել որպես ընդամենը գումար աշխատելու միջոց: Այն անձնական չէ, քո ինքնությանը կամ, առավել ևս, կերպարիդ կամ ինքնասիրությանդ չի առնչվում, պարզապես մի բան է, որ դու անում ես ու դրա դիմաց ստանում որոշակի գումար: Այս կարծրատիպային իմաստն է ամփոփված Լարիի կողմից կիրառված *A job is a job* նույնաբանության մեջ, ինչով նա հակադրվում է իր հասցեին հնչող ծաղրանքին⁸:

Այսպիսով՝ խոսքաստեղծման գործընթացում խոսողը, ընտրում է իր հաղորդակցական պահանջներին համապատասխան նույնաբանական կառույց,

որի իմաստը կարծրացած է տվյալ լեզվամտածողության մեջ, և դրանով իսկ փորձում է բացառել թյուրըմբռնումը: Ըստ նրա՝ այդ նույնաբանական կառույցը համապատասխանաբար կընկալվի լսողի կողմից, քանի որ վերջինս, տվյալ հանրույթի անդամ լինելով, տեղյակ է տվյալ նույնաբանական կառույցի կարծրատիպային նշանակությանը:

Ամփոփելով սույն գլխում իրականացված քննությունը՝ փորձենք պատասխանել մեր առաջ քաշած հարցադրմանը. որո՞նք են նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի կազմավորման նախապայմանները, և ինչո՞ւ է խոսողը խոսքաստեղծման պրոցեսում նախապատվություն տալիս նույնաբանական կառույցների շարահյուսական կաղապարներից մեկին: Թերևս պատասխանը պետք է փնտրել հենց նշված կառույցի ձևաբովանդակային ամբողջության և միասնականության մեջ: Ձևի առումով նույնաբանական կառույցները բավականին պարզ են և հետևաբար խոսքաստեղծման գործընթացում խնայում են խոսողի ժամանակն ու ջանքերը, իսկ բովանդակության առումով՝ թվացյալ պարզունակության ներքո, թաքնված է իմաստային մեծ բազմաշերտություն: Հենց այս բազմաշերտությունն էլ հնարավոր է դարձնում, որ խոսողը կողավորի այն ներակա իմաստը կամ իմաստները, որոնք տեղին են և համապատասխան տվյալ հաղորդակցական իրադրությունում խոսողի հաղորդակցական մտադրության իրականացմանը: Այսպես էլ կազմավորվում է նույնաբանական կառույցի գործաբանական ներուժը: Մյուս կողմից՝ խոսողը վստահ է, որ իր խոսքնկերը, որպես նույն լեզվական հանրույթի ներկայացուցիչ և նույն հաղորդակցական իրադրության մասնակից, ի վիճակի կլինի ապակողավորելու իր՝ խոսողի կողմից նույնաբանական կառույցով ներակայված իմաստը: Թե ինչպես է իրականանում նույնաբանական կառույցի գործաբանական ներուժի վերծանումը լսողի կողմից, և թե որոնք են այդ գործընթացը ապահովող գործոնները/նախապայմանները, կքննարկվի սույն աշխատանքի հաջորդ գլխում:

Ծանոթագրություններ

1. Ըստ Օ.Ա. Զայցի՝ անվանական նույնաբանությունները պետք է տարբերել անվանման և նույնականացման արտահայտություններից, որոնք ունեն նույն շարահյուսական կադապարը: Հիմնական տարբերությունն այն է, որ նույնաբանության բաղադրիչները հարաբերվում են միմյանց հետ որպես օբյեկտ և հատկանիշ, իսկ նույնականացման կառույցներում օբյեկտը վերաբերում է ինքն իրեն: Հեղինակը փորձում է այս դրույթը պարզաբանել հետևյալ օրինակի հիման վրա: Ալիսան, հայտնվելով կախարդական աշխարհում, որտեղ ամեն ինչ այնպես չէ, ինչպես իրական աշխարհում, փորձում է գլուխ հանել, թե ով է ինքը իրականում:

“I’m sure I’m not Ada,” she said, “for her hair goes in such long ringlets, and mine doesn’t go in ringlets at all, I’m sure I can’t be Mabel, for I knew all sorts of things, and she, oh! She knows such a very little! [...] **She’s she and I’m I.**” (LC AW 2007: 9): Ինչ վերաբերում է անվանման կառույցներին, ապա այստեղ, ըստ հեղինակի, միանում են օբյեկտն ու նրա անունը. **The Red Sea is the Red Sea** because the plankton makes it look really red. (EH IS 1989: 94): Ուստի հեղինակը եզրակացնում է, որ այս երկու տիպի կառույցները պետք է տարանջատել նույնաբանությունից (Յախ 2001):

2. Հավելումը մերն է, քանի որ բայական նույնաբանական կառույցներում կրկնվող հատվածը արտահայտում է որոշակի գործողություն:

3. Լեզվափիլիսոփայության մեջ ընդունված է այն կարծիքը, որ ամեն անգամ, երբ բառը կամ արտահայտությունը կրկնվում է, նրա իմաստը փոխվում է (Derrida 1997): Մյուս կողմից՝ բառի, արտահայտության կրկնությունը ստեղծում է ռիթմիկ պատկեր, որն էլ իր հերթին ստեղծում է ճանաչողական (cognitive) ներազդում: Հենց այս ճանաչողական ներազդումն է, որ թույլ է տալիս ուղեղին ընկալել տեղեկատվությունը (Ruhlen 1994: 28):

4. Ճանաչողական հոգեբանության, փիլիսոփայության, տրամաբանության և իմաստաբանության մեջ ինտենսիոնալը հասկացույթային իմաստն է, իսկ էքստենսիոնալը՝ վերաբերական (տե՛ս *intensional* և *extensional* բառահոդվածները Dictionary of Linguistics and Phonetics 2008):

5. Գոյականական անդամի թվի հարցը մեծ ուշադրության է արժանացել նույնաբանությունների մեկնաբանության ուսումնասիրության մեջ: Այս հարցին մասնավորապես մեծ կարևորություն են տալիս իմաստաբանական տեսության հետևորդները: Խմբավորելով նույնաբանությունները ըստ դրանց արտահայտած նշանակության տվյալ լեզվում, դուրս բերելով յուրաքանչյուր խմբի համար առանձին բանաձև՝ հնարավոր չէ ուշադրություն չդարձնել նաև նույնաբանության կառույցի գոյականական անդամի թվին (Wierzbicka 2003): Մինչդեռ Գրայսյան համընդհանրական մոտեցման հետևորդները (Ward, Hirschberg 1991; Traugott 2004; Meibauer 2008; Levinson 1979; Rogers 1977; Sadock 1974; Potts 2005), չբաժանելով նույնաբանությունները տարբեր խմբերի, այլ կենտրոնանալով դրանց բոլորի կամ գոնե հայտնի նույնաբանությունների համար օպտիմալ և ընդունելի մեկնաբանության կադապար գտնելու ուղղությամբ, ըստ էության չեն մասնավորեցնում գոյականական անդամի եզակի կամ հոգնակի թվի դերը նույնաբանության գործաբանական ներուժի և դրա հաղորդակցական արժեքի ձևավորման գործում:

6. Հետաքրքիր է նաև Վերծիցկայի այն միտքը, որ նույնաբանությունների արտահայտած գործաբանական նշանակությունները, ինչպես, օրինակ, ակնկալիք կամ այլ վերաբերմունք, չպետք է ներառվի կառույցի նշանակության մեջ, և պետք է գտնել մի ընդհանուր բանաձև, որը կներառի այն առանցքը, որի շուրջ այս տեսակի նույնաբանությունները հավաքվում են: Ըստ էության սա էլ մի փորձ է՝ համատեղելու համընդհանրական մոտեցումը նույնաբանություններն ըստ նշանակության դասակարգելու մոտեցման հետ: Իհարկե, կարելի է փորձել և մի քանի նույնաբանությունների համար դուրս բերել մի ընդհանուր բանաձև, սա ըստ էության մեծ բարդություն չի ներկայացնում: Հարցը, սակայն, այն է, թե արդյոք այդ բանաձևը կվերաբերի միայն տվյալ x քանակի նույնաբանություններին, թե՞ այդ բանաձևով կազմված ցանկացած նույնաբանություն ինքնուրույն ձևով կբերի տվյալ խմբին հատուկ նշանակություն: Եթե ընդունում ենք, որ տվյալ բանաձևը միայն մի քանի նույնաբանության համար է, որոնք ունեն կարծրատիպային, լեզվում ամրացած իմաստ, ապա նման բանաձև դուրս բերելն, իհարկե, հնարավոր է: Սակայն պնդել, թե տվյալ բանաձևով կազմված ցանկացած նույնաբանական

կառույց կունենա տվյալ խմբին բնորոշ իմաստ, չափազանց ռիսկային հայտարարություն կլինի: Մրա ապացույցն էին վերևում բերված երկու օրինակները, որոնք թեպետ կառուցվածքով համապատասխանում էին հանդուրժողական ու ըմբռնողական մոտեցում արտահայտող նույնաբանություններին, սակայն փաստացի հակառակ նշանակությունն ունեին: Այս պարագայում ինչ-որ չափով նաև երկրորդական է դառնում նույնաբանություններն ըստ իմաստային նշանակության խմբավորելը, քանի որ ըստ համատեքստի, խոսքային նպատակի, իրավիճակային նախապայմանների՝ այն կարող է շատ կամ քիչ փոխել նշանակությունը կամ ածանցյալ նշանակություններ ձեռք բերել:

7. Նույնաբանությունների մեկնաբանության գործում կարծրատիպի առկայության մասին խոսում է նաև Մայբաուերը (Meibauer 2008):

8. Սակայն հարց է առաջանում, թե արդյո՞ք կարելի է դուրս բերել կարծրատիպային նույնաբանության բանաձևը կամ էլ գտնել այն բանաձևը, որով կազմված նույնաբանությունը կարծրատիպային է: Դիտարկենք հետևյալ օրինակը.

Senior: **5'06 is 5'06**

Reservist: But...

(CD A: 2006)

Այստեղ ներկայացվում է հատված մի իրադրությունից, որտեղ պահեստայինները պետք է շրջանն ավարտեին 5 րոպեում, սակայն նրանցից մեկին դա չի հաջողվել: Պահեստայինը խնդրում է ավագին քննել որակազրկված անձնավորության հարցը: Ավագը, սակայն, մերժում է՝ ասելով *5'06 is 5'06* (5'06-ը 5'06 է) (Yamamoto 2013: 21): Տվյալ իրավիճակում անհնար է ասել, որ *5'06 is 5'06*-ը կարծրատիպային նույնաբանություն է, թեպետ *A woman is a woman* և *5'06 is 5'06* նույնաբանությունները *X is X* բանաձևն ունեն: Ստորոգելիական վերադիր *X*-ը միշտ չէ, որ ներկայացնում է քննարկվող առարկայի կամ անձի կարծրատիպային որակները:

ԳԼՈՒԽ 3

Նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի ապակողավորման առանձնահատկությունները անզլերեն խոսքում

3.1. Համատեքստը որպես նույնաբանական կառույցների հաղորդակցական գործաբանական արժեքի մեկնաբանության բանալի

Խոսքային գործունեության առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հասկացման, լսածի ապակողավորման, ինչպես նաև խոսքաստեղծման համար անհրաժեշտ գիտելիքը չի սահմանափակվում սոսկ լեզվի մասին եղած տեղեկությամբ: Դրա համար պահանջվում է լեզվական և արտալեզվական գիտելիքի մի ողջ պաշար, ինչպես նաև դիսկուրսը պլանավորելու և կառավարելու կարողություն (Петров, Герасимов 1988; Schegloff 1976; Ohmann 1971; Kiefer 1979; Kempson 1979): Քանի որ խոսքը երկկողմ գործընթաց է, հաղորդակցման մասնակիցները երկուսն են՝ խոսողը/գրողը, որը միտք է հաղորդում՝ կատարելով համապատասխան լեզվական միավորների ընտրություն, և խոսակիցը/ընթերցողը, որը լսում/կարդում է և մեկնաբանում իրեն հասցեագրված խոսքը՝ դրան արձագանքելու/մեկնաբանելու միտումով:

Համատեքստի և հարատեքստի քննությամբ համոզվում ենք, որ դրանք խոսքային գործունեության կարևոր հենք են: Ըստ որում՝ համատեքստի և հարատեքստի լեզվական և արտալեզվական տարրերը ոչ միայն հիմք են դառնում դիսկուրսի կառուցվածքային և իմաստային դաշտերի համապատասխան մեկնաբանության, հասկացման¹ համար, այլև նպաստում են խոսքընթացում ներգրավված իմաստային ենթադաշտերի, տվյալ դեպքում՝ նույնաբանական կառույցում կողավորված ներակայման ապակողավորմանը խոսքի հասցեատիրոջ կողմից: Ասվածը ավելի հիմնավոր ներկայացնելու նպատակով կրկին անդրադառնանք առաջին գլխում մեր քննարկած հետևյալ երկու օրինակին.

1. But **war is war**. It isn't pretty. There will always be collateral damage, blue on blue incidents, and civilian casualties. It's not entirely avoidable. It can only be minimized. (Independent 24 May, 2007)

2. Woe betide the working class, if it allows, even for an instant, the fascists to carry out their plan in Turin, as they have done in other cities. Even the slightest weakness, the slightest hint of indecision could be fatal. The response of the workers to the fascists' first try must be immediate, abrupt, ruthless; the response should be such that the memory of it is passed down to the great-grandchildren of capitalist masters. At the end of the day, **war is war** and in war it is not agreed when the blows will be struck. (GA SPN: 367)

Ինչպես արդեն նշվել է, առաջին օրինակում խոսողը դրսևորում է համակերպված մարդու դիրքորոշում պատերազմի, դրա հետևանքով ստեղծված ավերածությունների, զոհերի ու դժբախտ պատահարների հանդեպ: Մինչդեռ երկրորդ օրինակում խոսք անգամ չկա հանդուրժողականության կամ համակերպվածության մասին: Այստեղ *War is war* նույնաբանությունը հնչում է որպես մի կոչ, միավորվելու պահանջ, հանդուրժողականությունից ու մարդկայնությունից առժամանակ հրաժարվելու հրամայական:

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչո՞վ է պայմանավորված երկու տարբեր դիսկուրսներում միևնույն լեզվական կառույցի միջոցով իրականացված հաղորդակցական գործառույթների տարբերությունը: Քանի որ կառույցը նույնն է, ապա նշված տարբերության պատճառը պետք է փորձել գտնել խոսույթի մյուս հատվածներում: Երկու օրինակներում էլ նույնաբանությունները կիրառվել են ոչ թե առանձին, ինքնուրույն, այլ ուղեկցող նախադասությունների հետ, այսինքն՝ համատեքստի մեջ. նույնաբանական կառույցը դիսկուրսի մեջ ակնհայտորեն ունեցել է նախորդող ու հաջորդող մասեր: Սա նշանակում է, որ առկա է խոսքային պատմություն, խոսընթաց: Երկու խոսողները ծանոթ են ընդհանուր թեմային, իրավիճակին, և երկուսն էլ տեղյակ են դիմացինի տեղեկացվածության մասին:

Առաջին օրինակում, բացի նույնաբանական կառույցից, խոսողը կիրառում է *There will always be collateral damage* նախադասությունը: Այս միտքը, ինչպես նաև դրան հաջորդողը օգնում են, որպեսզի լսողը կարողանա գատորոշել, թե խոսողը հնարավոր բոլոր այլընտրանքային տարբերակներից հատկապես որը նկատի ունի, և որն է ճշգրտորեն համապատասխանում տվյալ իրավիճակին: Նույնաբանությանը նախորդող և/կամ հաջորդող նախադասությունները ստեղծում են այն համատեքստը, որի օգնությամբ հնարավոր է դառնում դրանց մեկնաբանությունը տվյալ իրավիճակում: Առաջին և երկրորդ օրինակներում առանց համատեքստի լսողի համար դժվար է կամ գուցե դժվար կլինեք ընկալել, թե ինչ է ցանկանում փոխանցել խոսողն այդ նույնաբանությունը կիրառելով: Եթե առաջին օրինակում համատեքստը օգնում է հասկանալ, որ խոսողը համակերպված կեցվածք ունի պատերազմի ու դրա հետևանքների հանդեպ, ապա երկրորդ օրինակում կրկին համատեքստի միջոցով մենք ընկալում ենք խոսողի վճռականությունը և համախմբվելու պատրաստակամությունը՝ մի կողմ թողնելով հանդուրժողականությունը: Եթե փորձենք դուրս բերել այն գործոնները, որոնք հիմք տվեցին նման մեկնաբանությունների համար, ապա կստանանք հետևյալ պատկերը.

1. Խոսողը գիտի, որ դիմացինը պատկերացում ունի քննարկվող թեմայից:
2. Խոսողը գիտի, որ դիմացինը գոնե որոշ չափով տեղյակ է իր մոտեցումից:
3. Խոսողի և լսողի/գրուցակցի ընդհանուր գիտելիքները պետք է բավարար լինեն գոնե որոշ չափով հասկանալու կամ կանխատեսելու միմյանց հաջորդող գործողությունները:
4. Լսողը գիտի, որ նույնաբանություն կիրառելիս խոսողը վստահ է, որ ինքը ճիշտ կմեկնաբանի նույնաբանությունը:
5. Խոսողը գիտի, որ լսողը, ելնելով իրենց ընդհանուր դիրքորոշումից առ խնդիրը և լսողի տեղեկացվածությունից իր ունեցած դիրքորոշման մասին, չի կասկածում, որ լսողը օգտագործված նույնաբանությունը կմեկնաբանի այնպես, որ այն համապատասխանի իր հաղորդակցական նպատակին:

Հակառակ պարագայում, եթե նշված գործոնները առկա չլինեին, ապա կա՛մ խոսողի օգտագործած նույնաբանությունը կմնար ոչ լիովին ու ոչ համապատասխան կերպով մեկնաբանված, կա՛մ էլ խոսողը գուցե չկիրառեր այն՝ համարելով, որ խոսքնկերը ունակ չէ իր միտքը ճիշտ ընկալելու:

Ելնելով տեղիության կարգախոսից, համաձայն որի՝ այն, ինչ արտաբերվում է, համատեղելի է տվյալ խոսքային իրադրությանը, լսողը ենթադրում է, որ առաջին հայացքից ակնհայտը հաստատող նույնաբանական կառույցները մեկնաբանելիս անհրաժեշտ է հետամուտ լինել ավելի *սուբյեկտիվ* և *մասնավոր* իմաստների (Hoidas 1988: 229; Kempson 1975): Ըստ էության, տվյալ խոսքային իրադրությունը որոշակիացնում է նույնաբանական կառույցի երկրորդ անդամում կողավորված իմաստային ենթաշերտերը (ներիմաստները), այսինքն, թե որ ներակայումը կակտիվանա, կախված է կոնկրետ խոսքային իրողության լեզվական և արտալեզվական առանձնահատկություններից²:

Եթե նախորդ գլխում մեր նպատակն էր քննել այն լեզվական և արտալեզվական գործոնները, որոնք ձևավորում են նույնաբանական կառույցների գործաբանական ներուժը, ապա աշխատանքի այս մասում փորձելու ենք բացահայտել համատեքստի ու հարատեքստի դերը նույնաբանական կառույցներին բնորոշ ներակա իմաստների մեկնաբանման գործընթացում³:

Խնդրին ավելի համալիր մոտեցում ցուցաբերելու նպատակով նախաձեռնեցինք մի գործնական փորձ, որի նպատակն էր վերհանել այն գործոններն ու մեխանիզմները, որոնք օգնում են լսողին/ընթերցողին վերծանելու նույնաբանական կառույցներում պարունակվող ներակա իմաստները և նրանցում կողավորված գործաբանական ներուժը: Փորձի արդյունքների քննության և վերլուծության արդյունքում առանձնացրել ենք նույնաբանական կառույցների հաղորդակցական-գործաբանական արժեքի մեկնաբանության հետևյալ «բանալիները». համատեքստ⁴, հարատեքստ, խոսքնկերների ընդհանուր և հենքային գիտելիք և նույնաբանական կառույցի գոյականական անդամի իմաստային դաշտը: Հարցման համար առանձնացվել են 169 նույնաբանական կառույց, որոնք մեկնաբանվել են 87 հարցվողների կողմից, որոնց մայրենի լեզուն անգլերենն է: Հարցման մասնակիցներին տրվել է նույնաբանությունների 25-ական

նմուշ՝ երկու տիպի հարցաթերթիկով: Մի հարցաթերթիկում նույնաբանությունները ներկայացված էին համատեքստով, իսկ մյուսում՝ առանց համատեքստի, ընդ որում՝ այդ հարցաթերթիկներում ընդգրկված նույնաբանական կառույցները տարբեր էին: Այսինքն՝ մեկ հարցվող մեկնաբանել է ընդհանուր առմամբ հիսուն նույնաբանություն: Հարցվողներից պահանջվում էր մեկնաբանել նույնաբանական կառույցը ու ներկայացնել, թե ինչպես են ընկալում դրա նշանակությունը: Արդյունքների հիման վրա ստեղծվեց ընդհանուր ամփոփ պատկեր, որը ցույց է տալիս, թե նույնաբանությունների գործաբանական ներուժի մեկնաբանության գործընթացում ինչպիսի գործոններ են վճռորոշ ազդեցություն ունենում, որն է նույնաբանությունների կառուցվածքի ու դրանց արտահայտած ներիմաստների միջև հնարավոր կապը և այլ հանգամանքներ:

Այս գործոններից մեկը և, կարելի է ասել, ամենազլխավորը, համատեքստի ու դրա բաղադրիչների ունեցած կարևոր դերակատարումն է: Համատեքստը նույնաբանությունների ուսումնասիրության առանցքում տալիս է այն անհրաժեշտ տեղեկությունը, որի իմացությունը լսողին օգնում է մեկնաբանելու նույնաբանական կառույցի նշանակությունը:

Համատեքստ ասելով՝ պետք է պայմանականորեն հասկանալ նույնաբանական կառույցին ուղեկցող նախադասությունները (նույնաբանական կառույցին նախորդող կամ/ու հաջորդող նախադասությունները), որոնք ստեղծում են այն իմաստային դաշտը, որի հենքի վրա նույնաբանության նշանակությունը *բացվում է* լսողի/ընթերցողի համար: Թերևս արժե նշել, որ վերոբերյալ գործոնները առավելապես հանդես են գալիս միմյանց հետ փոխկապակցված, այլ ոչ թե առանձին-առանձին: Նրանց տարանջատումը սույն ուսումնասիրության շրջանակներում թելադրված է մեր առջև դրված խնդիրներով, այն է՝ վերհանել դրանցից յուրաքանչյուրի դերակատարումը նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը վերծանելու գործընթացում:

Դիտարկենք մի քանի նույնաբանական նմուշօրինակ ու վերլուծենք, թե ինչ կշիռ է ունեցել համատեքստը դրանց մեկնաբանության գործում:

Kitty reached the age of twenty-five and was still unmarried. Mrs. Garstin was exasperated and she did not hesitate often to give Kitty a piece of her very unpleasant mind. She asked her how much longer she expected her father to support her. He had spent sums he could ill afford in order to give her a chance and she had not taken it. It never struck Mrs. Garstin that perhaps her own hard affability had frightened the men, sons of wealthy fathers or heirs to a title, whose visits she had too cordially encouraged. She put down Kitty's failure to stupidity. Then Doris came out. She had a long nose still, and a poor figure and she danced badly. In her first season she became engaged to Geoffrey Dennison. He was the only son of a prosperous surgeon who had been given a baronetcy during the war. Geoffrey would inherit a title - it is not very grand to be a medical baronet, **but a title, thank God, is still a title** - and a very comfortable fortune.

Kitty in a panic married Walter Fane. (SM PV: 17)

Հարցվողների մեծ մասը՝ մոտ 74 %, *but a title, thank God, is still a title* նույնաբանությունը մեկնաբանել է հետևյալ կերպ, որ տվյալ իրադրությունում տիկին Գարսթինը ցանկանում էր իր դուստրերին հապշտապ ամուսնացնել հնարավորինս ապահով խավի ներկայացուցչի հետ, և ցանկացած թեկնածու, ով ուներ որևէ տիտղոս, արդեն լավ ընտրություն կարող էր համարվել: Հարցվողներից մի քանիսը հատկապես առանձնացրել են Քիթիի տարիքը մատնանշող նախադասությունը՝ *Kitty reached the age of twenty-five and was still unmarried*: Այս նախադասությունը հստակ ցուցիչն է այն բանի, որ 25 տարեկանը կնոջ ամուսնության համար բավականին մեծ տարիք էր: Հաջորդ նախադասությունը, որ հարցվողներից գրեթե բոլորն են առանձնացրել, որպես նույնաբանության նշանակության վրա մեծ ազդեցություն ունեցող գործոն, հետևյալն է. *She asked her how much longer she expected her father to support her*: Այստեղ երևում է, որ օրիորդի ամուսնությունը հրատապ բնույթ է կրում, իսկ՝ *Doris came out. She had a long nose still, and a poor figure and she danced badly. In her first season she became engaged to Geoffrey Dennison. He was the only son of a prosperous surgeon who had been given a*

baronetcy during the war, ավելի է նեղացնում նույնաբանության նշանակության հնարավոր այլընտրանքային տարբերակները՝ թողնելով այն մեկը, որն էլ հենց հարցվողների գերակշիռ մեծամասնությունը տվել է:

Այսպիսով, տվյալ նմուշի վերլուծությունից ելնելով՝ կարող ենք ասել, որ այստեղ միանշանակ կերպով մեկնաբանությունն արվել է՝ հիմնվելով համատեքստի վրա: Այսինքն՝ մեկնաբանության մեջ չենք տեսնում ո՛չ կարծրատիպային, ո՛չ էլ համատեքստից դուրս վերաբերմունքի արտահայտում: Թեպետ նույնաբանությունը *N is N* կառույցն ունի, սակայն չկա որևէ հանդուրժողական վերաբերմունքի նշանակություն, ինչպես, օրինակ, Վերժբիցկան գտնում էր, որ կա *War is war*-ի պարագայում (Wierzbicka 2003): Ընթերցողին իր մեկնաբանության մեջ զգալիորեն օգնել են նաև նույնաբանության բուն կառույցի ներսում գտնվող բառերը, ինչպես, օրինակ, *but* շաղկապը, *thank God* բացականչությունը և *still* վերաբերականը: Դրանք հուշում են այն վերաբերմունքի մասին, որը տողերի հեղինակը փորձում է փոխանցել նույնաբանության միջոցով, այսինքն՝ հեզնանք առ քաղքենիությունն ու ձևամոլությունը: Ջրկված լինելով համատեքստից՝ հարցվողների մյուս խումբը կենտրոնացել է միայն այն հատկանիշների վրա, որոնք բնորոշ են առավելապես տիտղոսներին:

Հենքային գիտելիքը մեզ տրամադրում է այն տեղեկությունը, որ Սոմերսեթ Մորմի նկարագրած ժամանակների Անգլիայում հարուստ խավի երիտասարդ կանանց ապագան կանխորոշված էր. նրանք ձգտում էին հնարավորինս հաջող ամուսնանալ ու զբաղվում էին տան գործերով և երեխաների դաստիարակությամբ: Մնացած բնագավառները փակ էին նրանց համար: Թերևս այս տեղեկատվության իմացությունը նույնպես ընթերցողին/լսողին օգնում է առավելապես ընկալել հեղինակի հեզնանքը նման բարքերի նկատմամբ:

Դիտարկենք հաջորդ օրինակը, որտեղ հարցվողները պետք է մեկնաբանեն *If it is a necessity, it is a necessity* պայմանական նույնաբանությունը:

...We have grown very ingenious and clever at the trickery of making characters talk to the audience and explain themselves and their past history while seemingly innocent of any such intention. And here, I admit,

the dramatist has to face a difficulty special to himself, which the novelist can avoid. I believe it to be the sole difficulty which is peculiar to the drama, and that it is not acute is proved by the ease with which third-rate dramatists have generally vanquished it. Mandarins are wont to assert that the dramatist is also handicapped by the necessity for rigid economy in the use of material. This is not so. Rigid economy in the use of material is equally advisable in every form of art. **If it is a necessity, it is a necessity** which all artists, flout from time to time, and occasionally with gorgeous results, and the successful dramatist has hitherto not been less guilty of flouting it than the novelist or any other artist. (BA AC: 62)

Այստեղ կարելի է ասել, որ բացարձակապես բոլոր հարցվողները մեկնաբանել են նույնաբանությունը՝ հիմնվելով համատեքստի վրա: Սա ինքնին հասկանալի է, քանի որ առանց համատեքստի հարցաթերթիկը ստացած հարցվողների մեծ մասը գլխի չէր ընկել, թե կոնկրետ ինչ *անհրաժեշտության* մասին է խոսքը: Նրանց մեկնաբանությունները, առանց համատեքստի, ընդհանրական էին ու անորոշ, իսկ ոմանք որպես պատասխան գրել էին *What it?* այսպիսով ցույց տալով, որ չեն հասկացել՝ ինչի մասին է խոսքը: Ընդհարացնելով մեկնաբանությունները՝ կարող ենք նշել, որ հարցվողները նույնաբանության ներակա իմաստը մեկնաբանել են՝ հիմնվելով համատեքստի ու հատկապես նույնաբանությանը նախորդած նախադասությունների վրա: Այստեղ տեսնում ենք, որ նույնաբանությանը նախորդող ու հաջորդող մասերը ստեղծում են այն խոսքային միջավայրը, որի պայմաններում նույնաբանության նշանակությունը հնարավոր է լինում մեկնաբանել: Բացահայտ կերպով հարցվողները հիմնվել են հատկապես հատվածի հետևյալ նախադասությունների արտահայտած իմաստի վրա՝ *Mandarins are wont to assert that the dramatist is also handicapped by the necessity for rigid economy in the use of material. This is not so.* Սա կարելի է բացատրել այն փաստով, որ այս նախադասությունները արտահայտում են հեղինակի բուն ասելիքը, իսկ դրան հաջորդող նույնաբանությունը կարծես ամրապնդում է նրա դիրքորոշումը: Իհարկե, պետք է նշել, որ

նույնաբանությունների մեկնաբանությունը, բնականաբար, վերոբերյալ գործոններից միայն մեկի միջոցով չէ տեղի ունենում: Հաճախ դրանցից մի քանիսն են միաժամանակ օգնում ընթերցողին կամ լսողին հաղորդակից լինելու խոսողի հաղորդակցական նպատակին ու հասկանալու, թե նա ինչ է փորձել ասել նույնաբանությամբ: Տվյալ դեպքում հատվածի հեղինակը՝ գրաքննադատ Առնոլդ Բենները, համեմատում է պիես ու վեպ գրող արվեստագետներին: Եթե նույնաբանությունը կարդացողը արդեն իսկ ծանոթ լինի Բենների աշխատանքին, ապա նրա համար շատ ավելի ընկալելի կլինի խոսողի միտքն ու նույնաբանության նշանակությունը:

Դիտարկենք ևս մեկ օրինակ, որտեղ համատեքստը ընդգծում է նույնաբանության նշանակությունը ու դառնում այն գործիքը, որի միջոցով այն մեկնաբանվել է:

“I had polio” she said. “That’s all it is. My mother had it too, and she died.”

“That’s too bad.”

“I suppose so. I can’t remember her. I’m going to Egypt next week. I was very keen on going, but now I don’t seem to care so much. Do you think it’d be fun?”

“I have to earn a living.”

He was amazed at what he’d said, and of course, it set her off giggling.

“I was speaking in general terms,” she said grandly, when the giggling finished.

“Me too.”

Some creepy fortune hunter was bound to snap her up, some Egyptian or whatever. She seemed both bold and childish. At first, a man might be intrigued by her, but then her forwardness, her self-satisfaction, **if that was what it was**, would become tiresome. Of course, there was money, and to some men that never became tiresome.

“You mustn’t ever mention my leg in front of Daddy or he will go apoplectic,” she said. “Once he fired not just a kid who teased me but his entire family. I mean, even cousins.” (MA DL: 153)

Այս նույնաբանությունը հարցվողների մի խմբին տրվել է մեկնաբանելու համատեքստով, իսկ մյուս խմբին՝ առանց համատեքստի: Որպեսզի ավելի պարզորոշ հասկանանք, թե որքան կարևոր է համատեքստը նույնաբանության հաղորդակցական-գործաբանական ներուժի ապակողավորման համար, ներկայացնենք, թե ինչպես է այն մեկնաբանվել առանց համատեքստի.

This repetition suggests something that can’t be changed – whatever ‘it says’ is final and there is no way to amend or change it.

Այս նույնաբանությունը հարցվողների մի մասը մեկնաբանել է որպես փաստի անդառնալի ու անշրջելի, անուղղելի լինելը: Ինչ ասվել է, դա վերջնական է: Այս մեկնաբանման համար հիմք է ծառայել կառույցում առկա կրկնությունը: Նույնաբանության նշանակությունն ընկալվել է որպես կատարված փաստի հաստատում, իսկ կրկնվող կառույցը շեշտում է փաստի անփոփոխ լինելը: Անշուշտ, սա չափազանց ընդհանրական մեկնաբանություն է: Այլ հարցվողներ էլ տվել են այսպիսի պատասխաններ՝ *It is very clear. There is no alternative explanation; And that's it!* Սրանք, իհարկե, շատ անորոշ պարզաբանումներ են, ինչի պատճառը համատեքստի բացակայությունն է: Այսինքն՝ հնարավոր չի եղել որևէ հստակություն մտցնել, հնարավոր չի եղել մեկնաբանել ու վերծանել նույնաբանությունը կիրառողի բուն հաղորդակցական նպատակը: Հարցվողների մեկնաբանությունները ավելի շատ ենթադրությունների են նման: Անհասկանալի է՝ ինչու է փաստը անդառնալիորեն անշրջելի, կամ ինչ փաստի մասին է խոսքը: Մակայն մյուս կողմից ի՞նչն է ստիպել հարցվողներին տալ այսպիսի մեկնաբանություն: Մեր կարծիքով լեզվամտածողության մեջ կան որոշակի կարծրատիպային կառույցներ, որոնք կապվում են որևէ կոնկրետ նշանակության և գործառույթի հետ⁵: Ինչպես, ասենք, բառը վերագրվում է կոնկրետ առարկայի, այնպես էլ որոշակի կառույց, անկախ որևէ արտալեզվական գործոնից, կապվում է որոշակի իմաստի կամ նշանակության հետ: Մինչդեռ պատկերը փոխվում է, երբ

ըննության ենք ենթարկում այն հարցվողների արդյունքները, ովքեր դիտարկել են նույնաբանությունը համատեքստով: Այս նույնաբանությունը մեկնաբանելիս հարցվողների համար որպես կողմնորոշիչ տարր հանդես է եկել համատեքստը: Քանի որ *that*-ը և *it*-ը բառային իմաստներով խիստ ընդգրկուն են ու կարող են վերաբերել անթիվ գոյականների, ապա հասկանալու համար, թե տվյալ դիսկուրսում դրանք ինչին են վերաբերում, ընթերցողը պետք է ունենա բավարար չափով տեղեկույթ, այսինքն՝ հասկանա, թե որտեղից է բխում գրողի/խոսողի՝ նույնաբանությունը կիրառողի միտքը: Այլ կերպ ասած՝ թե՛ գրողը/խոսողը ու թե՛ ընթերցողը/լսողը պետք է տիրապետեն խոսակցության պատմությանը, ընթերցողը/լսողը պետք է տեղյակ լինի գրողի/խոսողի հաղորդակցական նպատակից, իսկ գրողը/խոսողը՝ ունենա որոշակի վստահություն, որ ընթերցողը տիրապետում է համատեքստին ու հասկանում իր հաղորդակցական նպատակը: Ընթերցողը/լսողը սա կարող է անել միայն դիսկուրսին ծանոթ լինելու պարագայում: Համատեքստի իմացությունը այն նախապայմանն է, առանց որի *that*-ի և *it*-ի մեկնաբանությունը կլինեք գրեթե անհնար: Ընթերցողի/լսողի արած մեկնաբանությունը ուղղակիորեն կապված է խոսողի արտաբերած խոսքին ու հաղորդակցական նպատակին: Առանց դրա լսողը ի վիճակի չէր լինի մեկնաբանություն անելու, պարզապես տեղեկատվական ռեսուրսների բացակայության պատճառով: Համատեքստը տալիս է այն տեղեկույթը, որն անհրաժեշտ է մեկնաբանելու նույնաբանությունը ու հասկանալու դրա գործաբանական նշանակությունը: Հարցվողների զգալի մասը այս նույնաբանությունը մեկնաբանել է, որ կին գրուցակիցը չափազանց անկեղծ ու շիտակ է, եթե իհարկե չի ձևացնում և իրոք հենց այդպիսին է, ինչը կարող է ձանձրալի ու հոգնեցուցիչ լինել: Սակայն հաշվի առնելով, որ աղջիկն ըստ երևույթին հարուստ է, ապա տղամարդիկ կարող են աչք փակել դրա վրա:

Դիտարկենք մեկ օրինակ ևս, որտեղ նույնաբանության մեկնաբանության համար կարևորվել է համատեքստի գործոնը.

“Answer me! Are you completely mad?”

I noticed Lena didn't have much to say.

“She’s trying to speed things along,” I explained.

Luckily, **Lena’s mum is used to being Lena’s mum.**⁶, so she isn’t shocked by things like this.

I looked at her and thought that there must be a lot of people who would like to marry her. She has a silver nose stud. (PM WH: 126)

Հարցվողների 85 %-ը սույն նույնաբանությունը մեկնաբանել է հետևյալ կերպ. Լենայի մայրը արդեն վարժվել է աղջկա չարաճճիություններին ու առանձնապես շատ չի զարմանում նրա արարքներից: Այս մեկնաբանությունը հնարավոր է դարձել, ինչպես հենց հարցվողներն են վկայում, իրենց հարցաթերթիկներում նույնաբանությանը նախորդած նախադասությունների միջոցով: Մասնավորապես նրանց օգնել է *Answer me! Are you completely mad? I noticed Lena didn’t have much to say. She’s trying to speed things along, I explained.* հատվածը: Նրանց պատասխաններից մի քանիսը հենց այդպիսին են՝ *Lena’s mother was angry with her apparantly for something wrong she has done but she seems to be used to such things:* Մինչդեռ երբ նույն նույնաբանությունը տրվել է մեկնաբանելու առանց համատեքստի, ապա հարցվողների մեծամասնությունը չի հասկացել, թե ով է Լենան, ինչու պետք է նրա մայրը սովոր լինի նրա մայրը լինելուն, ինչն է դրա առանձնահատկությունը, ու հաճախ ոչ թե մեկնաբանել են, այլ հենց իրենք են հարցով պատասխանել՝ *Which is Lena?; Who is Lena’s mother?*, այսինքն՝ փաստացի չեն կարողացել մեկնաբանել նույնաբանությունը, որովհետև ոչինչ չէր որոշակիացնում դրա նշանակությունը, չկար որևէ լեզվական միավոր, որը կնեղացներ այլընտրանքային տարբերակների շրջանակը ու կթողներ ամենից հավաստին ու հնարավորը: Հարկ ենք համարում այնուամենայնիվ նշել, որ դատելով նույնաբանական կառույցից՝ հարցվողներից ոմանք նշել են, որ երևի թե Լենային բնորոշ են որոշակի հատկանիշներ, որոնք նրա մայրը կա՛մ չի նկատում, կա՛մ էլ նրա մոտ ձևավորվել է որոշակի հանդուրժողական վերաբերմունք դրանց նկատմամբ: Եվս մի կարևոր առանձնահատկություն կա այս նույնաբանության մեջ, որին արժե անպայման ուշադրություն դարձնել, այն, որ հատկացուցիչը հատուկ անուն է (Lena), և կան միլիոնավոր Լենաներ: Առանց հստակեցման, թե որ Լենայի

մասին է խոսքը, լսողը/ընթերցողը չի կարող կողմնորոշվել տվյալ իրավիճակում: Մա, ի հակադրություն նախորդ գլուխում քննարկված *Kanye is Kanye* նույնաբանական կառույցի, որտեղ արդեն, ինչպես նշվեց, հատուկ անունը՝ Քանյեն, առանձնանում է միլիոններից, ու լսողը/ընթերցողը (եթե ոչ բոլորը գոնե մեծամասնությունը) արդեն հստակ գիտի՝ ում մասին է խոսքը, և հետևաբար հավելյալ համատեքստի անհրաժեշտությունը նվազում է:

Պետք է անպայման նշել, որ, ինչպես ցույց են տալիս մեր կատարած ուսումնասիրության արդյունքները, հարցվողների զգալի մասը նույնաբանությունները և առհասարակ դիսկուրսը վերլուծելիս օգտագործում է ոչ թե միայն մի «բանալի», ասենք՝ համատեքստը կամ հարատեքստը կամ խոսքային իրադրությունը, այլ դրանք բոլորն էլ դեր են ունենում նույնաբանական կառույցի գործաբանական ներուժի մեկնաբանության համար:

Հաջորդ օրինակում տեսնում ենք, թե ինչպես է նույնաբանությունը մեկնաբանվում խոսողի ու նրա խոսակցի կողմից, որոնք թեպետ ունեն միևնույն հենքային գիտելիքը, սակայն նրանցից յուրաքանչյուրի համար տվյալ նույնաբանությունն ունի տարբեր հաղորդակցական-գործաբանական արժեք: Մեջբերված հատվածում հարկային կատարածուն (Harold) առանձնազրույց է ունենում աշխատավայրի հոգեբանի հետ, որն իբրև փորձում է օգնել նրան դուրս գալու բարդ կացությունից:

Դիտարկենք օրինակը.

- I had a very interesting convo with someone in your section.
- Yeah?
- They said you were feeling a little wibbly-wobbly.
- Oh, I don't know. I think I'm okay.
- Harold **a tree doesn't think it's a tree...it's a tree.**

Why was Harold talking to this man? This man was an idiot. This man used words like “wibbly-wobbly” and “convo” And explained that trees were trees. Of course **trees were trees**. Harold knew **trees were trees**.

- I am going to believe you Harold

What Harold didn't know was why he could not shake the smell of brownies from his senses. (FM SF: 18 min.)

Այս հատվածում հոգեբանը փորձում է մտերմիկ խոսակցության մեջ մտնել Հարոլդի հետ ու թափանցել նրա խնդրի էության մեջ: Դրա համար նա ասում է, որ արդեն խոսել է Հարոլդի բաժնի աշխատողներից մեկի հետ ու նրանից է իմացել Հարոլդի տարօրինակ վարքի մասին: Այսպիսով նա փորձում է ակնարկել, որ ինքը մանրամասն տեղեկացված է Հարոլդի վարքագծից ու այդ ձևով թերևս ցանկանում է շահել վերջինիս վստահությունը, որպեսզի նա ավելի անկեղծ լինի իր հետ: Այնուհետև հոգեբանը փորձում է անցնել բուն խնդրին ու դրա համար որպես մեկնարկային կետ օգտագործում է *a tree doesn't think it's a tree...it's a tree* արտահայտությունը, որը Հարոլդն ընկալում է որպես *A tree is a tree*: Ըստ հոգեբանի՝ այս արտահայտությունը բավական խորաթափանց ու բազմաշերտ է ու իմաստավորում է Հարոլդի խնդիրները: Ըստ էության, ելնելով Հարոլդի մտքի ընթացքից (*Why was Harold talking to this man? This man was an idiot*), նույնաբանական արտահայտությունն իրոք բազմաշերտ է ու տարբեր նշանակությունների տեղիք կարող է տալ, սակայն այս պարագայում Հարոլդի ու հոգեբանի համար այդ արտահայտությունները տրամագծորեն տարբեր են: Ըստ հոգեբանի՝ նույնաբանությունը խոր միտք է պարունակում, մինչդեռ Հարոլդը կարծում է, որ դրա նշանակությունը պարզից էլ պարզ է, ու միայն հիմարը անհրաժեշտ կհամարի այդ ակնհայտ ճշմարտությունը բարձրաձայնել: Հարոլդի համար *A tree is a tree* արտահայտությունը որևէ ներակայում չի պարունակում: Այս կառույցն ընդամենը հաստատում է այն, ինչ Հարոլդի կարծիքով ակնհայտ է, ու նա ոչ մի կերպ չի տեսնում դրա կապը իր վիճակի հետ ու առավել ևս չի տեսնում կապը իր վիճակի, տվյալ ասույթի և հոգեբանի վերլուծության միջև: Նրա համար նույնաբանական կառույցը կարծես խորհրդանշական կերպով ամփոփում է հոգեբանի հետ հանդիպումը, որը նա ակնհայտորեն համարում է անտեղի մի բան: Ընդ որում՝ այնքան անտեղի, որ ինչպես հենց ինքն է մտածում, ամբողջ խոսակցության ընթացքում նրան ոչ մի կերպ չի հաջողվում մոռանալ բրաունիի բույրը: Վերջին նախադասությունն ավելի է շեշտում նրա անտարբերությունը

խոսակցությանը, ու *A tree is a tree* նույնաբանությունը նրա համար հենց իրենց անխմաստ խոսակցության բյուրեղացումն է մեկ հակիրճ արտահայտության մեջ: Ավելին, Հարոլդի մոտ հոգեբանի հիմար լինելը ամրապնդվում է վերջինիս կողմից կիրառած *wibbly-wobbly* և *convo* բառերի պատճառով: Այսինքն՝ ամբողջ դիսկուրսը իր համատեքստով ազդել է Հարոլդի նույնաբանության նշանակության մեկնաբանման վրա:

Ստացվում է հետևյալ պատկերը. ա) խոսողը կիրառել է նույնաբանություն՝ վստահ լինելով, որ իր զրուցակիցը կհասկանա այն, բ) զրուցակիցը հասկացել է նույնաբանության իմաստը՝ սեմանտիկ նշանակությունը, գ) մինևույն նույնաբանության գործաբանական իմաստը խոսողի ու նրա զրուցակցի համար տրամագծորեն տարբեր են: Նույնաբանության այսպիսի մեկնաբանության համար զրուցակցին հիմք է տվել խոսողի ընդհանուր խոսքի համատեքստը, այսինքն՝ նախորդ նախադասություններում առկա որոշակի բառեր հանդիսացել են իրավիճակային նախապայմաններ նրա կողմից նման մեկնաբանություն անելու համար: Դրանք նաև անհատական երանգներ են հաղորդել հոգեբանին՝ Հարոլդի աչքում նրան դարձնելով առանձնապես ոչ լուրջ ու վստահելի անձնավորություն: Պետք է նաև նշել, որ թեպետ հենքային գիտելիքը խոսողի ու նրա զրուցակցի մոտ համարժեք էր, ու երկուսն էլ հասկանում էին կիրառված նույնաբանության նշանակությունը, սակայն խոսողը ձախողվում է, և նրան չի հաջողվում իրականացնել իր հաղորդակցական նպատակը:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ համատեղ հենքային գիտելիքը անհրաժեշտ նախապայման է, որպեսզի խոսընկերները համապատասխան կերպով կիրառեն և մեկնաբանեն նույնաբանական կառույցը: Կարելի է նշել, որ հենց հենքային գիտելիքը, ինչպես նաև համատեքստը այն գործոններն են, որոնք հնարավոր են դարձնում առաջին հայացքից անխմաստ կառույցի՝ նույնաբանության կիրառությունը: Իրավիճակային նախապայմաններն ընդգծում են խոսողի ու նրա զրուցակցի այնպիսի անձնային որակներ, որոնք վերջիններիս անհատականության որոշ գծեր առավել ցայտուն են դարձնում: Այս հանգամանքը նույնպես, ինչպես տեսանք, նշանակություն ունի նույնաբանության մեկնաբանության գործում: Այստեղ կարևոր դեր են ստանում կարծրատիպային

նշանակությամբ նույնաբանությունները, որոնք թեպետ արմատացած են լեզվում, սակայն, ելնելով համատեքստից ու նույնաբանությունը կիրառողի հաղորդակցական նպատակից, կարող են որոշակի նոր գործաբանական ներուժ ձեռք բերել: Այսպիսով, հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա, կարելի է փաստել լեզվաճանաչողական մոտեցման կենսունակությունը նույնաբանությունների ուսումնասիրության գործընթացում:

Հաջորդ օրինակում մենք նույնպես տեսնում ենք, որ նույնաբանությունը մեկնաբանելու համար հարցվողների կեսից ավելին՝ մոտ 60 %-ը, նույնաբանության իմաստը ընկալել է՝ հիմնվելով դրան նախորդած նախադասությունների փոխանցած տեղեկույթի վրա:

It may be said that Meredith was forced to write potboilers. He was not forced to write potboilers than any other author. Sooner than wallow in that shame, he may have earned money in more difficult ways. Or he might have indulged in that starvation so heartily prescribed for authors by a plutocratic noble who occasionally deigns to employ the English tongue in prose. Meredith subdued his muse, and Meredith wrote potboilers because he was a first class artist and a man of profound common sense. Being extremely creative, he had to arrive somehow, and he remembered that **the earth is the earth, and the world the world, and men men**, and he arrived as best he could. The great majority of his peers have acted similarly. (BA AC: 189)

Ինչպես ցույց տվեցին մեր դիտարկումները, այս դիսկուրսում նույնաբանությունը մեկնաբանելիս հարցվողներին անհրաժեշտ էր ոչ միայն հասկանալ համատեքստը, այլ նաև ունենալ նախնական տեղեկություն՝ հենքային գիտելիք, կամ հենց տեղում պարզել, թե ով է Մերեդիթը, ինչն է նրան ստիպել գրել ոչ բարձրակարգ ու արագ սպառվող գրականություն, ու ինչ է ուզում այդ օրինակով արտահայտել տվյալ տողերի հեղինակը՝ Բեննեթը: Հարցվողների փոքր տոկոսը (25 %) որոշակի չափով տեղյակ էր, որ Ջորջ Մերեդիթը 19-րդ դարի անգլիացի գրող էր, ով սկզբում տաղանդավոր բանաստեղծ էր, սակայն հետագայում սկսեց գրել արձակ, մասնավորապես մեծ պահանջարկ ունեցող վեպեր, քանի որ դրանցից

հնարավոր էր եկամուտ ստանալ: Հեղինակի վերաբերմունքը Մերեդիթի քայլի նկատմամբ արտահայտվում է *Sooner than wallow in that shame, he may have earned money in more difficult ways. Or he might have indulged in that starvation so heartily prescribed for authors by a plutocratic noble who occasionally deigns to employ the English tongue in prose.* հատվածում: Բեննեթը հեզնանքով է խոսում այն գրողների մասին, ովքեր իրենց այնքան վեր են դասում, որ հրաժարվում են անգլերենը արձակի մեջ օգտագործելուց: Ավելին, կյանքի հանդեպ Բեննեթի իրատեսական վերաբերմունքը ու, ըստ այդմ, Մերեդիթի գրական ընտրության արդարացված լինելը երևում են *Meredith subdued his muse, and Meredith wrote potboilers because he was a first class artist and a man of profound common sense.* նախադասության միջոցով: Այս տեղեկատվական հիմքն ունենալով՝ հարցվողները *the earth is the earth, and the world the world, and men men* նույնաբանական կառույցը ընկալել են որպես Բեննեթի՝ կյանքի հանդեպ իրատեսական վերաբերմունքի արտահայտություն, համաձայն որի՝ գրողը չպետք է իրենից ցածր համարի գրել այն, ինչը պահանջարկ ունի, և հակառակը՝ նման բան անելու համար պետք է լինել առաջնակարգ գրող և ունենալ ստեղծագործ միտք: Հարցվողների կեսից ավելին այսպիսի պատասխաններ է տվել: Հետաքրքրական է, որ առանց համատեքստի հարցվողների հիմնական մասը նույնպես շեշտադրել է նույնաբանության մեջ առկա իրատեսական վերաբերմունքի ներիմաստը: Սա թերևս կարելի է բացատրել մի կողմից տվյալ նույնաբանության շարահյուսական կառուցվածքով (*X is X, and Y Y, and Z Z*) և բառային կազմով, որը ստեղծում է վարընթաց աստիճանավորում՝ Երկիր մոլորակ – աշխարհ – մարդ, իսկ մյուս կողմից՝ տվյալ լեզվամտածողության մեջ առկա *X is X* կառույցներին վերագրվող իմաստային կարծրատիպով: Շարահյուսական համադաս կառուցվածքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր հասկացությունը (earth, world, men) դիտարկելու ինքն իրենով (իր բնութագրական հատկանիշների տեսանկյունից) և միևնույն ժամանակ որպես հաջորդ՝ ավելի ընդգրկուն հասկացության մի մաս (men→world→earth): Վարընթացությունը կարծես թե հասկացական շեշտադրումը դնում է մարդ *men* հասկացության վրա, և հենց այստեղից էլ ձևավորվում է կյանքի նկատմամբ իրատեսական վերաբերմունքը:

Այսպիսով, ինչպես պարզ դարձավ օրինակների և հարցման արդյունքների քննությունից, համատեքստը այն կարևորագույն գործոններից է, որն ակտիվացնում է խոսողի կողմից նույնաբանական կառույցում ներակայած իմաստը և օգնում է լսողին ապակողովորելու տվյալ կառույցում խտացված գործաբանական ներուժը:

3.2. Հարատեքստի դերը նույնաբանական կառույցի հաղորդակցական-գործաբանական արժեքի մեկնաբանության մեջ

Նույնաբանությունների հաղորդակցական նպատակն ու հաղորդակցական-գործաբանական արժեքը դիսկուրսում մեկնաբանելու համար հաջորդ որոշիչ գործոնը հարատեքստն⁷ է: Հարատեքստ ասելով՝ նկատի ունենք այն հասարակական-մշակութային-պատմական ֆոնը, քաղաքական-տնտեսական իրավիճակը, որի պայմաններում ձևավորվում է դիսկուրսը: Հարատեքստն ընդգրկում է նաև այնպիսի արտալեզվական գործոններ, ինչպիսիք են զրուցակիցների համատեղ կենսափորձը, աշխարհընկալումը, տվյալ ժամանակաշրջանի և միջավայրի մասին նրանց ունեցած ընդհանուր գիտելիքների պաշարը, նրանց նախորդ հաղորդակցական շփումների փորձը և այլն: Հարատեքստը տալիս է այն անհրաժեշտ տեղեկությունը, որը հնարավորություն կտա ընթերցողին/լսողին ընկալելու տվյալ դիսկուրսի ու այնտեղ առկա նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը: Հաճախ նույնաբանության իմաստը հասկանալու համար հարկավոր է իմանալ, թե երբ, ինչ դեպքերի առնչությամբ, ինչ քաղաքական կամ սոցիալական պայմանների առկայությամբ է այն կիրառվում: Կախված այս նախադրյալներից՝ նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը համապատասխանում է այն կիրառողի հաղորդակցական նպատակին: Մեր հարցման արդյունքները հարատեքստի ազդեցության կտրվածքով մասնավորապես ցույց տվեցին, որ վերջինս բավական մեծ դեր ունի ամենօրյա մամուլում, հրապարակախոսական ելույթներում կամ առօրյա հասարակական-քաղաքական հարցերում կիրառվող նույնաբանությունների գործաբանական

ներուժի մեկնաբանման գործում: Ներկայացնենք մի քանի նմուշօրինակ: Առաջին նույնաբանությունը, որ կդիտարկենք, կիրառվել է համացանցում մի օգտատերի կողմից, ով հետևյալ մեկնաբանությունն է թողել *Couple's mirror-image pregnancies: Lesbians who took turns to get pregnant chart in pictures how they created their family* վերնագրով հոդվածի տակ:

I think most of your comments are horrible and rude...**love is love**... no matter what race, gender or age. Why feel so sorry for children who will be brought up with love, guidance and knowledge in knowing you are free to be who you were born to be no matter how many sad low life people you may upset... people who try to bring you down are already below u.. All children want is a loving family and every woman has a right to be a mother... not just a mother... a very good one. I am also a lesbian woman and I have 2 beautiful children who are loved and I will support them in any decisions they may make in their life! It's called the human race... We should all be here for each other... not battling and slagging off people's orientation. Even "straight" couples need help having babies from spermatogenesis donors... look at surrogates as well... Family is not just about blood!!! Get a grip and get in touch with reality. Some girls marry girls and some boys marry boys! Get over it!!! (The Daily Mail. <http://www.dailymail.co.uk/news/article-3049531/Lesbian-couple-share-amazing-photos-pregnancies-women-birth-start-family-together.html>, (accessed 22 April, 2015))

Հարցվածների մեծ մասը (90 %) այս հատվածը մեկնաբանելիս բերել է հիմնավորումներ, որոնք ուղղակիորեն առկա չեն տվյալ դիսկուրսում: Մասնավորապես մեծ քանակ են կազմում այնպիսի պատասխանները, ինչպիսիք են՝ հիմա արդեն 21-րդ դարն է՝ հսկայական գիտական, տեխնոլոգիական ու գաղափարային առաջընթացի դարաշրջանը: Կան նաև մեկնաբանություններ, որտեղ նշվում է, որ մեր ժամանակներում վերացել են ու վերանում են սահմանները պետությունների ու համակարգերի միջև, հասարակություններն ու անհատները առանց խոչընդոտի մի մայրցամաքից մյուսը կարող են միմյանց հետ

շփվել տարբեր տեխնոլոգիաների շնորհիվ, ու վաղուց արդեն ժամանակն է մի կողմ նետել անցյալից եկող նախապաշարումներն ու սիրուն նույնպես վերաբերվել որպես ազատ կամարտահայտում ու անձնական ընտրություն: Հարցվողների մեկնաբանությունների մեջ նույնաբանությունը մեկնաբանվել է նաև հիմնվելով համատեքստի, հատվածի հեղինակի արտահայտած մտքերի վրա: Մասնավորապես *I am also a lesbian woman and I have 2 beautiful children who are loved and I will support them in any decisions they may make in their life! It's called the human race...* նախադասությանը հղելով՝ հարցվողները նշել են, որ հատվածի հեղինակը սեփական փորձից գիտի, թե ինչի մասին է խոսում, ու դա լրացուցիչ հավաստիություն է տալիս նրա խոսքին: Այսպես՝ *love is love* նույնաբանությունը ընկալվել ու մեկնաբանվել է՝ նկատի ունենալով կոնկրետ ոչ ավանդական հարաբերությունները ու հաշվի առնելով այն թրեհներն ու զարգացման ուղղությունը, որ կա մեր ժամանակներում: Որոշ հարցվողներ իրենց մեկնաբանություններում գրել են, որ պետք է նույնասեռ ամուսնությունները օրինականացնել, ինչպես արվեց Մեծ Բրիտանիայում: Այսինքն՝ կրկին հղում է արվում մի տեղեկույթի, որն անմիջականորեն արտահայտված չէ դիսկուրսում: Մինչդեռ եթե համատեքստով հարցաթերթիկը լրացնողների արդյունքների ընդհանրական պատկերն այսպիսին էր, ապա առանց համատեքստի մեկնաբանողների հարցաթերթիկների արդյունքները բավական այլ պատկեր էին ներկայացնում: Ունենալով հանձնարարություն՝ մեկնաբանելու *love is love* նույնաբանական կառույցը, հարցվողները նշել էին հիմնականում իրարից տարբեր երկու տեսակի պատասխան: Առաջին տարբերակը (45 %) այն է, որ սերը ընդամենը զգացմունք է ու ոչինչ ավելին, որ միայն սերը բավարար չէ կյանքում ու կան այլ առաջնահերթություններ նույնպես: Իսկ հաջորդ բավական հաճախ հանդիպող պատասխանն այն էր (35 %), որ սերը ամենակարևորն է ու ամեն ինչից վեր է: Այսինքն՝ երկու միմյանց հակադիր մեկնաբանություն միևնույն *a is a* կառույցն ունեցող նույնաբանության համար: Սակայն հարցվողներից ոչ մեկը այն չմեկնաբանեց ոչ ավանդական հարաբերությունների նշանակությամբ, այսինքն՝ ոչ ոք իր մեկնաբանության մեջ չնշեց, որ սերը, միևնույնն է, սեր է՝ անկախ նրանից՝ նույն սեռի անձանց միջև է, թե հակառակ սեռերի: Առանց համատեքստի

հարցվողները չկենտրոնացան նույնաբանության այս իմաստի վրա: Պատասխանների մեջ կային նաև առավել ընդհանրական, մի փոքր անորոշ պատասխաններ, ինչպես, ասենք, *That's it* կամ *I bet so* (20 %) ու նմանատիպ այլ մեկնաբանություններ: Դրանց ոչ կոնկրետ լինելը թերևս կարող է վկայել, որ հարցվողները չեն կողմնորոշվել նույնաբանության հաղորդակցական-գործաբանական նշանակության հարցում և պարզապես փորձել են ինչ-որ կերպ պատասխանել ու մեկնաբանել:

Հաջորդ օրինակում նույնպես հարատեքստի դերը հսկայական է՝ մեկնաբանելու համար տվյալ նույնաբանությունը: Հատվածը վերցված է *The Guardian* թերթի *Get rid of the immigrants? No, we can't get enough of them, says German mayor* վերնագրով հոդվածից:

A one-hour drive from Goslar lays Göttingen, the region's economic powerhouse. There, officials are struggling to cope with the thousands of refugees it is obliged to house based on its economic strength. As elsewhere in Germany, tent cities and container villages have been springing up overnight to cope with demand. Leisure centres and schools have been converted into shelters, but when the new term starts they will no longer be available, intensifying the problem. And as winter approaches, tent cities will no longer be viable.

“It's mad that in Göttingen they are having to build new accommodation, and are tearing their hair out as to where to put everyone, while we have empty properties and employers who are desperate for skilled workers,” Junk said.

His appeals for politicians to adopt the “Goslar Model” have so far fallen on deaf ears. “They say to me ‘**rules are rules**’,” said Junk. “It's typically rigid and German, always having to work with finished concepts rather than allowing for new ideas. Anyone who tells me Germany is full up, or that we can't afford them, I say think of our past, and of the future. Of course we can afford them – we're a rich country, and we have a duty to help those in need.” (The Guardian,

http://www.theguardian.com/world/2015/aug/16/goslar-germany-we-cant-get-enough-immigrants-oliver-junk?CMP=fb_gu (accessed 16 August, 2015))

Այս նույնաբանության գործաբանական արժեքը հասկանալու և ընկալելու համար, թե ինչ հաղորդակցական նպատակով է այն կիրառվում, պետք է տեղյակ լինել այժմյան աշխարհաքաղաքական իրավիճակից, մասնավորապես Մերձավոր Արևելքում արդեն հինգ տարի տևող սիրիական պատերազմից ու դրա աղետալի հետևանքներից: Այս հետևանքներից մեկն էլ փախստականների անվերահսկելի ու զանգվածային հոսքն է դեպի Եվրոպա ու հատկապես Գերմանիա: Այս դեպքերը բազմաթիվ հրատապ խնդիրներ ու հարցեր են առաջացրել Գերմանիայում, ինչպես, ասենք, փախստականների կացարանի ու ապրուստի հարցն է: Հիմնականում քաղաքային իշխանությունները հրաժարվում են շատ փախստականներ ընդունելուց, սակայն Գոսլար փոքրիկ քաղաքի քաղաքապետը, ընդհակառակը, կարծում է, որ պատրաստ է իր քաղաք ընդունել հնարավորինս շատ փախստականների, որովհետև ներքին արտագաղթի պատճառով քաղաքը գրեթե դատարկվել է, և աշխատուժի կարիք կա: Բայց համաձայն օրենքի՝ նրա քաղաքին քիչ փախստականներ են բաժին ընկնում, քանի որ քաղաքի բնակչությունը սակավ է, մինչդեռ քաղաքապետը պնդում է, որ այնտեղ շատ են դատարկ մնացած տները, որոնք կարող էին տրամադրվել փախստականներին: Սա այն անհրաժեշտ տեղեկությունն է, որ պետք է ունենալ որպես հարատեքստ՝ ի վիճակի լինելու վերծանել նույնաբանության նշանակությունը: Հարցվողների կեսից ավելին շատ թե քիչ տեղյակ էր խնդրից ու դրա հետևանքներից ու մեկնաբանել է հետևյալ ձևակերպումներով. *The rules should be flexible and amendable. It's a shame it takes so long to improve the rules and that causes extra suffering.* Այսինքն նույնաբանությունը մեկնաբանվել է՝ հաշվի առնելով տեղեկատվություն, որը արտացոլված չէ մեջբերման մեջ: Նույն նույնաբանությունն առանց համատեքստի այլ մեկնաբանությունների առիթ է տվել: Այն մեկնաբանվել է որպես պարտականություն՝ ենթարկվելու օրենքներին, և որ դրանք քննարկման ենթակա չեն: Այստեղ պետք է նշել, որ ինքը՝ Գոսլարի քաղաքապետը, նույնպես վրդովված է նման ոչ ճկուն քաղաքականությունից և *rules are rules* նույնաբանությունը մեկնաբանում է որպես հարցին անճկուն և տիպիկ գերմանական մոտեցում, ըստ որի՝ պետք է աշխատել կարծրացած

հասկացություններով, քան առաջնորդվելով նոր գաղափարներով՝ *It's typically rigid and German, always having to work with finished concepts rather than allowing for new ideas*: Մոտավորապես նման պատասխաններ ենք ստացել հետևյալ հատվածի մեջ առկա նույնաբանությունը քննելիս.

Osbert came out looking guilty and told Piper and me to pack a bag with our things because we were going to be rehoused and I just looked at him and shouted there is NO WAY I'm going to be sent off to some REFUGEE HOME in the BACK OF BEYOND especially BY YOU and Osbert looked pretty miserable and stared at the ground and said **Orders are Orders** and I thought it's lucky they didn't tell him to shoot us. (RM HILN: 75)

Այստեղ N(pl.) are N(pl.) կառույցն ունեցող նույնաբանությունն արտահայտում է հրամանին ենթարկվելու պարտավորվածություն՝ անկախ նրանից՝ դա ցանկալի է, թե ոչ:

Հարատեքստի ազդեցությունը էական է խոսողի հաղորդակցական նպատակի ձևավորման համար, ինչն իր հերթին, բնականաբար, ազդում է նույնաբանության մեջ ներփակված գործաբանական ներուժի վերձանման վրա լսողի կողմից: Առաջարկում ենք դիտարկել հետևյալ օրինակը.

A: Iran allows women into sports stadiums, but not for anything “too masculine”

B: **Well progress is progress.** (The Independent, <http://www.independent.co.uk/news/world/middle-east/iran-allows-women-into-sports-stadiums-but-not-for-anything-too-masculine-10157705.html?cmpid=facebook-post>, (accessed 07 May 2015))

Այս հատվածում *progress is progress* – *առաջընթացն առաջընթաց է* նույնաբանությունը մեկնաբանելու, դրա հաղորդակցական-գործաբանական արժեքը որոշելու, խոսողի հաղորդակցական նպատակին հաղորդակից դառնալու

համար անհրաժեշտ է, որ խոսողի ու նրան լսողի՝ գրուցակցի միջև լինի ընդհանուր տեղեկույթի առկայություն: Այսինքն՝ թե՛ խոսողը և թե՛ լսողը պետք է տեղյակ լինեն Իրանում կանանց իրավունքների սարսափելի սահմանափակ վիճակից: Անհրաժեշտ նախապայման է, որպեսզի խոսողը վստահ լինի, որ լսողը տեղյակ է Իրանում առկա իրավիճակից ու ի վիճակի է համապատասխան կերպով մեկնաբանելու իր խոսքն ու դրանում առկա նույնաբանական կառույցը: Կարևոր նախապայման է նաև, որ խոսողն ունենա որոշակի վստահություն, որ լսողը համակարծիք է իրեն: Հակառակ պարագայում, ըստ էության մարգարահիվճ գնալու թույլտվությունը, այն էլ ոչ չափազանց տղամարդկային մարգաձևերի հանդիսատեսը լինելու համար, առնվազն տարօրինակ կթվար լսողի համար, ով տեղյակ չէ Իսլամական հեղափոխությունից հետո Իրանում հաստատված կարգերից: Ու հետևաբար նաև քիչ հավանական է, որ նա առաջընթաց համարեր մի բան, որ ինքնին հասկանալի է ու վաղուց ընդունելի ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Թերևս կարելի է վստահորեն ասել, որ նրա համար տարօրինակ կհնչեր *չափազանց տղամարդկային* արտահայտությունը: Հետևաբար տվյալ պարագայում Իրանում առկա հասարակական-քաղաքական իրավիճակն ու դրանում կանանց իրավունքների սահմանափակումը այն հանրային համատեքստն են՝ հարատեքստը, որոնք հնարավոր են դարձրել *progress is progress* նույնաբանության կիրառությունը: Մեր դիտարկած օրինակում նույնաբանության մեկնաբանման հարցում վերոնշյալ գործոնը մեծ կշիռ ունի: Կարևոր է կոնկրետ դիսկուրսի հեղինակի անձը, նրա պատկանելությունը որևէ քաղաքակրթական ճամբարի: Տվյալ օրինակում ենթադրվում է, որ գրուցակիցները կա՛մ մուսուլման չեն, կա՛մ առնվազն չեն խրախուսում Իրանում կանանց իրավունքների սահմանափակումները: Դիտարկենք մեկ այլ օրինակ, որտեղ նույնաբանության մեկնաբանման գործում ազդեցություն է ունեցել հաղորդակցական իրադրության մասը կազմող արտալեզվական համատեքստը կամ հարատեքստը: *The Guardian* թերթում հրատարակված *I was held hostage by Isis. They fear our unity more than our airstrikes* վերնագրով հոդվածի տակ ընթերցողներից մեկը գրել էր մի մեկնաբանություն, որի մեջ կար հետևյալ նույնաբանությունը՝ *Islam is Islam*:

To call themselves as an Islamic state does not make them a real Islamic state. Several times we announced they are not Muslim, we reject them and their terrorism is accurately against to Islamic rules, still the media call this terrorist organization as an Islamic state. This is an abuse to us! And there is neither moderate nor extreme in Islam, **Islam is Islam**. (The Guardian http://www.theguardian.com/commentisfree/2015/nov/16/isis-bombs-hostage-syria-islamic-state-paris-attacks?CMP=fb_gu, (accessed 16 November 2015))

Այս հատվածում առկա նույնաբանությունը վերլուծելու համար հարցվողներին անհրաժեշտ է տեղյակ լինել վերջին տարիներին Մերձավոր Արևելքում տեղի ունեցող պատերազմական դեպքերից, որոնց արդյունքում ստեղծվել է Իսլամական Պետություն կոչվող ահաբեկչական խմբավորումը: Վերջինս հայտնի է իր անմարդկային հաշվեհարդարներով, որոնք տեսանկարահանում է և տարածում համացանցում՝ այդպիսով սրելով հարաբերությունները տարբեր երկրների մուսուլման և քրիստոնյա բնակչությունների միջև: Շատ մուսուլմաններ տարբեր երկրներում դեմ են արտահայտվում Իսլամական Պետության գործունեությանը, նրանց արյունալի մահապատիժներին՝ ասելով, որ դա դեմ է հենց Իսլամին, ու որ այդ խմբավորման զինյալները իրականում չեն կարող մուսուլման համարվել: Մա այն հասարակական-քաղաքական հարատեքստն է, որ անհրաժեշտ է իմանալ՝ տվյալ հատվածում առկա նույնաբանությունը վերծանելու համար: Ըստ էության հոդվածի տակ այս մեկնաբանությունը գրողը նույնպես այն մուսուլմանների թվին է պատկանում, ովքեր ԻՊ-ի գրոհայիններին չեն համարում Իսլամի իրական հետևորդներ: Մա արդեն երևում է համատեքստից: Հարցվողների մեծ մասը (90 %) հատկապես կարևոր է համարում ...*Several times we announced they are not Muslim, we reject them and their terrorism is accurately against to Islamic rules...*, որտեղից հասկանալի է դառնում այդ մեկնաբանության հեղինակի վերաբերմունքը: Ավելին, հաջորդ նախադասությունը ...*still the media call this terrorist organization as an Islamic state.. this is an abuse to us...* արտահայտում է այն միտքը, որ

մուսուլմանները արդեն զայրանում են ՁԼՄ-ի վրա, ովքեր ԻՊ-ի արարքները տարածում են Իսլամի գաղափարախոսության վրա: Ըստ մեկնաբանության հեղինակի՝ այդպիսի վերաբերմունքը ՁԼՄ-ի կողմից վիրավորում է իրենց՝ մուսուլմաններին: Այստեղ արդեն բացահայտվում է այն իրադրությունը, որը զայրույթ է առաջ բերել տվյալ մեկնաբանությունը անող ընթերցողի մոտ, ու նա օգտագործել է *Islam is Islam* նույնաբանությունը՝ դրանով արտահայտելով այն միտքը, թե Իսլամը ո՛չ ազրեսիվ է, ո՛չ էլ չափավոր, այլ պարզապես կրոն է ու պատասխանատու չէ ԻՊ-ի արյունարբու գործունեության համար: Մինչդեռ հարցվողների մյուս խումբը, որոնք *Islam is Islam* նույնաբանությունը պետք է մեկնաբանեին առանց համատեքստի, որոշակիորեն այլ պատասխաններ է տվել: Նրանց արդյունքների ամփոփումը մեզ տվել է հետևյալ պատկերը: Հարցվողների 60 %-ը այն մեկնաբանել է հետևյալ կերպ. որ Իսլամը հետամնաց կրոն է, ստիպում է կանանց կրել փակ հագուստ, իսկ մնացած հարցվողները հիմնականում տվել են ավելի չեզոք կամ անորոշ պատասխաններ, ինչպիսիք են՝ *You can't change that* և *You should respect their laws* մեկնաբանությունները: Այստեղ հատկանշական է, որ *Իսլամ* գոյականը մարդկանց գիտակցության մեջ որոշակի մտահայեցումներ է առաջ բերում, ինչպիսիք են հետամնացությունն ու կանանց իրավունքների սահմանափակումը, ինչը նույնպես հենքային գիտելիքի մասին է խոսում: Հարկ է անշուշտ նշել, որ մեր հարցման բոլոր մասնակիցները քրիստոնյա էին, ինչն, անշուշտ, նույնպես ազդեցություն է ունեցել նրանց մեկնաբանությունների վրա:

Ինչպես ցույց է տալիս սույն ենթագլխում իրականացված քննությունը, հարատեքստը նույնպես մեծ դերակատարում ունի նույնաբանական կառույցում պարունակվող գործաբանական ներուժը մեկնաբանելու գործում, քանի որ ապահովում է այն արտալեզվական հենքը, որում ծավալվում է տվյալ խոսքային փոխներգործությունը:

3.3. Խոսքերների ընդհանուր և հենքային գիտելիքի կարևորությունը նույնաբանության ընկալման գործընթացում

Ինչպես ցույց է տալիս ստորև բերվող օրինակների քննությունը, նույնաբանական կառույցների հաղորդակցական-գործաբանական արժեքը որոշարկող գործոններից է այն լեզվական խոսքային իրադրությունը, որտեղ հանդես է գալիս տվյալ նույնաբանությունը: Նույնաբանությունից առաջ ու/կամ դրանից հետո գտնվող նախադասությունները իրենց արտահայտած նշանակությամբ լսողին տալիս են տեղեկույթ, որը կողմնորոշիչ դեր է ունենում դիսկուրսում առկա նույնաբանության մեկնաբանման համար: Կախված այդ լեզվական համատեքստը կազմող բաղադրիչների շեշտադրությունից ու հաղորդած տեղեկույթից՝ նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը նույնպես փոխվում է: Կարևոր գործոն է նաև խոսքերների ընդհանուր և հենքային գիտելիքը, որն օգնում է ընթերցողին/լսողին ավելի հստակ պատկերացնելու իրավիճակը, որտեղ տեղի է ունենում խոսքային գործընթացը, հասկանալու՝ ովքեր են այդ դիսկուրսի մասնակիցները, և ով ինչ դեր ունի խոսակցության մեջ, զրուցակիցների անձնական հատկանիշները, ինչպիսիք են սեռը, տարիքը, կոչումն ու պաշտոնը և այլն:

Դիտարկենք հետևյալ օրինակները այս տեսանկյունից.

A: She is really in a big trouble and has turned to her mother though I am not sure that will help much.

B: I have known their family since childhood. **Her mother is her mother.** She comes from an influential family and has good connections. Trust me she will absolutely be helpful. (BJ LL: 128)

Նախ պետք է արձանագրել, որ այս երկխոսության մասնակիցները բավարար չափով տեղյակ են ընդհանուր թեմայից, որ իրենց ընկերը դժվարին կացության մեջ է, ու երկուսն էլ գիտակցում են, որ դիմացինը հավասարաչափ տեղյակ է իրադարձությունների ընթացքից: Առաջին զրուցակիցը կասկած է

հայտնում, թե արդյոք իրենց ընկերոջ մայրը կկարողանա օգնել նրան: Երկրորդ զրուցակիցը, ավելի լավ ճանաչելով իրենց ծանոթի մորն ու ավելի տեղեկացված լինելով վերջինիս ազդեցիկ ընտանիքի ու կապերի մասին, պնդում է, որ նրա մայրը հաստատապես ի վիճակի է օգնելու, ու հիմնավորում է դա մոր՝ ազդեցիկ ընտանիքից լինելու և դրանից բխող կապերի առկայությամբ: Այս տեղեկույթը օգնում է հասկանալու, որ նրա մայրը ոչ միայն իրենց ընկերոջ կենսաբանական մայրն է կամ հոգատար կին է ու անհանգստանում է իր զավակի համար, ինչպես թերևս բոլոր մայրերը, այլև այս ամենի հետ մեկտեղ նաև տալիս է տեղեկույթ, որ մայրն ունի ազդեցություն ու հնարավորություններ, որոնք կարող է գործի դնել: Այս հնարավորությունները առանձնացնում են նրանց ընկերոջ մորը մնացած մայրերից, քանի որ բնականաբար ոչ բոլոր կանայք ու առհասարակ մարդիկ ունեն մեծ հնարավորություններ: Այստեղ մենք կարող ենք արձանագրել, որ նույնաբանությանն ուղեկցող լեզվական համատեքստը մեզ ու առաջին զրուցակցին տալիս է անհրաժեշտ տեղեկույթ, որպեսզի նույնաբանությունը մեկնաբանվի մոր լայն հնարավորությունները փաստող լեզվական կառույցի նշանակությամբ: Այլ կերպ ասած՝ սույն օրինակում լեզվական համատեքստը ձևավորում է նույնաբանական կառույցի հաղորդակցական-գործաբանական արժեքը տվյալ դիսկուրսում: Հատկանշական են նաև *I have known their family since childhood* ուղեկցող նախադասության նշանակությունն ու դրա դերը նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքի մեկնաբանման գործում: Այդ նախադասությունը հղում է կատարում անցյալին, մանկությանը՝ դրանով է՛լ ավելի շեշտելով տեղեկույթի՝ ժամանակով ճշգրտված լինելու հանգամանքը: Այսինքն՝ խոսողը մտավոր հղում է կատարում մի իրականության՝ անցյալի մտապատկերի, որն ուղղակիորեն ոչ մի կերպ արտացոլված չէ նշված դիսկուրսում, սակայն որի հիշատակումը բավարար է որպես համատեքստ՝ նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքի որոշակիացման համար: Դիտարկենք ևս մեկ իրավիճակ, որտեղ նույն նույնաբանությունը այլ հաղորդակցական-գործաբանական արժեք ունի.

A: Currently she is awfully busy working two jobs and doing extra hours to be able to pay all the bills. And now on top of this all she has to take care of her handicapped mother.

B: **Well her mother is her mother.** She can't help but taking care of her. (KG ABSHC: 146)

Այս երկխոսությունը դիտարկելիս պետք է կրկին արձանագրել ընդհանուր թեմային խոսողի ու լսողի տեղեկացվածությունն ու փոխադարձ վստահությունը խոսողի տեսանկյունից, որ դիմացինը ունի շատ թե քիչ հավասարաչափ տեղեկություն իրավիճակի ու դեպքերի մասին ու ի վիճակի է ընկալելու իր խոսքը, իսկ լսողի տեսանկյունից՝ որ դիմացինը գիտի իր կողմից խոսքի համարժեք ընկալումը: Առաջին զրուցակիցը մատնանշում է այն սթրեսային ու գերձանրաբեռնված աշխատանքային գրաֆիկը, որով իրենց ընկերը ստիպված է աշխատել ու այժմ էլ պետք է կարողանա, այդ ամենից գատ, նաև հոգ տանել իր հաշմանդամ մոր մասին: Երկրորդ զրուցակիցը, համաձայնություն արտահայտելով, ավելացնում է, որ նա այլընտրանք չունի, ու *մայրը մնում է մայր*: Տվյալ պարագայում նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը իրավիճակի ընդունումն ու հանդուրժողականության արտահայտումն է, քանի որ մայրը ամենաթանկ անձնավորությունն է, ու ցանկացած պարագայում պետք է ուշադիր լինել նրա հանդեպ և հոգ տանել նրա մասին: Այստեղ գործում է հանրային համատեքստում ընդունված ու ամրագրված բարոյական արժեքը, որ ծնողի մասին պետք է հոգ տանել ու հնարավոր ամեն ինչ անել նրան օգնելու համար: Թեպետ այս հասարակական սկզբունքը ոչ մի կերպ չի նշվում ու չի էլ ակնարկվում, թե՛ խոսողն ու թե՛ լսողը, ինչպես նաև մենք՝ կողքից դիտարկողներս, մեր մտապատկերում ունենք այս սկզբունքը ու ընդունում ենք այն որպես հենք ամբողջ դիսկուրսի ու հատկապես նույնաբանության մեկնաբանման համար:

Ինչպես տեսանք, այս երկու օրինակներում միևնույն նույնաբանական կառույցն ունի երկու՝ իրարից տարբեր հաղորդակցական-գործաբանական արժեք: Այդ նշանակությունը նույնաբանությունը ձեռք է բերում նաև ուղեկցող լեզվական համատեքստի միջոցով: Առաջին օրինակում վերջինս արտահայտում է

անհրաժեշտ տեղեկություն այն մասին, որ նրա մայրը տարբերվում է այլ մայրերից ու ընդհանրապես առանձնանում է որպես մարդ իր կապերի ու հնարավորությունների առումով, իսկ երկրորդ օրինակում ուղեկցող նախադասությունների արտահայտած նշանակության շնորհիվ նույնաբանության իմաստն այն է, որ մոր համար միշտ պետք է ժամանակ գտնել ու հոգ տանել նրա մասին, հատկապես երբ դրա անհրաժեշտությունն ակնհայտ է: Փաստական նյութի մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ նույնաբանական ասույթի ճիշտ մեկնաբանման համար կարևոր է նաև նախորդ խոսքային ակտերից ստացված ընդհանուր գիտելիքը, ինչպես, օրինակ, հաջորդ հատվածում.

I thought you were drunk, she said. I thought you had to be drunk before you came to see me.

I bet you didn't get all this writing, I said looking around. Not even if you got paid for **what you thought you thought**. (RC FML: 201)

Նմանատիպ օրինակներում նույնաբանական կառույցները հանդես են գալիս որպես լեզվական տնտեսման միջոց, այսինքն՝ տնտեսում են խոսքնկերների ժամանակը և ջանքերը: Հակառակ դեպքում, վերադառնալով կոնկրետ այս օրինակին, ասույթը ձեռք կբերեր չպատճառաբանված երկարացված կառուցվածք *... if you got paid for having thought that I had to be drunk to see you, that I had been out with a blonde, etc.*

Հաջորդ օրինակում խոսքային իրադրության ազդեցությամբ նույնաբանությունը, որը կազմված է *what* հարաբերական դերանունով, ինչը ոչ մի կոնկրետ վերաբերական չունի, ձեռք է բերում տվյալ երկխոսության մեջ ներգրավված անձանց համար ընկալելի իմաստ, իսկ մեր փորձի մասնակիցները, ովքեր քննել են այդ նույնաբանությունը համատեքստի մեջ, ի վիճակի են եղել հասկանալու, թե *what*-ը ինչին է վերաբերում.

...But why not the men in the squadron, Milo?' Colonel Cathcart exclaimed. After all you're doing all this for them. They ought to be willing to do something for you in return

What's fair is fair.

What is fair is fair.

They could take turns, sir.

They might even take turns flying your missions for you, Milo.

Who gets the credit?

You get the credit Milo. And if a man wins a medal flying one of your missions, you get the medal.

Who dies if he gets killed?

Why, he dies, of course. After all, Milo, **what's fair is fair**. There's just one thing.

You'll have to raise the number of missions

I might have to raise the number of missions again...

...I'd give everything I own to Yossarian. Milo persevered gamely on Yossarian's behalf. But since I don't own anything I can't give everything to him, can I? So he'll just have to take his chances with the rest of the men, won't he?

What's fair is fair, Milo

Yes, sir, **what's fair is fair**. Milo agreed. Yossarian is no better than the other men, and he has no right to expect any special privileges, has he?

No Milo. **What's fair is fair**. (HJ C 22: 537)

Այստեղ նույնաբանության գործաբանական ներուժը վերծանելու համար հարցվողներին անհրաժեշտ է խոսքային իրադրության մեջ թափանցել, հասկանալ, որ գնդապետ Քաթքարթն ու Մայլոն ինչ-որ անարդար բան են ծրագրում, որը ցանկանում են ներկայացնել որպես ինքնին ենթադրելի և տրամաբանական ու ազնիվ քայլ: Պետք է, սակայն, նշել, որ համատեքստը նույնպես տալիս է բավարար

տեղեկույթ, որի միջոցով մեկնաբանվում է նույնաբանությունը: Մասնավորապես հարցվողների ուշադրությունը գրավել է հետևյալ հատվածը.

... And if a man wins a medal flying one of your missions, you get the medal'

Who dies if he gets killed?

Why, he dies, of course. After all, Milo, **what's fair is fair**. There's just one thing.

Հարցվողների 90 %-ն անդրադարձել է այս տողերին՝ դրանք համարելով հենց այն նուրբ հեգնական պահը, որը բացահայտում է, որ այն, ինչ ներկայացվում է որպես *արդար*, իրականում արդար չէ, այլ հենց հակառակը՝ անարդար է: Պետք է նկատել, որ երկխոսության ընթացքում վեց անգամ կիրառվող նույնաբանությունը ոչ բոլոր դեպքերում է նույն իմաստով կիրառվում: Սկզբում այն լսողի/ընթերցողի մոտ ընկալվում է ուղիղ իմաստով, այսինքն՝ այն, ինչ արդար է, անխոս հենց այդպես է: Բոլոր մարդիկ ունեն *արդարություն* հասկացության բավական ընդհանուր ընկալում: Արդարության գաղափարը ինչ-որ չափով կարծրատիպային է, ու դժվար թե գտնվեն շատ մարդիկ, ովքեր արմատապես տարբեր պատկերացումներ ունենան արդարության մասին: Եվ Ջոզեֆ Հելլերը այս հատվածում կարծես հենց *արդարության* այդ կարծրատիպային ընկալման հետ է հնարք կիրառում: Երկխոսության ընթացքում նույնաբանությունը սկսում է աստիճանաբար փոխել իր հաղորդակցական իմաստը: Աստիճանաբար, հիմք ընդունելով համատեքստը, այսինքն՝ այն նախադասությունները, որոնք նախորդում և հաջորդում են հաջորդ չորս *What's fair is fair* նույնաբանությանը, մենք տեսնում ենք, որ նույնաբանությունը իրականում հակառակ իմաստն է արտահայտում, որ այն, ինչ տվյալ խոսքային իրադրությունում համարվում է արդար, իրականում բացարձակապես արդար չէ, ավելի ճիշտ՝ կատարյալ անարդարություն է: Ինչպես հասկանում ենք համատեքստից, փաստորեն Մայլոյի փոխարեն ռազմական թռիչքներ պետք է իրականացնեն այլ օդաչուներ, ու նրանց հաջողությունների համար մեղալ կստանա Մայլոն: Ավելին, այս պատճառով

օղաչունների անձնական թռիչքների քանակը պետք է ավելացնել: Հենց այստեղ էլ հասկանալի է դառնում, որ *What's fair is fair* նույնաբանության միջոցով վեպի հեղինակը փորձել է արտահայտել իր խոր հեզնանքը արդարության հանդեպ: Փաստորեն, նույնաբանական կառույցը դիսկուրսի այս հատվածում դարձել է այն կիզակետը, առանցքը, որի շուրջ ծավալվում է հաղորդակցությունը: Այլ կերպ ասած՝ նույնաբանական կառույցում խտացվել է հաղորդակցական առումով ամենակարևոր տեղեկույթը:

Այն դեպքում, երբ հարցվողները տվյալ նույնաբանությունը մեկնաբանել են՝ այն վերլուծելով համատեքստից դուրս, նրանք հիմնականում եկել են այն եզրահանգմանը, որ այն, ինչ արդար է, ակնհայտ է, ու հավելյալ ապացույցների կարիք չկա: Գրեթե բոլոր հարցվողները տվյալ նույնաբանությունը մեկնաբանել են որպես հաստատում այն պարզ ճշմարտության, որ արդարությունն ամեն ինչից կարևոր է, ու այն, ինչ արդար է, բացարձակ է: Այսինքն՝ պատասխանները անորոշ են և ընդհանրական, քանի որ *what* հարաբերական դերանունը անհասկանալի է, թե ինչին է վերաբերում, ու ըստ էության անհասկանալի է մնում, թե ինչն է արդար: Նմանատիպ շարահյուսական կաղապար ունեցող նույնաբանությունների առաջին բաղադրիչը հիմնականում ներկայացնում է իրավիճակ, իսկ երկրորդը բնութագրում է կոնկրետ իրադարձություն: Տվյալ օրինակում երկրորդական նախադասությունը ինքն իրենով չի հարաբերվում որևէ կոնկրետ իրավիճակի հետ, այն նշանակում է, որ իրավիճակը արդարացի է, մինչդեռ գլխավոր նախադասությունը ունի անհատականացված՝ կոնկրետացված իմաստ. այն վերաբերում է կոնկրետ խոսքային իրադրությանը, որը միայն համատեքստի առկայության դեպքում է ընկալելի դառնում:

Նույնաբանությունների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց հաղորդակցական-գործաբանական արժեքի վերծանման գործում, ի թիվս քննարկված գործոնների, կարևոր նշանակություն ունի նաև հենքային գիտելիքը: Համաձայն Քարբելի և Այսթերհոլդի՝ ցանկացած տեքստ, լինի գրավոր թե բանավոր, ինքն իրենով իմաստ չի արտահայտում: Տեքստն ընթերցողներին կամ լսողներին միայն տալիս է ուղղություն, թե նրանք ինչպես կարող են իմաստ քաղել կամ իմաստ կառուցել իրենց արդեն իսկ ունեցած գիտելիքներից: Լսողի կամ

ընթերցողի արդեն իսկ ունեցած գիտելիքը կոչվում է հենքային գիտելիք (Carrel, Esterhold 2009: 220): Քարրելը նշում է, որ արդեն իսկ ունեցած գիտելիքի, այսինքն՝ հենքային գիտելիքի կառույցները կոչվում են սխեմատաներ (schemata), և առանձնացնում է բովանդակային սխեմատան (content schemata), ինչը վերաբերում է բովանդակությանն առնչվող տեղեկությունին, որը դուրս է լեզվաբանական տեղեկությունից և ներառում է նաև ներմշակութային հենքային գիտելիքներ (Carrel 1983): Անհրաժեշտ է նկատել, որ նույնաբանությունների հաղորդակցական իմաստի վերծանման ժամանակ ևս կարևոր է, որ ընթերցողը/լսողը օգտագործի այն տեղեկությունը կամ այն գիտելիքը, որն առնչվում է տվյալ պահի խոսակցության նյութին, և որին նա արդեն տիրապետում է: Թերևս հենց այս հենքային գիտելիքի տարբերությունը տարբեր մարդկանց մոտ և տարբեր հասարակական շերտերում կարող է միևնույն նույնաբանության համար տարբեր մեկնաբանությունների պատճառ հանդիսանալ: Հենքային գիտելիքը ունի սուբյեկտիվության չափաբաժին, այն տարբեր մարդկանց մոտ տարբեր է՝ պայմանավորված նրանց կրթությամբ, բնավորությամբ, կենսավորված ու մի շարք այլ անհատական պատճառներով: Մեր կատարած հարցման արդյունքում ևս ականատեսը եղանք, թե ինչպես միևնույն նույնաբանությունը տարբեր հարցվողներ տարբեր կերպ են մեկնաբանել: Ստացված պատասխանների համընկնումների կամ իրարից տարբեր լինելու պատճառների քննության ժամանակ էլ պարզվեց, որ կա որոշակի անձնական փորձի վրա հիմնվող հենքային գիտելիք, որը թողնում է իր ազդեցությունը նույնաբանության գործաբանական ներուժի վերծանման գործի վրա: Այժմ դիտարկենք հարցման արդյունքներից վերցված մի քանի օրինակ ու դրանց վրա փորձենք տեսնել, թե որն է հենքային գիտելիքի ազդեցությունը նույնաբանությունը մեկնաբանելու գործում: Մեջբերված հատվածը վերցված է *Express* համացանցային լրատվականի *JESUS CHRIST! Is that what he really looked like?* վերնագրով հոդվածի տակ թողնված մեկնաբանություններից:

Who would know what Jesus Christ looked like?? And what difference does it make anyway?? He is who he is!!! He ultimately will be the Savior for some, the rest should be very afraid!!

(Express, <http://www.express.co.uk/news/science/626779/JESUS-CHRIST-Is-that-what-he-really-looked-like> (accessed 14 December, 2015))

Այս հոդվածում ներկայացվում է, որ մի խումբ գիտնականներ փորձել են վերականգնել Հիսուսի իրական արտաքինը՝ կատարելով քրեական հետաքննության մեջ կիրառվող փորձագիտական ուսումնասիրություններ, ու պարզել, որ Հիսուսի արտաքինը բավական տարբեր է եղել այն Հիսուսից, ում մենք սովոր ենք տեսնել: Բոլոր հարցվողները մինչ այդ տեսել էին Հիսուսի պատկերները ու արդեն իսկ գիտեին, որ նա սովորաբար ներկայացվում է որպես սպիտակամաշկ, հաճախ նաև կապույտ աչքերով ու երկար մազերով գեղեցիկ տղամարդ: Այս տեղեկույթն ունենալով՝ մեջբերված հատվածի նույնաբանությունը նրանք մեկնաբանել են, որ խոսողը գիտի, թե ինչպես է դարեր շարունակ ներկայացվել Հիսուսի արտաքինը, ու նոր ստացված արդյունքները էական չեն, քանի որ Հիսուսի արտաքինի մանրամասները ոչ մի նշանակալի ազդեցություն չեն կարող ունենալ հավատքի վրա: Պատասխանների մեջ հաճախ եղել է նաև այսպիսին՝ կարևորը ոչ թե Հիսուսի տեսքն է, այլ նրա գործերը: Պետք է նշել, որ հարցվողների մեկնաբանությունները այս հատվածի առնչությամբ մեծ մասամբ համընկնում են, ինչը բացատրվում է նրանով, որ հարցման մասնակիցները տեսել էին Հիսուսի նկարներն ու սրբապատկերները այն ձևով, որ մատուցվում է արդեն երկու հազարից ավելի տարիներ, ու հասկացել են, որ նույնաբանությունը կիրառողը հենց այդ արտաքինով ներկայացվող Հիսուսին նկատի ունի՝ ասելով, որ արտաքինը էական չէ, ու կարևորը Հիսուսի ով լինելն է, նրա անձը: Նշենք, որ այս արդյունքները ստացվել են հարցվողների այն խմբից, որոնք նույնաբանությունը քննել են համատեքստի մեջ: Մինչդեռ մյուս խումբը, ում առաջարկվել էր մեկնաբանել *He is who he is!* նույնաբանությունը, բնականաբար չի կարողացել հստակ պատասխանել, թե ում մասին է խոսքը, քանի որ *he* դերանունը չունի որևէ կոնկրետ վերաբերական ու կարող է վերաբերել ցանկացած արական սեռի ներկայացուցչի: Մեկնաբանությունները հիմնականում եղել են այսպիսին՝ *He won't change, You know him*, այսինքն՝ պետք է *նրան* ընդունել այնպիսին, ինչպիսին կա, ու չփորձել փոխել: Այսինքն՝ պետք է նաև անպայման նշել, որ

հենքային գիտելիքից զատ, կարևոր է համատեքստի առկայությունը: Հակառակ դեպքում, ինչպես տեսանք մեր երկրորդ խմբի արդյունքների ուսումնասիրմամբ, անհնար է հասկանալ, թե խոսքը ինչի և ում մասին է, ու ըստ այդմ էլ վերծանել նույնաբանական կառույցը:

Ինչպես երևում է օրինակների քննությունից, հենքային գիտելիքի ընդհանրությունը նպաստում է, որ խոսքնկերներն առանց լրացուցիչ ջանք գործադրելու կարողանան ասույթի բովանդակությունը հարաբերել իրականությանը: Նման դեպքերում նույնաբանական կառույցը ծառայում է հաղորդակցության կարևորագույն սկզբունքներից մեկին. ասույթի արտաքին ձևի սեղմում իմաստային առավելագույն խտացման պարագայում: Այսինքն՝ այս դեպքում նույնպես նույնաբանությունը իրականացնում է խոսքնկերների ջանքերի և ժամանակի տնտեսման սկզբունքը: Ջ. Իրվինի *The World According to Garp* գրոտեսկային վեպից վերցված օրինակում Գարպը և նրա կինը ունեն ընդհանուր հենքային գիտելիք: Նրանք երկուսն էլ գիտեն Էլեն Ջեյմսի պատմությունը: Վերջինիս գազանաբար բռնաբարել են, հետո էլ լեզուն կտրել, որպեսզի աղջիկը չկարողանա նկարագրել հանցագործներին: Ամուսինները տեղյակ են նաև այսպես կոչված *էլենջեյմսականների* մասին, որոնք, ի բարոյական պաշտպանություն Էլեն Ջեյմսի, կտրել են իրենց լեզուները: Իրականում Էլեն Ջեյմսը ասում էր իր *հետևորդներին*, որոնք բավականին սահմանափակ կանայք էին և ունակ չէին նախաձեռնելու որևէ արժեքավոր հասարակական գործողություն.

Jesus, in another year no one would have remembered them – or why **they did what they did**. They were a fashion, a stupid fashion. (IJ WAG: 554)

Դիտարկենք ևս մեկ օրինակ՝ ուշադրություն դարձնելով նույնաբանության մեկնաբանության գործընթացում հենքային գիտելիքի դերին.

When the play is “finished”, the processes of collaboration have yet to begin. The serious work of the dramatist is over, but the most desolating part of his toil awaits him. I do not refer to the business of arranging with a theatrical manager for the production of the play. For, though that generally partakes of the nature of

`amusing burlesque, owing to the fact **that theatrical managers are – no doubt inevitably – theatrical**. Nevertheless, even the theatrical manager, while disclaiming the slightest interest in anything more vital to the stage than the box-office, is himself in some degree a collaborator and in the first to show to the dramatist that **a play is not a play till it is performed**. The manager reads the play, and, to the dramatist's astonishment reads quite a different play... (BA AC: 266)

Նույնաբանությունը համատեքստում դիտարկած հարցվողների 75%-ը մեկնաբանել է, որ պիեսը հնարավոր է տեսնել ու գնահատել միայն այն ժամանակ, երբ այն բեմադրված է, իսկ 25%-ի մեկնաբանությունների ընդհանուր պատկերն այն է, որ քանի դեռ պիեսը բեմադրված չէ, այն չի կարող այդպիսին համարվել: Անշուշտ, այսպիսի մեկնաբանություններ անելու համար անհրաժեշտ է հիմնվել նաև համատեքստի վրա: Հարցվողները մասնավորապես առանձնացրել են *The serious work of the dramatist is over, but the most desolating part of his toil awaits him*. Այստեղից հասկանալի է դառնում, որ թեպետ պիեսը հանձնված է թղթին, սակայն հիմնական աշխատանքը դեռ առջևում է: Այս մասին է վկայում նաև չակերտների մեջ վերցված *finished* բառը, ինչը ցուցիչն է այն բանի, որ իրականում պիեսը դեռ ավարտված չէ: Հարցվածներից ոմանք, ովքեր ինչ-որ չափով տեղյակ են թատրոնից կամ կինոարդյունաբերությունից, իրենց մեկնաբանության մեջ նշել են, որ այդ ոլորտներում բուն աշխատանքը սկսվում է տեքստի պատրաստ լինելուց, սակայն միայն պիեսի տեքստն ունենալը դեռ գրեթե ոչինչ չի նշանակում: Նրանցից մեկը մասնավորապես գրել էր *There are lots of scripts but who cares!* նկատի ունենալով, որ պիեսի բարդությունը այն բեմադրելն է: Հարցվողների երկրորդ խումբը, ովքեր *a play is not a play* նույնաբանությունը մեկնաբանել են առանց համատեքստի, տվել են այլ մեկնաբանություններ: Նրանց գերակշիռ մասը, գրեթե 100%-ը, նույնաբանությունը վերձանել է այսպես. ներկայացումը վատն է կամ չափազանց վատն է, այնքան վատն է, որ նույնիսկ ներկայացում անվանելն է անհնար: Անդրադառնալով սույն նույնաբանության կառուցվածքին՝ անհրաժեշտ է նշել, որ այն համարժեք նույնաբանության մերժումն է, այսինքն՝ *a is -a* կառույցի նույնաբանությունն է: Այստեղ երկրորդ *play*-ը հերքում է առաջին *play*-ի

նշանակությունը, և կառույցում ներակայված իմաստը ինքն իրեն հերքելն է: Մյուս կողմից՝ այս նույն միտքը կարելի է վերաձևակերպել մեկ այլ նույնաբանական կառույցի միջոցով՝ **a play is (becomes) a play after it is performed**: Կարծում ենք՝ այստեղ արժե անդրադառնալ նույն հատվածում տեղ գտած մեկ այլ նույնաբանական կառույցի՝ *theatrical managers are – no doubt inevitably – theatrical*, որը կարելի է բնորոշել որպես զեղչված կառույց, եթե համարենք, որ կառույցի երկրորդ գոյականական անդամը, այսինքն՝ ստորոգելիի մաս կազմող գոյականը զեղչվել է: Արդյունքում *theatrical managers*-ին վերագրվող հատկանիշը ոչ թե *theatrical managers*-ն է, այլ միայն *theatrical*-ը, ինչն էլ ստեղծում է որոշակի հեզնական ներիմաստ՝ շեշտելով թատերական մենեջերների շինծու էությունը, որովհետև նրանք իրականում ավելի հետաքրքրված են բեմադրության ֆինանսական, այլ ոչ զեղարվեստական հաջողությամբ:

Փաստացի տեսանք, որ այն դեպքում, երբ նույնաբանությունը քննվել է համատեքստում, հարցվողները ի վիճակի են եղել թափանցելու դրա նշանակության մեջ, իսկ ոմանք էլ, օգտագործելով իրենց իմացությունը թատրոնից, ավելի խորությամբ են հաղորդակից եղել նույնաբանության հեղինակի հաղորդակցական նպատակին: Մինչդեռ առանց հենքային գիտելիքի և համատեքստի անհնար է եղել հասկանալ, թե ինչ է մեջբերման հեղինակը փորձել ասել նույնաբանությունների միջոցով:

Դիտարկենք ևս երկու նմուշ, որոնցից մեկում նույնաբանությունը հանդես է գալիս որոշակի լեզվական համատեքստում: Վերջինս ստեղծում է այն մեկնաբանելու համար անհրաժեշտ իմաստային դաշտ, իսկ երկրորդ դեպքում նույնաբանությունը կդիտարկենք առանց համատեքստի:

The longer I stayed in Azizya, the older I got, the less I liked life. It wasn't enough to be safe and to be home, because **home wasn't home** anymore. Because we no longer trusted the Turks, our lives were now confined to the Armenian quarter. The Turks I knew or spoke to in Azizya all said they were sorry about what had happened. They blamed the government« not the civilian population, which they said was innocent. It was true that many had harboured Armenians and had

protested their treatment by the gendarmerie, the bashibouzouks *irregulars* and the Kurdish brigands, but it was impossible now for us to trust the Turks again or to forgive them. (KD RFH: 268)

Այս հատվածում մեկնաբանողը նույնաբանության հաղորդակցական-գործաբանական արժեքը վերծանելիս հիմնվել է այն տեղեկության վրա, որ փոխանցվում է համատեքստով և հարատեքստով: Այսպես՝ նա տեղյակ է, որ մեջբերվող հատվածն արտաբերողը՝ խոսողը, այլևս չի կարող վստահել թուրքերին, նույնիսկ եթե նրանք ասում են, որ շատ են ցավում կատարվածի համար: Նա իրեն անվտանգ չի զգում իր մանկության տանը, քանի որ միջավայրը լիովին փոխվել է: Այժմ կյանքը սահմանափակվել է միայն հայկական թաղամասով, ու տունն այլևս մանկության այն տունը չէ, որը նա գիտեր: Այստեղ ենթադրվում է, որ ինչ-որ սարսափելի դեպքեր են կատարվել, որոնց մասին ուղղակիորեն չի նշվում հատվածում, որոնք, սակայն, հիմք են ծառայում նման մտքեր արտահայտելու համար: Հենց այս համատեքստային և հարատեքստային առանձնահատկություններից հասկանալի է դառնում, որ տունն այլևս հարմարավետ չէր: Ստացվում է, որ տվյալ նույնաբանությամբ ներակայված իմաստն այս դիսկուրսում այն է, որ տունը, որտեղ խոսողը իրեն հարմարավետ ու ապահով էր զգում ու համարում ջերմ անկյուն, այլևս դադարել է այդպիսին լինելուց: Ըստ էության բուն նույնաբանության մեջ ոչինչ ուղղակիորեն չի մատնանշում հենց հարմարավետության հանգամանքին: Սա ցույց է տալիս, որ նույնաբանության գործաբանական ներուժի վերծանումն իրականացվել է համատեքստի անմիջական դերակատարմամբ: Համատեքստն ու հարատեքստը ըստ էության տալիս են այն անհրաժեշտ տեղեկությունը, որի հիման վրա ընթերցողը եկել է իր եզրահանգմանը: Թուրքերի հանդեպ անվստահությունը, հայկական թաղամասի սահմաններից դուրս չգալը ստեղծում են այն իմաստային դաշտը, որի տարածքում *տունը այլևս տուն չէր* լեզվական կառույցը նշանակում է, որ շատ բաներ անվերադարձ փոխվել են, ու այն ինչ ճիշտ էր ասել մի բանի մասին մի ժամանակ, այլևս ճիշտ չէ:

Home wasn't home նույնաբանությունը հետաքրքրական է նաև կառուցվածքային տեսանկյունից, մասնավորապես, որ ժխտական է: Նախկինում լեզվաբանները, քննելով նույնաբանությունները, հիմնականում դիտարկել են հաստատական կառույցներ, ինչպիսիք են, օրինակ, *Boys will be boys* կամ *The law is the law*: Եթե հաստատական նույնաբանությունների պարագայում ճիշտ է Վորդի և Հիրշբերգի (Ward, Hirschberg 1991) այն պնդումը, թե նույնաբանական կառույցը բացառում է այլընտրանքային տարբերակների հավանականությունը՝ մատնանշելով այն միակ հնարավոր տարբերակը, որը հենց նշվում է նույնաբանական կառույցում, ապա ժխտական նույնաբանությունների պարագայում այդ պնդումը դառնում է կրկնակի ժխտում: Այսպես՝ մի կողմից *home wasn't home* կառույցը թեպետ ժխտական է, սակայն մենք այն չենք ընկալում, որ *տունը այլևս տուն չէր* այլ *նավ* կամ *ավտոտնակ* կամ մեկ այլ այլընտրանքային տարբերակ, մյուս կողմից էլ տեսնում ենք, որ *տունը* իրականում *տուն* չէ: Այստեղից հետևություն է արվում, որ խոսողը նկատի ունի, որ ոչ թե տունը մեկ այլ կառույց է դարձել, այլ կորցրել է իր ամենակարևոր հատկանիշներից մեկը: Կրկին դիմենք Օքսֆորդի բառարանին՝ *home* բառի իմաստները ստուգելու համար:

Home

- 1) House. Etc. The house or flat/apartment that you live in« especially with your family: We are not far from my home now. 1. *Old people prefer to stay in their own homes.*
- 2) Town/Country The town, district, country, etc. that you come from« or where you are living and that you feel you belong to: Jane left England and made Greece her home.
- 3) Family used to refer to a family living together, and the way it behaves: 1. She came from a violent home. 2. He had always wanted a real home with a wife and children. (Oxford Advanced Learner's Dictionary 2005)

Այստեղ տեսնում ենք, որ *տուն* բառի միայն բառարանային առաջին իմաստն է վերաբերում դրա ֆիզիկական տեսքին, կառույցին, մինչդեռ երկրորդ ու երրորդ իմաստները վերաբերում են այն միջավայրին, շրջապատին ու իրականությանը, որը կապված է տան, ընտանիքի հետ: Քննվող նույնաբանության կառույցի մեջ

առաջին *home*-ն արտահայտում է բառի առաջին բառարանային իմաստը՝ ֆիզիկական հատկանիշները, իսկ կառույցի երկրորդ *home*-ը արտահայտում է երկրորդ ու երրորդ իմաստները՝ ժխտական ձևով: Այսպիսով՝ մի կողմից նույնաբանությունը բացառում է այլընտրանքային տարբերակները, իսկ մյուս կողմից՝ ժխտում այն իմաստները, որոնք վերաբերում են տան ամենաբնորոշ հատկանիշներին:

Այժմ դիտարկենք *home wasn't home* նույնաբանությունն առանց համատեքստի: Մեր կողմից իրականացրած ուսումնասիրության արդյունքում, որի ժամանակ հարցվողները պետք է առանց համատեքստի փորձեին մեկնաբանել նույնաբանությունը, ստացվել են մի շարք պատասխաններ, որոնք կա՛մ ընկալում են կորստի առկայությունը, սակայն չեն ընկալում դրա ահագնացող չափը (սա արտահայտվում է նրանց մեկնաբանությունների մեջ), կա՛մ էլ ընդհանրապես չեն ընկալում կառույցի հաղորդակցական-գործաբանական արժեքը որպես կորուստ, ինչպես այս օրինակում.

Totally fine – there are lots of country songs with this phrase too ☺

Հարցվողը կարծիք է հայտնել, որ տվյալ նույնաբանությունը իմաստային ու գործաբանական առումով բավարար է, և այն ասոցացվել է քանթրի ոճի երգերի հետ: Այս նույնաբանությունը նա մեկնաբանել է՝ հիմնվելով հարատեքստի, մասնավորապես քանթրի ժանրին բնորոշ առանձնահատկությունների վրա: Նրա մոտ դրական էմոցիաներ է առաջացնում նույնաբանությունը, ինչը պայմանավորված է հանրային համատեքստում այս արտահայտության կիրառության իր անձնական փորձով: Ուշագրավ է հարցվողի պատասխանի վերջում դրված ժպիտի էմոտիքոնը: Սա բացահայտ կերպով ցույց է տալիս, որ հարցվողը բացարձակ ոչ մի բացասական լիցք չի ստացել նույնաբանական կառույցից: Ընդհակառակը՝ միայն հաճելի զգացողություններ: Դիտարկենք ևս երկու մեկնաբանություն տվյալ նույնաբանական կառույցի հաղորդակցական-գործաբանական արժեքի վերաբերյալ: Հարցվողներից մեկը նշված նույնաբանությունը համատեքստից դուրս մեկնաբանել է հետևյալ կերպ.

Change is inevitable.

Ըստ նրա՝ նույնաբանության արտահայտած իմաստը փոփոխության անխուսափելի լինելն է: Նա նույնաբանության նշանակությունը դիտարկում է ոչ թե որպես կորուստ, այլ մի վիճակից անխուսափելի անցում մեկ այլ վիճակի: Մեկ այլ հարցվող այս նույն նույնաբանությունը համատեքստից դուրս մեկնաբանել է հետևյալ կերպ.

Home changed.

Այստեղ հարցվողը նույնաբանության արտահայտած ներիմաստը կրկին համարել է փոփոխությունը: Վերլուծության արդյունքները փաստում են, որ սույն նույնաբանական կառույցը համատեքստից դուրս հարցվողների մոտ ընդհանուր առմամբ կա՛մ դրական վերաբերմունք է առաջացրել, կա՛մ էլ ընկալվել է որևէ նոր փոփոխությունների, նոր ակնկալիքների իմաստով: Հարցվողների համար էականը դարձել է *տուն* բառի իմաստների տարբերությունը: Առաջին դեպքում՝ որպես կառույց, կացարան իմաստով, իսկ երկրորդ դեպքում՝ որպես ջերմ միջավայր ու ընտանեկան ապահովվածության զգացողություն փոխանցող բառեր:

Այժմ Սամանթա Փաուերի հեղինակած *A Problem from Hell: America and the Age of Genocide* (2003) գրքից վերցված հատվածի վերլուծությամբ պարզենք, թե սովյալ հաղորդակցական իրադրությունում կիրառված նույնաբանական կառույցը ինչ հաղորդակցական-գործաբանական արժեք է ձեռք բերում:

Others were critical not so much of Lemkin’s definition as his apparent naiveté. His innovation was interesting, they said, **but a word is a word is a word**. Merely affixing the genocide label would not necessarily cause statesmen to put aside their other interests, fears, or constraints. Even if lawyers in Madrid had adopted Lemkin’s proposal, they noted, neither the existence of the label nor the application of it would have affected Hitler’s decision-making, his ideology, or the outside world’s lethargic response to his crimes. Lemkin met those criticisms with

defensive bombast. He told a North Carolina audience that the rejection of his Madrid proposal was “one of the thousand reasons why... your boys are fighting and dying in different parts of the world at this very moment. (PS PH: 296)

Նույնաբանական կառույցը վերլուծելու համար մեզ անհրաժեշտ է ունենալ գիտելիքային հենք, տեղյակ լինել հարատեքստին, օգտագործել համատեքստը ու փորձել այս գործոնների օգնությամբ վերծանել նույնաբանական կառույցը: Մեջբերումը վերցված է Ռաֆայել Լեմկինի մասին պատմող հատվածից: Որպես հենքային գիտելիք այստեղ պետք է իմանալ, թե ով է Լեմկինը, ինչ գործունեությամբ է նա զբաղվել, մասնավորապես *Genocide* եզրի միջազգային ճանաչման ու միջազգային աստիճանում այն քրեականացնելու համար ինչ ջանքեր է ներդրել, անհրաժեշտ է տեղյակ լինել, թե ինչպիսի դժվարություններ է նա հաղթահարել ու ինչ համառ պայքար է մղել այդ եզրը ստեղծելու և ամրագրելու համար: Տվյալ նույնաբանությունը մեկնաբանելիս ընթերցողի/ստղի համար կարևոր է նաև այն հենքային գիտելիքը, որ այժմ Ցեղասպանությունը (*Genocide*) միջազգային հանցագործություն է, որը չունի վաղեմության ժամկետ: Այս հիմքի վրա արդեն հնարավոր է դառնում դիտարկել համատեքստը՝ որպես նույնաբանական կառույցի անմիջական միջավայր, որտեղ այն ձեռք է բերել իր հաղորդակցական-գործաբանական ներուժը: Հենց առաջին նախադասությունից հասկանալի է դառնում, որ Լեմկինի առաջ քաշած եզրույթը առանձնապես մեծ ոգևորությամբ չի ընդունվել, ու դրա ընդունումից հետո մեծ փոփոխությունների հույսեր չեն առաջացել: Սա հասկանալի է ...*Others were critical not so much of Lemkin's definition as his apparent naiveté* նախադասությունից, որտեղ Լեմկինին նույնիսկ միամտության մեջ են մեղադրում: Ու հենց այս վերապահումով մոտեցումն ավելի ամրապնդելու համար կիրառվում է *but a word is a word is a word* նույնաբանական կառույցը: Այստեղ կարևոր ենք համարում կառույցը դիտարկել *but* շաղկապի հետ միասին: Թեպետ շաղկապը բուն նույնաբանական կառույցի մաս չէ, սակայն այն հաղորդում է երանգ, տվյալ դեպքում՝ հավատի բացակայություն, ոչ վստահելի լինելու վերաբերմունք, որն ընթերցողի մոտ որոշակի տրամադրվածություն է առաջացնում նույնաբանության նշանակության

հանդեպ: Բուն նույնաբանական կառույցն ունի հետևյալ բանաձևը՝ *a is a is a*, ինչը, ելնելով մեր փաստական նյութից, պետք է վստահ կերպով ասել, որ շատ հազվադեպ հանդիպող կառույց է: Եթե սովորաբար նույնաբանություններին բնորոշ է շրջանաձև կառույց, երբ գոյականն անդրադառնում է ինքն իրեն, ապա այստեղ կա երեք բաղադրիչ՝ երեք “a” (*word*): Սակայն ուշադիր նայելով՝ հնարավոր է դառնում իմաստային բաժանաբար տանել այս երեք a-երի միջև և արդյունքում ստանալ հետևյալ բանաձևը՝ (*a is a*) *is a*: Ստացվում է, որ երկրորդ a-ն առաջին a-ի համար հանդես է գալիս ստորոգելիական (*predicative*) գործառույթով: Այն բնորոշում է առաջին a-ին՝ հստակեցնելով դրա գոյականական իմաստի դաշտն ու կոնկրետացնելով այն իմաստը, որը տվյալ դեպքում արտահայտում է a-ն: Այժմ, օգտվելով Օքսֆորդի բառարանից, դուրս բերենք *word* բառի իմաստները և փորձենք պարզել, թե դրանցից որն է այստեղ կիրառվել:

Word

- 1) Unit of language – a single unit of language which means sth and can be spoken and written: 1) Do not write more than 200 words. 2) Do you know the words to this song? 4) What's the Spanish word for 'table'? [...]
- 2) Sth you say – a thing that you say; a remark or statement: 1) Have a word with Pat and see what she thinks. 2) Could I have a quick word with you (=speak to you quickly). 3) A word of warning: read the instructions very carefully [...]
- 3) Promise – a promise or guarantee that you will do sth or that sth will happen or is true: 1) I give you my word that this won't happen again. 2) I give you my word of honour (my sincere promise) 3) We never doubted her word.
- 4) Information/News – a piece of information or news: There has been no word from them since before Christmas. 2) She sent word that she would be late. 3) If word gets out about the affair, he will have to resign. 4) Word has it that she's leaving. [...]

Այստեղ ներկայացված են *word* բառի գոյականական իմաստները: Եթե փորձենք այս իմաստները հերթով տեղադրել մեր բանաձևի մեջ ու սկսենք վերջից՝ չորրորդ իմաստից, ապա միանգամից ակնհայտ կդառնա, որ մեր նույնաբանության

մեջ *information* իմաստը չէ նկատի առնված, քանի որ դա չէր համապատասխանի ընդհանուր համատեքստային իմաստին: Մինչդեռ երրորդ իմաստը համապատասխանում է մեր բանաձևի երկրորդ *word*-ին այն դեպքում, երբ ընդունում ենք, որ առաջին *word*-ը արտահայտում է *word*-ի բառարանային առաջին իմաստը՝ լեզվի միավոր: Ստացվում է, որ եթե փակագիծը բացենք, կստացվի հետևյալ պատկերը («լեզվի միավորը» «երաշխիք է») *is a (word)*: Այժմ կրկին անդրադարձ կատարենք համատեքստին ու հարատեքստին և փաստենք, որ այս նույնաբանությունը կիրառվել է Լեմկինի քննադատների կողմից, ովքեր չէին հավատում, թե նրա առաջ քաշած *Genocide* հասկացությունն ու եզրույթը էական դեր կունենան քաղաքականության մեջ ու կզսպեն ագրեսորներին հետագայում և կստիպեն զերծ մնալ մարդկության դեմ կատարվելիք ոճիրներից:

Այս տեղեկույթը հաշվի առնելով՝ կարող ենք արձանագրել, որ երրորդ *word*-ը արտահայտում է *word* բառի երկրորդ բառարանային իմաստը՝ այն է՝ մի բան, որ ասում ես: Արդյունքում ունեցանք հետևյալ բանաձևը՝ («լեզվի միավորը» «երաշխիք է») «խոսք է»: Եթե փորձենք ավելի պարզ ներկայացնել, կստացվի, որ եզրույթը, որը Լեմկինն առաջարկել է որպես մարդկության որևէ էթնիկական խմբի ոչնչացման դեմ ուղղված երաշխիք, ընդամենը խոսք է և ոչ մի իրական գործողություն չի նախատեսում կամ ենթադրում:

Նման կառույցով նույնաբանության մեկ այլ շատ հետաքրքիր և ինչ-որ չափով էլ խորհրդավոր օրինակ է Գերտրուդ Ստայնի 1913 թվականին գրված և 1922 թվականին *Geography and Plays* գրքում տպագրած *Sacred Emily* բանաստեղծության մի հատված: Դիտարկենք այն.

1. Rose is a rose is a rose is a rose

Loveliness extreme.

Extra gaiters

Loveliness extreme

Sweetest ice-cream

Pages ages pade ages ages

Այս նույնաբանական կառույցը Ստայնի ամենասիրելի տողերից էր, ու նա այլ տեղերում էլ է այն կիրառել հետևյալ ձևակերպումներով.

2. Do we suppose that all she knows is that **a rose is a rose is a rose is a rose**.
(Operas and Plays)
3. ... she would carve on the tree **Rose is a Rose is a Rose is a Rose is a Rose** until it went all the way around. (The World is Round)
4. A rose tree may be **a rose tree may be a rosy rose tree** if watered.
(Alphabets and Birthdays)
5. Indeed **a rose is a rose** makes a pretty plate. (SG GP: 1922)

Ուսումնասիրելով նշված կիրառությունները՝ առաջին բանը, որ, իհարկե, նկատում ենք, *rose* (վարդ) բառի բազմակի կրկնությունն է: Եթե դուրս բերենք բանաձև, ապա կստացվի *a is a is a is a*: Մինչ այժմ մեր կողմից ուսումնասիրված նույնաբանական կառույցների նմուշներում գոյականական անդամը կիրառվել է հիմնականում երկու անգամ՝ գոյականական ու ստորոգելիական դիրքով, այսինքն՝ հետևյալ կառույցներով *a is a*; *when a then a*; *if a a, whenever a a*; *either a or -a* կամ *a is a and b is b*: Սակայն այս օրինակում ոչ միայն ու ոչ թե գոյականական անդամի ավելի քան երկու անգամ կիրառություն կա, այլ ընդհանրապես թվում է՝ չկա սահմանափակում, թե քանի անգամ կկիրառվի գոյականական անդամ *rose*-ը: Դիտարկելով երրորդ օրինակը՝ մենք տեսնում ենք, որ Ստայնը ասում է, որ տվյալ նույնաբանական կառույցը գրվում է ծառի բնին, մինչև գրվածքը շրջանաձև պտտվի բնի շուրջ, և նախադասության սկիզբն ու վերջը միանան միմյանց: Իսկ երբ միանան, փաստացի անհնար կդառնա գտնել սկիզբն ու վերջը: Կդառնա փակ շղթա, որը եթե փորձենք բանաձևով արտահայտել, ապա կստացվի *a is a is a ad infinitum*: Ընդ որում՝ սրանով էլ թերևս կարելի է բացատրել Ստայնի կողմից ցուցաբերվող *անհետևողականությունը* *rose* բառի կիրառության քանակի հանդեպ. ինչպես տեսնում ենք, որոշ տեղերում այն երեք անգամ է կիրառվում, իսկ այլ տեղերում՝ երեքից ավելի: Սակայն որպեսզի կարողանանք թափանցել տվյալ կառույցի իմաստի մեջ, ապա պետք է այդ անվերջ շարունակվող շղթան

ընդհատենք որևէ մասում ու փորձենք մեկնաբանել այդ հատվածը: Այնուհետև ստացված արդյունքը հնարավոր կլինի տարածել ամբողջ անվերջանալի կառույցի վրա: Քանի որ, եթե միատարր նյութի մի մասնիկի համար որևէ հատկանիշ ճիշտ է, ապա դա ճիշտ է ամբողջի համար նույնպես: Վերցնենք առաջին օրինակի կառույցը՝ *Rose is a rose is a rose is a rose* նմուշը: Այստեղ թերևս պետք է սկսել Ստայնի պոեզիայի ու արվեստի ուղղության ընկալումից, այսինքն՝ մեզ որոշակի հենքային գիտելիք է անհրաժեշտ: Ստայնը մոդեռնիստական շրջանի առաջամարտիկ արվեստագետ էր, արվեստի փորձարար և նորարար, ով գրում էր սիմվոլներով հարուստ գործեր: Անձամբ ինքն այս արտահայտությունը մեկնաբանել է հետևյալ կերպ, որ Հումբոլտի և Չոուսերի ժամանակներում, երբ բանաստեղծն օգտագործում էր որևէ առարկայի կամ երևույթի անուն, այդ առարկան կամ երևույթը հենց այդտեղ էր: Սակայն ժամանակների փոփոխությանը զուգահեռ առարկայի ու բառի միջև անմիջական կապը, շփումը կորսվեց, և իրը, երևույթը կորցրեց իր ինքնությունը: Հենց այս ինքնությունն էր Ստայնը փորձում վերականգնել իր տվյալ նույնաբանական կառույցով: Ստացվում է, որ նույնաբանության գոյականական անդամը՝ *rose*-ը կրկնելով՝ Ստայնը փորձում է մոտենալ հենց *վարդ* երևույթին: Նա ասում է, որ այս կառույցում անգլիական գրականության մեջ վերջին հարյուր տարվա մեջ առաջին անգամ վարդը կարմիր է: Այսինքն՝ վարդի կենդանությունն ու գույնը հնարավորինս ընդգծելու համար նա նույնաբանություն է օգտագործել: Պետք է նաև նշել, որ ասելով *վարդ*՝ մարդկանց գիտակցության մեջ որոշ կարծրատիպային նշանակություններ են ակտիվանում՝ գեղեցիկ ծաղիկ, անուշ բույր և այլն: Իսկ երբ այս բառն արդեն մի քանի անգամ է կրկնվում, առավել ևս բազմաթիվ անգամներ, ապա այդ պատկերի ուժգնությունն էլ համապատասխանաբար ուժեղանում է: Եթե փորձենք բանաձևել այս կառույցը, ապա կստացվի հետևյալ պատկերը՝ ((a is a) is a) is a: Այսինքն՝ ամեն *a rose* լրացվում է հաջորդ *is a rose*-ի միջոցով, այնուհետև այդ երկուսը միասին լրացվում են արդեն հաջորդ *is a rose*-ի կողմից ու այդպես շարունակ: Ամեն հաջորդ *a rose* ունի պրեդիկատիվ իմաստ իր նախորդ *a rose*-ի համար և միևնույն ժամանակ ունի սուբյեկտի իմաստ իրեն հաջորդող *a rose*-ի համար: Եվ յուրաքանչյուր հաջորդ *rose* ավելի է ընդգծում, խտացնում *վարդի* պատկերը ընթերցողի/լսողի գիտակցության

մեջ: Այսինքն՝ նույնաբանական կառույցի ուրույն կաղապարը Ստայնին հնարավորություն է տվել իրագործելու իր գեղագիտական նպատակը:

Այսպիսով, ինչպես ցույց տվեցին փաստական նյութի մեր քննությունը և իրականացված հարցման արդյունքները, ակնհայտ է և անհերքելի համատեքստի, հարատեքստի, խոսքերի ընդհանուր և հենքային գիտելիքի դերը նույնաբանությունների մեկնաբանման ու դրանց գործաբանական ներուժի վերծանման գործում: Խոսքային իրադրությունն ու պայմանները նպաստում են նույնաբանության նշանակության կոնկրետացմանը: Հաճախ նույնաբանությունը լեզվում ձեռք է բերում կարծրատիպային արժեք և ստանում կայուն իմաստ, որը, սակայն, կախված հարատեքստային/համատեքստային առանձնահատկություններից, կարող է ձևավորել այս կամ այն իմաստային բնութագիրը և դիսկուրսին հաղորդել որոշակի գործաբանական ուղղվածություն: Այսպիսով՝ կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել համատեքստի և հարատեքստի կարևորագույն դերը նույնաբանական կառույցներում արտահայտված ներակա տեղեկատվության բացահայտման գործընթացում: Ամփոփելով՝ փորձենք պատասխանել սույն գլխում մեր առաջ քաշած հարցադրմանը, որո՞նք են նույնաբանական կառույցներում կողավորված գործաբանական ներուժի վերծանման գործիքները, որոնք հնարավորություն են տալիս լսողին/ընթերցողին ընկալվող խոսքը վերածել իմաստի: Կարևոր է նշել այն հանգամանքը, որ հետևելով խոսողի մտքի շարադրման ընթացքին՝ լսողը հասկանում է ոչ միայն այն, ինչ բառացիորեն ասվում է իրեն, այլև այն, ինչ հաղորդվում է, այսինքն՝ ներակայվում է կամ ակնարկվում: Եվ քանի որ նույնաբանական կառույցը ինքնին ներակայում պարունակող կաղապար է, ուստի հասկացման ընթացքում լսողի համար կարևոր է դառնում նույնաբանության ներակա իմաստի և հաղորդակցական ներակայման հասկացումը: Փաստորեն, նույնաբանության գործաբանական ներուժի ապակողավորման գործընթացը ենթադրում է տրամաբանական կառույցով հանդես եկող կողավորված բառային հասկացույթի փոխարինում նրա համատեքստայնացված տարբերակով: Այսինքն՝ տվյալ հաղորդակցական իրադրությունը, իր բաղադրիչներով հանդերձ, հնարավոր է դարձնում, բացառելով երկիմաստությունը, նույնաբանական կառույցին

(հատկապես երկրորդ անդամին) վերագրել այն իմաստը, որն ակտիվանում է և խտանում տվյալ խոսքային իրադրությունում: Այլ կերպ ասած՝ լսողը լեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությամբ առկա իմաստային ենթաշերտերից առանձնացնում է առաջնայինը, որը համատեղելի է տվյալ իրադրությանը, և այսպիսով քացահայտում խոսողի հաղորդակցական մտադրությունն ու ապակողավորում նույնաբանական կառույցի գործաբանական ներուժը:

Ծանոթագրություններ

1. Ըստ Վան Դեյկի և Վ. Քինչի՝ գիտելիքի կառավարման մարտավարությունը մեծ մասամբ պայմանավորված է լսողի/ընթերցողի տեսակետներով ու սուբյեկտիվ գնահատականներով: Քանի որ հասկացումը կարևոր ճանաչողական գործընթաց է, դիտարկենք դիսկուրսի հասկացման՝ Վան Դեյկի և Վ. Քինչի կողմից մշակված մարտավարական կադապարի տարրերը.

ա) Ստորոգման իմաստի ռազմավարության փուլ: Այս փուլում բառերի, շարահյուսական կառույցների ռազմավարական գիտելիքի հիման վրա ստեղծվում է ստորոգման իմաստը:

բ) Տեղային կապակցվածության փուլ: Այս փուլում գործում է տեղային կապակցվածություն հաստատելու մարտավարությունը, և նախադասությունները իրար են կապվում: Դա կատարվում է նախադասությունների շարահյուսության և կապակցող լեզվական միջոցների օգնությամբ:


գ) Մակրոռազմավարությունների փուլ: Այս փուլում իրար հաջորդող ստորոգման իմաստների համակցում է տեղի ունենում, ինչի հետևանքով կազմավորվում է տեքստի մակրոկառույցը, այսինքն՝ ձևավորվում է ընդհանուր թեման, բովանդակությունը:

դ) Գծապատկերային ռազմավարությունների փուլ: Սա պատմամշակութային առանձնահատկություններով պայմանավորված գծապատկերային կառույց է, որում արտացոլված է տեքստի համընդհանուր բովանդակությունը: Այս փուլում ստեղծվող գերկառույցներն ունենում են ժանրային տարբերություններ:

ե) Խոսքաստեղծման ռազմավարությունների փուլ: Այս փուլում խոսողի հիմնական խնդիրն է լսողին ներկայացնել քննարկվող թեման: Այդ նպատակով նա ստեղծում է տեքստի մակրոկառույցների իմաստային պլանը՝ կիրառելով ընդհանուր գիտելիքների տարրերը, իրադրային կադապարի մասին իր ունեցած գիտելիքը, ինչպես նաև հաշվի առնելով լսողի գործոնը՝ նրա գիտելիքի կադապարը, դրդապատճառները, մտադրությունները և այլն (Дейк Ван, Кинч В. 1988: 163-172):

Ինչպես տեսնում ենք, հասկացման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է ակտիվացնել գիտելիքի դաշտը և այն կարծիքները, դիրքորոշումները, հույզերը, որոնք անհրաժեշտ են ընթերցողին/լսողին կապակցված տեքստի բովանդակությունն ու գրողի/լսողի հաղորդակցական մտադրությունը գնահատելու համար:

2. Հաղորդակցական իրադրության համատեքստի առավել ամբողջական պատկերը տեսնում ենք Ջ. Ֆերսխուերի հետևյալ գծապատկերում (Verschueren 2011)



3. Գործաբանության մեջ հարատեքստի ուսումնասիրությունն ընթանում է մի քանի ուղղություններով: Մի դեպքում քննության է առնվում խոսքային ակտերի և հարատեքստի փոխհարաբերությունը (Duranti, Goodwin 1992; Garfinkel 1967), իսկ մի այլ դեպքում առաջնային է համարվում համատեքստի և հարատեքստի հարաբերակցությունը, այսինքն՝ անդրադարձ է արվում լեզվական ցուցայնության, զեղչման, փոխարինման, վերաբերության, բառային միջոցների կրկնության և արտալեզվական մի շարք գործոնների (խոսող, խոսընկեր, հենքային գիտելիք,

խոսքային իրադրություն) առանձնահատկությունների քննությանը կապակցված խոսքում (Halliday, Hasan 1976; Levinson 1983; McCarthy 1991; Պարոնյան 2011):

4. Համատեքստը բավականին նեղ հասկացություն է և առնչվում է կոնկրետ տեքստին, դրանում կիրառված կապակցման միջոցներին, իսկ հարատեքստն ընդգրկում է տվյալ հաղորդակցական համատեքստին հարող հսկայական իմաստային մի դաշտ, որը կարևոր դեր ունի ասույթների գործաբանական իմաստը ճիշտ մեկնաբանելու գործում (Widdowson 2004; Պարոնյան 2011):

Քննության առնելով հարատեքստին բնորոշ գծերը՝ Փ. Աուերը տարբերակում է դրա հետևյալ տարատեսակները. 1. լեզվական, 2. հանրային, 3. իրադրային (այսինքն՝ այն ֆիզիկական միջավայրը, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը), 4. մասնակիցների հենքային գիտելիքները (ինչը չի ներառում վերոնշյալ 1-3 գործոնները), 5. հաղորդակցման միջոցը (Auer, Di Luzzio 1992: 91):

Ներկայումս գործաբանության մեջ ընդունված է նաև հարատեքստի տարատեսակների հետևյալ ստորաբաժանումը՝ իրադրային, հենքային գիտելիքի և համատեքստային (Cutting 2002: 55)

5. Նույնաբանության կարծրատիպային բնույթի մասին ավելի մանրամասն տե՛ս նախորդ գլխի վերջին ենթագլխում:

6. Ինչպես նկատում են որոշ լեզվաբաններ, *being* հանգույցը անգլերենում կիրառվում է միայն անձ մատնանշող գոյականների հետ: Օրինակ՝ կարելի է ասել *That's just Manny being Manny* կամ *That's just boys being boys*, բայց անհնար է ասել *That's just wars being wars; That's just a promise being a promise*. (Rhodes 2009: 5):

7. Գործաբանական հետազոտություններում հատկապես կարևորվում է հարատեքստը (Levinson 1983; Verschueren 2011), և հետևաբար որպես գործաբանական լեզվաբանության խնդրո առարկա կարելի է դիտել հարատեքստային իմաստը՝ ներառելով լեզվի հնչյունական, ձևաբանական, շարահյուսական յուրահատուկ դրսևորումները կոնկրետ հարատեքստում: Կարևորելով հարատեքստի գործոնը լեզվագործաբանության տեսական դրույթների համակարգում՝ Ռ. Ռայխմանը նշում է. «Նախադասության կառուցվածքի իմացությունից զատ, մենք տիրապետում ենք մի այլ գիտելիքի

(հարատեքստի), որն էլ նպաստում է տեղեկատվության փոխանցման գործընթացին» (Reichman 1985):

Ըստ Քաթինգի՝ իրադրային հարատեքստը խոսակիցներին շրջապատող ֆիզիկական աշխարհն է, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը, իսկ հենքային գիտելիքի հարատեքստը ներառում է մշակութային և միջանձնյա հարաբերությունների տարրեր (Cutting 2002): Ընդ որում՝ մշակութային հարատեքստը ենթադրում է նույն լեզվական համայնքին վերաբերող հենքային գիտելիքի առկայությունը (Sperber, Deidre 1995), իսկ միջանձնյա հարատեքստը ներառում է խոսակիցների միջանձնյա հարաբերություններին, նրանց անձին բնորոշ անհատական հատկանիշներին վերաբերող հենքային գիտելիք (Cutting 2002):

8. Համատեղ հենքային գիտելիքի մեջ, ինչպես պատկերված է Ջ. Ֆերսխուերենի՝ վերը բերված գծապատկերում, ընդգծված են խոսքերների մտավոր ու ֆիզիկական աշխարհը և այն հասարակական միջավայրը, որում ընթանում է տվյալ գրուցակցությունը: Անհրաժեշտության դեպքում այս գիտելիքը ակտիվանում է նրանց գլխում և արտաբերվող խոսքային միջոցների ճիշտ ընտրություն կամ լսածի ճիշտ մեկնաբանություն է ապահովում (Pinker 2007):

Մտավոր աշխարհին վերաբերող հենքային գիտելիքը պարունակում է ինչպես ճանաչողական, այնպես էլ զգացական տարրեր: Այն կապվում է անձի հոգեբանության՝ գրուցակիցների հոգեկան կերտվածքի, նրանց հույզերի, սպասումների, համոզմունքների, մտադրությունների, դիրքորոշումների հետ և այլն: Հաղորդակցական գործընթացի այս վերաբերականներն այն նախադրյալներն են, որոնք հուզական երանգ են հաղորդում խոսքին, զգացմունքային և տրամաբանական ներգործություն են կատարում լսողի վրա, ինչպես նաև ապահովում վերջինիս խոսքը լսելու և մեկնաբանելու շահագրգռվածությունը:

Ֆիզիկական աշխարհի՝ խոսողներին շրջապատող շրջակա միջավայրի մասին հենքային գիտելիքը ընդգրկում է խոսքային իրադրության ժամանակին և տեղին վերաբերող անվանումները, որոնք բացարձակ արժեք չունեն լեզվում: Ցանկացած հաղորդակցական իրադրություն տեղ է գտնում որոշակի ժամանակի և տարածության մեջ: Շրջակա միջավայրին վերաբերող գիտելիքը կողավորվում և

ապակողավորվում է ժամանակի ու տեղի ցուցայնության ցուցիչների միջոցով՝
ապահովելով խոսքի կապը արտաքին աշխարհի հետ. now/ then; in/on; come/go;
here/there; this/that; north/east; left/right և այլն:

Հասարակական միջավայրին վերաբերող հենքային գիտելիքը անձի
ցուցայնության հետ առնչվող դերանունների միջոցով է դրսևորվում խոսքում:
Գիտելիքի այս տիրույթում խոսքային գործունեության համար էական առաջնային
հատկանիշներ են գրուցակիցների սեռը, տարիքն ու հասարակական դիրքը:

Եզրակացություն

Տեսական գրականության քննական վերլուծությունը և փաստական նյութի համակողմանի ուսումնասիրությունը հաստատում են, որ լեզվագործաբանական մեթոդը հաղորդակցման լեզվական համատեքստի և հանրամշակութային հարատեքստի հաշվառումով լավագույնս է ծառայում խոսքային գործունեության յուրահատուկ դրսևորումների, այս կամ այն լեզվական միջոցների կիրառման դրդապատճառների, ինչպես և դրանցից բխող հետևանքների բացահայտմանը:

Փաստական նյութի քննության արդյունքները հաստատում են լեզվագործաբանության այն կարևորագույն դրույթը, որ բառի կամ շարահյուսական կառույցի գործաբանական բովանդակությունը ձևավորվում և առարկայանում է խոսքում, իրական հաղորդակցական իրադրություններում:

Հաղորդակցությունը դիտարկելով որպես տեղեկության փոխանցման նպատակաուղղված երկկողմանի գործընթաց, որի հիմնական գործառույթը տեղեկության փոխանակումն է, մեր ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում փաստելու, որ հաղորդակցական ակտը հաղորդակցության բոլոր մասնակիցների (խոսողի/գրողի և լսողի/ընթերցողների) մտադրությունների փոխներգործության արդյունք է, և այդ ակտում ընդգրկված յուրաքանչյուր լեզվական միավոր ծառայում է տվյալ հաղորդակցական դիտավորության իրագործմանը:

Նույնաբանական կառույցների լեզվագործաբանական արժեքի մեր քննությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

1. Նույնաբանական կառույցների քննությունը գործաբանական և իմաստաբանական տեսությունների լույսի ներքո, չնայած նրանցում առկա տարբերություններին, ունի մեկ ընդհանուր թերություն. այդ մոտեցումներում հաշվի չի առնվում նույնաբանական կառույցի առանձնահատկություններից բխող իմաստային բազմաշերտությունը, որը, ինչպես ցույց է տալիս մեր վերլուծությունը, խոսքային գործունեության ընթացքում դրանց գործաբանական ներուժի կողավորման և ապակողավորման կարևորագույն գրավականն է:

2. Փաստական նյութի կառուցվածքային առանձնահատկությունների մեր վերլուծության արդյունքում առանձնացվել են նույնաբանական կառույցների հետևյալ շարահյուսական կադապարները՝ անվանական կամ համարժեք՝ *a is a*, դիսյունկտիվ՝ *(either) p or not p*, պայմանական՝ *if p (then) p*, ստորադասական՝ *when p, p*, համադասական՝ *a is a and b is b*, որոնք սուբյեկտի և պրեդիկատի դիրքերում արտահայտության առումով նույնական անդամներ պարունակող ստորոգական կառույցներ են: Հենց ստորոգման առկայությունն էլ պայմանավորում է կրկնվող անդամների իմաստային տարբերությունները, ինչն էլ նպաստում է նույնաբանական ասույթի ներակայման և գործաբանական ներուժի ձևավորմանը, ընդ որում՝ նույնաբանական կառույցի առաջին անդամը ներկայացնում է հաղորդակցության առարկան (դենոտատը), իսկ երկրորդը նույնաբանության կիրառման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում արտահայտում է իրենում ներփակված իմաստի տարբեր կողմեր: Խոսքաստեղծման ընթացքում կրկնության շնորհիվ տեղի է ունենում բառիմաստի տրոհում, ինչի շնորհիվ էլ արժևորվում է նույնաբանական կառույցի իմաստային տարողունակությունը: Ըստ իր հաղորդակցական նպատակի՝ խոսողը ակտիվացնում է անվանական անդամի կամ դատողության մեջ առկա այս կամ այն իմաստային բաղադրիչ/ները:

3. Նույնաբանական կառույցների գործաբանական արժևորումը ժամանակակից անգլերենի տարբեր գործառական ոճերում (գեղարվեստական, զանգվածային հաղորդակցության, հրապարակախոսական) թույլ է տալիս հանգել այն մտքին, որ նույնաբանական կառույցը խոսքային ներակայման ձև է, որն ունի որոշակի հաղորդակցական գործառույթ և նպաստում է խոսքային փոխներգործության առավել արդյունավետ իրականացմանը: Ընտրելով նույնաբանական կառույցի որևէ շարահյուսական կադապար՝ խոսողը էլնում է իր հաղորդակցական նպատակը տվյալ հաղորդակցական իրադրության շրջանակում առավել տեղին և համապատասխան իրականացնելու իր մտադրությունից: Ավելին՝ կատարելով իր ընտրությունը հոգուտ նույնաբանական կառույցի՝ նա բացառում է մնացած բոլոր այլընտրանքների կիրառելիությունը խոսընթացի տվյալ պահին:

4. Նույնաբանության անվանական և բայական անդամի իմաստաքերականական առանձնահատկությունները հաճախ հանդես են գալիս որպես նույնաբանական կառույցի գործաբանական ներուժի ձևավորման կարևոր նախապայման: Կախված իր հաղորդակցական նպատակից՝ խոսողը նախապատվություն է տալիս նույնաբանության այս կամ այն շարահյուսական կաղապարին՝ ընտրելով տվյալ գոյականի և բայի իմաստաքերականական հարացույցից իր մտադրությանը համապատասխանող իմաստաքերականական ձևը:

5. Կան նույնաբանություններ, որոնք, հաճախ միևնույն կամ գրեթե միևնույն հաղորդակցական նպատակով կիրառվելով, տվյալ լեզվամտածողության մեջ ստացել են կարծրատիպային նշանակություն: Խոսքաստեղծման ընթացքում ընտրելով նմանատիպ նույնաբանական կառույց՝ խոսողը փորձում է բացատել թյուրըմբռնումը, քանի որ նա վստահ է, որ լսողը՝ որպես տվյալ հանրույթի անդամ, համարժեքորեն կընկալի տվյալ կառույցի կարծրատիպային նշանակությունը: Այնուամենայնիվ արձանագրվել են դեպքեր, երբ, համատեքստով ու նույնաբանությունը կիրառողի հաղորդակցական նպատակով պայմանավորված, կարծրատիպային նշանակությամբ նույնաբանությունները ձեռք են բերում որոշակիորեն նոր հաղորդակցական-գործաբանական արժեք:

6. Խոսողի՝ նույնաբանական կառույցի ընտրությունը պատահական չէ և բխում է այդ կառույցների ձևաբովանդակային միասնականությունից: Ձևի առումով լինելով պարզ՝ խոսքաստեղծման գործընթացում նույնաբանական կառույցները խնայում են խոսողի ժամանակը և ջանքերը, իսկ բովանդակային առումով թվացյալ պարզունակության ներքո թաքնված է իմաստային մեծ բազմաշերտություն, ինչն էլ հնարավոր է դարձնում, որ խոսողը կողավորի այն ներակա իմաստը կամ իմաստները, որոնք տեղին են տվյալ հաղորդակցական իրադրությունում, և լսողի ուշադրությունը հրավիրի տեղեկատվական առումով առավել կարևոր իմաստային տարրերին: Մյուս կողմից՝ խոսողը վստահ է, որ իր խոսընկերը՝ որպես նույն լեզվական հանրույթի ներկայացուցիչ և նույն հաղորդակցական իրադրության մասնակից, ի վիճակի կլինի ապակողավորել իր՝ խոսողի կողմից նույնաբանական կառույցով ներակայված իմաստը:

7. Նույնաբանական կառույցների տեքստակազմիչ հատկությունը թույլ է տալիս դրանց տեքստում իրացնել թեման եզրափակող, ամփոփող գործառույթ, երբ դրանցում խտացվում է խոսողի հաղորդակցական մտադրությամբ պայմանավորված տեղեկությո՞ւր կամ, տվյալ խոսքային իրավիճակի պահանջներից ելնելով, ներմուծել նոր թեմա և դառնալ հաղորդակցության առանցք:

8. Նույնաբանական կառույցում կոդավորված ներակայումը, կառույցի գործաբանական ներուժը խոսընկերների խոսքային փոխներգործության ընթացքում ապակոդավորվում են որոշակի հաղորդակցական իրադրության մեջ համատեքստի, հարատեքստի, խոսընկերների հենքային գիտելիքների ընդհանուր առկայության պարագայում:

9. Նույնաբանական կառույցների գործաբանական ներուժի ապակոդավորման գործընթացում լեզվական և արտալեզվական գործոնների հաշվառումը օգնում է բացահայտել խոսողի հաղորդակցական մտադրությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բրուսյան Գ. *Տրամաբանություն*, Եր.: «Գիտություն» հրատ., 1998, 213 էջ:
2. Պարոնյան Շ. *Լեզվաճանաչողություն և դիսկուրս*, Երևան: ԵՊՀ հրատ., 2011, 298 էջ:
3. Auer P., Di Luzzio A. *The Contextualization of Language*, John Benjamins, 1992, 402p.
4. Autenrieth T. *Tautologien sind Tautologien. In: E. Rolf (ed), Pragmatik. Implikaturen und Sprechakte [Linguistische Berichte, Sonderheft 8]*. Opladen: Westdeutscher Verlag, 1997, pp. 12-32.
5. Bach K. *The myth of conversational implicature. Linguistics & Philosophy* 22, 1999. pp. 327-366.
6. Bach K. *The Top 10 Misconceptions about Implicature*, edited by Betty Birner and Ward, G., John Benjamins, 2005, pp. 1-16.
7. Bianchi C. (Eds.) *The Semantics/Pragmatics Distinction*. Stanford: CSLI. 2004, pp. 11-24.
8. Brown G., Yule G. *Discourse Analysis*. Cambridge: Cambridge University Press, 1983, 283 p.
9. Bulhof J., Gimbel S. *Deep tautologies. Pragmatics & Cognition* 9, 2001, pp. 279-291.
10. Carnap R. *Introduction to Symbolic Logic and Its implication*, Dover Publications, 2011, 272 p.
11. Carrel P. L., Esterhold, A. *Background Knowledge and Reading Teaching*, Qian Huang College English Department of Dezhou University, Vol. 5, No. 5, 2009, pp. 138-142.
12. Carrel P. L., *Background knowledge in second language comprehension. Language Learning* 33, Cambridge, Cambridge University Press (2), 1983, pp. 183-207.
13. Carston R. *Explicature and Semantics*, In Davis, Stephen and Brendan S. Gillon (Eds.) *Semantics: A Reader*, Oxford University Press. 2004, 936 p.
14. Cole P., and Morgan J., *Syntax and Semantics – Volume 3: Speech Acts*. Academic Press, New York: 1975. 406 p.
15. Cutting J. *Pragmatics and Discourse*. London and New York, Routledge, 2002, 187p.

16. Dascal M. *Speech Act Theory and Gricean pragmatics: Some differences of details that make a difference*. In S. L. Tsohatzidis (ed), *Foundations of Speech Act Theory*. London/New York: Routledge, 1994, pp. 323-334.
17. Davis W.A. *Implicature, Intention, Convention, and Principle in the Failure of Gricean Theory*. Cambridge, UK: Cambridge University Press, 1998, pp. 631-641
18. Derrida J. *Of Grammatology*. Baltimore: John Hopkins University Press, 1997, 410 p.
19. Dijk T.A. van *Studies in the Pragmatics of Discourse*. Berlin: de Gruyter, 1981, 331p.
20. Doron E. *The semantics of predicate nominals*, *Linguistics* 26, The MIT Press, London, England, 1988, pp. 281-301.
21. Duranti A., Goodwin C. *Rethinking Context: Language as an Interactive Phenomenon*. Cambridge: Cambridge University Press, 1992, 366p.
22. Farghal M. *Colloquial Jordanian Arabic Tautologies*. *Journal of Pragmatics* 17, 1992, pp. 223-240.
23. Fraser B. *Motor Oil is Motor Oil – An Account of English Nominal Tautologies*. In *Journal of Pragmatics* 12, Cambridge, Cambridge University Press, 1988, 215 p.
24. Frege F.L.G. *Die Grundlagen der Arithmetik*, Reclam, Ditzingen, 1987, 160 p.
25. Garfinkel H. *Studies in Ethnomethodology*. Cambridge, UK: polity Press, 1967, 304p.
26. Gazdar G. *Pragmatics: Implicature, presupposition, and logical form*. New York: Academic Press, 1979, pp. 902-905.
27. Geurts B. *The Mechanisms of Denial*. *Language* 74, 1988, pp. 274-307.
28. Gibbs R. W. Jr. and McCarrell, N. S. *Why boys will be boys and girls will be girls: Understanding colloquial tautologies*. *Journal of Psycholinguistic Research* 19, Plenum Press, 1990, 145 p.
29. Gibbs R.W. Jr. *The Poetics of Mind*. Cambridge University Press, New York: 1994, 532 p.
30. Green G. M., *The lexical expression of emphatic conjunction*. *Foundations of Language* 10, 1973, 248 p.
31. Grice H.P. *Logic and conversation*. In: P. Cole P., and Morgan, J, (Eds.) *Syntax and Semantics, Vol. 3: Speech acts*. New York: Academic Press. [From 1967 lectures]. 1975, pp. 41-58.

32. Grice H.P. *Studies in the Way of Words*. Cambridge, Mass: Harvard University Press, 1989, 406 p.
33. Haberland H. *Pragmatics = Theory of Meaning ÷ Truth Conditions? Paper presented at the Ninth AILA Congress*, Kallithea, Greece, 1990, 258 p.
34. Halliday M. A. K., Hasan R. *Cohesion in English*. London, Longman, 1976, 392p.
35. Harnish R.M. *Logical form and implicature*. In: T. G. Bever, Katz, J. J. and Langendoen D. T., eds., *An integrated theory of linguistic ability*. New York: Crowell. 1976, pp. 313-391.
36. Helbig G. *Lexikon deutscher Partikeln*. Leipzig. Verlag Enzyklopädie. 1990, 248 p.
37. Hirschberg, J. *A Theory of Scalar Implicature*. New York: Garland. 1991, 329 p.
38. Hoidas S. *Nominal Tautologies as Availability Heuristics*, University of Athens, 1988, 138 p.
39. Jeffries, L., McIntyre, D. *Stylistics*. Cambridge University Press. 2010, 106 p.
40. Joshi A.K., Webber B.L., Sag I.A. (Eds.). *Elements of Discourse Understanding*. Cambridge: Cambridge University Press. 1981, 268 p.
41. Kalish D., Montague R. *Logic: Techniques of Formal Reasoning*, Oxford University Press, 1980, 520 p.
42. Kant I. *Logic*. Dover Publications, 1998, 288 p.
43. Kaplan S. J., *Appropriate responses to inappropriate questions*. In: Joshi, Webber & Sag, 1981, pp. 127-44.
44. Karttunen L., Peters S. *Conversational implicature in Montague grammar*. *Proceedings of the First Annual Meeting of the Berkley Linguistic Society*, 1975, pp. 360-371.
45. Katz J. J., Langendoen, D. T. *Pragmatics and presupposition*, *Language*, 52, Oxford: University Press, 1976, pp. 1-17.
46. Katz J. J. *Propositional Structure and illocutionary Force*. Harvard University Press, 1986, pp. 272.
47. Keenan J. Ochs E. *On the universality of conversational postulates*. *Language in Society* 5 (1), 1976, pp. 67-80.

48. Kempson R. M. *Presupposition and Delimitation of Semantics*. Cambridge: Cambridge University Press, 1975, 248 p.
49. Kempson R. M. *Presupposition, opacity and ambiguity*. In Oh & Dinneen, 1979. pp. 283-97.
50. Kiefer F. *What do conversational maxims explain? Linguisticae Investigationes 3*, 1979, pp. 57-74.
51. King J. C. and Stanley J. *Semantics, pragmatics, and the role of semantic content*. In: Szabo (Eds), 2005, pp. 111-164.
52. Lakoff G. *Linguistics and natural logic*. In: Davidson & Harman, 1972, pp. 554-665.
53. Levinson S. C. *Politeness: Some Universals in Language Usage. Part of Studies in Interactional Sociolinguistics*, Cambridge, Cambridge University Press, 1987, pp. 358.
54. Levinson S. C. *Pragmatics and social deixis. Proceedings of the Fifth Award Meeting of the Berkeley Linguistic Society*, 1979, pp. 206-23.
55. Levinson S. C. *Pragmatics*. Cambridge, Cambridge, Cambridge University Press. 1983, 438 p.
56. Levinson S. C. *Presumptive Meanings. The Theory of Generalized Conversational Implicature*. Cambridge, MA: The MIT Press. 2000, 450 p.
57. Levinson S. *Pragmatics*. Cambridge: Cambridge University Press, 2005, 423 p.
58. Lewis D. K. *General Semantics. Semantics of Natural Language* (ed. D. Davidson and G. H. Harman), Dordrecht, D. Reidel, 1972 pp. 169-218.
59. Lyons J. *An Introduction in Theoretical Linguistics*. Cambridge: Cambridge University Press. 1968, 536 p.
60. Lyons J. *Semantics*, Vols. 1 & 2. Cambridge: Cambridge University Press. 1977, 388 p.
61. McCarthy M. *Discourse Analysis for Language Teachers*. Cambridge, Cambridge University Press, 1991, 205 p.
62. Meibauer J., *Cultures of Lying: Theories and Practice of Lying in Society, Literature and Film*, Galda & Wilch Verlag, Glienicke/Berlin, Madison/Wisconsin, 2007, 388 p.
63. Meibauer J. *Implicature*. In: K. Brown (ed.), *Encyclopedia of Language and Linguistics*, 2nd ed., Vol. 5. Oxford: Elsevier, 2006, 580 p.

64. Meibauer J. *Tautology as presumptive meaning*. John Benjamins Publishing Company, 2008, pp. 439-470.
65. Miki E. *Evocation and Tautologies*. In: *Journal of Pragmatics*, 25, Cambridge: Cambridge University Press, 1996, 635 p.
66. Mittwoch A. *Grammar and illocutionary force*. *Lingua* 40, Cambridge: Cambridge University Press, 1976, pp. 21- 42.
67. Mizuta Y. *Nominal-Predicative Sentence of Rhetorical Nature*. Osaka University Journal of Language and Culture 5., Osaka University 1996. pp. 75-90.
68. Murphy M. L. *Semantic Relations and the Lexicon. Antonymy, Synonymy, and Other Paradigms*. Cambridge: Cambridge University Press, 2003, 294 p.
69. Noveck I., Sperber D. *The why and how of experimental pragmatics: The case of 'scalar references'*. In: N. Burton-Roberts (ed.), *Pragmatics*. Basingstoke: Palgrave Macmillan, 2007, pp. 184-212.
70. Ochs E. *Planned and unplanned discourse*. In: T. Givon (ed.), *Syntax and semantics: Vol. 12. Discourse and syntax* (pp. 51-80). New York: Academic Press, 1979a, pp. 51-80.
71. Ochs E., *Transcription as theory*. In: Ochs & Schieffelin, Cambridge, Cambridge University Press, 1979b, pp. 43-72.
72. Ohmann R., *Speech acts and the definition of literature*. *Philosophy & Rhetoric* 4, Elsevier, Amsterdam, 1971, pp. 1-19.
73. Okamoto, S., *Nominal repetitive constructions in Japanese: The 'tautology' controversy revisited"*. *Journal of Pragmatics* 20, Cambridge, Cambridge University Press, 1993, pp. 433-466.
74. Parret, H., Sbisà, M., Verschueren, J. (Eds.), *Possibilities and Limitations of Pragmatics: Proceedings of the Conference on the Pragmatics at Urbino, July 8-14*, Amsterdam: Benjamins. 1979, pp. 56-82.
75. Pinker, S. *The Stuff of Thought: Language as a Window to Human Nature*. New York, Viking, 2007, 499 p.
76. Potts, C. *Controversial Implicatures*. Oxford: Oxford University Press. 2005, 258 p.
77. Power, R. *The organization of purposeful dialogues*. *Linguistics* 17, New York, Academic Press, 1979, pp. 107-152.

78. Putnam, H. *The meaning of "meaning"*, *Mind, Language and Reality*, Cambridge: Cambridge University Press. 1975 a, pp. 215-271.
79. Putnam, H. *Is Semantics Possible? Mind, Language and Reality*. Cambridge: Cambridge University Press, 1975 b, pp. 139–152.
80. Reboul, A. *Conversational implicatures: Nonce or generalized?* In: I.A. Noveck and D. Sperber (Eds.), *Experimental Pragmatics*. Houndmills, Basingstoke: Palgrave Macmillan, 2004, pp. 323-333.
81. Reichenbach, H., *Elements of Symbolic Logic*. New York: Free Press. 1947, 444 p.
82. Reichman R., *Getting Computers to Talk Like you and Me: Discourse, Context, Focus and Semantics (an ATN model)*, Cambridge, Mass., London: MIT Press, 1985, 144p.
83. Rhodes R., *A Cross-linguistic Comparison of Tautological Constructions with Special Focus on English*. http://linguistics.berkeley.edu/~russellrhodes/pdfs/taut_qp.pdf (accessed December 16, 2009)
84. Rogers, A. Wall, B., Murphy, J. P. (eds.) *Proceedings of the Texas Conference on Performatives, Presuppositions and Implicatures*. Washington: Center for Applied Linguistics, 1977, 170 p.
85. Ruhlen, M. and Bergston J. D. *Global Etymology*, New York, Garland, 1994, pp. 207-241.
86. Russel, B. *Principia Ethica* (Principles of Ethics). Dover Publications, 2004, 256 p.
87. Sadock, J. M., *Toward a Linguistic Theory of Speech Acts*. New York: Academic Press. 1974, 168 p.
88. Samuels, M. L. *Linguistic Evolution, with Special References to English*. Cambridge: Cambridge University Press. 1972, 205 p.
89. Sasamoto, R. *Silence in Ostensive Communication*. Handout presented at KRG., 2010, 198 p.
90. Saussure, F., Bally, C., Sechehayé, A. Mario de, T. *A Course of General Linguistics*, Payot, 1995, 520p.
91. Schegloff, E. A. *On some questions and ambiguities in conversation*. In: J.M. Atkinson & J Heritage (Eds.), *Structures of Social Action*, Cambridge: Cambridge University Press, 1976, pp. 28-52.

92. Sperber D., Deidre W. *Relevance: Communication and Cogntion*. Oxford: Blackwell. 1995, 338 p.
93. Szabo. G. (Eds.). *Semantics versus Pragmatics*. Oxford: Oxford University Press. 2005, 476 p.
94. Traugott E. C. *A critique of Levinson's view of Q-and M-inferences in historical pragmatics*. *Journal of Historical Pragmatics* 5, 2004, pp. 1-25.
95. Tsujimoto T. *Tautology in Discourse. The Retirement Festschrift of Professor Ozaki Yasehura and Ohunuma Masahiko*, Kyoto: Aporonsha. 1996, 284 p.
96. Van der Sandt, Denial R. A., *Chicago Linguistic Society* 27, 1991, pp. 331-344.
97. Verschueren J. *Ideology in Language Use: Pragmatic Guidelines for Empirical Research*. Cambridge: Cambridge University Press, 2011, 377p.
98. Walter J. *Conversational Tautologies in English; theoretical approach and investigation of examples*. GRIN Verlag GmbH, Druck und Bindung: Books on Demand GmbH, Norderstedt, Germany, 2008, 16 p.
99. Ward G. L., Hirschberg J. *On pragmatic wars and tautological battles. Paper presented at the Linguistic Society of America Annual Meeting*, San Francisco. 1987, pp. 65-82.
100. Ward G. L., Hirschberg J. *A pragmatic analysis of tautological utterances*. *Journal of Pragmatics* 15: 1991, pp. 507-520.
101. Widdowson H.G., *Text, Context, Pretext*. Critical Issues in Discourse Analysis. New York, Blackwell Publishing, 2004, 179p.
102. Wierzbicka A. *Boys will be boys. A rejoinder to Bruce Fraser*, *Journal of Pragmatics* 12, Berlin, 1988, pp. 221-224.
103. Wierzbicka A., *Boys will be boys: Radical Pragmatics vs. Radical Semantics*. *Language* 63, Berlin, 1987, pp. 95-114.
104. Wierzbicka A. *Cross-Cultural Pragmatics – The Semantics of Human Interaction*. Mouton de Gruyter, Berlin, 2003, 502 p.
105. Wierzbicka A. *Cross-Cultural Pragmatics*, Berlin, Mouton de Gruyter, 1991, 260 p.
106. Wittgenstein L. *Tractatus Logico-Philosophicus*, Dover Publications, 1998, 144 p.

107. Yamamoto N. *An Examination of the Controversy over English Nominal Tautologies, Annual report of Graduate Division of Human Culture 28*, Nara Women's University, 2013, pp. 13-28.
108. Апресян Ю.Д. *Тавтологические и контрадикторные аномалии // Логический анализ языка. Проблемы интенциональных и прагматических контекстов: Сб. ст.* М.: Наука, 1989, сс. 186 – 196.
109. Арнольд И.В. *Семантика, стилистика, интертекстуальность: Сб. ст. / Науч. ред. П. Е. Бухаркин.* СПб: Изд-во С.- Петерб. ун-та, 1999. 443 с.
110. Арутюнова Н.Д., Падучева Е.В. *Истоки, проблемы и категории прагматики // Новое в зарубежной лингвистике: Лингвистическая прагматика.* Вып. 16. - М.: Прогресс, 2000. сс. 3 - 42.
111. Ахманова О.С., Тер-Мкртчян С.А. *Научное определение как лингвистическая и семиотическая проблема // Проблема определения терминов в словарях различных типов: Сб. ст.* Л.: Наука, 1976, сс. 57 -63.
112. Бушуй А.М. *Типологические серии тавтологических образований фразеологизированного характера // Вопросы фразеологии IV.* Труды Самарканд.ун-та. Нов. серия - Вып. 216, 1971, сс. 35 - 44.
113. Войлова К.А. *Тавтологические единицы как средство выразительности в художественном тексте: (По произведениям Ф. Абрамова) // Семантическая структура слова и высказывания.* Межвуз. сб. науч. тр. -М.: Моск. пед. ин-т, 1993, сс. 84-90.
114. Голуб И.Б. *Русский язык и культура речи, Учебник* I И.Б. Голуб. – М.: Логос, 2005, 252 с.
115. Гольцова Н.Г. *Вариантность и синонимия тавтологических образований в современном русском языке // Слово и словосочетание как компоненты структуры предложения: Лингвистический сб.* Вып. 12. - М.: Моск. обл. пед. ин-т, 1978. сс. 88-98.
116. Дейк Т. А. Ван, Кинч В., *Стратегии понимания связного текста //Новое в зарубежной лингвистике.* – Выпуск XXIII. – Москва, Прогресс, 1988, с. 153-212.

117. Демидов И.В. *Логика: Учеб.пособие для юрид.вузов*. М.: Юриспруденция, 2000, 356 с.
118. Евгеньева А. П. *Очерки по языку русской устной поэзии в записях XVII -XX вв.* М. - Л.: Изд-во АН СССР, Ленингр. отд-ние, 1963. 348 с.
119. Зайц, О. А., *Семантика и прагматика тавтологий и плеоназмов, автореф. дис.* канд. филол. наук О. А. Зайц. – СПб., 2001, 131 с.
120. Ивин А. А. *Логика: учебник*. М.: Гардарики. 1999, 250 с.
121. Иевлева М. Х. *Тавтологии типа N сор № Когнитивно-функциональный аспект. Автореф. канд. филол. наук. Уфа, 2000. 22 с.*
122. Кашкин В. Б. *Обыденная философия языка, наивная лингвистика и наивная лингвистическая технология (Обыденное метаязыковое сознание: онтологические и гносеологические аспекты.)* - Ч. I. - Кемерово - Барнаул, - С. 2009, 382 с.
123. Крапотина Т. Г. *Паратаксис и семантика предложения с тавтологическими оборотами // Семантические и грамматические аспекты предикации в современном русском языке: Межвузов, сб. науч. тр. М.: Изд-во Моск. пед. ун-та, 1998, сс. 48 - 51.*
124. Мауэр Л. В. *Тавтологизм в сравнительно-типологическом аспекте // Стабильность и лабильность языковых подсистем. Сб. науч. тр. Тверь: Твер. гос. ун-т, 1991, сс. 20 - 24.*
125. Молоков С. А., *Логические тавтологии и их функции в процессе познания, автореф. дис. канд. филос. наук С. А. Молоков – Одесса, 1967, 13 с.*
126. Никитин М.В. *Курс лингвистической семантики: Учеб. пособие к курсам языкознания, лексикологии и теор. грамматики.* СПб.: Научный центр проблем диалога, 1996, 760 с.
127. Остапенко Т. С., *Тавтология в “наивной лингвистике”, Вестник Иркутского государственного лингвистического университета Выпуск N: 3 (11)/2010: 46*
128. Перевозчикова Ф. Д., *Тавтологические сочетания в современном русском языке, Нормы современного русского литературного словоупотребления: сб. статей. – М.-Л.: Наука, 1966, сс. 66-78*

129. Попп Т. Ю. *Мовний плеоназм: надлишковують у плат синтагматики // Иноземн. фшолопя*, Вып. 88. 1987, сс. 3 - 7.
130. Раманюк Г. М. *Аб некаторых асаблівасцях таўталапчных злучальных словазлучэнняў у беларускай мове // Вещь АН БССР. Сер. грамад. навук. № 3, 1991, сс. 110-114.*
131. Рахманкулова Л. К. *Семантические аспекты тавтологических тождеств // Семантика слова и предложения: Межвуз. сб. науч. тр. Л.: Ленингр. пед. ин.т, 1985, сс. 132- 139.*
132. Репин, Е. Н. *Разруха начинается с языка* [Электронный ресурс] вход в 15 Июля 2014 <http://www.strannik.de/akme/lang.htm>
133. Троепольский А.Н. *Логико-гносеологический статус аналитических и синтетических суждений*: Автореф. дисс. канд. философ, наук. М., 1979, 22 с.

Օգտագործված բառարաններ և հանրագիտարաններ

1. Աղայան Է. *Արդի հայերենի բացատրական բառարան*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:
2. ՀՄՀ Գլխավոր խմբագրություն, *Հայկական սովետական հանրագիտարան*, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1975:
3. Սուքիասյան Ա. Մ. *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Երևանի պետական համալսարան, Երևան, 2009:
4. Blackburn, S. *The Oxford Dictionary of Philosophy*, Oxford University Press, 2008.
5. Cowie, A. P., Mackin R. *Dictionary of Current Idiomatic English*, Oxford University Press, 1986.
6. Crystal D., *Dictionary of Linguistics and Phonetics*, Wiley-Blackwell, 2008.
7. Matthews P. H., *The Concise Oxford Dictionary of Linguistics*, Oxford University Press, 2014.
8. McArthur, T. *The Concise Oxford Companion to the English Language*, Oxford University Press, 2003.

9. Weihmeier S. *Oxford Advanced Learner's Dictionary*, Seventh Edition, Oxford University Press, 2005.
10. Ивин А.А., Никофоров А. Л. *Словарь по логике*, М.: Гуманитарный издательский центр ВЛАДОС, 1997.

**Գեղարվեստական գրականության և ֆիլմերի ցանկ՝
համառոտագրություններով**

1. AI IR – Asimov I. *I, Robot – Short Stories*, Oxford Bookworms Library Version, Oxford: Oxford University Press, 1950, 225 p.
2. BA AC – Bennett A. *The Author's Craft*, The Floating Press, 2005, 80 p.
3. BD DVC – Brown D. *The Da Vinci Code*, New York: Doubleday, 2003, 454 p.
4. BJ LL – Barnes J. *Levels of Life*, Vintage Books, 2014, 128 p.
5. CD A – Collard D. *Annapolis (film)*, The United States of America: Buena Vista, 2006.
6. DTVS - *Dallas TV Series*, directed by Sandor Stern, Kevin Hooks, Alan Myerson, John Patterson, Michael Vejar, 13 March 1985.
7. ED C – Eggers D. *The Circle*, Penguin Books, 2013, 491 p.
8. EH IS – Hemingway E. *Islands in the Stream*. - L.: Haper Collins Publishers, 1993.-405 p.
9. FL WMWM – Foxhall L. *When Men Were Men: Masculinity, Power and Identity in Classical Antiquity*, Leicester-Nottingham Studies in Ancient Society, 2010, 270 p.
10. FM SF – Forster M. *Stranger than Fiction (film)*, Mandate Pictures, 2006.
11. GA SPN – Gramsci A. *Selections from the Prison Notebooks*: International Publishers, 1921, 572 p.
12. GJL WW – Godard J. L. *A Woman is a Woman (film)*, 1961.
13. GV LF– Grossman V. *Life and Fate*, Vintage Classics, 2006, 864 p.
14. HJ C 22 – Heller J. *Catch 22*, Vintage Books, 2011, 540 p.
15. IJ WAG – Irving J. *The World According to Garp*, Ballantine Books, 1999, 609 p.
16. KD RFH – Kherdian D. *The Road from Home; the story of an Armenian Girl*, Scholastic Inc, 1992, 420 p.

17. KG ABSHC – Kent G. *Alfie Bloom and the Secrets of Hexbridge Castle*, Scholastic Children's Books, 2015, 146 p.
18. KR BEW – Kipling R. *Complete Verse: The Ballad of East and West*, Anchor, 1989, 864 p.
19. LC AW – Lewis Carroll. *Alice in Wonderland*, Penguin Books Ltd, 2007, 152 p.
20. MA DL – Munro A. *Dear Life: Pride*, Douglas Gibson Books, 2012, 336 p.
21. PM WH – Parr M., *Waffle Hearts; Lena and Me in Mathildewick Cove*, Walker Books Ltd, Great Britain, 2013, 158 p.
22. PS PH – Power S. *A Problem from Hell: America and the Age of Genocide*, Harperperennial Library, 2003, 620 p.
23. RC FML – Chandler R., *Farewell, My Lovely*, Vintage Crime/ Black Lizard, 1992, 292 p.
24. RM HILN – Rosoff M. *How I Live Now*, Wendy Lamb Books, Wendy Lamb Books, 2004, 194 p.
25. SG GP – Stein G. *Geography and Plays: Rose is a rose is a rose, Operas and Plays, The World is Round, Alphabets and Birthdays, Stanzas in Meditation*. Boston, Four Seas, 1922, 424 p.
26. SJ DD – Saumande, J., *Disaster David*, Zangak Publishing House, Yerevan, 2016, 32 p.
27. SJ GN – Schalansky J., *The Giraffe's Neck*, London, Bloomsbury, 2015, 211 p.
28. SM PV – Maugham S., *The Painted Veil*, Vintage 2001, 214 p.
29. WO SG – Wild O. *The Selfish Giant*, Putnam Juvenile, 1995, 32 p.

Օգտագործված լրատվամիջոցներ և համացանցային կայքեր

1. Billboard, *Kanye West Booed After All Day Performance at the 2015 Billboard Music Awards*, <http://www.billboard.com/articles/news/bbma/6568470/kanye-west-all-day-2015-billboard-music-awards-video> accessed 17 May, 2015.
2. Business Insider 02 February, 1986.
3. Buzzle, <http://www.buzzle.com/articles/tautology-examples.html>) accessed 25 September, 2014.

4. CBS Evening News, 6 March 1985.
5. CBS Evening News, 23 November, 1985
6. Channel 6, Action News at 6, 8 June 1985.
7. Cinema Invisible, <http://cinemainvisible.org/fci-2014/when-a-kid-was-a-kid/>, accessed 19 August, 2015.
8. The Daily Mail 15 June, 2014.
9. Desiring God, <http://www.desiringgod.org/messages/i-am-who-i-am--2> accessed 17 October, 2014.
10. Ehow, http://www.ehow.com/how_4859074_move-after-failure.html, accessed 07 July, 2015.
11. Engineer, <http://www.engineer-exchange.com/content/view/37/70/> , accessed 15 December, 2013.
12. Express, <http://www.express.co.uk/news/politics/622224/David-Cameron-Prime-Minister-Syria-airstrikes-ISIS-Islamic-State-House-of-Commons>, accessed 26 October, 2015.
13. Express, <http://www.express.co.uk/news/science/626779/JESUS-CHRIST-Is-that-what-he-really-looked-like> accessed 14 December, 2015.
14. Nasioc, <http://forums.nasioc.com/forums/showthread.php?t=2198963&page=2> accessed 15 September, 2015.
15. Nebraska SWCS, <http://incolor.inebraska.com/cvanpelt/hillint.html> accessed 26 March, 2014.
16. KRQE News 13, <http://krqe.com/2014/09/15/vandals-destroy-part-of-petroglyph-trail/> accessed 17 July, 2015.
17. National Geographic <http://news.nationalgeographic.com/2015/09/150901-isis-destruction-looting-ancient-sites-iraq-syria-archaeology/> accessed 08 August, 2015.
18. Rabbi Tobbin's Blog, <http://rabbitobin.blogspot.am/2015/08/murderers-are-murderers-there-is-no.html> accessed 23 June, 2015.
19. Tumblr, <http://slaying-dragons-in-my-mind-blog.tumblr.com/post/6407168963/daaaance> accessed 11 February, 2014.

20. The Telegraph, <http://www.telegraph.co.uk/women/womens-life/10961856/At-last-theres-no-shame-in-acting-like-a-girl.html>, accessed 20 November, 2015.
21. Insidehoops, <http://www.insidehoops.com/kidd-interview-022207.shtml>, accessed 17 July, 2014.
22. Magnum PI, 25 October, 1987.
23. National Geographic, 25 July, 2013.
24. Philadelphia Inquirer, 15 February, 1985.
25. Philadelphia Inquirer, 17 September, 1985.
26. Quizlet, <https://quizlet.com/96312371/engl-103-midterm-flash-cards/> accessed 14 July, 2015.
27. Reuters, <http://blogs.reuters.com/world-wrap/2009/03/26/wanted-an-ethical-code-of-war/>, accessed 24 May, 2015.
28. San Diego Union, 09 October, 1985.
29. AP News, 3 May, 1988.
30. Minnesota Chicago Tribune, 13 December, 1989.
31. The Tao of dating, <http://taoofdating.com/how-to-deal-with-confirmed-bachelor/> accessed 19 March, 2014.
32. The Critical Thinker <https://thecriticalthinker.wordpress.com/2009/07/31/maoa/>, accessed 12 November, 2015.
33. The Daily Mail, 28 September, 1986.
34. The English Civil War Part 3, *Trial of King Killers*, 17:59 min.
<https://www.youtube.com/watch?v=fzIzJgukqC8>, accessed 17 October, 2015.
35. The Guardian, http://www.theguardian.com/world/2015/aug/16/goslar-germany-we-cant-get-enough-immigrants-oliver-junk?CMP=fb_gu, accessed 16 August, 2015.
36. The Guardian, http://www.theguardian.com/commentisfree/2015/nov/16/isis-bombs-hostage-syria-islamic-state-paris-attacks?CMP=fb_gu, accessed 16 November 2015.
37. Thought Catalog, <http://thoughtcatalog.com/josh-gondelman/2013/07/im-glad-i-didnt-live-when-men-were-men/>, accessed 19 July, 2015.
38. Twitch, (<http://twitchfilm.com/2015/04/interview-olivier-assayas-on-clouds-of-sils-maria-and-hall-of-mirrors.html#ixzz3zOppmmE5>), accessed 30 September, 2015.

39. San Diego Union, 4 March, 1986.
40. Walkypedia, ([http://walkypedia.wikia.com/wiki/Mike Warner](http://walkypedia.wikia.com/wiki/Mike_Warner), accessed 29 April, 2015.
41. Whisper, <https://whisper.sh/whisper/0517f768908fe8218728d4208c84ee46e10573/Whores-are-whores-and-bitches-are-bitches-always>, accessed 08 August, 2015.